ԱՐՏԱՎԱԶԴ
ՍԱՐԵՑՅԱՆ

# ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

## Երկու գրքով

### Գիրք առաջին

Աբխազպետհրատ
Սուխում
2018

УДК 821. 19-93
ББК 84 (5Арм) 6-44
С20

**Տպագրվում է պետական պատվերով**

**Սարեցյան, Ա.Հ.**
**Ընտիր երկեր երկու գրքով, գիրք առաջին**
**Աբխազպետհրատ: Սուխում, 2018: 312 էջ**
Գ/Р 978-5-122-17-03018

Արտավազդ Սարեցյանը ծնվել է 1957 թվականի ապրիլի 22-ին Աբխազիայի Սուխումի շրջանի Լեչկոպ գյուղում:

Ավարտել է Աբխազական պետհամալսարանի պատմա-իրավաբանական ֆակուլտետը:

1991 թվականին հիմնադրել է «Գրական Համշեն» թերթը, որի տպագրությունը շարունակվում է ցայսօր:

Աբխազիայի և Հայաստանի գրողների միության անդամ է:

Մի քանի գրքի հեղինակ է, այդ թվում՝ երկու ռուսերեն:

Սույն հատորը ամփոփում է հեղինակի չափածո և արձակ գործերը, որոնք քաղված են «Արևաքամի» (1989), «Ափացխա» (2002), «Էլեգիաներ երևույթների մեջ» (2012), «Համշեն-20» (2012), «Խառը մտորումներ» (2014), «Սևծովյան այգաբաց-60» (2014) և «Առանց բացականչական նշանների՝ անդունդի եզրին» (2014) գրքերից:

Ժողովածուն համալրված է մի շարք այլ գործերով, որոնք լույս չեն տեսել առանձին գրքով:

**УДК 821. 19-93**
**ББК 84 (5Арм) 6-44**

**© Սարեցյան, Ա.Հ., 2018**
**© Աբխազպետհրատ, 2018**

# ՍՉՈՓՈՇ

## ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ա.*

Ընդամենը պիտի ասեմ,
որ ես դո՛ւրս եմ բոլոր
հայտնագործված
ու նաև դեռ չհայտնագործված
ֆիզիկական օրենքներից,
ինչն ամենևին էլ չի բացառում
նրանց ակտիվ գոյակերպը:

Որպեսզի դուք
գոնե փորձե՛ք պատկերացնել ինձ,
ասեմ, որ իմ հաջորդ սկիզբը
վերջի մեջ է իմ նախորդ,
կամ էլ՝ հակառակը.
հաջորդ սկզբի մեջ է
իմ նախորդ վերջը:–

Եվ այստեղ
ոչ մի հակասություն չկա,
դեռ ավելին՝
սա ներդաշնակությունն է
ամենակատարյալ…

Եվ հենց դա՛ է
իմ գոյության հավասարումը,
որտեղ չկա անհայտ անդամ:

Եվ անսահմանորեն
ներթափանցելով իմ մեջ՝
ես անսահմանորեն էլ
դուրս եմ ճառագայթում ինձանից՝

մտքի ու սրտի հավասարակշռությունը
պահպանելու համար։–
Ես ամբողջովին իմ մեջ եմ,
և միևնույն պահին՝
ամբողջովին էլ դուրս եմ ինձանից։–

Իմ չգո ներկան
իմ գոյն է անցյալ ու միաժամանակ՝
ապագա։

*Բ.*

Ես գոյություն ունեմ
վայրկյանների պայթյունների մեջ,
որոնք հյուլե առ հյուլե
քանդում են ժամանակը՝
հյուլե առ հյուլե
վերականգնելու համար,
կամ՝ հյուլե առ հյուլե
վերականգնում են ժամանակը՝
հյուլե առ հյուլե
քանդելու համար։–

Եվ դա ամենևին էլ նույն բանը չէ։

ՈՒ այդ պահերին
ես մեռնո՛ւմ եմ
բառերի ձգողական ուժից,
որն իմ ջղերն է
անխնա պատառոտում։

Հիմա չգիտեմ,
թե որտեղ եմ վերջապես
վաղվա հիմք դառնում ՝
երեկվա՛ համար։

*Գ.*

Ես զգում եմ,
թե ինչպե՛ս եմ
օրեցօր մոտենում հողին՝
անխուսափելիորեն
օրեցօր հեռանալով
նրանից…

## ԶՅՈՒՆ

Առա՛տ ձյուն է գալիս
ու անարա՛տ այնքան,
Այնպե՛ս անասելի
մոլո՛ր-գերո՛ղ ու ջի՛նջ…
Խորունկ-խորաթափանց՝
մեծ տխրությա՛ն նման,
Ոհրախությա՛ն նման՝
թեթև՛, անհո՛գ, ուրի՛շ…

Խենթ ու չարաճճի՝
մենք լցվե՛լ ենք փողոց,
Մեծ ու փոքըր տրվել ձնագնդի խաղին,
Ոհ «խփում ենք» իրար,
«կռվի» հողմ է ու բոց…
Ոհ շաղա՛խ է մի մեծ՝
հրճվանք ու ծիծաղի…

– Բռնի՛ր,– գոչում ես դու …
Եվ քո ձնագնդին
Ծիծաղիդ Ծիր-կաթնով
դեպի ինձ է սուրում,
Եվ ես սայթաքելով,
արդեն վերջին պահին,

Համարյա թե ընկա՛ծ,
Քո լույս գունդն եմ որսում,–

Այնպե՛ս քնքո՛ւյշ ու հե՛զ՝
սրտի՛ նման բռնում,
Այնպե՛ս փափո՛ւկ-փխրո՛ւն
առնում ափերիս մեջ…
Այն քո հուսո ծովի խորությամբ է ծփում,
Շողում սիրուդ սարի սրբության պես
մի պերճ…

Ձյուն է գալիս առա՛տ,
այնպես լուսափթի՛թ,
Այնպես անասելի՛,
այնպես մոլո՛ր-գերո՛ղ…
…Եվ երկրագունդն է մեր
հանգույն ձնագնդի
Տիեզերքում սուրում՝ լուսե՛ ոլորներով:–

Մենա՛կ, անհո՛ւյս, փխրո՛ւն…
Անօգնակա՞ն այնպես,
Ահ ու մահի միջով, միջով խինդ ու ցավի,
Նա՝ այնքան հեզ, և մի
Առեղծըվա՛ծ ահեղ,
Ո՞ւմի՞ց է նա փախչում,
Ո՞ւմ է ձգտում կարի:

Ո՞ւր է սուրում: Նրան
ի՞նչ կլինի, արդյոք –
Կբախվի այլ գնդի՞՝
փշո՛ւր հևքով, ավա՛ղ…

…Ինձ չի լքել վերջին հույսն իմ՝
հոգիս այրող,
Որ կբռնի նրան
մեկն իր ձեռքով արդար…

## ՆԱԻՐԻ

*Կարլ Յալանուզյանին*

Քարտեզիդ ամեն անգամ նայելիս
նուրբ մարմինը քո անկուշտ հոշոտող
գազանների գոռ մռունչ եմ լսում:

Եվ քո վերքերից ծորում է արյուն՝
դառնալով Մեծն Մաշտոցի Ա՛յբ, Բե՛ն,
Խորենացու Ո՛ղբ,
Նարեկամատյա՛ն
և Կոմիտասի մորմոք՝ Անտունի՛…

Եվ քո վերքերից ծորում է արյուն՝
դառնալով Որդան Կարմիր՝ դարերի
համար խոր խորհուրդ՝
սակայն մեզ համար՝
այնքա՛ն-այնքա՛ն պարզ:

Քարտեզիդ ամեն անգամ նայելիս
տեսնում եմ՝ լոկ քո Սի՛րտն է մնացել
որպես Բախտի ջահ
և Բարու բռունցք:

*1985*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ

երբեք էլ երկիր չէ –
մեր Էրգրի՝
մեր մեծ հայրիկ Հովհաննեսի բռունցքներում
ատամներով սեղմված
հառաչանք չդարձած ցավն է,
մեր մեծ մայրիկ Համեստի աչքերի ճիչն է,
որ այդպես էլ չխեղդվեցին –
չխեղդվեցին՝ օրեցօր ծանրացա՛ն մեր սրտում:

## ԱՐՏԱՎԱԶԴ ԵՐԿՐՈՐԴ
**(մ.թ.ա. 55-34 թթ.)**

Փոթորկահույզ ալիքներից ծափահարությունների
ցնցվեց «Լեռնային կղզին»՝ Աշխարհին Հայաստան,
երբ Արտաշատի թատրոնի բեմից
քո ոտքերի մոտ գլորվեց
Մարկոս Կրասոսի[1]՝
պարթև Սուրենի կտրած կառափը:–

Քո գերագույն կամքով,
Օ՛ Արքայից Արքա Արտավազդ՝
Ողբերգակ ու Բանաստեղծ,
այսուհետև Կրասոսը դարձավ
Եվրիպիդեսի «Բաքոսուհիների»
գլխավոր գործող անձը…

Դու ստեղծագործում էիր:–
Դաժան տառապանքով էին երկունքվում
քո հանճարին արժանի գլուխգործոցներ,
երբ բարձրագույն արվեստի
աստիճանների վրա փայլում էին
կատարելապես հղկված
Դավաճանությունն ու Նենգությունը,
Մատնությունն ու Նվիրվածությունը,
Վեհանձնությունն ու Սերը, քանզի
լայնածավալ պատմական թատերաբեմում
գործում էին մարդկային հատկությունների
ճարտարվեստ կրողներ
Կեսարն ու Օկտավիանոսը,
Պոմպեոսն ու Օրոդեսը, Բակորն ու Բասը…

Այո, դու ստեղծագործում էիր:
Եվ մեծագույն

---

*[1]Մ.թ.ա. 71-ին ճնշել է Սպարտակի ապստամբությունը:*

«Օ՛ տայր ինձ զծուխն իմ ծխանի…»
ողբերգությունը
դու գրեցիր սեփական արյամբ
և ինքդ էլ կատարեցիր
գլխավոր դերը…

*Վերագիր վարագույրը փակվելուց հետո*
…Կլեոպատրան արդեն սպանված էր,
թեև շարունակում էր ապրել…

## ՀԱՄՇԵՆ

Իմ բառերը դեռ չեմ հավաքել,
և երգերս
մանկան թոթովանքի են նման… –

այդ իսկ պատճառով էլ՝
թերևս անհասկանալի,
սակայն նախնական գույնով ու բույրով՝
ինքնաբո՛ւխ,
մաքո՛ւր,
ու աշխարհընկա՛լ…

Եվ ինչպես մայրիկն է հասկանում
իր մանկան թոթովանքը,
այդպես էլ
ինձ միայն դո՛ւ կհասկանայիր…

Ես մի բուռ հող եմ՝
կծկված Աղրիտի ընկուզենու տերևի տակ՝
վրան արփու ճաճանչ-թրթիռ…

Ինչքա՜ն եմ ուզում
չհեռանալ
… չհասկացվա՛ծ:

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԱԳՆԱՊ

Գիշեր ու զօր չունենք, չունենք խավար ու լոյս,
ՈՒ մեր հոգին տնքում է նոր մի կարոտից,
Այնպես հեռու-մոտիկ, մեր մեջ-մեզանից դուրս,
Ծանոթ ցավի նման, խինդով անծանոթի...

Տիեզերքն է ճեղքվում («սունկն» է պայթում կրկին)՝
Աշխարհ դատարկելու հանգույն ուռչում ցավից...
Եվ ո՞վ, տեսնես, կգա, որ մեր հոգին փրկի...
Կամ, Արարչի նման, նորից հունցի կավից...

***

Սերս
Հայրենիքիս նկատմամբ
արտահայտող բառերն արտասանելու
իրավունք Նա տվել է արդեն,
և ես էլ իմ կյանքն ապրել եմ
հենց ա՛յդ իրավունքին
արժանանալու համար:

Բայց այսօր, երբ ես արդեն
– մտածե՛լն անգամ սարսափելի է –
(տարիքո՛վ, անշուշտ) մեծ եմ
Նարեկացո՛ւց ու Թումանյանի՛ց,
Չարենցի՛ց ու Սևակի՛ց –

հասկանում եմ, որ
այդ բառերն արտասանելու իրավունք
դեռ պիտի վաստակեն
նաև իմ զավակներն ու թոռնիկները,
որպեսզի ես էլ վերջապես
կարողանամ շշնջալ.
«Հայրենի՛ք իմ, Հայաստա՛ն,
ես սիրում եմ քեզ»:

## «ՆՈՐԻ՞Ց…»

*Նորից հայերի արյունն է թափվում,*
*այս անգամ Քեսապում…*
*(Թերթերից, 2014 թ., ապրիլ)*

Համարյա թե հավերժակա՛ն
Մեր հարցն ո՞ւմ ենք ուղղել տեսնես,
Մեր հայացքն ո՞ւր հառել ի տես
Ու կարկառե՛լ խաչի՛ սովոր մեր ձեռքերը.
– Նորի՞ց՝ թալա՛ն ու կոտորա՛ծ…
– Նորի՞ց՝ արյո՛ւն ու նորի՞ց՝ լա՛ց…
– Ա՛խ, ո՞վ պիտի տեր կանգնի մեր գլխին անտեր
(Երբ աշխա՛րհն իսկ չի՛ դարձել իր գլխի տերը)…

– Ո՞վ վերջ պիտի տա մեր ցավին՝
Մեզ դարանած մթին դավին…
– Տեսնես մեկը պիտի ասի՞՝ «Եղբա՛յր, չեղա՛վ,
Բա՞վ չէ, արդյոք, Հայոց արյունն անմեղ հեղված»…

Եվ հոգեցունց այլ բյուր հարցեր,
Որ մեր սի՛րտն են արել ավեր
Ու մեր հոգին՝ տակնուվրա՛՝
Կեռվելով մեր բախտի վրա…

ՉԷ՛, քանի դեռ՝
Մեր աչքերում մորմո՛ք-մորմո՛ք,
Մեր աչքերում՝ կսկի՛ծ-կսկի՛ծ,
Պիտի հայե՛նք Աստվածն ի վեր,
Ու հառաչե՛նք արտասվալից
Ու հա՛ր կրկնենք «չմոռացվող ու հարազատ»
Հարցերը մեր,
Եվ քանի դեռ թա՛րս չենք բռնել մեր խաչը հին
Ու չենք դարձրել … թո՛ւր հավլունի,
Եվ քանի դեռ նորի՛ց պիտի «նորի՞ց» տնքանք
Որպես աղոթք ու աղերսանք,–
Պիտի նորի՛ց լինի … «Նորի՞ց»…

## ԵՐԳ

*Գոհար Թեփուլյանին*

Իմ հոգին գիշերն է ձեզ պետք,
որ լցվեք աստղերով իմ հույսի,
թաթախվեք խորությամբ իմ լույսի:
Իմ հոգին գիշե՞րն է ձեզ պետք:

Իմ հոգին ձմռանն է ձեզ պետք,
որ հրով բորբոքվեք երազիս,
լիանաք մաքրությամբ եղածիս,
Իմ հոգին ձմռա՞նն է ձեզ պետք:

Ես ճզմե՞լ եմ արյան գնդիկներն իմ ազնիվ
ու քամել՝քամվելով կա՞թ առ կա՞թ,
ու գինի է դարձել իմ հոգին անբասիր,
ապրող ու ապրեցնող – անարա՞տ:

Ես կգամ, երբ բառեր չեն լինի,
չի լինի աշխարհում գույն ու բույր,
կխմե՛ք կարոտով իմ հոգու խենթ գինին՝
իմ հոգին կըմպե՞ք դուք – մինչ մրո՛ւր:

***

Դու գիտե՞ս,
Ես գտե՞լ եմ արդեն իմ այն օրը միակ,
Որն իր մեջ է քաշում տրոփող սրտի պես
Իմ անցած ու անցնող ճամփաները հրակ,
Դու գիտե՞ս այդ օրն իմ ...
Չգիտե՞ս:

Դու գիտե՞ս,
Որ այդ օրն իր խորքում պահ առ պահ
Մաքրում ու կուտակո՞ւմ է իր մեջ
Կարոտիս մոխրացած փշուրներն արնավառ...
Դու գիտե՞ս այդ օրն իմ ...
Չգիտե՞ս:

***

*Որդուս՝ Տիգրանին*

Ամեն բառն իմ մի նոր վերջ է՝
Կրկին ու կրկին սկսվող,
Մեկ՝ կարոտիս վայրէջքն է,
Մեկ՝ երազանքն իմ՝ ժայթքո՛ղ:
Թակարդ է բառն իմ ահա՝
Ինքնաստեղծ թակարդ:–
Ես քարշ եմ տալիս նրան՝
Մեկ ոտքով բռնված – հանկա՛րծ;
Մեռնելով ամեն ակնթարթ,
Ամեն ակնթարթ հառնելով՝
Սպառվո՛ւմ եմ թակարդ առ թակա՛րդ
ՈՒ ... մաշվում՝ հողիս խառնըվելով:

## ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ - 2016

*«Հոհերի քանակը, դժվարությունները մեզ չեն զրկում*
*մեր բուն նպատակին հասնելուց:*
*Ցավ ապրել՝ չի նշանակում զրկվել համառությունից»:*
*Բակո Սահակյան*
*Ղարաբաղի նախագահ*
*(Ապրիլ, 2016 թ.)*
*Հանուն հումանիզմի կոտորեք նրանց:*
*Մկրտիչ Սարգսյան*
*(«Քաջ Նազար»)*

...Ցայսօր էլ չհայտարարված պատերազմը
երբեք էլ չէր ավարտվել:–
Այն շարունակվում էր (դեռ ու նույնիսկ) չսկսված:
Քանզի անվերջ է մեր՝ գուցեև չտեսած ու չընկալած
դաժան իրականությունը,
իսկ համբերությունը՝ անսահման (ավա՛ղ):
Հարձակումը յուրաքանչյուր լուսավոր տան վրա
շարունակվո՛ւմ է, որը հարձակում է
միաժամանակ բոլո՛ր լուսավոր տների վրա:

…Ես ուզում էի պատմել
իմ ապրած տարիների մասին,
իսկ ավելի ճիշտ՝ այն մասին,
թե ինչպե՛ս եմ ապրել այդ տարիները:
Սակայն այսօր այնքան եմ խեղճացել,
որ կասկածում եմ արդեն.
եղե՞լ է, արդյոք,
տարիներ կոչված օրաշարը,
որը դեռ ապրա՛ծ էլ լինեմ:

…Չի լինի ոչինչ
(անգամ գոյատևելու համար
նախատեսված տարիները),
եթե իմ միջից չպեղեմ-չհանեմ
հազար յոթ հարյուր տասնչորս տարի
զսպվելով կուտակվող և արդեն
չարություն դարձող սրբագույն Վրեժն իմ,
որն այսօր (միայն նա՛)
անհրաժեշտ է ապրելու համար –
և ավելի՛, քան Աղոթք
ու Վշտակցություն –
Ցավակցություն –
Կարեկցանք կոչվածները՝
իհարկե, առանց մերժելու
դրանց գոյության իրավունքը:–

Հանուն Ի՛մ ճակատագիրն Ի՛մ իսկ ձեռքով
տնօրինելու իրավունքի…

…Դաժան է, բայց պիտի ասեմ.
Բարությունը պահպանելու – պաշտպանելու համար
այսօր պետք է հրաժարվել անգամ… Խղճի՛ց:–

…Որպեսզի նրա հաղթանակը
միայն հեքիաթներում չլինի:

*02.04.2016*

## ԳԱՐՈՒՆ Է ԿՐԿԻՆ

*Հայոց եղեռնի*
*70-ամյակի կապակցությամբ*

Պոչի մկրատով
Հանդիսակատար ծիծեռը ճարի[1]
Ժապավենն արդեն կտրել է կարմիր
Գարնանամուտի ցնծավետ բացման…
Եվ մեր բարձըրիկ
Հայոց աշխարհին է
արտասվում խորո՛ւնկ,
Հայոց աշխարհին է
արտասվում մաքո՛ւր,
Բայց արտասուք է դա թեթևացմա՛ն:

Գարո՛ւն է կրկին:
Բնության անհուն
Խենթ-խելառության հրճվանքների մեջ
Երազանքների սալյուտի հանգույն
Երգի բողբոջներ են ճայթում շքեղ:

Գարո՛ւն է կրկին:
Տո՛ն դալարագեղ…
Եվ իմ մեջ Ցավի մի ռումբ է պայթում,
Որ, ա՛խ, դըրախտի դռնից լուսահեղ
Մարդ հաճախ նաև
Դժո՛խք է մտնում…

*1985*

---

[1] *Ճարի – առույգ:*

## ԻՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

*Աղաչում եմ – ինձ վերադարձրու քե՛զ…*
*Ա.Ս. («Արևաքամի» ժողովածու, 1989)*

Թող որ չե՛մ եղել ես *այն* ժամանակ,
Սակայն ամեն ինչ ես լավ եմ հիշում։–
Ահա Աղրիտի ընկուզենին հաղթ
Շաղվում է–հալվում … մնացող մուժում։

Ու «սանդալն» ահա – առագաստն արի –
Սև ծովի արցունք–ալիքների մեջ՝
*Անշեջն* է Զատիկ տնավեր պապիս,
*Համշենը* փոքրիկ՝
մարդաշխարհում մեծ։

Դո՛ւ՝ Վահա՛գն ազգ,
Դո՛ւ՝ Տի՛ր ժողովուրդ,
Դո՛ւ՝ սրտի մորմոք ու կարոտակե՛զ…
Տուր ինձ հոգու ձի՛րք, կորո՛վ տուր հոգու,
Որ քո՛ տվածը վերադարձնեմ … քեզ…

## ՀԱՎԱՏՔ

*Լուսինե Մարգարյանին*

Ասում է նախնյաց սուրբ հավատքը հին,
Որ ձիու պայտը բախտ է տուն բերում,
Եվ հավատքին այդ հար հավատարիմ՝
Այն երազանքն ենք հոգով փայփայում,

Որ հուսահաստատ գարընդուռի պես
Մասիսն իր օջախ՝ Հայ տուն կդառնա,
Ձի Տիգրան Մեծի ձիու պայտն ինչպես՝
Արցա՛խն է շողում մեր շեմի վրա։

## ՀԻՄԱ ՇԱՏ Է ՍԻՐՏՍ ՓԱՓԿԵԼ…

Հիմա շատ է սիրտս փափկել
Ու դարձել է ներո՛ղ այնքան,
Թափառում եմ աշխարհով մեկ,
Որ աշխարհում փնտրեմ-գտնեմ
(Աստվա՛ծ չանի, որ բաց թողնեմ)
… ներելո՛ւ բան։–
Դա՛ է այսօր իմ սուրբ բանը…

Ներում եմ ձեզ,
Որ այն պահին,
Երբ պիտի ձեր կտրուկ-հատու
Խոսքը հնչեր ահազանգ ու աղոթքի՛ պես,
Լռե՛լ եք և …
Սատարել մեր սրտում չարի՛ հաղթությանը…

Ներում եմ ձեզ
Ձեր չսեղմած ձեռքի համար՝
(Ձեռքսեղմումի
ի՛նչ անսպառ ջերմի կորուստ՝
Մոռանալով, որ բարևը Աստըծո՛ւնն է),
Որն այնպես էլ
Կախված մնաց հանց կեսկամուրջ՝ գետի վրա՝
Չհասնելով ափը մյուս…
Եվ կհասնի՞, թե՞ չի հասնի –
Կասկածո՛ւմ եմ։

Ես ներում եմ
Նայվա՛ծքը ձեր,
որ չի դարձել երբեք
… հայա՛ցք,
Ես ներում եմ
Տոտ-տո՛տը ձեր,
որ չի դարձել երբեք
… քայլվա՛ծք…

Ներում եմ ձեր թոթովա՛նքը,
որ այդպես էլ չդարձավ
խո՛սք…
Ներում եմ ձեր գրավո՛րը,
որ այդպես էլ չդարձավ
գի՛ր…
Ներում եմ ձեր «չիլ» չդրված
սերմն այն, որը չի տվել
ծի՛լ…
Ներում եմ ձեր հեռացումը,
որ դարձել է խղճուկ
փախո՛ւստ…
Ներում եմ ձեր կրակոցը,
որ չի հասել նպատակին –
այսինքն՝ փո՛ւստ…
Կա՛թն եմ ներում ձեր սերաքամ,
որ չի դառնում հալալ մածուն –
այլ լավագույն դեպքում՝
լոկ թա՛ն,
այն էլ ջրի՛կ, այն էլ անհա՛մ…

Ներո՛ւմ եմ ես այս աշխարհի
մեղքերն անթիվ ու անհամար…

Եվ աշխարհն է դառնում հանկարծ
այնքան անմե՛ղ ու կատարյա՛լ,
այնքան արդա՛ր,
Հոգեհմա՛…

Ես ներում եմ մեղքերը ձե՛ր,
Որ ի՛մ հոգին թեթևանա՛…

***

Թեկուզև կյանքն իմ չի եղել անհոգ,
Ոէ դեռ ավելին՝ անցել է դժվար,
Սակայն անդունդի եզրին հույսն անգո
Հաճախ է եղել փրկության օղակ:

Եվ օգնել են ինձ Աստվածներն Հայոց
Գտնելու երկրիս խինդերն հողեղեն:
Եվ … կգոհանա՛մ ես իմ ներկայով,
Եվ կսավառնի հոգիս անեզե՛րք…

Եվ կյանքում ի՛նչ էլ չարարվի հանկարծ,
Եվ ի՛նչ վտանգ էլ չսպառնա հողին,
Պիտ փառաբանեմ
լույսն այն անարատ,
Որ կարող է դեռ փրկել մեր հոգին:

## ԹԵ ՉՀԱՆԴԳՆԵՐ ՀՈԳԻՍ ԽԱՂԱՂՎԵԼ

Ես ծնկի կիջնեի
ճակատագրիս առջև
ու այն կհամարեի հաջողակ,
եթե երկարացներ կյանքն իմ
գեթ մի ակնթարթով –
ծռության ու մեղքաքավության:–

Թե չհանդգնե՛ր
հոգիս խաղաղվել…

***

**(Նկարիչ Վլադիմիր Աբրահամյանի արվեստանոցում)**

*Նանեգյուլ Մայիլյանին*

Ես հիմա ցավի կրակ եմ արել
անապատներում ճակատագրերի…

Եվ հանկարծ,– որպես բազմաստեղ հրաշք,
որպես Հողի ձոն
և Երկնքի հիմն,–
իմ հոգում այն երգն է հնչում խորունկ,
որն ունի միայն մեկ արդար ծնունդ
և ունի միայն մեկ անեղծ թռիչք
և վախճան չունի
ո՛չ Հողի վրա,
ո՛չ Տիեզերքի
Անսահմանության
ոլորտների մեջ:

Հո՞ղը երերաց իմ ոտքերի տակ,
թե՞ հոգիս ցնցվեց
Բառի պայթյունից –
գուցե երկո՞ւսն էլ եղան միասին
երաժշտության՝
իրար լրացնող
հնչյունների պես փոթորկածավալ:–

Եվ արմատներիս դեմ առան քարեր –
հսկա, կարծրագույն, սրակող քարեր,

և արմատներն իմ
սահեցին ներքև,
թափանցեցին պիրկ քարամարմնի մեջ
և փաթաթվեցին-միահյուսվեցին
անբաժանելի

և ագուցվեցին
մեջքը աղջկա գրկող ձեռքերի
մատների նման:–

Եվ հիմա չկա ոչ մի հզոր ուժ,
որ ինձ բաժանի քարերից Հողիս:

…Արդ, երազանք է աչքիս դեմ կաթում՝
շաղվելով եզրին
Մեծ Տարածության,
որը կոչվում է
Բախտի հորիզոն:

*1985*

## ԱՌԱՋՎԱՆԸ ՉԵՆՔ

*Վալենտինա Արգունին*

Առաջվանը չենք,
որ տնով–տեղով, թողած Հայրենիք,
անտեր ու անտուն ցրվե՞նք աշխարհով՝
մեր սրտի վրա մի բուռ հող պահած՝
հարազատների
սուրբ շիրիմներին քաշելու համար:

Առաջվանը չենք,
որ եկեղեցում խոնարհված–ծնկած՝
թողություն հայցենք
երբեք չգործած մեղքերի համար:
Առաջվանը չենք,
որ մա՛հ ընդունենք ապրելու համար:–

Ապրելու համար մենք չենք մեռնելու,
ապրելու համար մենք պիտի ապրե՞նք:

*1977*

## ՈՂԲ ՄԻ ԲՈՒՌ ՀՈՂԻ

*Սիրական Սևունու հիշատակին*

Ամեն տարագիր ու բախտագնաց,
որպես օրհնություն ու ոգեղեն հաց,
իր սրտի վրա մի բուռ հող դրել
և մի սևակնած ուղի է բռնել…

…Ու անցած իրենց ճանապարհներին
լո՛ւյս-լո՛ւյս մաշելով կարոտի բարին՝
քայլել են, քայլել ծանր ու գլխահակ…

Քայլել են՝ մրսող սրտերին Կրա՛կ –
մի բուռ հայրենի Օրհնանք ու Ցասում,
մի բուռ Փոթորիկ ու մի բուռ Մասունք,
մի բուռ խենթ Ավիշ, մի բուռ Թալիսման,
ոգու սուրբ Նեցուկ, ոգու Հենարան…

Բռնել են նրանք մի մոլոր ուղի
և ձգողությունն հայրենի հողի
հաղթահարելով … չե՛ն հաղթահարել
և նորից իրենց Հողով են ապրել –
այրվել են իրենց Հողի Կարոտով,
արբել են իրենց Հողի Խաղողով
և հագեցրել են ծարավը՝ իրե՛նց
Հողում ամփոփված Աղբյուրով անեղծ…

Սակայն… Տարե՛լ են Հողը Հայրենյաց
որպես Օրհնություն ու Ոգեղեն Հաց,
որպես ինքնաստեղծ մի ռումբ են տարել,
որ պայթի, եթե մայրենին դավեն,
տարել են՝ դառնա խոժոռ գերեզման,
եթե սև գործի լինեն համաձայն…
Պտղունց առ պտղունց տարել են, տարե՛լ
և Հայոց հողում էլ հող չեն թողել…

Եվ մնացել են ժայռե՛ր ամեհի՝
սո՛ւր-սո՛ւր կողերին՝ արևաքամի։–
Իրար որոնման արդյունքով իրա՛ր
ներծծված Արև՛ ու հողմածեծ Քա՛ր։

*1985*

## ԱՂՐԻՏ
**(Տրապիզոնի գավառ)**

Աղրիտ, ա՛խ–Աղրիտ…
Մենք բարեկամներ գտնելու հույսով
Քանի՛ փութ աղ ենք անհագուրդ կերել…
Եվ Տրդատ պապի[1] բերած աղն անգամ
Շատ քիչ է եղել հասկանալու, որ
Ընկեր-բարեկամ մենք չե՛նք ունեցել։

Աղրիտ, ա՛խ-Աղրիտ…
Մեր կերած աղից
Աղի՛ է անգամ արտասո՛ւքը մեր…

Եվ Յամպոլի գետն արտասուքն է մեր
Լցրել Սև ծովն ու նրա ջրերում
Աղը խտացրել…

Աղրիտ, ա՛խ-Աղրիտ…
Մեր կերած աղից
Աղի է անգամ …
Արյո՛ւնը մեր տաք
Եվ … փառքն արժանի է եղել միշտ քեզ…

*1979*

---

*[1]Ըստ ավանդության, տրապիզոնցի Տրդատ պապը մեծ քանակությամբ աղ է բերել գավառի գյուղերից մեկն ու բաժանել համագյուղացիներին։*

*Այստեղից էլ՝ գյուղի Աղրիտ անվանումը։*

## ԱՐՑԱԽ

*Լուսինե Մարգարյանին*

*«Պատիվդ հողին հավասար չանես»*
*Ժողովրդական*

Մանկութ ենք լսել,
որ մաքուր պիտի մարդ ապրի կյանքում,
ու լինի բարի՛, ամենաներո՛ղ,
բա՛րձըր ու վսե՛մ
ու երբե՛ք չիջնի
մարդու բարձունքից,
որ ծնողների հույսն արդարացնի
և ժառանգներին թողնի վեհ անուն,
այսինքն՝
լինի «լա՛վ մարդ»,
մեծատա՛ռ:

Եվ … լուսավոր հետքն ապահովվա՛ծ է
հետմահու կյանքում:

Իսկ դրա համար –
եղած-չեղածն ի՞նչ –
իսկ դրա համար
եղած-չեղածը … պիտի որ չիջնե՛ս
ու չըստորանա՛ս-չըհավասարվե՛ս
մեծ մեղավորին,
որն հո՛ղ է կոչվում,
և աստվա՛ծ չանի՝
«պատիվդ հողին
հավասար անես»…

Հավասա՛ր … Հողի՛ն…

…Հո՛ղ իմ հայրենի,
հարազա՛տ, շռա՛յլ ու կենսահաստա՛տ,
ես, որ ստացել եմ քեզ հանց ոգի՛,
ստացել եմ հանց ինքնության խորհո՛ւրդ
և վերին պարգև՛
ու հաստատակա՛մ,-

«լավ մարդ» լինելու՝
մարդո՛ւ բարձունքին հասնելու համար
եղած-չեղածը (թող ների աստված)՝
պիտի կտրվեմ քեզանից, այն էլ
ինչքան շա՛տ՝
այնքան մաքո՛ւր կլինեմ,
Ինչքան շա՛տ՝
այնքան կլինեմ արդա՛ր,
«Լա՛վ մարդ,
մեծատա՛ռ»:

Եվ դրա համար
ինձ ընդամենը պետք է
…հաստ ներբա՛ն:

…Իսկ ես այնպե՛ս եմ
ուզում «մեղավոր» լինել ու «վատ մարդ»,
վեհանալու պես
ու աստվածատուր պարգևի՛ հանգույն
հողին հայրենի իջնել-ծնկելու –
կրծքիս սեղմելու և գուրգուրելու
գերագույն պատվին
լինել արժանի,

որ … ոտաբոբի՛կ
կանգնեմ Մայր հողին,
բոկո՛տըն անցնեմ
իմ կյանքի ճամփան:

*25.05.2013*

## ՀԱՅԱՍՏՎԱԾՆԵՐ

*Սարո Գյոդակյանին*

Հայաստվածների պատգամախոսը
երբե՛ք չեմ եղել,–
Հեզ ու հնազանդ պատգամատե՛րն եմ
Հայաստվածների,
Եվ անխղճորեն
նրանցից մի օր խիղճն իմ չե՛մ շեղել:–
Թեև լա՛վ գիտեմ,
որ Դատաստանի առջև Այն Ահեղ
Ամենաներողն ու Մեծահոգին
Թողությո՛ւն կտար հոգեմեղքերիս
ցնծությամբ վերի՛ն, անկասկածելի՛…

Սակայն ես հաստա՛տ գիտեմ նաև, որ
Ինձ չէին ների Հայաստվածնե՛րը՝
Դաժանության՝ չափ
արդա՛ր ու հզո՛ր:

***

Է՛խ, Տրդատ արքա՛…
Սո՛ւր էր սկզբում՝
հզոր ու խրոխտ
և սարսափազդու:–
Ո՛ւր մի օր սուրն այդ
խրեցինք հողում
արարչապարգև
և դարձավ նա … Խա՛չ,
Հոգի՛…
Իսկ Թևերն աճեցին հետո՛…

Սո՛ւր էր,
դարձավ խա՛չ…

## ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ

*Հայ միջնադարյան տաղերի*
*անզուգական կատարող*
*Մանիկ Մանուկյանին*

Այսպիսի երկունք  ու անակնկալ,
Ոէ հոգեցնցում  ու պոռթկում
… հանկա՛րծ,
Երբ քեզ հար պաշտող
մեր հարկի ներքո
Կրկին ալիքվեց ձայնդ –
առինքնո՛ղ…

Արարո՛ւմ է մի հրաշադարձյալ,
Այնպես վերծիգ ու
այնպես լայնարձակ,
Որ աստվածային քո երգերի մեջ
Լեռնե՛ր են հառնում
և – ավելի՛ պերճ:

***

Ջրի փոխարեն գինի՛ են խմել
Մեր պապերը մեծ՝
մաքո՛ւր, անարա՛տ,
Համշենահողի կարոտն է բխել
Եվ ալի՛ք-ալի՛ք հասել Արարատ:

Լույսն արեգական պայթե՛լ է անեղծ
Նրանց սրտերում մուժով հարածոր…
Գինի՛ են խմել մեր պապերը մեծ
Եվ մինչև հիմա
… ե՛ս հարբա՛ծ եմ խոր:

## ԼԵԳԵՆԴ ԵՓՐԵՄ ՊԱՊԻՍ

Եվ ամեն առավոտ
հողը բարձրանում էր վեր
և հավասարվելով քեզ՝
սիրտը դնում քո ականջին,
որ լսելով հատու զարկերը նրա՝
արթնանաս,
և աչքերիդ լույսը՝ դառնալով ցայգաբաց,
կոկոնաբացվեր ծովափսեի վրա
և բուրմունքն իր սփռեր մեր հոգում:

Բայց մի օր էլ հողը չբարձրացավ:–
Եվ դու զարթնեցիր անհանգստացած –
չլինի՝ նեղացե՞լ է իր մշակից…

Աշխատանքից կոշտացած ձեռքերով
քնքույշ շոյեցիր միշտ քեզ հետ քնող թոռան՝
բարձի վրա ալիքվող գանգուրները,
համբուրեցիր ճակատն ու դուրս եկար:–

Քո հաստատուն քայլերի՞ տակ,
թե՞ տագնապահալած մտորումներիդ
ծանրության ներքո ձյունը տնքաց-տնքաց,
և առավոտն հախճապակյա
ձմեռային անտառի խորհրդավոր լռության
մեկնաբանումը խոստացավ քեզ:

Հետո դու անշտապ կռացար,
ձյունը զգուշությամբ ետ արիր ձեռքերով
և ականջդ դնելով հողին՝ զգացիր,
որ թուլացե՞լ է նրա զարկերակը:

…Եվ դու որոշեցիր
հողի սրտի զարկերից մեկը դառնալ…

*1984*

***

*Որդուս՝ Հայկին*

Եվ իմ պապը մեծ՝
այր արդար Զատիկ,
Գեղջկական խորին հուզմունքով
անզուսպ,
Այգին մտնելով փարթամաշշուկ՝
Արցունքն աչքերին՝ կտրել է մի ցուպ:

Մի ցուպ է կտրել բախտագնացի,
Նաջախով տաշել՝ հղկելով անբիծ:
«Լա՛վ կծառայի»,– ժպտացել տխուր
Ոի վեր է կացել՝ գոհ աշխատանքից:

Եվ հետո նրա հոգուն է հասել
Անե՞ծքն Աստըծո,
Խո՞սքն հոգեհմա.
«Բյուր դարեր կգան, կդառնան փոշի,
Բայց քո բարեշեն ցուպը կմնա»:

Եվ պապս քայլեց
անհայտ աշխարհներ
Եվ դարեր եկան, փոշի դարձան չոր,
Նա Համշե՛ն հասավ,
Հետո՝ Նո՛ր Համշեն,
Իսկ հիմա, Աստվա՛ծ, ո՞ւր,
– Ամենանո՞ր:

*1992, օգոստոս*

## ԻՄ ՊԱՊԸ

Լույսով մակարդված շուրթերով պապակ
Հոգու կարոտի խոսքն եմ մրմնջում,
Երբ ցավի պես մի ծանոթ ճանապարհ,
Ա՛խ, կանչո՛ւմ է ինձ,
կանչո՛ւմ է, կանչո՛ւմ…

Ինչպե՞ս դիմանամ այդ կանչին հզոր
Ու վեր չկենամ՝ ճանապարհ ընկնեմ,–
Պա՛պս է անցել այս ճամփան մի օր
Եվ ահա կարծես կանգնում է իմ դեմ:

Եվ ահա կարծես կանգնում է իմ դեմ –
Նրա ձեռքերի ճեղքվածքում ահա
Աղրիտի ըղրե հողն է ծվարել
Եվ արդեն-արդեն պիտի մայրանա…

Եվ պապս իմ դեմ կանգնում է ահա –
Պատվապահ-բարի,
տխուր-երազուն,
Եվ հաղթահասակ կեցվածքում նրա
Գալեյճուկ լեռան կարոտն է թախծում:

Բայց… պատրա՞նք է դա մի հրաշալի,
Հային հայ պահող մի բարի պատրանք:–
Պապս այս ճամփան անցել հույսով լի
Եվ հրճվա՞նք-հրճվա՞նք մաշվել է վրան,

Լույս-լույս սպառվե՛լ
այս ճամփին քարոտ,
Որ չխարխափենք խավարի մեջ խիտ,
Հասնենք մինչ Սև գետ,
մինչ Տրապիզոն,
Մինչև Ոհնիե և մինչև Աղրիտ:

*1992, օգոստոս*

## ԱՆՍՊԱ՛Ռ…

Նենե՛…
Երազանքների ու կարոտների
լույսերի մեջ մորմոքող անուն,
շուրթերիս թրթռող մի Անսպա՛ռ…

Արդեն առանց քո շնչի
ծանրանում է
իմ թանձրացող արյունը…

Կարոտիս ձգողական ուժից
երկրագունդն է բարձրանում
և արդեն հավասարվում է սրտի՛ս:

Ես հիմա շատ եմ ուզում, որ դու գաս…

Եվ երբ դու կգաս
(իսկ դու կգաս անպայման),
ես քեզ կպատմեմ,
որ ամեն օր
մեր արյան մեջ ճյուղավորվում է
Աղրիտի Իմաստության ծառի
և Կամքի աղբյուրի առասպելը,
որն արդեն եղելություն է դարձել:–

Նենե՛ – մե՛ծ մայրիկ…

Հավատա ինձ, նենե՛,
քո առասպելը հարություն չի առնելու,
որովհետև չի՛ մահացել:

## ՄԱՅՐՍ

Դու մա՛յր էիր նաև –
Երեսուն տարի
Անկողնուն գամված
Հայրիկի՛ս համար,
Եվ այդ պատճառով
Եղել է նա ինձ՝
Հայր լինելու հետ՝ նաև … մեծ եղբայր:

Եվ դու ախորժակ շատ ու շատ հաճախ –
Չգիտեմ ինչո՛ւ –
էէի՛ր ունենում…

Եվ իմ ավելորդ կերածն եմ ահա
Ակնածանքով քո թոռներին թողնում:

*2000*

***

Մեծ տագնապ է իմ հոգում
կուտակված…
Անքուն գիշերն էլ չարահերթն է լոկ:

Թափառո՛ւմ եմ ու թափառո՛ւմ՝
հանկա՛րծ
Կասկածանքներիս արահետներով:

Չգիտեմ, հիմա ի՞նչ եմ անելու,
Չգիտեմ՝ հիմա ի՞նչ չե՛մ անելու.
Կտրե՞մ-չկտրե՞մ կապերն իմ բոլոր:

Թեև կտրեմ էլ՝ նո՛ւյնն է լինելու,
Ոի չկտրեմ էլ՝ նո՛ւյնն է լինելու –
Չի՛ դիմանալու հոգիս անամոք:

## ՖԻԴԱՅԻ ԳՐԻԳՈՐ ԹԵՓՈՒԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*«Զայն համշենական» թերթի*
*գլխավոր խմբագիր*
*Սերգեյ Վարդանյանին*

Դառնում է հոգուն շաղվող մանանա
Համշենախոսքը՝ խշխշան ու զով:
Եվ արևորված՝ ետ է դառնում նա
Դեմքին կնճիռված արահետներով:

– Գնա՛մ,– ասում է,– գնամ մեր Էրգիր,
Արդեն Համշենի մայր ընկուզենու
Արմատներն հեռվից կանչում են՝ էգի՛ր,
Գնա՛մ, ես նրան ուժ՝ ի՛նձ եմ տալու:

Գնամ, հո՛ղ դառնամ ծառին երազուն…
Իսկ ձեզ թողնում եմ,
որպես սուրբ նշխար,
Համշենահողի մայր ընկուզենու
Կանաչ խշշոցը հայրենաբարբառ:

## ԳԱՐՈՒՆ

Շռա՛յլ է եղել, եղել անհագո՛ւրդ
Արեգը սիրո քնքշանքների մեջ:–
Տե՛ս, հողն է շնչում,
լայնակո՛ւրծք, մաքո՛ւր,
Սիրո վայելքից՝ երջանիկ ու մեծ:

Տե՛ս, ծանրոտությամբ[1] հրճվելով հողի՝
Լեռներից խո՛ւլ-խո՛ւլ գետերը հոսում
Եվ ծիածանի մեջ շաղուշողի
Քաղցր մայրության մասին են խոսում:

---

[1] *Ծանրոտություն – հղիություն:*

## ԳԱՂԹ-1992

*Բանաստեղծ ընկերոջս՝*
*Հովհաննես Գլակի հիշատակին*

Մշուշի մեջ՝ փափուկ շաղվող,
Նավն է ճոճվում մեր հնազանդ։–
Տառապում եմ հոգի հանող
Ծովային սուր հիվանդությամբ։

Եվ իմ հոգին ճոճքի վրա
Ալիքվում է հանց առագաստ,–
Սի՞րտս է լինում տակնուվրա,
Թե՞ երկինքն է փլվում վրաս։

Ես ցնցվում եմ տերևի պես,
Տերևի պես դեղնում քիչ-քիչ,–
Պիտի հասնե՞մ  ափ վերջապես,
Թե՞ ավանդեմ այստեղ հոգիս։

Եվ կհանձնեն մարմինն իմ գոս
Ալիքներին փրփրադե՛զ…
Գուցե մեկը ասի՝ ափսո՛ս…
Գուցե ասեն՝ երանի՛ քեզ…

Փափուկ շաղվող խիտ մշուշում
Ճայն է թևում նավի վրա։–
Ի՞նչ է, արդյոք, ցավով հուշում,
Ի՞նչն է ցնցում հոգին նրա։

Ինչպե՞ս-ինչպե՞ս լսես նրան։–
Կապտամշուշ ծովի ճոճքում
Հա՛րցն է մնում անպատասխան։
Պատասխանն է անհարց կորչում։

*1992, օգոստոս*
*«Ռիծա» ձկնորսական նավ*

## ԱՐԵՎԱՔԱՄԻ

Իմ էության մեջ
Հի՛ն-հի՛ն դարերի խորհուրդն է ներծծվել
Հիշողության պես:
Եվ ես քարի կարոտ եմ…
Եվ ես պայթյուն եմ աստղի…
Եվ նաև՝ սիրո հառաչա՛նք եմ ես…

Իմ էության մեջ
Հի՛ն-հի՛ն դարերի խորհուրդն է ներծծվել
Տառապանքի պես:
Եվ Հայկի շանթանման նետի
Շփումից այրվո՛ւմ է իմ մարմինը դեռ:–

Եվ ծավալվո՛ւմ եմ ես
Մասսի ձյան վրա,
Եվ … թավալվո՛ւմ եմ ես
Մասսի ձյան վրա,
Որ … մեղմե՛մ մի քիչ այրումը ջեռ:

***

Աստղերն արեգակնե՛ր են,
եթե նրանց զգում է գոնե մի հոգի,
որն, անշուշտ, բանաստե՛ղծ է լինելու:

Հացի մի պատառն էլ
Հաղթանա՛կ է,
եթե նրան պատրաստ են կիսել
թեկուզ երկու հոգի:

Եվ անմա՛հ է այն օջախը,
որն ուժ է առնում մանկական սրտի
ջերմությունից:

## ՓՈՔՐԻԿ ԼԵԳԵՆԴ

**(համարյա ժողովրդական)**

Հանդը՝ ճոճանակ երկնքից կախված:
Եվ ամբողջ գիշեր Ոռին հերարձակ
Թախծում է.
– Տեսնես, ո՞ւր կորավ Քամին,
Ինչո՞ւ գիժն այդ չի ճոճում ճոճքը իմ:

Ա՛խ, ես ի՞նչ անեմ,
Ա՛խ, փնտրեմ որտե՞ղ,
Թե՞ ինձ մոռացել՝
Գտել է նոր սեր…

Թե ինձ մոռացել, սեր է գտել նոր,
Ես ինձ կխեղդեմ գետակում այս խոր…
Ա՛խ, առանց նրան ապրել չե՛մ կարող,
Ա՛խ, այրում է ինձ մի անանց կարոտ…

Ոռին գետափից էլ չի հեռանում –
Սպասում է իր սիրած գիժ Քամուն
Եվ այնպես տխո՛ւր,
Այնպես մորմոքո՛ւն
«Ապրեմ-մեռնեմի» էջեր է պոկում.

– Սիրում, չի սիրում…
Ապրե՞մ, թե՞ մեռնեմ…
Սիրում, չի սիրում…
Ապրե՞մ, թե՞ մեռնեմ…

…Պոկված թերթերն են աղավնի դառնում
Եվ անուրջների երկնում սավառնում,
Իսկ Լուսնալիրն էլ կրծքում երկնքի
Թերթապոկ եղած սրտիկն է ծաղկի:

*1985*

## ՍՈՒԽՈՒՄՆ ԱՌԱՆՑ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ

Դասավարտն ազդարարող զանգից հետո
Սուխումի օրինակելի 4-րդ հայկական դպրոցից
այս անշուք ճանապարհով
մանկության ընկերոջ՝ Վաչագանի[1] ուղեկցությամբ
Չարենցը սիրում էր անշտապ զրուցելով
իջնել ծովափ, որը գտնվում էր
«ձեռքդ մեկնես՝ կհասնեսի» հեռավորության վրա:

Եվ երևի հենց այստեղ՝
Դիասկուրիայի հազարամյա քարերի վրա
(որոնք տասնամյակներ հետո
նույնանուն ռեստորանի հիմքը դարձան,
իսկ վրաց-աբխազական պատերազմից հետո
ընդունեցին նախկին տեսքը՝
ռեստորանի թալանվելուց-վերանալուց հետո)
նա չարաճճի ժպտացել է
հետագայում տասնամյակներ շարունակ
Նիկողոսյանների ընտանիքում
աղոթքի պես կրկնվող նախադասությունը.
– Ոնց էլ ես ճանկել այս քաղցրուհուն…

Իսկ քաղցրուհի՞ն… Քաղցրուհի Գասպարյանն էր:–

---

*[1]Եղիշե Չարենցի մանկության ընկեր Վաչագան Ռաֆայելի Նիկողոսյանը ծնվել է Կարսում 1895 թվականի հուլիսի 5-ին: Աշխատել է Աբխազիայի Օչամչիրի շրջանի Արակիչ և Սուխումի շրջանի Էշերա գյուղերի, ինչպես նաև Սուխում քաղաքի հայկական դպրոցներում և տեղի հայկական մանկավարժական տեխնիկումում: Լենինգրադի պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո նշանակվել է Սուխումի պետական մանկավարժական ինստիտուտի տնօրենի տեղակալ և աշխատել մինչև 1937-ի նոյեմբերը, երբ բռնաճնշման է ենթարկվել:*

*(«Համշեն» թերթ, թիվ 8, 1999 թ.)*

Ա՛յն գեղուհին ու հպարտուհին, որը
խելքահան անելով՝ մի քիչ բանաստեղծ է դարձրել
սուխումցի հայ տղաներին:

Ու այդ օրվանից սուխումցի հայ աղջիկները
պարզապես չեն սիրել բանաստեղծներին,
որովհետև «իրենց գժերը» մինչև օրս էլ
գիշերները
հանգիստ ու խաղաղ խռմփալու փոխարեն
բանաստեղծական քնքույշ տողեր են շշնջում
ինքնամոռաց՝
երազանքների ծովում ջրահարս որսալով:–
Եվ այդ տողերը,–
համոզված են սուխումցի հայ աղջիկները,–
նվիրված են միայն ու միայն
անմոռանալի Քաղցրուհի Գասպարյանին,
քանզի ամեն սուխումցի հայ տղա
անպայման մի քիչ Չարենց է:

Ու այդ օրվանից սուխումցի հայ աղջիկները
պարզապես չեն սիրել բանաստեղծներին,
որովհետև «գժերի՛ նման»… պաշտե՛լ են նրանց,
քանզի ամեն սուխումցի հայ տղայի հոգում
կա մի քիչ Չարենց:

Իսկ սուխումցի հայ տղաները համոզված են,
որ իրենց կանանց հոգում
անպայման Քաղցրուհի Գասպարյա՛ն կա,
այլապես ինչո՞ւ են իրենք
գիշերները
հանգիստ ու խաղաղ խռմփալու փոխարեն
բանաստեղծական քնքուշ տողեր շշնջում
ինքնամոռաց՝
երազանքի ծովում ջրահարս որսալով:

…Ահա այսպիսին է
Սուխումն առանց Եղիշե Չարենցի՝ 1934-ից ի վեր:

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԻՐՏԸ

*Նա պիտի պայթի, անկասկած, մի օր:*
*Ա.Ս. («Ափսացխա» ժողովածու, 2002 թ.)*

Եվ չդիմացավ
Բանաստեղծի սիրտն արյան ահարկու՝
Կաթիլ առ կաթիլ կուտակումներին:–
Կուտակումներին
Ցա՛վ ու Տագնապի՛,
Կուտակումներին
Տառապանքների՛ ու Ափսոսանքի՛…

Եվ պայթեց մի օր
Բանաստեղծի սիրտը՝ լցված հևք-հևք
ՈՒ պիրկ պըրկըված
Արյան ահարկու կուտակումներից,
Լերդացումներից կաթիլ առ կաթիլ:

Եվ ցնցվե՛ց աշխարհն այդ Մեծ Պայթյունից:
ՈՒ ցնցվեց այնպե՛ս,
Որ քիչ էր մնում
Դուրս գար Երկրագունդն իր ուղեծըրից:

– Ես միշտ էլ նրան
Կասկածանքո՛վ եմ նայել,– կուրծքն էր իր
Ծեծելով պատռում հարևանուհին՝
Ոստիկանության փոխգնդապետին
Ցուցմունքներ տալիս,–
Ինձ դուր չի եկել հայա՛ցքը նրա,
Ինձ դուր չի եկել քայլվա՛ծքը նրա,
Ինձ միշտ էլ… Երբե՛ք ինձ դուր չի՛ եկել…
Ասո՞ւմ էի, չէ՞ – ինձ չէի՛ք լսում –
Որ տեռորի՛ստ է նա, ահաբեկի՛չ…
Տեսա՞ք,
Աշխա՛րհը պիտի պայթեցներ:

## ՆԱԽԱՊԱՏՄՈՒՆ

Ահա իմ մտքի կետերից ընդամենը աննշան մեկը՝
Մոլորակ ինքնակոչվածը:

Ես հիմա հեռանում եմ նրանից,
հատկապես նրանի՛ց՝
իմ տարածության վրա չափելու
նրա – դեռ հաստատ չեմ որոշել ի՛նչը –
ոչ այն է սեգ մեծությունը,
ոչ այն է ճղճիմ մանրությունը:–
այդ տեսակների հարաբերականությունը
պայմանավորված է
իմ հեռավորության բանաձևից
ու նրանց հատումից առաջացած
անկյունակապից:

Նախապատմության լույսերի հյուսվա՛ծք՝
հատման կետն ահա այն կուրացուցիչ,
որն իր շռնդալից հեղեղի հզորով
կոչված է մաքրելու
իմ տեսողության հյուլեներն ամեն:

Ու այդպես, մաքո՛ւր-մաքո՛ւր,
իմ Անտարեսն[1] է վերջապես պոկվում
Կարիճի[2] շոշափուկներից՝
դանդաղորեն ու հաստատ մոտենալով
Ձոհասեղանի[3] Եռանկյունուն:

---

*[1]Անտարես – առաջին աստղային մեծություն: Հյուսիսային միջին լայնությունից երևում է գարնանն ու ամռանը:*

*[2]Կարիճ – կենդանակերպի համաստեղություն: Գըտնըվում է երկնքի հարավային կիսագնդում:*

*[3]Ձոհասեղան - համաստեղություն Կարիճ և Հարավային Եռանկյունի համաստեղությունների միջև:*

**ԵՍ ՀԱՍՏԱՏ ԳԻՏԵՄ,**

որ անպայման կգա այն օրը,
երբ ծաղիկները կհավատան
իրենց բուրմունքը հավաքող
ձեռքերի բարությանը…

Եվ մենք կտեսնենք,
որ կյանքը հոյակա՛պ է
նաև առանց բանաստեղծական
գեղեցիկ համեմատությունների:

Ես հաստատ գիտեմ՝
անպայման կգա:

***

**(Հորս խոսքերից)**

Մեր արտասանած
բառերն ավելորդ
թե թռչեին ետ
և մեր ճակատին
հարվածեին խիստ,

այսքան շատախոս
մենք չէինք լինի:

## ԵՐԵԿՈՅԱՆ ԷՔՍՊՐՈՄՏ ՄԱՍԻՍԻՆ

*«Ոզնի» թերթի պատասխանատու*
*խմբագիր Գուրգեն Բալայանին*

Մեծ հրճվանքի հետ
արևաքամու
ու կարոտի հետ
արեգակնացայտ,
աստղալույս շնչող
երեկոյի մեջ
լուսինը գլխիդ
իբրև բախտի պա՞յտ,
թե՞ իբրև մի կեռ
յաթաղա՜ն ծագեց:

## ԱՆՁՐԵՎ

*(ժողովրդական)*

Մի թիթեռ է նուրբ
Իմ պատուհանի
Ապակուն նստել
Եվ այնպե՛ս տխուր,
Եվ այնպե՛ս ցավով
Նայում է դեմքիս:

Թիթեռն երևի
Նախատո՛ւմ է ինձ,
Որ աստված իրեն
Մեկ օր է տվել
Եվ այն էլ այսպես
Անձրևո՛ւտ, մռա՛յլ:

*1985*

## ՀԱՎԱՏ

*Մերուժան Տեր-Գուլանյանին*

Ակնթարթը այս
լեցուն է խոտի
թարմությամբ կանաչ
ու շնչառությամբ,
օրվա երկունքի
քաղցր ցավերի
արտացոլանքով
ցողի մեջ արդար։–

Ակնթարթը այս
լեցուն է գետի
նախնական գույնի
խոր գեղեցկությամբ
և մի հավատով –
մայրամուտ կիջնի
նոր առավոտներ
ծնելու համար։

***

Հիմա՛ են վերքեր բացվում ոտքերիս վրա
ու արնահոսում…–

Ա՛յն վերքերը,
որոնք պիտի առաջանային
մանկությանս տարիներին՝
(եթե աստված տար)
Համշենի  քարքարոտ արահետներին
ընկերներիս հետ
բոկոտն ու անհոգ վազելիս…

## ԷԼԵԳԻԱՆԵՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԵՋ

***1.***

*Ալեք Սեֆերյանին*

Ամեն ինչ հիմա այնքան է
այլանդակորեն պարզվել,
որ իմ դատողությունը
արդեն հրաժարվում է ընկալել
ստեղծված իրականության
բարդությունը:

Եվ իմ՝ չսիրով դատարկված
մենակիս միակ հենարանը
հիմա Հայրենիքս է՝

այն սահմանն ու անեզրը,

որն ինձանով է սկսվում
ու ինձանից՝
վերջանալու իմ մեջ,
կամ էլ
հայացք դառնալու:

***2.***

*Խաչիկ Մինասյանին*

Գնում եմ այսպես՝
վեհ, տառապալից,
հայացքս հառած ինչի՞ երկնքին՝
ինչի՞ երկնքում որոնելով ո՞ւմ՝
իմ սրբության մեջ –
բարձր ու անհաս:
Գնում եմ այսպես
ու այսպես՝ վերև,

իմ մաքրությա՛ն հետ
այսպես՝
ճախրաթև…

Եվ հույսերի՛ս հետ,
և լույսերի՛ս հետ
ո՞ւմ եմ ո՛չ միայն
փնտրել՝
փնտրելով
չգտե՛լ երկնում
չգիտեմ ինչի՛,
այլև մոլորվել
այսքան ճախրաթև՝
իմ մաքրության հետ,
իմ լույսերի հետ,
իմ հույսերի հետ
ու դեռ քարածե՛ծ
ոտքերս արել
իմ ճանապարհին…

…Իսկ ո՞ր գարշահոտ
փչակից ես դու
ծիկրակում, անգո՛ւթ…

ՈՒ այսպես ահա
գնում եմ՝ վերև
այսքան ճախրաթև,
հար քարածե՛ծ եմ
ոտքերս անում,
հար մոլորվո՛ւմ եմ
իմ մաքրությա՛ն հետ,
իմ լույսերի՛ հետ,
իմ հույսերի՛ հետ
իմ ճանապարհին,
միայն … չգտնե՛մ քեզ
պատահաբար…

## ԱՅՍՊԻՍԻ ՈՒ ԱՅՍՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ ԲԱՌԵՐ

ես երբևէ չէի լսել …

Եվ հանկարծ հիմա,
երբ մի պահի անփութորեն ուրացա
իմ ապրած տարիները,
օրերն ու րոպեները,

ուրացա
իմ տողերն ու կետադրական
նշանները,
երազանքներն ու հնարավոր
նվաճումները,
ամոթաբեր զիջումները
և պարտությունները դառնագույն,

ուրացա
քարքարոտ արահետներիս վրա
մաշված կոշիկներիս ճեղքերից
ծլթացող արյունն ու երեխաներիս
սոված ու անքուն գիշերները,

ուրացա
հոգնած ու ջարդված մարմինս,
պատառոտված հոգիս ու սիրտս,

ուրացա
ծնողներիս հողաթմբերի վրա
խոնարհված
սալորենու մեղմ խշշոցը,–

վերջապե՛ս արժանացա
այսպիսի՛ ու այսքա՜ն
գեղեցիկ բառերի…

***

Ժամանակի մեջ ես անպայման պիտի
իմ այնքա՜ն ժամանակը գտնեմ
այսօրվա անիմաստ կենսակերպն
(ինչ գնով էլ լինի) իմաստավորելու
և ապա  նաև հաշտվելու համար
(թեև, ճիշտն ասած, դեռ չեմ էլ որոշել,
թե ո՞ւմ կամ ինչի՞ հետ եմ հաշտվելու
և պարզապես ինչո՞ւ եմ հաշտվելու
և հանուն ինչի՞,
որն ընդամենը, ինչպես արդեն կռահում եք,
տխուր ռազմավարության հարց է …)
ու, վերջապես,
աներևակայելիորեն հավատալու
(թերևս, չգիտես ինչո՛ւ՝ միայն ինքս՝ ինձ)…

Բառերին նոր երանգ հաղորդելու
մոլեռանդությամբ՝
հղկելու նման կազատեմ
ավելորդ զգացմունքայնությունից
ու զինաթափող ճիչերից,
չարությունից պայթած կոպերից,
«բազմանշանակ» քմծիծաղներից
ու արտասուքների աղից չորացած աչքերից։–
Տեսողությունս փրկելու համար։

Եվ երբ վերադառնա
փրկված տեսողությունս,
կխժռի տարածությունն ու ժամանակի մեջ
կծկվելու պես ծվարած իմ ժամանակը,
քանզի Ամեն Ինչը  խժռում է Ամեն Ինչ՝
կրկին Ամեն Ինչ մնալու
կամ էլ դառնալու համար…

*(Շարունակությունը՝ 2 տող վերև)*

***

Իմաստի փնտրտուքը
կբժշկի իմ հոգին:–
Փնտրտո՛ւքը միայն,
քանզի իմաստին
հասու չէ իմ միտքը:

Իմաստին հասնելու համար
ինձ չի հերիքում
պատշգամբից օճառե փուչիկ արձակող
մանկան
կամքն ու հավատն առ հրաշք:

## ՄՆԱՑԵԼ Է ԻՆՔԴ ՔԵԶԱՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

և ապրածդ տարիներն ուրանալը,
քանզի հավատը
բաժանման ձգանին է մատը դրել արդեն
և ակնթարթասլաքի սուրը
րոպեներդ է անխնա հատում:–
Կար ու հիմա չկա:
Կար ու հիմա չկա:

Այս էլ որերորդ անգամ կարգադրվա՛ծ է՝
չը-հա՛-մա՛ր-ձա՛կ-վե՛լ…

Եվ չմնա՛լն է մնացել հիմա:–
Կայիր ու հիմա չկա՛ս…
Կայիր: Իսկ հիմա չկաս…

…Սակայն մի ներքին ձայն
համառորեն հուշում է,
որ չհամարձակվե՛մ … չհամարձակվե՛լ…

***

*Վլադիմիր Ավջյանի հիշատակին*

Ինձ չլսեց ոչ ո՛ք-ոչ ո՛ք,
ոչ ո՛ք-ոչ ո՛ք լույս չվառեց:–

Եվ սարերը մութ թվացին
կրակների հանգած մոխիր,
քանզի ոչ ոք լույս չվառեց:

Աստղացանցի մեջ չտեսա
երազանքի թպրտող կանչ:–
Ես հրաշքն այդ կազատեի
և կառնեի ափերիս մեջ:

Եվ կառնեի ափերիս մեջ
հանց աղբյուրի
բյուրեղ կարկաչ,
կտանեի ցայգալույսին,
որ տրոփեր զարթնած մի սիրտ:

Որ ալիքեր կապույտ մի ծով,
ես կառնեի ափերիս մեջ:

Սակայն ոչ ոք ինձ չլսեց,
լույս չվառեց ոչ ո՛ք-ոչ ո՛ք:
Ես չտեսա թպրտող կանչ
աստղացանցի մեջ խտացող,
քանզի ոչ ոք ինձ չլսեց:

Լոկ մի ցավ էր անսահմանվում
իր կծկվող պիրկ կետի մեջ:–

Որ աննշան մի ակնթարթ
նրա ճիչը հարատևի,
մի մե՛ծ ցավ էր անսահմանվում:

***

Հողից եմ ծնվել բախտավոր մի օր
և մինչ բախտավոր մի օր հող դառնամ,
պիտի այս փխրուն-փխրուն իմ սիրո
համար տագնապից ու ցավից դողամ,

սև տարածության մեջ խելակորույս
սավառնող Հողիս համար … սարսափեմ –
այն ո՞ւմ աստղային խաղերում անհույս
դարձել է ոչի՛նչ… մանրադրա՛մ… անդե՛մ…

…Եվ այսպես անվերջ, և այսպես անսկիզբ…
Կյանքն էլ ո՛չ բարի, ո՛չ չար է դառնում:
Ա՛խ, ի՛նչ իմանաս՝ իմ այս տագնապից
ո՞ւմ լցված հոգին է թեթևանում:

## ԵՍ ԼՌՈՒՄ ԵՄ ԻՄ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

գիտակցելով արմատի հայտնությունը
և սաղարթի խորհուրդը,
որոնց ներդաշնակությունը
երաժշտություն է
չհաղորդակցվող հոգիների:
Ես այնտեղ եմ, որտեղ չկամ:

Ես ամենուր եմ հիմա,
քանզի ոչ մի տեղ չկամ,–
և դա ամենահաստատուն մեծության՝
բացակայությա՛ն ներկայությունն է:–

…Բայց ես լռո՛ւմ եմ իմ էության մասին, քանզի
*(Հետգրություն)*
փոխառյալ արտասուքից
աչք չի կուրանում:

## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

### *Ա.*

Ներում ես ինձ, ներում անվերջ,
Սիրե՛լ չե՛ս խոստանում,
Սովորական քո ներման մեջ
Կան անսովոր … ցասո՛ւմ:

Հիմա ես ի՞նչ անեմ, ես ի՞նչ.
Ոէզո՞ւմ ես՝ լուռ տանե՞մ:–
Ներո՛ւմ ես դու մեղքերն իմ ջինջ,
Որ չթողնե՛ս՝ քավե՛մ…

### *Բ.*

Եվ ամեն անգամ
Ես գտնում եմ քեզ
Ոէ գտնում հանց Լո՛ւյս,
Հանց Զարմանալի՛…

Եվ … կորցնո՛ւմ
Խաբկանք-Ներշնչանքի պես,
Կորցնում Հայտնությամբ
Մի անդառնալի…

### *Գ.*

Քե՛զ՝ իմ թաքնված
Իրականություն,
Լուսեղեն ասում
Ոէ ասում եմ ջերմ.
Թո՛ւյլ տուր քոնը քեզ
Տամ, իմ անհագո՛ւրդ,
Մաքո՛ւր մնամ իմ
Եվ Աստծո՛ առջև…

## ՍՈՒԽՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԻՎ 2 ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

*Սրտաբանության բաժանմունքի աշխատակիցներին*

### *1. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԵՐԵԿՈՅԱՆ*

***Ա.***

Ես զգում եմ,
թե ինչպե՛ս է իմ երակներում
թանձրանում արյունը,
շոշափելիորեն ապրում եմ
լերդացումը…

Եվ բառ առ բառ,
հնչյուն առ հնչյուն
մի ահռելի ցավով զարկում է սիրտս
և ուռչելով դեռ լրիվ չլերդացած արյան
կուտակումներից՝
անսահմանորեն կծկվում
տիեզերաստեղծ կետի հանգույն։–
Ցավը բթացրել է վախի զգացումը։

***Բ.***

Իմ տարիների ժամն է անցնում։
Եվ ոչ ոք չի ասում, թե քնել է պետք,–
որովհետև իմ ժամն անցնում է արդեն։–

Ես հիմա ընդամենը իմ հոր ու մոր
գերեզմանաթմբերի վրա՝
ի՛մ տեղում համրացած սալորենու
աղոթքն եմ,
որը երևի շուտով կսկսի վերջանալ

և ավարտին կհասնի նույն օրվա
մոտավորապես ժամը 2-ին
(հնարավոր է ± 25-30 րոպե)…

### *Գ.*

Հոգիս սիզիփոսյան խաչի
ծանրությունն է հիմա,
որովհետև այն ոչ ոքի պետք չէ,
թեև ոչ ոք չի ուզում
հավատալ ու հասկանալ,
որ առանց նրան ապրել չի կարող,
իսկ ավելի ճիշտ՝
չի՛ կարելի ապրել:

### *Դ. (ԱՂՈԹՔ)*

Ո՛վ իմ Վերջին Պահ, մո՛տ ես ինձ, գիտեմ,
Գուցե առավե՛լ մոտ իմ կարծածից,
Մի երկու անգամ այցելել ես ինձ…
Ավելի՛ն՝ ի՛նձ են կանգնեցրել քո դեմ:–

Մինչ դաժանություն
ով Արդա՛ր, Մաքո՛ւր,
Դեռ պետք չէ … տանե՛լ,
դեռ … շո՛ւտ է մի քիչ –
Դեռ չե՛մ կատարել
քայլն ամենաճիշտ –
Դեռ շատ քի՛չ եմ ես… սխալվել կյանքում:

### *Ե. (6 ԺԱՄ ԱՆՑ)*

Իմ երակներում
ահագնորեն մակընթացվում է կրակը՝
տեղատվությամբ հալեցնելով
սառցակալած արյունս,

որի հրդեհը
խառնարանից ժայթքող լավայի նման
փոթորկվում է իմ ամեն բջիջում,–
և միայն մի պահի
սարսափելի հանգստությունը
մխրճվում է համատարած ցավի մեջ:–
Ցավն այդ
միայն մայրի՛կս կփարատեր…

***2.***

***1.***

Դո՛ւք, որ չեք մահանա վաղաժամ,
դուք չե՛ք հասկանա,
որ ամենասարսափելին
*Այնտեղից* վերադառնալն էր,
որովհետև ինձ վիճակվել է
կրկին անցնել
*Այնտեղ* տանող ճանապարհը:

Դուք երևի չեք հասկանում ինձ,
որովհետև չե՛ք էլ կասկածում,
որ մահանում են միայն
Ոէրիշները:

*Անսպասելի հետգրություն*
Մեկ անգամ ևս՝ շարունակելի:

***2. ԱՅՍ ՕՐՆ ԻՄՆ Է, ՄԻԱՅՆ Ի՛ՄԸ***
*(հաջորդ օրվա՝ հունիսի 20-ի առավոտյան)*

Այսօր առաջին անգամ
ի՛նչ գեղեցիկ աշխարհ է,
ամեն ինչը՝ տեղը տեղի՛ն,
ամեն ինչը՝
ներդաշնակ ու անկրկնելի:

Եվ այս օրն իմն է, միայն ի՛մը,
որը երկա՛ր պեղումներից հետո
ուժասպառ ոտքի կանգնող հնէաբանի
ու ազգագրագետի պես
հայտնաբերել եմ իմ հոգում,
նորից տրոփող իմ սրտում՝
պարզ ու զուլալ:

Այս օրն իմն է, միայն ի՛մ գանձը –
նոր գնահատվող,
նոր իմաստավորվող ու ընկալվող:

Այս օրն իմն է,
և իմն են բուժքույրեր
Մզիայի և Անյայի ժպիտները,
բժշկուհի Ալինայի ճախրաքայլը…

Ի՛մն են սրտացավը բռունցքներում սեղմած
Հաշեկի[1] անեկդոտներն ու թռչնակների՝
ծառերի տերևներին ոստոստող ճռվողյունը,
ի՛մն է  բալիկներիս անհոգությո՛ւնը…
ցուցադրակա՞ն…

Ամեն ինչը՝
տե՛ղը տեղին,
ու ամեն ինչը՝
այնպե՛ս ներդաշնակ,
և աշխարհն այսքան գեղեցիկ երբևէ չի եղել:–
Այսօ՛ր…
Առաջի՛ն անգամ…
Անկրկնելի՛…

---

[1] *Աբխազիայի հերոս Գարի Աճինբա:*

*3.*

Թռչունների չուն այլ երգ է ու հանգ:
Իսկ ավելի ճիշտ՝ անհանգ կանչ համառ,
Որն ընդունում եմ տարվող ծանրությամբ
Եվ թեթևությամբ մի տագնապահար:–

Յա՛մբ էր սիրտն իմ:
Արդ՝ անապեստ… Պեոն…
Սահմանագծին այս արնադողդոջ
Իմ սրտից արդեն հրաժարվելով՝
Աշխա՛րհն եմ ահա ընդունում ամբողջ:

***

Քանզի
իմ ասածի մեջ իմաստ կա ավելի,
քան դուք կարծում եք:
Բայց դա ամենևին էլ չի նշանակում,
թե դուք պիտի թաղեք ինձ
բամբասանքատարափի ներքո:–

Քանզի
բովանդակությունը
չի տեղավորվում բառի մեջ:

Քանզի
ծնվելու համար մահն է ստեղծվել,
և ծնվում է միայն նա,
ով իր վկան է եղել արդեն:

Քանզի
շարժվել սկսում է նա,
ով դադարի մեջ է գտնվում:

## «ԱՆԴՐՀՅՈՒՍԻՍ» ՇԱՐՔԻՑ

### *1. ԱԼԱԿՈՒՐՏՏԻԻ ԹԶՈՒԿ ԿԵՉԻՆԵՐ*

Ալակուրտտիի թզուկ կեչիներ,
Երբ նայում եմ ձեզ, հոգիս է նվում,
Քանզի դուք հեռու մերձմոսկովյան ձեր
Եղբայրների պես վերև չեք թևում:

Գիտեմ՝ ուզում եք երկինք սավառնել՝
Կառչուկ արմատներն հողի մեջ խրած –
Այդպես մանուկն է փորձում քայլ անել
Երկչոտ-վարանոտ՝ մորն ամուր գրկած:

Եվ ձեզ հասկանում է լոկ հողն ահա,
Հո՛ղը, հո՛ղն արդար, որ գորովանքով
Ձեր յուրաքանչյուր ճյուղն է հողմահար
Սեղմում մայրական կրծքին կենսածոր:

### *2. ՔԱՐԱՅԱԾ ԿԱՆԱՉ ԽՇՇՈՑ*

Կեչաբներով ներքև կոհակվող
Հողին չհասած խշշոցն է կանաչ
Սառչում կա՛թ առ կա՛թ –
Հնչյուն առ հնչյուն,
Ակորդ առ ակորդ
Դառնալով սառույց
Կեղևափաթաթ:

Գիշերն է քամու շուրթերի միջև
Մի մեծ հրաշքով ցաշուն երկարած
Պտուղը սնձի անում հյութաքամ
Եվ թե՛լ-թե՛լ քաշում,
Բարձրացնում երկինք,
Որ ... աստղե՛ր դառնան:

### *3. ԶՄԵՌԱՅԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ*

Ահա անտառն է շնչում ազդեցիկ,
Ահա անտառն է երազում անդա՛վ…
Սակայն դարավոր ծառերն այս մեծղի
Կահույք չեն դառնա, դուռ ու պատուհան…

Չե՞ն դառնա, քանզի ծառերն այս վսեմ
Արկե՛ր են կրում հոգում արնածոր…
Եվ դողո՛ւմ եմ ես անհանգիստ ու մեծ՝
Տերևի նման՝ ձյունից ազատվող…

### *4. ԶՄԵՌՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՅԳՈՒՄ*

Ձյո՛ւն է գալիս թափով,
համազգեստիս նստում,
Ձյունաճերմակ ծածկոց
նա ինձ վրա հյուսում՝
Խիտ ձուլում է այգու
ճերմակությանն արդար,
Ու՝ ես չկամ արդեն լուսե ծաղկի համար,
Որ բողբոջել կեչու վարագույրի հետև
Եվ անմեռ նոր մի երգ առաքում է եթեր:

Դեռատի մայրն ահա իր մանկիկին գրկած,
Կյանքի ծաղկի հանգույն
տանում է կոկոնած,
Եվ կոկոնն այդ հրա՛շք
հա՛-հա՛ պիտի ծաղկի
Եվ ձյան ճչի վրա արփու հրճվանք ծաթի…

…Եվ ես ըզգում եմ խոր –
Նույնիսկ ձմռան ժամին
Կյանքի գարո՛ւն է բորբ
Այգում ամառային:

### *5. ԱՇՈՒՆ*

Հրաժեշտի շողն արփու
Շաղվել է խիտ ամպի մեջ,
Դեռ քամին չի ճմրթում
Ջրի հարթուկը պարզիկ,

Ու կառչե՛լ է հրաշքով
Գահավեժի լանջից թեք
Ոսկեդեղին հանդերձով
Մտամոլոր ցարասին:

Լռե՛լ է խոր, սսկվե՛լ
Խորհրդավոր տունդրան ծեր,
Արծաթով է փայլփլում
Խրուտ ճահիճն արևից,

Ոսկե աշունը՝ հոգնա՛ծ,
Երկար ճամփա է անցել,
Ու թիկնելով ծառերին՝
Սպասում է հրաշքի:

Աստ ո՛չ լորի է աճում,
Ո՛չ սլացիկ եղևնի,
Չկա այստեղ հարավի
Ալվան ծաղկունք հրակեզ…

Սակայն մոտ է իմ սրտին
Հյուսիսային աշունի
Այս ցարասին սպիտակ՝
Ընկերուհիս տխրահե՛զ…

*1975*
*Մուրմանսկի մարզ,*
*Կանդալակշայի շրջան,*
*Ալակուրտտի*

## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

*Գոհար Թեփուլյանին*

### *Ա.*

Կյա՛նք, սիրել եմ քեզ:
Ո՛ւ ես, հավատա,
Երջանիկ եմ այդ սիրով եղել մեծ…
Ո՛ւ հիմա ոչ թե չեմ սիրում ես քեզ –
Ես քեզ ատո՛ւմ եմ հիմա համարյա:

### *Բ.*

Սավառնում էր իմ
հոգին երկնքում,
Վերջ չէր լինելու
թռիչքին կարծես:
Գայթել է հիմա
հոգին իմ մաքուր
Տիեզերական
առեղծվածի պես:

### *Գ.*

Ես խղճում եմ ձեզ,
սերունդներ արդար,
որ միայն դուք եք
պատասխան տալու

մարդկային հոտի
չարության համար,
որն արդարացում
չի ունենալու:

### *Դ.*

Լինում է, ավա՛ղ, ու հաճա՛խ լինում.
Գնացածներին ողբալով անվերջ՝
Ապրողների՛ն ենք խեղդվելու թողնում
Անտարբերության ճահիճների մեջ:

### *Ե.*

Պաշտոն տվեցին ընկերոջը մեր:
Մեզ էլ չի տեսնում անհաս բարձունքից:
Պարզապես նա էլ չի՛ նայում ներքև –
Վախենո՛ւմ է նա ... գլխապտույտի՛ց:

## *Զ. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹ*

Ձմռան ցրտին, շոգին ամռան
Կողքիս ես հար ու հար մո՛տըս...
Ես «Համշենիս» համար կտամ
Անգամ վերջին ... ծխախո՛տըս...

### *Է. ԿԻՆ*

Սի՛րտ են նրան զոհ բերում,
Երիկամնե՛ր, թոքե՛ր ... կյա՛նք...
Ինչքան շատ են նվիրում,
Դառնում է նա այնքան ... թա՛նկ:

### *Ը. ՍԵՎԱՆ*

Ամեն անգամ քո հոգուց խոր
Սրտիս հասնում է մի ճիչ,
Որ կոչվում է մարդը ձկնորս,
Իսկ Իշխանը՝ ... գիշատի՛չ:

***

Մեկ-մեկ լինում է՝
Սաստիկ փոթորկված
Մտորումներից
Ինչ-որ մութ, խրթին,

Մեզ թույլ ենք տալիս
Արարքներ … հանկա՛րծ,
Որ չէինք անի
Հանգիստ պահերին:

Ավա՛ղ, հետո՛ ենք
Ցավով հասկանում
Ծանր արդյունքը
Մեր անզգուշության…

…Հեղեղից հետո
Գետն է հանդարտվում,
Ավերումները
Մնո՛ւմ են, սակայն:

***

Կարոտին սիրո
այլևս չեղավ
ոչ մի պատասխան,
և սահմանակցեց
ցավը տագնապին:–

Աղաչո՛ւմ եմ քեզ –
թռչունին բաշխիր
թռչելու նրա
իրավունքը ջինջ:
Աղաչո՛ւմ եմ – ինձ
վերադարձրու – քե՛զ:

*1985*

## ՄԱՐԴ

*Գալուստ Տրապիզոնյանին*

***1.***

Ամենակարո՛ղ ես եղա կյանքում –
և ստեղծեցի
մատերիայի ձևն այն ամենապինդ,
որը կոչեցի՝
Անարդարություն:

Եվ ահա դարեր-դարեր շարունակ
կատարելապես հղկված այդ ձևում
իմ լույս գլուխն եմ պատեպատ տալիս
կերպն այդ ջարդելու,
սակայն անգամ իմ … «գլո՛ւխը ջարդել
չեմ կարողանում»:

Ես կյանքում եղա ամենակարող,
և դրանով էլ հենց՝ ամենաթույլ:
Եվ անկումըն իմ
եղավ հակադարձ համեմատական
իմ վերընթացին:

***2.***

Լինելն է եղել
միակ նպատակն իմ
(ես ժխտական Չ-ն բացառել եմ ընդմիշտ):–

Այսինքն՝ ընդամենը հինգ տառ:

Ընդ որում,
առաջին Լ-ն երկրորդից մեծ է
կեգելի հնարավորության սահմաններում:

***

Ստոր է ու ազնիվ,
նուրբ է ու դաժան,
սուր է ու բութ,
դյուրագրգիռ
ու անդրդվելի…

ՈՒ թեև
մեր երակներում չենք զգում
նրա ներկայության
անխուսափելիությունը,
բայց ամեն ակնթարթ
տեսնում ենք
մեր բջիջների կորուստը
նրա անխուսափելի
ներկայության մեջ…

ՈՒ կյանքի՛ նման
անարդա՛ր է նա:

Անսահմանորեն վե՛հ է:
Եվ … դո՛ւրս է բոլոր
բառարաններից:–

Չի թեև
*ժամանակ* է
անունը նրա,
սակայն ոչ մի բառ՝
նույնիսկ հենց ինքը՝
ժամանակ բառը,
դեռ չի ամփոփել
այդ մեծությունը:

ՈՒ նա արդա՛ր է
մահվան պես:

***

Ամպի մի բուռ
արմավենու  ստվերը մրսող
սրթսրթալով կուչ էր գալիս
օրվա շաղվող հրճվանքի մեջ…

Ես ցանկացա,
որ վախի պես զգայագրգիռ
լիներ մոտ ու հասկանալի
նոր արթնացող ծաղկաթերթի
դողը երկչոտ ու արնակաթ,
երբ ուսերիդ հրդեհը պաղ
մոխրացնում էր իր բոցերում
մեր սրտերի միջև ճոճվող
բաժանումի սև գիշերվա
աստղերի չուն
և վարդերի կոկոններում
թաքնվում էր առավոտի
շրթին ցողվող
բույրը կարմիր:

*1985*

***

Աստվածը յուրաքանչյուրիս մեջ
մի կտոր լույս է մնացել,
որն էլ դարձել է մեր հոգին:

Եվ հիմա ես կանգնել եմ այսպես՝
թևաթա՛փ, ավելո՛րդ, ոչ ոքի՛,
և աստվածն է մեռնում իմ հոգում՝
իմ մեջ մնացած
իր մի կտոր լույսի հետ
ու նման:

## ԳՆՉՈՒՀԻՆ ՍՈՒԽՈՒՄԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Նա իր աշխատանքում
այնքան էր արհեստավարժ,
որ, անկասկած,
հաստատ կարող էր
ճշգրտորեն գուշակել
իմ ապագան…

Բայց այնքան չնչին էր նրա՝
իմ ապագան ճշգրտորեն
գուշակելու համար
պահանջած վարձը,
որ ես դառնացած
ու հիասթափված հեռացա:–

Դառնացա՛ծ
ու հիասթափվա՛ծ իմ ապագայից,
քանզի գնչուհին
հաստա՛տ գիտեր այն
ու արժե՛քը նրա:

## «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ 20-ԱՄՅԱԿԻՆ

Դու եղար այնքան մաքո՛ւր, լուսավո՛ր
Ու այնքան եղար Հայոց Կենաց Ծառ,
Որ թշնամինե՛ր բազում ունեցար,
Ու հենց դրանո՛վ եղար բախտավոր:

Ու երգի նման ջինջ եղար ու շեն՝
Դարձած Հավատի ու Հուսո երկտող…
Ուզում եմ՝ ապրես ինձանից հետո՛,
Ինձանից առաջ չե՛ս մեռնի, «Համշեն»:

*2011*

**ՀԻՄԱ, ԱՅՍ ՊԱՀԻՆ ԱՀԱԶԱՆԳԻ,**

որովհետև
պատերազմ
չի սկսվել։–

Կծկվո՛ւմ ենք
մանրանալու համար,
անտես դառնալու-չերևալու…

ՈՒ փոխվել է մեր արյան
բաղադրությո՛ւննն անգամ,–

լպրծո՛ւն-ջրի՛կ,
ջրի՛կ-լպրծո՛ւն
ու չմակարդվո՛ղ,
այնպես, որ արյո՛ւն իսկ
չի կարող կոչվել։

Հիմա՝
այս պահին
ահազանգի,
որովհետև
կատարելության աստիճանի
հղկվե՛լ է
արդեն մշակույթ դարձած
մաշկափրկության
արվեստը։–

Ի հեճուկս
արժանապատվությա՛ն,
ի հեճուկս
ինքնասիրությա՛ն
ու բարևի՛։–
Քանզի
պատերազմ չի սկսվել։

## ՀԱՏՈՒՑՈՒՄ

*Վաղամեռիկ Գրիգոր Սարեցյանին*

Երկինքն է ջարդվում
Ապակու վրա,
Բեկվելով հատվում
Լույսն արեգակի…
Եվ վերջին պահին,
Եվ վերջին պահին
Թույլ հորիզոնի
Կտրվող թելից
Անշարժությունն է
Ճոճվում ձեռքերի:

Մատներից կաթող
Կարմիր աղահոտ՝
Քաոսվող պղտոր
Ճչերի խրձում…
Եվ վերջին պահին,
Եվ վերջին պահին
Աչքերիդ սև–սև
Շրջանակներում
Արդեն մեռածիս
Նկարն է թախծում…

Արյան եռքի մեջ
Էլ բառեր չկան…
Գործած մեղքի մեջ՝
Մեղքաքավություն…
Եվ վերջին պահին,
Եվ վերջին պահին
Տրոհվող հևքի
Ցնցումների մեջ
Սիրո հատուցման
Օրենքն է գործում:

***

Գուցե այսպես էլ պիտի լիներ,
Եվ օրերն իմ
անուն պիտի ունենային
(անկախ իրենց տեսակարար կշռից)՝
գոնե այդպե՛ս
իրարից տարբերվելու համար:

Հետո նրանք պիտի հոսեին
բազմության պես
Խաղաղության պողոտայով ներքև
և լապտերների աղոտ ցոլքերից
ստվեր գցեին
խնամքով խուզված
թփուտներին մայթեզրյա,
որոնց խիտ հյուսվածքներում
մենության քանդակների նման
անմահացել են
Եղիշե Չարենցի և Շալուա Ծոյջբայի[1]
ամուր ձեռքսեղմումները՝
հառնելով անցած դարի
երեսունականների սկզբից:

Գուցե այսպես էլ պիտի լիներ –

օրերն իմ աղավնի
պիտի դառնային
և հոգիս պատառոտեին
Փառքի պուրակում…

---

*[1]Շալուա Ծոյջբա (1912-1987) – աբխազ անվանի բանաստեղծ: Մի քանի անգամ հանդիպել է Եղիշե Չարենցի հետ Սուխումում: 1937 թ. զրպարտությամբ քսան տարով աքսորվել է Կոլիմա:*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՈՅԱԿԱՆԻ ՈՉ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ամեն ինչ հասկանալի է
անընդունելության չափ.

Մեր ընդհանուրը
միայն շարժումն է,
իսկ տարբերությունը՝
նրա 0–ից  մինչև –0
տատանվող արագությունը:–

Մի սահմանային տիրույթ,
ուր շարունակվում է
իրականությունը՝
իր ներսում կամ իրենից դուրս
(և դա ոչ միայն այնքան էլ կարևոր չէ –
դա բացարձակապես
ոչ մի նշանակություն չունի)…

Հետևաբար,
մեր գոյությունը կամ չգոյությունը
պայմանավորված է
անշարժության արագության
հակադարձ համեմատականությունը
արագության անշարժության նկատմամբ
ապացուցելու անհրաժեշտությամբ:–

Իսկ մեզ
ընդամենը մնում է գտնել
իրավիճակի ընդհանուր հայտարարը
և համապատասխան կրճատումներով
դուրս բերել
մեր գոյության կամ չգոյության
անհեթեթության բանաձևը:

Կամ էլ՝ անհեթեթությո՛ւնը բանաձևի:

## ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ժամանակը հիմա էլ
անհարմարորեն կոտրատվելով ընկել է
ժամացույցի ծուղակը…

Մեկ իրենից առաջ վազելով,
ու մեկ էլ
անհուսալիորեն հետ ընկնելով իրենից՝
չգիտես ո՛ւր է շտապում
հազարամյա գլխապտույտից
շշմած-շշկլված,
ծեծված-ծեծկռտված ժամանակը –

երևի թե
խելակորույս փորձում է
խուսափել
այն հույն Քթեսիբիից[1]՝
անտիկ սափորում
նորից խեղդվելու
հեռանկարից
սարսափած…

***

Քամի՛, դո՛ւ,
որ ամբողջ գիշեր փչել ես,
փաթաթիր հոգնած իմ հոգին
ստվերների պես շուրջն իմ պտտվող
տերևներով աշնանային,
որոնց այրում են

---

*[1]Ազգությամբ հույն, գյուտարար Քթեսիբին ապրել է եգիպտական Ալեքսանդրիայում մ.թ.ա. 296–228 թթ.: Նա մեխանիկական (ջրային) ժամացույցի հիմնադիրն է:*

պուրակի հեռավոր անկյունում,
թեև ճիշտ կլիներ
երկրորդական  հումքի
ընդունման կետ հանձնելը:

Քամի՛, դո՛ւ,
որ ամբողջ գիշեր
փչել ես ու հալածել ծառերը,
փաթաթիր ջարդված իմ հոգին
բզկտված հիշողություններով,
ծառերի չորացած ճյուղերից
պատառոտված օդով,
ջրհորդանի խողովակներում
պլշած աղմուկով,
որն անձրևի է ծարավի:

Քամի՛, դո՛ւ,
որ ամբողջ գիշեր
փչել ես հա՛ փչել
ու պատուհանից պոկածդ ապակու
ջարդվածքներով
ածելու պես կտրատել
խոժոռ առավոտի՝
գինովությունից ուռած
անթրաշ երեսը,–

թաքցրո՛ւ ինձ
իմ մաշված հիշողության
ցանցերում՝
ինչպես ափացխայի[1]
հյուսկեն պատերից կախված
սարդոստայնում
խճճվելով ուշաթափված
ամպրոպի որոտ:

---

[1] *Ափացխա – ամառային տնակ-խոհանոց:*

***

*Սեյրան Իչմեյանին*

Բաժանումը հաճախ խզում է դառնում…
Եվ որքան էլ տխուր չլինի՝ խոստովանենք,
որ մեկ–մեկ էլ հիշում են մեզ՝
որպեսզի շուտով մոռանան:

Եվ այստեղ տարօրինակ ոչինչ չկա,
որովհետև երջանկությունը
առաջին հերթին անկում է՝
հետո բարձրանալու համար:

Կամ էլ՝ ընդամենը հակառակը…

Եվ այսքանի մեջ –
մի քանի անորոշ զգացմունքներ են մնում,
որոնք այսօր ինչ-ինչ պատճառներով
շատ են անտեղի ու լքված,
բայց, չգիտես ինչո՛ւ, եկել–խրվել են իմ՝
իրենց նման անտեղի ու լքված
մի քանի բառերի մեջ,
որպեսզի դառնան
սխալմամբ կյանք հորջորջվող
բանաստեղծություն,
որն իրականում կոչվում է մահ:–

ՈՒ ողբերգություն դարձած ամենածիծաղելին
բաժանման ու խզման հատվածքում
մենության մեջ մահանալն է: –

Եվ սա թող չընդունվի
որպես հանդիմանություն առ աստված, որը
մատը մատին խփել իսկ չի փորձել
հակառա՛կն ապացուցելու համար:

***

*Ֆուտբոլի վարպետ*
*Սարգիս Հովիվյանին*

Նորից մանկացե՛լ եմ ահա
և բակում ֆուտբոլ եմ խաղում
ինձ արդեն «պապիկ» կոչող մանչուկների հետ,
որոնց անունները մոռանալով՝
մեկ-մեկ շփոթում եմ՝
առաջացնելով ժպիտ ու զուսպ ծիծաղ։–
Եվ ես այսօր Սարգիս Հովիվյա՛նն եմ վերջապես…

Վերջապե՛ս, որովհետև երբ փոքր էի,
շատ էի ուզում
անպայման Սարգիս Հովիվյա՛ն դառնալ։

(Ավաղ ու ախ,
որ այս փառապանծ սուխումցու անունը
այսօր քիչ բան է ասում – եթե չասենք՝ ոչինչ –
նրա ֆուտբոլասեր համաքաղաքացիներին,
որոնց անվերապահ կուռքերն են
Մեսսին, Ռոնալդինիոն
և ինձ անծանոթ էլի ուրիշ անուններ
հաճախ «Ռեալից», «Բարսելոնայից»,
«Միլանից» ու «Չելսիից»,
իսկ այսօր նաև «Արսենալից»,
ասենք նաև, որ արդեն ինձ,
և ոչ միայն ինձ,
որոշ չափով մխիթարում է
Հենրիկ Մխիթարյանը՝
լավագույնս արդարացնելով
իր ազգանվան նշանակությունը։

Տեղին համարելով՝ ուզում եմ հիշեցնել,
որ Հովիվյանի «չոր տերևի» ուղեծիրը

ժամանակների գաղտնիքն է դարձել,
և ոչ մի ֆիզիկոս
դեռ չի կարողացել դուրս բերել
նրա թռիչքի բանաձևը:
Եվ  ես այսօր շատ եմ ափսոսում,
որ ժամանակին չեմ ընդունվել
պետհամալսարանի ֆիզմաթ ֆակուլտետ՝
գուցե ինձ հաջողվեր լուծել
Նոբելյան մրցանակի արժանի
այդ առեղծվածը):

Հևասպառ ու շնչակտուր վազում եմ
տղաների հետ,
Հովիվյանի հնարքով
փորձում ընթացքում «խաբս տալ
իմ անհատական խնամակալին»
ու կտրուկ հարվածով խոցել
ինձ խաղալու հնարավորություն
իբր թե չտվող
«հակառակորդի» դարպասը:

Եվ գնդակը
հարազատի պես  հասկանում է ինձ,
զգում է ամեն հպումն իմ
ու տրոփում-տրոփում սրտիս հանգույն՝
փոխանցում առ փոխանցում,
ընդունում առ ընդունում,
հարված առ հարված
լույսի պես մաշվելով հողի վրա:

Եվ ես զգում եմ,
թե ինչպե՛ս է ուռչում իմ սիրտը,
ուռչում է, ուռչում
և արդեն … ահա՛-ահա՛…

Եվ ես ձեռքս սեղմում եմ կրծքիս,
որ սիրտս հանկարծ չպոկվի

ու չսուրա՛ բակում
ֆուտբոլային գնդակի նման…

Լույսի պես մաշվելով
ու սպառվելով հողի վրա:

## ՆԵՐՇՆՉԱՆՔ

Իմ զբաղմունքը միշտ էլ պարզ է եղել –
անձրևի կաթիլներից քամել
խխունջի շարժման
կախարդանքն ու ապա

բանաձևել
բանաստեղծական գյուտի
հրաշքը՝ բազմապատկած
երկինքն ու անդունդը շաղկապող
արևաքամու ալեբախությամբ:

## «…ԵՎ ԱՅԼՆ»

Մեզ համար միշտ էլ գլխավո՛րն է եղել կարևոր –
և այսպես էլ ապրում ենք՝
վերջնականապես կտրված
մեր արհամարհած երկրորդական «և այլն»–ից,
որը վերջիվերջո Կյա՛նք է կոչվելու:

***

Եթե չլինեմ, դուք՝ ոչինչ… Հաստատ
մեկ ուրիշով ինձ կփոխարինեք,
եթե, իհարկե,
հանկա՛րծ նկատեք իմ չլինելը…

Եվ դա այնքան էլ,–
ես չէ, որ պիտի
ձեզ համոզելու նման բացատրեմ,–
դժվա՛ր չի լինի:
Մի խոսքով՝ ոչինչ, դուք մի բան կանեք…

Երբ չլինեմ, ի՞նչ պիտի … ե՛ս անեմ.
ո՞ւմ գլուխն ուտեմ ու … չկշտանամ,
ո՞ւմ հոգին գիշեր-ցերեկ հոշոտեմ
ու պատառոտեմ՝
քարշ տալով անխի՛ղճ ու արյունլվա –
հետո սիրելու նման ինքս ինձ
…խղճա՛մ, փաղաքշե՛մ
ու մխիթարե՛մ:
Անտեր ու անտուն որբուկի՛ նման:
Դուք՝ ոչի՛նչ:
Կանե՛ք…

## ԵՐԲ ՄԱՀԱՆԱԼՆ ԱՐԴԵՆ ԱՄԵՆԵՎԻՆ ԷԼ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՉԷ

Գեղեցիկ Աղջիկը խոսում էր:

ՈՒ այնքան գեղեցիկ էր խոսում
Գեղեցիկ Աղջիկը,
որ հանկարծ Աշխարհն էլ
Գեղեցիկ Աղջկա նման
գեղեցիկ ու անթերի թվաց:

Եվ Նա մտածեց,
որ իրենից հետո կատարյալ աշխարհ է թողնելու,
ու այնքա՜ն կատարյալ,
որ նույնիսկ ափսոսաց,
որ քիչ առաջ ոչ միայն չէր ուզում մահանալ,
այլև վախենում էր այդ մասին
… մտածե՛լ անգամ:

***

Մեկ-մեկ ինձ թվում է,
թե արդեն հասել եմ
վարպետության այն աստիճանին,
երբ չեմ կարող իմ ընթերցողին
երգերիս հեղինակակիցը չդարձնել։–

Եվ դա այսքան ուշ և անհույս այսքան՝
եզրին անդունդի՝
միասին փրկվելու,
կամ էլ՝
գահավիժելու միասին։

***

Ապրում եմ այսպես –
վերլիբր բանաստեղծության հանգույն՝
տաղաչափության կանոնների
(որոնք այդպես էլ չկարողացա սովորել)
թակարդից դուրս, որը, վերջիվերջո,
նաև պաշտպանություն կլիներ
թակարդից շան պես վախեցողների
ամենօրյա ոտնձգություններից։

Իսկ դա, ուզում եմ ձեզ ասել,
արդեն վախեցնում է ինձ՝
իր անորոշությամբ,
իր պատահականություններով
ոչ պատահական՝
թակարդն ընկնելու անհնարինության
բացակայությամբ նաև…

Բայց ինչ էլ որ լինի՝ ապրում եմ այսպես –
տողերս հուսալիորեն շռայլած

ծառերի մամուռներին բացառապես…
Եվ բառ առ բառ,
նաև տառ առ տառ,
նույնիսկ հնչյուն առ հնչյուն –
ահա այսպե՛ս
գալիս եմ դեպի քե՛զ:

***

Եթե ծա՛ռ ես դու,
արմատներդ պիրկ
պիտի խորանան,
ճկվեն, ոլորվեն
ընդերքում հողի
սուր մտքի՛ հանգույն:

Եթե ծա՛ռ ես դու,
պիտի բարձրանա՛ս,
շատրվանե՛ս առ
կապուտկեկ երկինք
սի՛րտ թեթևացնող
աղոթքի՛ նման:

Եվ կուրծքդ պիտի
դեմ տաս հողմերին,
եթե ծա՛ռ ես դու:

…Եվ ծա՛ռ ես եթե,
անպայման պետք չէ
քո մայր անտառի
մնացած բոլոր
ծառերը հատել,
որ դու երևա՛ս…

Երևաս լոկ … դո՛ւ…

***

Ի՞նչ ես, ժամանա՛կ, դու մեզ հետ անում.
Ամեն մի հայացք արտասուք է հեգ…
Չէ՛, ջահելությունը մեզ չի լքում –
Ջահելությունից հեռանո՛ւմ ենք … մե՛նք…

*2001*

## ԿԱՂՆՈՒ ԳԱՆԳԱՏԸ

*Սահակ Կալայջյանին*

Ո՞վ է տեսել այսպիսի բան՝
ահավոր ու սարսափելի –
Ծառաջա՛րդն է մեր անտառում
հասել անչափ մեծ չափերի:

Բերք քաղելու համար ծա՛ռն են կտրում անգութ,
Անտառում էլ բերքատու ծառ չկա՛ կանգուն:

Ո՞ւր է, ասեք,
իմ հարևան շագանակենին դարավոր,
Մի քիչ անդին
սալորենին տնքո՛ւմ է խուլ ու վիրավոր…

…Թարսի՛ նման՝
այս տարի էլ իմ բերքն առողջ ու առա՛տ է,
Ահա, արդեն ի՛նձ է հասել
այն կացնատեր անառակը…

Սարսափելի նոր ձև է արդ «բերքաքաղի»…
Տեսնես՝ կգա՞ օրն հատուցման – մեղքաքավի՛:

***

Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ տերևներն անհույս
Ու շաղկապում են պարզ ու անմեկին
Հարազատության ոգին համալույս –
Համաշխարհային որբության ոգին:

Կանգնե՛լ եմ մոլոր: Տագնապն իմ խորին
Էլ ոչինչ-ոչինչ չի կարող պահել…
Տերևներն են լոկ հպվում իմ սրտին –
Թեթև՛ են հպվում ու հպվում ահե՛ղ…

## ՃԻՇՏ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐՆ ԱՄԵՆԵՎԻՆ ԷԼ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈ՛ՒՆ ՉԷ

***Ա.***

Ես քարին երբեք
չեմ նախատել
քա՛ր լինելու համար,
ոչ էլ սրտին՝ սիրտ…

Ի՞մ մեղքն է արդյոք,
որ ինձնից առաջ
աշխարհ չի՛ եղել…
Եվ չի լինելու
ինձանից հետո:

***Բ.***

Կուզե՞ք – բարդացնեմ պարզեցնելու պես:
Բարդացնելու պես պարզեցնեմ – կուզե՞ք:–
Ես անցյալ չունեմ:
Ես չունեմ ներկա…
Եվ ասեմ նաև.

ինձ հասկանալը դժվար է մի քիչ,
բայց՝ հնարավոր,
իսկ ավելի ճիշտ՝ պարտադիր է հույժ…

Եվ դրա համար՝ իմ ապագան – ձե՛զ:

*Գ.*

Այստեղ վերջանում է այն,
ինչը դեռ պիտի լինի…

Այստեղ սկսվում է այն,
ինչն արդեն եղե՛լ է:

**ՀԱՎԱՏԱՑԵ՛Ք ԻՆՁ,–**
**ՊԵՏՔ ՉԷ ՀԱՎԱՏԱԼ**

*Ա.*

Դա հետագայում պարզվեց,
որ շա՛տ տխուր օր պիտի լիներ,
երբ հրաժարվեցի
անձնական կյանքի
բախտավորությունից՝
ընտրելով հասարակական կյանքի
… ախտավորությո՛ւնը:
Եվ հիմա ամեն ինչ փոշի է՝
թերևս –
արդեն մասունք դարձած:

*Բ.*

Չհավատա՛ք,
ի՛նչ էլ ասեն՝ միայն թե չհավատա՛ք,
քանզի սարսափելի է ու ստորացուցիչ

Այդ  ներկայությունը,
Այդ գոյությունն անգամ:

Ինչ էլ ասեն – չհավատա՛ք:
– Հիմա ամենակարևորը …
հավատացե՛ք ինձ, –
չհավատալն է:–
Միակ փրկությունը մեր:

***Գ.***

Ես ընդամենը … տեղի պարագա եմ,
ուր դեռ չի մահացել … հավա՛տը:

## ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

Ժայռի փլված եզրից
ծառի՝ անդունդն ի վար կախված
արմատները
կտրված երակների նման արնահոսե՛լ են
սուլող դատարկության մեջ…
Արմատներն օդում քա՛ր են փնտրել՝
նրանցից կառչելու համար:

…Բայց ահա մի օր
մի արծիվ է թևատարած նստում
արմատամայրի վրա
ու … ծառն առում թևերին:

Եվ արմատները փաթաթվում են արծվին
ու մխրճվում նրա մարմնի մեջ:–

… Ծառն արծվի թևերին՝
սավառնելու է երկինք:

**ԵՍ ԿԱՆՑՆԵԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՈՒԽՈՒՄԻ ԾՈՎԱՓՆՅԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՎ,**

բայց այնտեղ կարող են ինձ հենց այնպես
կամ էլ պատահաբար սպանել
դպրոց չհաճախող լակոտ-լուկուտները
(իսկ ի՞նչ են մտածում,
ավելի ճիշտ՝ չե՞ն մտածում նրանց ծնողները,
երբ այդ լակոտ-լուկուտները
օրերով տուն չեն գալիս
և գրպաններում միշտ էլ թմրանյութ կա:
Հետո նրանք գերազանց բնութագրով
ու նման գնահատականներով
ատեստատ կստանան,
կընդունվեն տեղի պետհամալսարանը
կամ Բաց ինստիտուտը,
որն իրականում … փա՛կ է շատերի համար):

Ես ուզում եմ, որ ինձ ճիշտ հասկանան
ընթերցասեր այն քչերը.
սպանվելը լավագույն ելքն է
գլուխս ազատելու
բոլոր պարտադրված
փորձություններից,
բայց այդ լավագույնի արդյունքում
պարտադրված պարտքերիս մարումը
կծանրանա որդուս ուսերին
և իսկապես անավարտ կմնա
«Անավարտ ինքնանկար» գիրքս,
որի անվճար՝
պետպատվերով տպագրության
եզակի հնարավորություն է ստեղծվել…

Հա, մեկ էլ, հավանաբար, կփակվի
«Համշեն» թերթը,
որը տարօրինակորեն ոչ ոքի պետք չէ,

թեև անհրաժեշտ է օդուջրի նման:–
Եվ իմ հենց այնպես
կամ էլ պատահաբար սպանվելը
դավաճանության պես մի բան կլինի,
և այդ պատճառով՝
ես չեմ անցնի
գիշերային Սուխումի ծովափնյա փողոցներով…
Բայց ես լսում եմ
ծովի կարոտահեծ հառաչը՝
խեցու մեջ սեղմվելով ադամանդվող,
կամ ուշակորույս թավալվող՝
փողոցի կեղտոտ սալերին,
կամ ծովափին կտրատվող՝
ջարդված օղու շշերի վրա …

Բայց ես լսում եմ
ծովի կարոտահեծ հառաչը՝
կտրատված փորսող տալիս
լքված առանձնավայրերում…

Բայց հաստատ կգա ժամանակը,
երբ պարտադրված պարտքերս մարված կլինեն
և ավարտված՝
«Անավարտ ինքնանկար» գիրքս՝
պետպատվերով անվճար տպագրված…

Հա, մեկ էլ, հավանաբար, չի փակվի
«Համշեն» թերթը,
որը տարօրինակորեն ոչ ոքի պետք չէ,
թեև անհրաժեշտ է օդուջրի նման –
ու ես կանցնեմ գիշերային Սուխումի
ծովափնյա փողոցներով…

Եվ ծովի կարոտահեծ հառաչը
Ջեկոյի պես կփաթաթվի ոտքերիս ու քա՛րշ կգա
լքված առանձնավայրերում՝

անտեր հոգու հանգույն
կամ էլ անխնա ծեծված
ֆուտբոլային գնդակի նման,
որի համար
մի քիչ շունչ քաշելու միակ հնարավորությունը
դարպասներից մեկում
(կարևոր չէ, թե ո՛ր),
կամ էլ եզրային գծից անդին
հայտնվելն է…

## ԿԱՐՈՏԻ ԿԵՍՕՐ

*Ղուկաս Սիրունյանի հիշատակին*

Երազանքի հողը պապակ
ճաքճըքել է արդեն ցավով։–
Ո՞վ է գալու՝ այն հագեցնի
երջանկության բյուրեղ լացով։

Ո՞վ է գալու, որ վերջանա՝
սպառվելով կաթիլ-կաթիլ,
Ներծծվելով հրճվանք-հրճվանք
իր էությանը՝ հավատի՛ն։

Ո՞վ է գալու, որ տարածվի
ցավի՛ նման, տառապանքի՛,
Եվ իր լացի ցոլանքներով
լույսի հեղեղ բերի կյանքին…

…Ճաքճըքե՛լ է արդեն ցավով
երազանքի հողը պապակ…
Եվ … ես ահա կորչում եմ լուռ
հուշաշերտի ճեղքերի տակ։

*1985*

## ՄԻ ԲԱՐԵԿԱՄԻ

Հավատում ես դարձյալ դու
Քո իսկ ծնած սարսափին
Եվ աշխատում ես անդուլ
Հանգրվանել այն ափին,

Որտեղ թեկուզև անգույն,
Բայց օրերդ բանտարկված
Կանցնեն իբրև թե մաքուր,
Անաղարտ ու … քողարկված:

Եվ պատրաստ ես ամեն ինչ
Զոհել հանուն այն վաղվա,
Որը … չի՛ տա  քեզ ոչինչ,
Բացի հույսից անթեղված:

Ա՛խ, փրկվե՛լ ես աշխատում
Սարսափից – քեզ նմանակ –
Եվ գլուխդ հեզ պահում
Քո իսկ նետած քարի տակ:

***

Փա՛ռք Աստծո, արդեն
Չունեմ ես ընկեր,
Քո դատի առջև
Մենա՛կ եմ, իմ Հո՛ղ,

Եվ չի՛ լինի ինձ
Սատարող մի ձեռք…
Սակայն չի՛ լինի
Նաև ձեռք
… խաբո՛ղ…

***

Չի՛ ընդունել նրան ոչ ոք,
Ոչ ոք նրան չի՛ սպասել,
Բայց եղե՛լ է նա – անողո՛ք –
Խորտակելով հավատ ու սեր:

Խորտակելով ամեն կարոտ՝
Տարածվել է չորս կո՛ղմ, չորս կո՛ղմ…
Ո՛Ւր շրջել է հայացքն արնոտ՝
Չորացել են աղբյուր ու հող:

Թե որտեղի՛ց է հայտնվել…
Թե ինչպե՛ս է հասել նա մեզ…
Ի՛նչ անուն է նրան տրվել,
Որ փայլել է դաշույնի պես…

Դաշույնի պես քանի՛ տարի
Փայլատակել է մեր դիմաց
Եվ արմա՛տը կտրել դարի՝
Հար հագնելով նոր-նոր դիմակ:

Ու՛ դիմակն էլ դարձել է դեմք՝
Երկըվորյակ ու հարազատ,
Ոչ վար եղել, ոչ եղել վեր՝
Նժարների պես՝ հավասա՛ր:

Դուրս չգալով ապարանքից՝
Սողոսկել է ամեն անկյուն,
Մատնելով խոր տառապանքի
Ամեն մի սի՛րտ, ամեն մի տո՛ւն:

Հարմարվելով ամեն ձևի,
Առաջացած ամեն մի ճեղք
Լցրել է իր էությամբ մեղկ –
Դատարկությա՛մբ երևելի:

## ՉԳՐՎՈՂ ԵՐԳ ԱՇՆԱՆ ՄԱՍԻՆ

Թռչում–թռե՛լ են
Կռունկներն իմ ո՞ւր…
Ո՞վ է հորինում անձրևն այս տխո՛ւր…
Ո՞վ է հորինում անձրևն այս շվա՛ր:–

Իսկ ինձ շա՞տ է պետք –
Ո՞վ, ինչի՞ համար…

Ո՛վ էլ հորինող լինի –
Պարզապես
Շատ անտեղին է հորինում այնպե՛ս,
Ուr շատ էլ իզո՛ւր, շատ էլ անհաջո՛ղ,
Որ աշնան մասին …
Երգե՛լ չե՛մ կարող…

***

Ես քո երկնային ցասումն եմ ներում,
Իսկ դու՝ հողեղեն թուլությունը իմ…
Հրդեհ է նորից իմ անտառներում,
Մոխրացնող մորմոք –
տառապանքածի՛ն:

«Հանգցրո՛ւ հրդեհն իմ,–
ճչում եմ,– գիտե՞ս,
Ես հնա՛ր չունեմ,–
տնքում եմ,– հնա՛ր…

…Եվ հրդեհն է քո հառնում իմի դեմ,
Որ խեղդեն իրար….
Որ խեղդե՛ն իրար…

*1986*

***

– Դու շապկով ես ծնվել,
երջանկության շապկով,–
նախանձով եք ասում,
կամ թե մտերմաբար,
անկեղծ ասած՝ նո՛ւյնն է:

Բայց չե՛ք տեսնում բնավ,
որ շապկով այդ կարճլիկ,
որ շապկով այդ մաշված –
կարկատանված սաստիկ,
կոշիկնե՛ր եք սրբում
նախաշեմին իմ տան
*(իսկ թե ինչպես է նա*
*ոտքերի տակ ընկել,*
*ասելը միտք ունի՞,*
*կամ ո՞վ կհասկանա)*
և այնպես, որ նույնիսկ
չի նշմարվում նրա
այն նախնակա՛ն, մաքո՛ւր,
դաղձո՛վ բուրող … գո՛ւյնը…

***

Կա՛նգ առ, ակնթա՛րթ… Գեղեցի՛կ ես դու,
Վե՛հ ես ու վսե՛մ, սակայն … շարժմա՛ն մեջ:–
Ափսոսա՛նք լինես, թե պոռթկո՛ւմ հոգու,
Միայն չկանգնե՛ս… Միայն չկանգնե՛ս…

Ես չե՛մ ընդունում համրացած թռիչք,
Քարացածը չեմ ընդունում քարի…
…Գուցե չլինի՛ նորը գեղեցիկ,
Միայն թե լինի մաքո՛ւր ու բարի՛:

*2000*

## «ՀԱԿՈԲԻ ՄՈՏ» ՍՐՃԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ

Այստեղ ամեն ինչ
պիտի պարզ լիներ ու հասկանալի,
ինչպես բոլոր հիմնահարցերը
(քաղաքական, մարզական և այլն)
ծովափնյա «Հակոբի մոտ» սրճարանում,
որը հասարակական ու քաղաքական
լայն շրջաններում,
ինչպես տեղում,
այնպես էլ
նրա կիսով չափ հսկվող
սահմաններից դուրս,
ավելի շատ հայտնի է որպես
«Փչարան»:

Օգտվելով հարմար առիթից՝
ասենք նաև այն,
որ «Փչարանում»
կենդանի օրգանիզմի պես
ծնվող, զարգացող
ու կիսվելով բազմացող
նորություններն ավելի են հավաստի,
քան Ազգային ժողով կոչվող
Խորհրդարանում
ընդունվող Օրենքները
և դրանց կցվող
բազմաթիվ ուղղումներն ու լրացումները:–
Որովհետև այստեղ բոլորն անսխալ գիտեն
հավերժական ե՞րբ-որտե՞ղ-ինչո՞ւ
հարցերի սպառիչ պատասխանները,
և, որ ամենակարևորն է, թե ի՞նչ է լինելու:
Այդ իսկ պատճառով
պատգամավորներն ու նախարարները
հաճախ ծխելու պատրվակով դուրս են գալիս
նիստերի դահլիճից

և վազելով հասնում «Հակոբի մոտ»՝
մշտական հաճախորդների հետ խորհրդակցելու
քննարկվող հարցերի վերաբերյալ՝
ճիշտ որոշում ընդունելու համար:–
Բարեբախտաբար
նախագահական նստավայրը,
խորհրդարանը
ու կառավարությունը
սրճարանից երկու քայլի վրա են գտնվում –
հավատալու պես ենթադրում եմ –
հատուկ դրա՛ համար:

Բայց այստեղ ամեն ինչ
պարզ ու հասկանալի չէր,
այստեղ ամեն ինչ այլ էր թերևս:–
Բանաստեղծությունը
բանաստեղծությո՛ւն չէր,
որովհետև բանաստեղծն այստեղ
բանաստե՛ղծ չէր,
որովհետև բառը բա՛ռ չէր,
որովհետև ոչ էլ հնչյունը՝ հնչյո՛ւն…

Այստեղ գիծն իմաստավորվելու համար
թվեր էր փնտրում ու փակագծեր:–
Թեև իրականում
անհասկանալիորեն բո՛ւթ էր պահանջվում՝
կետ-ստորակետով…
Իսկ ավելի ճիշտ՝ ընդամենը – ոչի՛նչ…

Եվ չուզենալով եզրափակեմ, որ
այստեղ ամեն ինչ պիտի պարզ լիներ
ու հասկանալի
իմ մատներից ծլկող շարժումների նման՝
Դիասկուրիայի հազարամյա
պարիսպների  ճեղքերում
սարսափից սսկված մողեսի պլշած աչքերով:

## ԱՅՍՊԵՍ ԱՄԵՆ ՕՐ ՎԵՐԱԴԱՐՁԻՍ

Հիմա ամեն օր –
անփութորեն արձակված ու փուստ բառերիս
պարկուճներն եմ մեկ-մեկ հավաքում,
որոնք շռայլորեն թափթփված են
իմ անցած արահետներին,
իսկ շիկացած մի քանիսը
այնպե՛ս են այրում ոտքերիս բոկոտնը:

«Օհո՛,–
ուրախացած բացականչեց Տիգրանիկը,–
պղնձի լավ էլ ջարդոն ես հավաքել
– հանձնելո՛ւ»:

## ԵՐԳ

*Դու նա ես, որ պիտի գար:*
*Արևշատ Ավագյան*

Աշխարհում տաղտուկ երգեցողության,
Ոէր արտասուք է հեղվում և արյուն,
Թե հորինվել է Սեր՝ բառ մի ունայն,
Հորինվել է բառ մի՝ Համբերություն,

Պիտի հորինվեր նաև բառն այս՝ Հույս,
Նաև Փրկություն բառը շափյուղյա,
Ձի ինձ վստահված Կյա՛նք կոչվող մի լույս
Երազածիս պես եղավ համարյա…

…Աշխարհում տաղտուկ երգեցողության՝
Իր անտերությամբ հոգիներ տիրող,
Մեզ Սերն է տրվել հանուն Փրկության,
Եվ Համբերությունը հանուն Սիրո:

## ԳՈՎԱԶԴ,
## ՈՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ,
## ՃԻՇՏՆ ԱՍԱԾ, ԱՆԿԱՍԿԱԾ ՉԷ

Երկարատև ու ծանր երկունքից հետո
վերջապես լույս տեսավ
մեր ամենահանճարեղ բազմաժանր
հեղինակ Իքսի
չգրված բանաստեղծությունների
Ա հատորը:

Շքեղ ձևավորված հաստափոր
կաշեկազմը
էջերի կուսական սուրբ մաքրությամբ
ու թարմությամբ
չընթերցասեր լայնածավալ շրջանների
անթաքույց հիացմունքն է առաջացրել:

Հատորի շնորհանդեսից հետո
հեղինակի մամլո քարտուղարը
որպես գաղտնիք հայտնեց
մոծակների պես վխտող լրագրողներին
(ականջներին խոստովանության նման
թվատ շշնջալով),
որ շուտով տպարան կիջնեն
(իսկ հաշվի առնելով
տպարանի չորրորդ ու հինգերորդ հարկերը՝
կբարձրանան)
նաև Բ, Գ, Դ, Ե… հատորների
հոգնակի գրքերը,
որոնք կամփոփեն
արդի ամենաբեղմնավոր հեղինակի
չգրված նովելների,
պատմվածքների, վեպերի,
կատակերգությունների

ու ողբերգությունների,
քննադատականների
(նաև դրանց բազմալեզու
թարգմանությունների)
և այլնի,
ինչպես նաև՝ սևագրությունների
հարուստ ընտրանին:

Մեր գովազդն անթերի լինելու համար
ուզում ենք ավելացնել,
որ առանձին հատոր են կազմելու
մեր հեղինակի ազգային-հայրենասիրական,
հասարակական-քաղաքական
ակտիվ անգործությանը նվիրված
հատուկ բացականչական նշանները…

*Հետգրություն*

Նոբելյան մրցանակների կոմիտեն արտակարգ ու լիազոր նիստ է գումարել՝ Իքսին գրականության և գրականագիտության գծով ապագա բոլոր մրցանակները միանվագ հանձնելու մասին որոշում կայացնելու համար:

Ոչ ոք չի կասկածում, որ նման որոշումը միաձայն ու դրական է լինելու:

*Եվս մեկ հետգրություն*

Շահագրգռված անձինք Իքսի չգրված կատակերգություններն ու ողբերգություններն արդեն բեմադրում են Հանրապետական աբսուրդի թատրոնում՝ տոմսերըն անասելի եռանդով ու հաջողությամբ իրացնելով հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում, մանկապարտեզներում ու մսուրներում *(քաղվածքներ Պետական անվտանգության ծառայության հույժ գաղտնի ծածկագրերից):*

## ԲԱՌԱԹԱՓ

Ի՜նչ սարսափելի բառաթա՛փ է սա…
Ի՜նչ աշխարհացունց դղի՛րդ է բառի…
Խենթ կայծակում են շանթերի նման
Իրար հալածող բառերը վայրի…

Եվ շանթերի մեջ դողում է հոգիս…
Եվ իմ աչքերից արյո՛ւն է պայթում:
Եվ իրարամերժ հարվածներից խիստ
Ոսկորներն են իմ ճարճատում-ճայթում:

…Ես ուշքի եկա անդունդի խորքում՝
Սուր–սուր բառերի մեջ կիսաթաղված…
Եվ հանց փրկության հույսի շող մաքուր՝
Արյունիս թելն է վերևից կախված…

*1985*

***

*Իմ դատողության – տերևների պես –*
*Պատառներն էին չվում ցան ու ցիր…*
*Ա.Ս. («Արևաքամի», 1989 թ.)*

Իմ հիշողության պատառները մութ,
աշնանային գոս տերևների պես,
քշո՛ւմ է քամին … պաղ դատողության:–
Եվ ինձ խշշո՛ցն է մնում … գույնզգույն:

Եվ … հանգստացա՛ ես մաքո՛ւր–մաքո՛ւր,
խաղաղվեց հանկարծ
աշխա՛րհն էլ արար,
երբ ես լո՛ւյս առ լո՛ւյս
ինձ դուրս քաշեցի
խոտերի միջից:

## ԶԱՐԶԱՆԴԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Է՛հ, Զարզա՛նդ, Զարզա՛նդ,
«Գարունի» Սաշա,
այդպես էլ չստացար Նոբելյան մրցանակ,
որը տարիներ շարունակ
զահլատար ճանճի ուրվականի նման
աներեսաբար խուտուտ էր տալիս
քո վիրավոր ինքնասիրությունը:

Ամոթ է ասելն անգամ,
բայց չեմ լսել նաև,
որ Եվրոպայի բռնցքամարտի
չեմպիոն եղած լիներիր երբևէ
*(եթե հաշվի չառնենք*
*քո համառ պնդումներն այդ մասին,*
*որոնց ինքդ էիր արդեն*
*անվերապահորեն հավատում),*
թեև քո վերջին հարվածն այնքան էր անսպասելի,
այնքան էր կտրուկ ու շշմեցուցիչ,
որ մինչև հիմա
ցնդածի նման չենք կարող ուշքի գալ,

և Սուխումի
օրըստօրե գեղեցկացող փողոցները
շարունակում են շաղվելով ճոճվել՝
ինչպես ճոճվում էին
քո անհաստատ քայլերի ներքո:

*Հետգրություն*

«Գարուն» ամսագրի 1972 թվականի 1-ին համարում տպագրվել է Զարզանդ-Սաշա Մկրտչյանի (1947-2013) հրաշալի բանաստեղծական շարքը («Պիկասո», «Վերջինները», «Անապատ» և այլ գործեր):

***

Հոգնե՛լ եմ հիմա՝
կիսակազմ, թերի նախադասության
բազմակետի պես
անհասկանալի ու խորհրդավոր
շարունակվելուց:

Հոգնե՛լ եմ հիմա՝
գինու դատարկված տակառի նման՝
լերդացած մրուր-նստվածքից՝
քացխած ու մժղուկածեփ…

Իսկ իմ խենթ ոգին կրակի՛ նման
թափառո՛ւմ է այլ հոգիների մեջ
ու … շարունակվո՛ւմ:

Ու ես ընդունում եմ աշխարհն աստծո …
հայեցողությամբ
և … ամբողջանո՛ւմ
հավատի՛, սիրո՛, հույսի՛ բառերով:

Առավել ևս
գեղեցիկ ոչինչ չունեմ աշխարհում,–
երբ իմ խենթ ոգին բազմակետի՛ պես
անհասկանալի ու խորհրդավոր,
կրակի՛ նման
թափառո՛ւմ է այլ հոգիների մեջ
ու … շարունակվո՛ւմ:

ՈՒ շարունակվում՝
ամբողջանալով հավատի՛, սիրո՛, հույսի՛ բառերով…
Եվ ինչ փույթ, որ ես հոգնած եմ հիմա՝
նախադասության նման կիսակազմ,
գինու դատարկված տակառի հանգույն՝
լերդացած մրուր-նստվածքից՝
քացխած ու մժղուկածեփ…

## ՈՒՇԱՑԱԾ (ՅԻԱ՞)ՍԹԱՓՈՒԹՅՈՒՆ

*Արամ Խոջիկյանին*

Այդպես էլ չհաջողվեց թոթափել
մտահոգության
պղնձյա մայրամուտը
ցայգալույսի ակնկալվող հրճվանքից:

Մնացի նույն առօրյայի
հաշվապահն ու հաշվեչափը
և … հաշվեկշիռը չգտա:

Ինձանից փախչելու
տեղ չկա արդեն,–
և միակ ելքը … իմ մեջ բազմակողմ կորչելն է:–

Թեև հաստատ է նաև այն,
որ այնտեղից ոչ ոք
ինձ ետ չի կանչի:
… Իսկ գուցե՞:

## ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Եթե հրդեհես առավոտն այս՝
շնչառությունս խեղդելով,
գոնե պահպանիր շփոթմունքս՝
երկչոտ հայացքի առջև համրացած…

Եվ, եթե կարող ես,
իմ կյանքում տեղ տուր
*Այն* խենթություններին…

Ու եթե հանկարծ կարողացար,
տո՛ւր ինձ ուժ՝
նաև ուշքի՛ չգալու…

***

Բառերի խլացուցիչ հոսքում
ուզում եմ ըմբռնել
ցավի քնքշանք աղերսող շուրթերիդ
թպրտացող ճիչը,
քո լռության մեջ
տեսնել այն ակնթարթը,
երբ բառերը –
կորցնելով իրենց
բովանդակությունը –
անցնում են անկշռելիության միջով:

## ՈՒԾ ԱԾՈՒՆ

*Հենց այնպես ճչում՝ երբ լռել է պետք,*
*Երբ ճչալ է պետք –հենց այնպես լռում…*
*Մաղվալա Գոնաշվիլի*
*(Թարգմ.՝ Գագիկ Դավթյան)*
*2016*

Իմ դատողության – տերևների պես –
Պատառներն էին չվում ցան ու ցիր:
(Գիտեցածը քո, սի՛րտ իմ, դու չասե՛ս,
Ի՛նչ ասում ես դու, սի՛րտ իմ, գիտեցի՛ր):

Հաճախ շփոթվել եմ բախտաճամփիս
Ո՛րն է՝ մայրամուտ ու ո՛րն՝ արշալույս:
(Երբ ճչա՛լ էր պետք, լռե՛լ եմ ահից…
Երբ լռե՛լ էր պետք՝ ճչացե՛լ անհույս):

Եվ կարոտներիս երկինքը լազուր,
Ա՛խ, ինչքա՞ն պիտի միգապատ մնա:
(Վախեցե՛լ եմ, որ չե՛ս հեռանա դու
Ու սարսափե՛լ, որ … չե՛ս վերադառնա՛):

*1985*

## ԱՐԴԵՆ ԲՈԼՈՐ ԲԱՌԵՐՆ ԷԼ ԱՐՆԱԿԱԹ ԵՆ ՈՒ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅԱՄԲ՝ ԱՆԻՄԱՍՏ՝

տարօրինակորեն –
բացի հենց նույն՝
արյուն բառից,
որի հեղումը
այսօր փրկության ոչ միայն
միակ ու հասանելի,
այլև ամենահուսալի
հնարավորությունն է
…օտարանալու,
վերանալու պես
կորչելու ու չըգըտըվելու…
Անհետանալու չեղածի նման…

Կամ էլ՝
պարզապես թքելու նման
անփութորեն ձեռք թափ տալու
սեփական ճակատագրի վրա։–
Անցած տարիների
և մնացած րոպեների վրա…

Երբ արդեն բոլոր բառերն էլ
արնակաթ են
ու բազմիմաստությամբ՝
այնպես անիմաստ,
ինչպես նույնիսկ
հավատարմություն ու նվիրվածություն
կոչվածները,
և նույնիսկ հենց ինքը՝ իմաստ բառը –
այլևս պետք չեն
բառարաննե՛ր։

## ԵՍ ՉԵՄ ՅԻՇՈՒՄ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՀԸ…

*1.*

Եվ իմ՝
մանավանդ վերջերս հաճախակի կրկնվող
հուսախաբության պահերին
այնպես է թվում,
թե նա … մահանում է ամեն օր,
ամեն ժամ,
ամեն ակնթարթ,
սակայն՝ այսօ՛ր,
ա՛յս ժամին,
ա՛յս ակնթարթին:
Եվ օրեցօր ինձ ավելի է խեղդում
այն թանձր հեղձուկը,
որն ահա հազա՛ր տարի
ամեն օր,
ամեն ժամ,
ամեն ակնթարթ
սպանում է Նարեկացուն:–

Քանզի ես՝
այսօր անզորս, խեղճս, անհիշաչարս,
մի աննշան պահի աններելիորեն
այնքան միամի՛տ եմ գտնվել ու թո՛ւյլ,

որ … թո՛ւյլ եմ տվել
այս գեղեցի՛կ,
այս անկրկնելի՛,
այս անսահման ու անեզր հողը

դարձնել ոչ միայն գունդ, այլև՝
պատերազմների՛,
խարդավանքների՛
ու սադրանքների մի գունդուկծիկ:

*2.*

Բարձրակետն եմ ու կենտրոնը հողի:
Ես նորացման վեհ կրակ եմ պահել
դարերի համար
և իմաստության պայթյունն ամփոփել
ամեն բառի մեջ,
դարերի թելին
ժամանակների խորհուրդը շարել
հանց հուլունքաշար:

Իմ աստվածահաճ ուղին է անցնում
պաղ դատողության և այրվող սրտի
սահմանագծով –
ծանր էր իմ հոգին, ծանր՝ իմ մարմնից –

հանուն հարության կյանքապահ խղճի՝
տրոհել եմ իմ հոգին սիրո մեջ
և … դատարկվել է մարմինս արդեն…

Եվ դատարկվել է մարմինս արդեն,
և չի մնացել իմ մեջ հոգի, որ
երկինք համբառնա…

Ներիր ինձ, աստվա՛ծ,
եթե կաս՝ մեղա…

*1986*

*3.*

Եվ Հայոց հզոր Աստվածների պես
(Երբ դրախտն է հեռու,
Իսկ դժոխքն՝ ահա՛)
Կյանքի մաքրությա՛նն եմ հավատում ես
Եվ բարությո՛ւնն եմ
ընդունում նրա:

## ԴՈՒՐՍՊՐԾՈՒԿՆԵ՛Ր ... ՆԵՐՍԱՄՏՆՈ՛ՒԿ

Ասում եմ՝
Ձեռքս մոխրացու սրտիս.
Նրանք ինձ այստե՛ղ ապրել չեն տալիս –
Գուցե թե այնտե՛ղ
Հանգիստ տան մի օր ...

Եվ ես Լյուդվիգի[1] պես «Ա՛խ»-ին գալիս՝
Հոգոց եմ հանում մի տագնապալի –
Հոգետվության նման լայն ու խոր:

Ասելուց առաջ
Իմ խղճին դիմեմ.
Այս իմաստնացած աշխարհում մանուկ
Դուրսպրծուկներն այս
Հարաներսմտնուկ
Որտե՛ղ երևալ և ինչպե՛ս՝
Գիտե՞ն –

Լավ գիտեն որսալ պահն այն բեկբեկուն,
Երբ մի ակնթարթ հետո՝ էլ արդեն
Նրանց իսկապե՛ս
Վտանգ չի սպառնում
(Հոտառության ինչ կատարելություն),
Եվ ո՛ւմ կյանքով են լինում պարտական,
Դավաճանում են
Հատկապես նրա՛ն:

Երդումի նման ուզում եմ ասել.
Անհասկանալի մեր այս ի՛նչ կյանքում

[1] *Խոսքը բանաստեղծ Լյուդվիգ Քյուլյանի մասին է:*

Նրանք հա՛-հա՛ ԱՅՆ Ղեկին են հասել,
Ավելին՝
Արդեն Ղեկի՛ց են կառչում:
Փորձում են նրանք
Այն տալ շուռումուռ,
Բայց չգիտեն՝ ո՞նց,
Առավել իսկ՝ ո՞ւր:

Եվ սարսափահար ուզում եմ հայտնել.
Նրանք հենց դրա՛ վրա են թքել:

Ասում եմ՝
Քթիս տակ ծուռ քմծիծաղ.
Այդպիսի հրաշք
Չկա՛ աշխարհում.
Առնետի պես են
Ցեղն իրենց պահում,
Երբ որ տեսակին
Վտանգ է սպառնում –
Բազմանում են շա՛տ,
Ավելի հաճա՛խ…

Եվ մնում է մեզ
Այս դարում ահեղ
Քաշել լյուդվիգյան հոգոցն հանճարեղ
(Դուրսպրծուկներից պրծո՛ւմ չկա)՝
Ա՛ա՛խ…

## «ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ»

Նրան գրպանն է հետաքըրքըրում,
և մեր հոգին է նա հա՛ քըրքըրում,
ինչքան էլ գռփի՝
չի հանգստանա,
նա պիտի տանի՛,
պոկի՛,
ստանա՛…

Ապրանք է նրա համար մեր … լեզո՛ւն,
ծախում է, ինչպես
կիտրո՞ն է ծախում,
ինչպես ձմերո՛ւկ
ու ինչպես ծվա՛ղ
(հատ-հատ ես ուզո՞ւմ, կուզե՞ս՝ մեծածախ),
բառ-բառ է ծախում,
ծախում է տառ-տառ,
էժան չի ծախում –
շատ թանկ անպատճառ,
զի «լեզվից անգին մենք ոչինչ չունենք,
և հայ ենք եթե,
լեզվո՛վ ենք հայ մենք»:

Եկեք նստենք ծուռ, բայց շիտակ խոսենք –
վերևում՝ աստված, ներքևում ենք մենք.

եթե ծախելու ոչինչ չի գտնում,
մոռացած խիղճ ու ինքնասիրություն,
կգողանա քո սիրտն ու արյունը՝
քո անձնականը, կենսագրությունը,
քանզի իրն այնքան խեղճ է, անալի,
որ … կենսագրությո՛ւն կոչել չի լինի:

Եվ կծախի քո կյանքը ժամ առ ժամ,
ճի՛շտդ կծախի, սխա՛լդ անգամ,

ցա՛վդ կծախի՝ մորմոք առ մորմոք,
հավա՛տդ, կայրի սի՛րտդ անամոք,

և … կքուլայվի հոգիդ առ երկինք,
որպես բողոք ու որպես նախատինք
(Բայց չկա չարիք առանց բարիքի.
մարմինը հոգնած մեր երկրագնդի
կթեթևանա տագնապ առ տագնապ
մի … յոթանասուն կիլոգրամի չափ),
զի փորձել ես դու ապրել լի ու ճիշտ,
մաքուր ես փորձել ապրել, բայց … Ոչի՛նչ…

Տե՛ս, ինչ գեղեցիկ ճառել նա գիտի.
ցավով է ապրում իր ժողովրդի,
նրա հույզերով, հույսերով նրա՝
ինքը խո՛ց դարձած մեր մարմնի վրա
(պարզ է՝ փորձության ահավոր ժամին
մեռնե՛ս՝ չես գտնի «հայրենասերին»):
Անշուշտ, այսպիսին հիմա՛ր չի լինում,
նա շատ լավ գիտի, թե ի՛նչ է անում
և … շագանակն է – հանկարծ չտուժի –
կրակից հանում ձեռքով ուրիշի՛:–
Նա միայն շիլա կտա անվճար
մեր ականջներին քաշելու համար:–

Համոզված է նա, թե մենք չենք տեսնում,
համոզված է նա, թե մենք չենք լսում…

Բայց մենք լավ գիտենք՝ նա ո՞վ է, ոչ՝ ի՛նչ,
ժպտում ենք սակայն՝ դե՛, մերն է, ոչի՛նչ,
դե՛, ոչի՛նչ, կուղղվի՛ – չենք էլ կասկածում:–
Իսկ «մերն» էլ, դե, մեր հե՛րն է անիծում…

Եվ ինչքա՛ն պիտի մեր հոգին հանի
այդ աներե՛սը …
երկերեսանի՛:

## ՄԵՐ «ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ»

### *1. «ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ» ԵՌԱԳՈՒՅՆԸ*

Մեր Եռագույնն է խալաթի հանգույն
Նաև բաղնիքի սրբիչի նման
Թեթև շարժումով ու այնպես անփո՛ւյթ
Քաշում քրտնախաշ ուսերի վրա,

Կամ էլ հաստ վզին՝ շարֆի պես պրկած,
Փաթաթում փքվա՛ծ, ինքնագո՛հ, անհո՛գ,
Ու չի՛ մտածում, որ մի օր հանկարծ
Կարող է դառնալ … կախաղանի թոկ:

### *2. «ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ» ՄԱՅՐԵՆԻՆ*

Հանուն մեր լեզվի խոսում է հուզվա՛ծ
Հայրենասերի կոչերով կրքոտ,
Հետո բալիկի թաթիկից բռնած՝
Քթացից տանում … ռուսակա՛ն դպրոց:

Մեր ոսկեղենիկ լեզվով է երդվում
Ու լա՛յն կոկորդում … անխնա խեղդում…

Այո՛, երդվում է մեր լեզվով քանքար…
Բայց Սուրբ Սրբոցը, ճիշտն ասած, հիմա
Պետք էլ չէ նրան: Ո՛չ, պետք է այնքա՛ն,
Որ … չգիտությա՛մբ պարծենա նրա…

### *3. ԴԱՌՆԱՄ ՈՒ ՔԵԶ ՓՈՌԲԱՆԵՄ, ՔԵ՛Զ, ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՔԱԴԱՆԱԿ*

Մեր ազգային հայ գործիչներ,
Ավելին՝ «հա՛յ-հա՛յ գործիչներ»,
Մեր ազգային «վա՛յ-փորձիչներ»,
Հոգնե՛լ ենք մենք ձեր «գործի՛ց» էլ,

Հոգնե՛լ ենք մենք ձեր «փորձի՛ց» էլ…
Միշտ անհաջող ձեր փորձերը
Անիծե՛լ են ազգի հերը…

Էլ հիմա մեզ պետք չեն գո՛րծ-մո՛րծ.
Թե ինչ անենք, կամ ինչ չանենք,
Դեռ չկտրած՝ եկեք չափենք
Ո՞ւ մեզ փորձենք պահել անփորձ՝
Չընկնե՞նք պղտոր ձեր ջրերը,
Թե չէ՝ լա՛վ չի լինի մերը…

Մեր գործիչներ «արգասաբեր»,
Հիմա պիտի ցավով փաստենք,
Ամաչելով պիտի ասենք,
Որ չգիտեք դուք մեր հոգին
Ամենևին.

Ինչպե՞ս ցավը մեր ամոքի
Ձեր խոսքն՝ այնքա՜ն ո՛չ մայրենի,
Ո՛չ բարեհունչ-ոսկեղենիկ…

Զարմանո՛ւմ եմ՝
Ինչպե՞ս եք դուք
Հայոց խոսքի հոգին հանել,
Դարձրել այնպե՛ս տաղտուկ ու պաղ,
Այնպե՛ս ծանծաղ, միապաղաղ,
Ձեր շուրթերին՝
Այնպես անե՛լ…

Ինչպե՞ս եք դուք կարողացել
Թումանյանի լեզուն եղծել։–

Եթե ճիշտն ենք լսել ուզում,
Ստեղծել եք մի նոր լեզու.
Երբ երդվում եք դուք.
«Մենք պիտի…»,

Դա ասել է, որ «չպիտի…»,
Երբ զեկուցում եք՝
«Պատրա՛ստ ենք»,
Դա ասել է, որ պատրա՛ստ չեք,
Զի ձեր «պատրաստը չափռա՛ստ» է,
Ոի այրական ձեր «հաստատը»
Հաստա՛տ գիտեմ՝ անհաստա՛տ է,
Զի … «չռա՛ստ» է…

Գիտենք՝ դուք մեզ չեք հասկանում
(Չե՛ք էլ ուզում մեզ հասկանալ),
Որ մեր ցավն է հա՛ սաստկանում
Ոի դեռ պիտի հա՛ սաստկանա,
Քանզի մեզ կաք դուք անտատան
Մի … ավելորդ բանի նման…
(Այդ ավելորդ բանի համար
Գուցե դուք բա՞ռ գտնեք հարմար)…

Բանի համար այդ ավելորդ
Ես չե՛մ գտել բառ մի՝ հաջող
Վերծանելու ձեր խոր հոգին,
Ձեր էությունն ամբողջովին…
Բառ չեմ գտել ձեզ հարազատ,
Կներեք, … «կույր աղիքից» զատ։–

Ախր լավ չենք զգում վաղուց –
Սրտխառնոց է, փսխում ու լուծ,
Մեր մարմինն է ցնցվում հոգնած
Ջերմախտից ու խիստ բորբոքված…

Հիմա նստած  չոր ծառի տակ,
Հանց մեր մեծերն՝ ընկուզենու,
Միտք եմ անում մեն ու մենակ՝
Ողբալով մեզ ու մեր լեզուն.
Մեկը պիտի լինի՞ արդյոք,
Որ ձեռքն առնի մեր ղեկն հայոց,

Մեկը պիտի լինի՞ տեսնես,
Որ վերջապես
Ձեզնից փրկի խեղճերիս՝ մե՛զ,–
Վերջապես ձեզ
Ըստ արժանվույն «գնահատի»՝
«Կույր աղիքի» նման հատի,–
Ոէզում եմ, որ հասկանայինք՝
Կարիքն ունենք վիրահատի…
Այն էլ շեշտենք՝ զուտ ազգայի՞ն…

Արդ, քարայծի կոտոշի պես
Ոլորված ու ծռված այսպես,
Վերջին շնչով վերջաբանեմ.

Դառնամ ու քեզ փառաբանեմ,
Քե՛զ, ազգային հերձադանա՛կ,
Որ պիտի մեր հոգի՛ն մաքրես
Կեղտ ու խիճից ամեն տեսակ…

### *4. «ՀՈ՛Պ-ՀՈՊԻԿՆԵ՛Ր»*

Եթե պետք լինի
(Ձեր շահի համար),
Դուք թևին կտաք
Եվ հո՛պ-հո՛պ կանեք ու կթռչեք ձախ,
Եվ թևին կտաք ու հո՛պ-հո՛պ կանեք
Եվ կթռչեք աջ,
Ձեր փոմփոլիկը կբացեք հովիար
Արևաճաճանչ ձեր կուռքի առաջ
Եվ այնպես քնքո՛ւշ,
Եվ այնպես զգո՛ւշ
Հո՛վ կանեք հեղձուկ օրերին ամռան,
Որ չտառապի՛ կուռքի մեծ Հոգի՛ն,
Էությո՛ւնն հանկարծ…
Եվ ձեր կախքթով երկար ու նեղլիկ

Կխոնարհվեք ձախ-կխոնարհվեք աջ,
Եվ խոնարհումի այդ ուղիղ գծից
Երբեք չեք շեղվի,
Եվ խոնարհվելով կսրբեք փոշուց
Կոշիկները ձեր Աստըծո – կուռքի,
Որ չկորցնե՛ք
Ձեր տեղը նրա … լույս շուքի ներքո,
Միայն հասցընե՛ք, միայն չուշանա՛ք,
Քանզի մի ուրիշ «երկվորյակ» հանկարծ
Կգրավի «ձեր» տեղն այն երազած
Նույն խանդոտ կրքով:
Նաև փաստենք, որ դուք չեք կռանում
Ընկածին ոտքի
Բարձըրացնելու-հանելու համար…
Ճիշտ հակառա՛կը. վերջնականապե՛ս
Դուք տապալելո՛ւ համար ամեն ինչ
Կանեք անպատճառ ու արհեստավարժ:

Կոշիկի մասին երկու բառ միայն,
Թեև այդ մասին
Կարելի է վեպ կամ պոեմ գրել,
Թե կուզեք նովել՝
Գնահատելով ըստ արժանավույն
Նրա տեղը մեր կյանքում ու … դիրքում.

Կուռքի կոշիկը,
Ինչպես հասկացաք,
Պատսպարվելու տեղ է հուսալի՝
Անձրևից, ձյունից, կարկուտից, շոգից,
Այլ խոսքով՝ «տանիք» …
Ասենք նաև, որ հարմար տեղ է շատ
Ձեր արդեն նախկի՛ն դարձած Աստըծո՝
Կուռքի ոտքի տակ
Հերթական ճարպիկ
Հո՛պ-հո՛պից առաջ …
մի լա՛վ ծրտելու՝

Ոտքի տակ օճառ  քսելու նման,
Օդ փչացնելու…

(Մի կուռքի մոտից մյուս կուռքի մոտ
Հո՛պ-հո՛պ անելու «պատճառներ» կան շատ,
Կարևորն այստեղ *խոստումներն* են լոկ,
Վերջին տեղում չէ *պաշտոնը* հաստատ,
Որը «տաք տեղ» է կոչվում երկիմաստ:
Կարելի է այդ «տաք տեղի» համար
Ամեն ինչ ոչ թե ծախե՛լ, այլ … տա՛լ … տա՛՛լ…
Այսքանից հետո ինչպե՞ս լսել ձեզ,
Լսելուց հետո՝ ինչպե՞ս հասկանալ,
Ինչպե՞ս հավատա՛լ,
Երբ եթե նույնիսկ երեսին թքես,
Հաստատ՝ «Անձրև՛ է գալիս» կասեն քեզ…
Է՛հ, այն էլ ասենք,
Որ մեզ լոկ մի բան է մխիթարում.
Այն, որ «տաք տեղը» շատ շուտ է այրվում)…

Դե, դուք… Ես չէի ասի շա՛տ եք դուք,
Սակայն ամենուր ձվադրել եք, կա՛ք
Մեր համայնք կոչվող տան ամեն ճեղքում
(Քիչ չեն ճեղքերն այդ, «բարեբախտաբար»)
ՈՒ տանիքի տակ,
Միայն թե լինի հարմար պա՛տ, փչա՛կ,
ՈՒ մեր նոսրացած անտառներում՝ ծառ:

Երբեք ավելորդ չի լինի, եթե
Հիշեցընենք, որ
Առավել ակտիվ եք ու գործունյա
Նախընտրական բարդ ժամանակներում,
Երբ մտնում եք դուք ձեր տարերքի մեջ
Եվ զգում եք ձեզ հանց ձուկը՝ ջրում,
Կամ (ավելի ճիշտ)՝
Ինչպես ոջի՛լը խիտ-խուճուճներում…
ՉԷ՛, մենք չենք կարծում,

Թե դուք գիտեք լոկ հո՛պ-հո՛պ-հո՛պ անել,
Եվ թևին տալ ու թռչկոտել աջ-ձախ
Եվ ձեր երկար ու նեղլիկ կախքթով
Խոնարհվել նորեն…

Ա՛յ, խոնարհվելիս խիստ վարպետորեն
Մեկ-մեկ թրթուր ու միջատ եք որսում
Եվ … համայնքային շահերից խոսում,
Ձեր «հերոսական գործունեության»…

Դուք ինձ կներեք, փորձ ունեմ այնքան,
Որ կարող եմ արդ արդար ու արի
Իմ խոսքը հղել համայն աշխարհին.
– Թեև վախկոտ չեք ու ոչ էլ երկչոտ,
Բայց շատ զգույշ վարք եք ցուցաբերում,
Եվ այդ պատճառով դուք վերջիվերջո
Չե՞ք անմահացել … ժողովըրդական
Խոսք-զրույցներում:

Բայց այս ի՞նչ ծանըր հոտ է թանձրանում,
Մեր չորս կողմից վեր՝ երկինք բարձրանում
Եվ շնչահե՛ղձ է անում աշխարհը:–

Եվ ես չեմ կորցնում պահի հարմարը
Եվ ծեփծփելու նման քիթն եմ իմ
Մատներով այնպե՛ս սեղմում ամրապինդ,
Որ իմ աչքերից ելանում է մուխ,
Եվ ես բառերով հոգեսրտաբուխ
Ջանում եմ փութով խոսքն իմ ավարտել՝
Գաղտնիքը խորունկ բացելով արդեն.
Ես ուզում եմ, որ հոտերից այս սուր
Համարյա արդեն
Գլուխը կորցրած ընթերցողն այստեղ
Խիստ հիասթափվի
Եվ չկասկածի՛ … հոպոպին իզուր
(Հոպոպը ինքը հոտած է, սակայն

Համոզված է խոր, թե բույնն է հոտած),
Նա այս թռչնի հետ չունի ոչ մի կապ –
Այս թռչունն այնքան հի՛ն է ու դարյա՛ն
Եվ դար ու դարեր՝ անանուն… Սակայն
Եկեք, ընթերցող, նրան այս պահին
Կընքենք սեղմ ու կուռ
Հո՛պ-հո՛պիկ անվամբ
Եվ հավատանք, որ նա իր արժանի
Տեղը կգտնի
Մեր դպրոցական դասագրքերում,
Եվ ուսումնատենչ բալիկները մեր
Հա՛ կըքըրքըրեն ներքինը նրա,
Հանց ուրիշների կյանքն են քըրքըրում
Հետաքրքրասեր կանայք սուրճի շուրջ…
Եվ հիշենք, որ միշտ նա եղե՛լ է: Լուրջ
Համոզվենք նաև, որ միշտ էլ պիտի
Մեր կողքին լինի,
Եթե փետրահա՛ն չանենք աներբկա՝
Բմբուլները խիտ չտա՛նք մե՛ր քամուն:

## *5. ՀԱՄՐՈՒԹՅՈՒՆ*

Հիմա մի խնդիր ունենք կարևոր
(Թեև եղել է խնդիրն այդ միշտ էլ,
Դա մեր սխալն է եղել ու ճիշտն էլ) –
Համրությունը մեր արդարացնելու…

Իսկ դրա համար ձի՛րք է հարկավոր,
Ոսկրազո՛ւրկ, ճարտա՛ր,
Համոզի՛չ լեզու…

Շա՛տ աղմուկ է պետք լռելու համար,
«Լեզու կուլ տալու» համար
… բազկաթոռ…
Բայց եկեք լինենք մեր առջև արդար.

Նման «բազկաթոռն» ո՞ւմ է հարկավոր,
Երբ կոչվում է այն
«Բերանի խցան»,
«Կողպե՛ք» է կոչվում այն ավելի շուտ,
Կարող ենք ասել և
«Լեզվի՛ փականք»…

Հարո՛ւստ է մեր սուրբ մայրենի լեզուն,
Եվ հետևաբար,
Կարող ենք գտնել
Նաև ուրիշ բառ՝
Ավելի՛ հարմար,
Ավելի՛ հյութեղ…

Շատ խոսել է պետք … չասելո՛ւ համար,
«Լեզո՛ւ չափռաստել»,
Լինել «աներեր»,
«Յուրայի՛ն» լինել ամենաօտա՛ր…
…Օգնի՛ր՝
այս անգամ պատվով … չմեռնել…

*Նման դեպքերում անհրաժեշտ հետգրություն*
…Եթե ընթերցողը հարցընի, թե ո՛ւմ
նկատի ունեմ,
կպատասխանեմ.
նրա՛ն, ով այստեղ ճանաչեց իրեն:

*Ո՛ւ նաև*

Հաճախ եմ լսում, որ մեր հայ ազգային գործիչները շա՛տ են անսկզբունք…

Ճիշտն ասած, մինչև վերջերս նույն կարծիքին էի նաև ե՛ս…

Հիմա հասկանում եմ, որ սխալվո՛ւմ էի չարաչար –

Քանզի վերջապես բացվեց ինձ, որ սկզբունք չունենա՛լն է մեր ազգային գործիչների

… անսասան սկզբո՛ւնքը…

## ԲԱՅՑ, ԱԶՆՎՈՐԵՆ, ՉԵՔ ԿԱՍԿԱԾՈՒՄ ԴՈՒՔ

Ձեր՝ «խիզախության»
խաչը կրելու ժամանակն է արդ,
բայց, ազնվորեն,
չեք կասկածում դուք,
որ խաչն այդ սև է,
ու չար սևությամբ՝
դաժան է, մռայլ
և սարսափազդու:–

Դուք, ազնվորեն,
չեք էլ կասկածում,
դո՛ւք՝ հաղթաբազո՛ւկ,
ձեր դրոշը պարզած:

***

Խաղալու ցանկությունից բացի
մենք հիմա ոչինչ չունենք –

և չի վերջանում
մեր դաժան խաղը մեզ հետ:–

Որովհետև հիմա
ուրիշ ոչինչ չունենք
խաղալու ցանկությունից
ու մեզանից բացի:–

Եվ եթե հանկարծ
մեզանից հանենք
խաղալու մեր անհագ ցանկությունը,
կստանանք դատարկության բանաձևը,
որը դեռ … իմաստավորել է պետք,
ու այն էլ՝ … անհեթեթաչա՛փ:

## «ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՅԳԱԲԱՑ» ԳՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հողմածեծ, ջարդված
ու բզկտված,
ուժասպառ
ու մի հրաշքով
ծառի ճյուղից դեռ կառչած աշնան
վերջին տերևի
անավարտ խոհերն արտահայտող
լավագույն նկարի
մրցանակաբաշխություն եմ
հայտարարում:

Ես, որ աշնան
ամենավերջին տերևն եմ –
հողմածեծ, ջարդված
ու բզկտված,
ուժասպա՛ռ,
բայց մի հրաշքով
դեռ կառչած ծառի ճյուղից:

## ԾՐԱԳՐՎԱԾ ՄՂՁԱՎԱՆՋ

Մոռացել ենք, որ կանք
մեր եսասիրությունից
ու նաև հաճույքներից
դուրս ու անդին:–

Մի գոյաձև ու վիճակ,
որը հարցականի տակ է դրել
ի վերուստ մեզ տրված
առաքելությունը:

Մենք հիմա այնքան ենք բարձրացել,

որ դարձել ենք արդեն
մեր իսկ ստեղծած ծրագրի
(որից արդեն գլուխ չենք հանում)
մի մասը,

և ընդ որում՝
այնքան աննշա՜ն, այնքան մանրի՛կ
ու այնքան … ընդամե՜նը,

որ մեզ կարող է թքելու պես բացառել
ցանկացած համակարգի
երկրորդական-երրորդական դետալ:

## ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

Իմ կյանքը շարունակելու համար
ես հորինեցի
զուգահեռագծեր:–

Բայց հետո,
երբ իմ թափառող
հոգու ծավալն էի փնտրում,
անսպասելիորեն պարզեցի,
որ այդ զուգահեռագծերը,
չգիտես ինչու, չեն հատվում,

ինչն էլ ապացուցելու համար
որոշեցի հորինել նաև
բացառության օրենք,
իսկ ավելի ճիշտ՝
պայմաններ ստեղծեցի
այդ օրենքի գոյության համար:

Ի վերջո, գլուխս այդ և նման
իմաստակված հիմարություններից
մի կերպ ազատելու համար
ես հորինեցի
արդեն հարթությունների
թեքություններ,
իսկ մի քիչ էլ մտածելուց հետո,
(համենայնդեպս
հանկարծ չսխալվելու համար)՝
նաև թեքությունների
հարթություններ

և հանգիստ խղճով՝
մի թեթև՛ հարվածով
ինձ գլորեցի
մինչև օրս էլ
չեմ կարողանում հասկանալ,
թե ո՛ւր:

***

Երակներիս ցանցում
թպրտում է սիրտս,
որը կորցրել եմ չգիտեմ որտե՛ղ,
թեև լավ գիտեմ, թե ինչո՛ւ,
և այդ պատճառով
փնտրելու ոչ մի ցանկություն էլ
չունեմ,
առավել ևս՝
անսպասելիորեն գտնելու:

Թեև առանց րոպե իսկ կորցնելու՝
դիմել եմ ոստիկանության

մոտակա հենակետ
կորած սիրտն իմ
անվավեր համարելու
հայտարարություն-խնդրանքով:–
Քանի դեռ շա՛տ պարտաճանաչի մեկը
չի գտել այն
ու համապատասխան գումարի դիմաց
վերադարձնելու պատրաստակամություն
չի հայտնել:

Իսկ շարունակվելո՛ւ համար
համենայնդեպս
… շարունակում եմ
անխղճորեն ինձ քարշ տալ՝
իմ իսկ քթից բռնած:

***

Վերադառնալը
Պարտություն ու հաղթանակ չէ –
Վերադառնալը
Պարտություն է ու հաղթանակ…
Վերադառնալը սխալ ու ճիշտ չէ –
Վերադառնալը սխալ է ու ճիշտ:

Վերադառնալն ամեն ինչ է
Եվ ամենևին էլ
ամեն ինչ չէ վերադառնալը…

…Դե, ի՛նչ էլ որ լինի
Վերադառնալը,
Լոկ չդառնա …
փախո՛ւստ…

## ԱՄԱՌԱՅԻՆ ԾՈՎԱՓ

***1.***

Ծովափնյա բորբ ավազների վրա շեկ
կարելի է … բուրումնավետ սուրճ եփել,
և ծովն արդեն ալիքվելու ուժ չունի
և – շշկլված – ուժասպառվում է ահա:

Եվ ճայերն են կտուցներով՝
տագնապած
հա՛ քըքըստում թմրած մարմինը ծովի
և թևերի հովիարներով օդահագ
փորձում նրա շշմածությունը ցրել…

Այս ի՛նչ շոգ է,
այս ի՛նչ շոգ է,
տե՛ր աստված:

Բայց …
ո՞ւմ սիրո ճակատագիր կդառնա
ծովափնյա բորբ ավազների վրա շեկ
անձեռակերտ բախտապայտի նման՝
պիրկ
կիսակըծկված
մուգ մարմինը աղջկա:

***2.***

Ամռան հովը քշել ու տարել է անհետ
կրքոտ շշուկների ջերմությունը վերջին –
և ծովն ու ես ահա՝
երկու լքված պոետ,
սարսռո՛ւմ ենք …
կարծես ձմռան սառը շնչից:

*3.*

Սև ծովը կառնի ճայերից թևեր
և փետուրներն իր
կլցնի օդով
և երազանքով կլցնի կապույտ,
բարձունքով հպարտ
ու արյան կանչով
և թևին կտա,
և թևին կտա
և կբարձրանա,
կդառնա թռչո՛ւն
Սև ծովը մի օր:

*4.*

Գալիս ես անտես՝
արևաքամու ծփանքի նման,
ալիքներ ունես՝
կաթ է ու փրփուր,
շաղվում ես, շաղվում
լեռների վրա
ելևէջներով
հար նոր ու հար հին:

Այն ե՞րբ է եղել –
ծնունդը ճչի՝
զնգուն համրությամբ
ու սքանչելի,
և՝ գողտրիկ-գողտրիկ՝
չգրված երգի
գաղտնիքի հանգույն,
առեղծվածներով
երկունքացավի…
Ոէրիշ էլ ոչինչ երբեք չի՛ եղել,
ուրիշ էլ ոչինչ երբեք չի լինի –

…Ես բառեր չունեմ…
Գալի՛ս ես անտես,
ծավալվում,
ինչպես երկնային մշուշ…
Գալի՛ս ես,
որ էլ երբեք չգնաս…

***5.***

Հիմա չունեմ ոչինչ։–
Իրիկունս միակ
ադամանդի նման
ես կորցրել եմ արդեն
արմավենու՝ ծովի
ալիքների ներքո
ձկնիկի պես խայտող
շշուկների խորքում։

Աստղերն իմ ո՞ւր տարար,
ո՞ւր շաղեցիր շռայլ։–
Ախ, ո՞ւմ ոտքերի տակ
լուսաթափ ես անում։

Հիմա չունեմ ոչինչ…
Հիմա չունե՛մ ոչինչ…
Եվ ես կարոտաբաղձ
մի ձկնորսի նման
իմ մեծ ծովն եմ փնտրում,
իմ մեծ ծովն եմ փնտրում,
որ իմ կորած միակ
իրիկունը որսամ։

***6.***

Ծովի էջերը
Թերթում է քամին,

Աստղերն են փայլում
Բառերի նման:

Ալիքը կանգնել
Մատների ծայրին՝
Սահմանն է փնտրում
Անսահմանության:

*7.*

Ծովի կապույտ կրծքին
Մի աղջիկ է լողում,
Ծովն է հուզվում սաստիկ
Ու … սարսըռա՛ծ դողո՛ւմ:

Հառաչո՛ւմ է մեկ էլ
Ինչպես խենթ սիրահար,
Փարվո՛ւմ մարմնին ջահել
Տաքանալո՛ւ համար:

*8.*

Գյուղ եմ հեռանում՝ տոթ Սուխումից վե՛ր՝
Թևանցուկ արած հովի հետ անտես:
Եվ ձկներն են հանց սուզվում գետի մեջ,
Բնությա՛ն մեջ եմ ես սուզվում այդպես:

*1977*

*9.*

Պարտականությունն իմ ամենամեծ
ամեն երեկո տագնապով վերին
իջնելն է ծովափ՝
սիրահարների բարեկամ լուսնին
ծովում խեղդվելուց փրկելու համար…

## ՃԵՊԱՆԿԱՐ

Անտառն՝ օվկիան: Անցնում եմ ահա
Ջրասույզի պես հատակով նրա:
Եվ ծառից ընկնող տերևև անանուն
«Տիտանիկ» նավն է
ինձ հանկարծ թվում:

## ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մի օձի նման՝ խելահեղ զարկվող
Կըծկըված ոզնու նիզակ-փշերին,
ժայռաքարերի վրա կող առ կող
Մարմինն է ջարդում արևաքամին,

Եվ օձի նման գալարվում մոլի,
Փերթ առ փերթ իրեն
պատռում անխնա՝
Հևք-հևք թողնելով
արնամած հոգին
Ժայռերի ցի՛ց-ցի՛ց քարերի վրա:

## ԳԱՐՆԱՆ ԼՈՒՍԱԲԱՑ

Ծառից ծառ քաշվել են թռչունների
Պարանի հանգույն դայլայլները թաց,
Որոնց վրայով քայլում է արի
Լարախաղացի պես օրն արթնացած:

Իր շառափների ճաճանչի վրա
Արփին է ահա մեկ-մեկ հավաքում
Աքլորականչի լույսն օղակ-օղակ
Եվ լուսաբացի վզին փաթաթում:

*1985*

## ԳԼԽԱՊՏՈՒՅՏ

*Բենիկ Սեյրանյանի հիշատակին*

Իսկ թռչունները թևում են մայիս՝
Բարձունքի սաթե գինով վերացած.
Առանց ձեզ
դեռ իմ հրճվանքն՝ անորոշ,
Ձեզ հետ վիշտն է իմ
արդեն գիտակցված:

Իսկ թռչունները թևում են մայիս՝
Լցված պատրանքով
գարնանամուտի.
Պարզ է անմեկին թախիծն իմ չեղած,
Եղած խինդս՝ ճիչ –
կտցին կապույտի:

Իսկ թռչունները թևում են մայիս՝
Կարոտիս բեռը թևերից կախած.
Հնարավոր չէ թաքցնել ցավն իմ մեծ,
Եվ աննպատակ՝ բացել քո առաջ…

… Թռչուններն են ե՞տ՝
դեպ մայիս թևում,
Թե՞ ժամանակն է
ի՛ր մեջ ամփոփվում:

*1985*

***

Ափիս մեջ աստղն է փշրվում
սուտակ
Եվ շաղիկ-շաղիկ սնդիկվում հողին։
Հապալասենին հողաբույր է տաք
Ծաթում կոկռոշի
լուսնագույն մարմնին։

Հովիկն է դաղել իր լեզուն կաթե
Բարձմենյակի
չոր դառնության վրա
Եվ գոլ առվակի ջրով արծաթե
Վառվող բերանն է ողողում ահա։

***

*Սոս Սիմավորյանի հիշատակին*

Արևին ձգտող թռչունի նման
Կուզեմ լազուրում ճախրել երկնքի,
Թեկուզ խենթացած
բարձունքով վառման՝
Իմ սրտից երգի հետ
… արյո՛ւն ժայթքի։–

Ինձ բորբ արյունիս թելը նրբահյուս
Պորտալարի պես կկապի հողիս…
Թող սիրտն իմ պայթի՛
կարոտից անհույս –
Սակայն կպայթի նա
սավառնելի՛ս։

**ԵՍ ԿԱ՛Մ…**

Ես ձեր մշտական թիրախն եմ հաստատ,
նշանակե՛տը ձեր գնդակների:

Եվ պիտի ասեմ
ձեր արժանին ձեզ մատուցելու պես –
սո՛ւր է աչքը ձեր ու ձեռքն՝ աներե՛ր:

Դուք՝ դիպուկահա՛ր,
դուք՝ արհեստավա՛րժ-
այնպես որ, երբեք դու չկասկածեք՝
դեռ չի վըրիպել և ո՛չ մի գնդակ,
ու ո՛չ մի գնդակ չի՛ սուրացել փուստ –
հասել է միշտ էլ այն տասանոցին,
որ կոչվում է սիրտ…
Եվ համոզվելու համար հարկ չկա
գալ-ստուգելու,
հաշվել-չափելու…

Եվ ծակծըկվա՛ծ է սիրտն իմ բյուր տեղից՝
խիստ պատառոտվա՛ծ ու արնաշաղա՛խ,
խոցվա՛ծ-խոցոտվա՛ծ, ծեծվա՛ծ-ծեծկըվա՛ծ…
Քըրքըրվա՛ծ, սակայն
գրոհի՛ տանող այն դըրոշի պես…

Բայց եթե մի օր
սուրա ձեր գնդակն ու «չըբըռնի» ինձ,
չխոցի սիրտն իմ,
և չկասեցվի թիռը մահաբեր,
այնժամ գիտեցեք,
որ դուք … «մեղք» չունեք,–
պարզապես արդե՛ն…

Ես ապրում եմ, կա՛մ,
քանի դեռ սրտիս միջով են անցնում
գնդակներն այն, որ դո՛ւք եք արձակել:

## ՄՇՈ ԴԱՇՏԻ ԱՌԱՍՊԵԼ

*Մշո սարեր մշուշ է…*

Ո՛վ Վարդամատն[1],
Մերկությունդ խենթ մտավ Գուռգուռա[2]…
Եվ … ջուրը թշշա՛ց,
Եվ ջուրը թշշա՛ց մարմնիդ կրակից
Եվ մշո՛ւշ-մշո՛ւշ փրփուրվեց բեկվող ցոլքերի վրա,
Որ … չկուրանա՞նք Դաղոնա[3] սարին
Ջեռ առասպելի մեղսոտ խայտանքից…

Տե՛ս, կանայք խանդի
Քարեր Անեծքի ժայռից թափեցին…
Տե՛ս, ջուրը թշշա՛ց
Եվ … խիտ խտացավ տարփանքդ վայրի…
Մենք հիմա գիտենք՝ անմեղ մեղք էր դա։–
Խանդի քարերը –
Մենք հիմա գիտենք՝ անմեղ մեղք էր դա –
Դարձան աղավնի։

Տե՛ս, կտուց-կտուց չտարա՞ն մշուշն աղավնիները…
Տե՛ս, չկուրացա՞նք մենք դժբախտաբար
Եվ չկուրացա՞նք…

Ա՛խ, մենք մնացինք
Աղավնու նման մի մեղավոր լո՛ւյս…
Ա՛խ, մենք մնացինք
Քարերի նման մի անմեղ հանցա՞նք…

---

*[1]Վարդամատն – աստվածուհի Աստղիկ։*

*[2]Աստղիկը լողանում էր Գուռգուռա գետում։*

*[3]Լողանալիս Աստղիկը մշուշով էր պատում գետը, որպեսզի Դաղոնա սարի կտրիճները չտեսնեն իր մերկությունը։*

***

Ախ, ո՞ւր գնանք, իմ քնար,
Ասա՛ ինձ, ո՞ւր, իմ շա՛տ լավ,
Ձախում անդունդ է մլար,
Աջում՝ մոտիկ հոգու դավ:

Տե՛ս, կանչում է մանկության
Արահետն իմ լուսաշող,
Ուր չես կորցնի ոչ մի բան,
Բայց և գտնե՛լ ... չես կարող...

Տե՛ս, փչում է իմ հոգուն
Հովն հանց մայրիկս՝ վերքիս...
Շաղախվում են մորմոքուն
Առկայծումներն իմ երգի:

Տե՛ս, մայրիկն է իմ կանգնած
Ճամփիս աղոթքի հանգույն՝
Կրծքին ձեռքերը կապած
Որպես բախտի լույս հանգույց:

***

*Երբ ճչալ էր պետք, լռել եմ ահից...*
*Երբ լռել էր պետք՝ ճչացել անհույս:*
*(«Արևաքամի» ժողովածու, 1989)*

Թեթև շաղվում է օղակը ահա...
Սակայն փրկությա՞ն, թե՞ կախաղանի...
Ե՞րբ է ստանալու ձևն իր վերջնական
Որպես հոգու թո՛ւյն, կամ սպեղանի...

Վերք-ցավն իմ բաց է աշխարհի առաջ –
Ի՞նչ փորձանքներ են հողմերը գուժում:–
Ա՛ղ է բերում իմ ընկերը ահա –
Ու հոգուս վերքին ցանելով՝ բուժում...

…Երկու տագնապ են հա՛ իրար բախվում՝
Մշուշվելով իմ հույսերի վրա,
Եվ … հայացքիս դեմ շաղվո՛ւմ է, շաղվո՛ւմ
Չգիտեմ ինչի՛ օղակը ահա…

## ՇԵՐԱՄԻ ՈՐԴ

Ես երկրագնդի կողմերով բոլոր
Հավասարաչափ ուժով տարածվում,
Ճամփա եմ քաշում անձրևից մոլոր
Եվ ոլորելով ջրաքամ անում,

Ապա կարկատում մաշվածքներն ազնիվ,
Որ հողմը հոգին չդաղի նրա…
Եվ հոգնությունն եմ թափ տալիս սաստիկ
Ու քիփ փաթաթում մարմընիս վրա…

Եվ հանց տատիկիս թելերը մանած՝
Հորիզոնն եմ իմ վրա կծիկում…
Եվ արդեն-արդեն հոգիս ներփակված
Իմ հյուսած կոկոնն է ներսից ծակում:

*1985*

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ,

որն ամենևին էլ արդյունք չէ,
այլ՝ գործընթաց,
պարզապես լացե՛լ ստիպելու
հնար ու միջոց:

Լաց լինելու առիթը
հանկարծ բաց չթողնելու համար՝
այսքանն ընդամենը՝

*բանաստեղծություն:*

## ՄԵՐ ՀԵՔԻԱԹԸ

Հաստա՛տ՝
նրա ասպիրանտական հայերենը
գեղեցիկ էր ու ընտիր,
հաստա՛տ՝
նա բոլոր հարցերի
պատասխաններն ուներ
(թեև իմ՝ տվյալ պահին
ոչինչ չնշանակող կարծիքով,
ամենևին էլ նույնը չէ
*հարցի պատասխան ունենալը*
*և հարցի պատասխանը գիտենալը,*
դեռ ավելին՝ դրանք կարող են
առհասարակ տարբեր լինել,
նույնիսկ հակասել իրար:
Բայց նորից եմ ուզում կրկնել.
տվյալ պահին իմ կարծիքը
ոչ մի որոշիչ նշանակություն չուներ):
Եվ այսպիսով,
նա իր գեղեցիկ ու ընտիր հայերենով ասաց.
–Իսկ ինչո՞վ եք *դուք* հետաքրքրելու
*արտասահմանյան* ընթերցողին
(այստեղ, չգիտես ինչու, նա խոր շունչ քաշեց,
և ես օգտվելով հարմար առիթից՝
*մե՛ր* ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում
նրա ոչ թե *մենք* -ի, այլ *դուք* -ի վրա):
Ոէրեմն, ակնոցի տակից կարճատես նայելով՝
կկոցած հայացքը հառեց վրաս
ու հենց այսպես էլ ասաց.
–Իսկ ինչո՞վ եք *դուք* հետաքրքրելու նրան,
ում համար, օրինակ, Րաֆֆու «Սամվելը»
պարզապես հեքիաթ է,
ինչպես նաև՝
Մուրացանի «Գևորգ Մարզպետունին»,

գումարած Խորենացու «Հայոց պատմությունը»:
Ի դեպ, ես մինչև հիմա էլ չեմ հասկացել,
թե որտեղից գիտեր
ծերուկն այդ՝ գուցեև հանճարեղ,
թե իրենից հազարամյակներ առաջ
ինչե՛ր են տեղի ունեցել աշխարհում:
Ես, որ թեկնածուական
ատենախոսություն եմ պաշտպանելու,
հարցնում եմ Ձեզ՝ որտեղի՞ց գիտեր:–
Իսկ *դուք* միամտաբար հավատո՛ւմ եք
ու հավատո՛ւմ:
Հեքիա՛թ է, հեքիա՛թ,
այլ՝ ոչի՛նչ, ու չեք նկատում:

Հետաքրքիր է, իսկ ի՞նչ կասեք,
դիցուք՝ Քրիստոնեության՝ մասին,
այդ մեծ, այդ վիթխարի՝
մինչև ամենամանրիկ նրբահյուսվեն մտածված
ու հղկված՝
հազարամյակների համար հյուսված
այդ հանճարեղ … ծուղակի՛ մասին,
որի մեջ առաջինը *դուք* ընկաք միամտաբար՝
դառնալով ծեծի անվնաս ու հարմար
նշանակետ-թիրախ,
և երբեք ոչ միայն չեք փորձել
այնտեղից մի կերպ դուրս գալ
(իսկ հիմա՝ ծեծված ու ջարդված,
փորձելու ուժ էլ երևի չունեք),
այլև (զարմանալիորեն) հպարտանում եք,
որ դա հավիտյանս հավիտենից
միայն և միայն *ձերն* է,
միայն և միայն *ձեր* միակն է,
միայն և միայն *ձեր* առավելությունն է,
որն իրականում ոչ այլ ինչ է,
եթե ոչ ընդամենը խղճուկ … սփոփանք:–
Հեքիա՛թ ու նորից՝ հեքիա՛թ, որ չեք նկատում:

Ի դեպ, թույլ տվեք հետաքրքրվել.
իսկ որտե՞ղ են *հարազատ* Աստվածներն Հայոց՝
լքվա՛ծ ու մոռացվա՛ծ,
թեև՝ արդար ու հզոր…

Օ, ո՛չ, ո՛չ, խնդրում եմ, ինձ ճիշտ հասկացեք.
ես ընդունո՛ւմ եմ Քրիստոնեությունը,
բայց որպես … բարեգործակա՛ն ընկերություն,–
միայն և միայն այդքանը,
և երբեք՝ ո՛չ ավելին…
Զարմանալի՛ ժողովուրդ եք *դուք*՝
հեքիաթներով ապրող, հեքիաթներում ապրող,
ու զարմանալիորեն չեք նկատում
*ամենատեսանելին*…

Նա խոսում էր գեղեցիկ ու ընտիր հայերենով,
և ես չէի կասկածում, որ փայլուն կպաշտպանի
թեկնածուական ատենախոսությունը՝
արժանանալով
ընդդիմախոս պրոֆեսորների հիացական
բացականչություններին…
Ես ամենևին չէի կասկածում,
ես զարմանում էի միայն,
որ իսկապես զարմանալի ժողովուրդ ենք մենք,
քանզի ապրելով
հեքիաթային *մեր* աշխարհում,
հեքիաթային *մեր* աշխարհով՝
մենք չենք նկատում
*մեր հեքիաթը*,
որը միայն և միայն *մերն* է,
միայն և միայն *մեր միակն* է,
միայն և միայն *մեր առավելությունն* է,
և երբե՛ք սփոփանք չի եղել:

## ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

Այսքան անփութորեն ապրելուց հետո
սկսում ես հասկանալ հանկարծ,
որ Տիեզերքում ոչինչ չկա
… տեսանկյունից բացի…

Տեսանկյուն է փողոցը՝
ծերացած մարմինը
այնքան դուրալի մերսված
քո մանկական ոտքերի բոկոտնով,
որի կարոտից ահա
տնքում է հա՛ տնքում
ասֆալտե վերարկուի
մաշված աստառի տակ կծկված
նրա հոգին …

Տեսանկյուն են սահմանագոտու
փշալարերը
և նրանց երկու կողմերում
խնամքով հարթեցված-կոկված ավազը,
որի վրա
սահմանախախտի թողած հետքերը
հանցանքի հիմնական ապացույցն են
լինելու…

Տեսանկյուն է հայացքը,
տեսանկյուն է կարծիքը,
տեսանկյուն են լացը, ծիծաղը,
բանաստեղծությունն իր բոլոր
տարատեսակներով,

արձակը՝ վեպից ձգվելով մինչև նորավեպ,
տեսանկյուն են գոյն ու անգոն…
Այսքանից հետո մնում է ավելացնել,
որ տեսանկյուն է … տեսանկյո՛ւնն անգամ -
ըստ երկրագունդ կոչվող տեսանկյան:

## ՀԱՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես զգում եմ, թե ինչպես է
Հայաստվածության գաղափարը
հետզհետե դառնում
իմ արյունը,
մարմինն ու ոգին:

Եվ զուգահեռաբար տեսնում եմ,
որ արդեն սկսում են ինձ
հավատա՛լ…
Եվ ես
վերջնականապես համոզվում եմ,
որ ինձ արդեն ոչ միայն
սկսում են հավատալ,
այլև … հասկանա՛լ են սկսում ինձ …

Եվ ամենակարևորն այն է,
որ ինձ հասկանում են ու հավատում
բացառապես նրանք,
ովքեր ունեն
*հայի կենսագրություն…*

Կամ էլ՝
տանջալիորեն ուզում են
ունենալ…

## ՄԻԱՅՆ ԳԱՐՆԱ՛ՆԸ, ՄԻԱ՛ՅՆ…

Ես տեսնում էի Սա՛րը,
Բայց իրականում
Նա ինձ համար դեռ չկար…

Եվ դու եկար ու ասացիր,
Որ լինելուս համար
Անպայման պիտի Սարն այն զգա՛մ,
Եթե նույնիսկ չտեսնեմ էլ նրան …
Եվ երբ ես լսեցի
քլթքլթոցը Ներսի,
Եվ երբ ես տեսա
Հրաշքը ժայթքումի,
Որը կարող է լինել
Կլոր տարվա ցանկացած պահին,
Բայց՝ միայն գարնա՛նը, միա՛յն,
Դու եկար ու ասացիր,
Որ ես հավաքեմ
Բոլոր ուրախ ու տխուր մարդկանց,
Բոլոր հուսահատ ու հուսավառ մարդկանց,
Կամ էլ բաժանվեմ
Բոլոր ուրախ ու տխուր
Մարդկանց մեջ,
Բոլոր հուսահատ ու հուսավառ մարդկանց մեջ:

Դու եկար, սակայն չասացիր,
Թե այդ երկուսից վերջապես ո՞րն է
Միակ ճիշտը՝
Հավաքվե՞լը,
Թե՞ բաժանվելը…
Եվ ես հիմա
Հավաքվում եմ
Ու բաժանվում…
Հավաքվում եմ
Ու բաժանվում…

***

Ես գիտեմ, նա՝ կարճ ու կտրուկ,
նաև խորաթափանց հայացքի նման
պիտի անպայման գտնի ինձ
և պայթուցիկ գնդակի հանգույն
մխրճվի սրտիս մեջ:
Նա չի կարող ինձ չգտնել,
դեռ ավելին՝ ե՛ս եմ ուզում,
որ գտնի անպայման:-
Նա՛՝ իմ այնքան փխրունն ու դառը՝
մատնություններից
սևացածն ու միևնույն պահին՝
մաքո՛ւր-մաքո՛ւրը…

***

Ինչ էլ որ լինի՝ միայն դիմանալ
և … չպատասխանել:

Միայն դիմանա՛լ
այս անթաքույց ամբարտավանության ու
հոխորտանքներին ամպագորգոռ
և … չպատասխանե՛լ:
Եվ չպատասխանել
այս սրտախառնիչ մեռելահոտի՛ն,
սպառնալիքների՛ն արնատենչ, արնահոտ
ու միևնույն պահին՝ անարյուն,
և … դիմանա՛լ… դիմանա՛լ …

Միայն դիմանա՛լ,
քանզի ժամանա՛կն է քիչ
ու մենք էլ ուշացած ճամփորդ՝
աղոթքի պես խոսքեր արարելու
և շշնջալու՝ ապրեցնո՛ղ, ապրեցնո՛ղ…

***

Հրճվանքն անսահման է,
իսկ հիասթափությունն՝ առավե՛լ,
երբ հասկանում ես հանկարծ,
որ այն, ինչ արել ես,
այն, ինչին ձգտել ես՝
լույսի նման մաշվելով
և չսպառվելով լույսի նման,–
այսօր միայն քմծիծաղ է առաջացնում
ու նաև ծաղրանք:
Եվ վերջին ուժերդ հավաքելով՝
ուղարկում ես բոլորին հեռո՛ւ քեզանից,
չմոռանալով, սակայն,
ճանապարհներին լույսի նման
նորից ու նորից մաշվել,
նորից ու նորից բոցկլտալ
և չսպառվե՛լ լույսի նման,
որպեսզի չմոլորվե՛ն … հեռանալիս
և … չկորցնեն հանկարծ
հետդարձի արահետը…

***

Ես ո՛ր ուղղությամբ էլ գնամ,
իմ ճանապարհը կլինի
մաքուր ու անաղարտ,
քանզի իմ հավատամքն է
նրան լուսավորում:–

Ես այն վիճակում եմ հիմա,
երբ ինձ լքելու իրավունք չունես.–
քանզի ինձնմաններին
կամ չեն հասցնում այստե՛ղ,
կամ էլ (եթե հասցրել են)՝
արդեն տանում են առա՛ջ:

## ԲԱՆԱՍՏԵՂԾ

– Բառե՛րդ տուր ինձ,–
ասաց թռչունը,–
բառե՛րդ…

Տո՛ւր, որ տանեմ
ու սերմերի պես շա՛ղ տամ
ծովի ալիքներին,
որպեսզի աճեն
… թևե՛րը նրա…

Եվ կտցահարեց  թռչունը
սիրտս:
Կտցահարե՛ց
ու բա՛ռ-բա՛ռ  տարավ
և ազնիվ սերմերի պես
շա՛ղ տվեց
ծովի ալիքներին:

Եվ աճեցին ծովի հսկա թևերը:

Եվ թափահարեց ծովը
թևերն իր հսկա
ու ասաց.
– Տո՛ւր ինձ
սրտիդ վերքը,
տո՛ւր,
որ հոգիս դաղող
արտասուքների աղը
փետուրներով
այնպե՛ս քնքույշ քսեմ
վերքիդ
ու … թեթևանա՛մ…

Ե՛ս թեթևանա՛մ…

***

Հոգեցունց համրության մեջ են
անսահմանորեն ամփոփվելով
կենտրոնացել
աշխարհի
գեղեցկությունը,
աշխարհի
ցավն ու  հրճվանքը,
աշխարհի
չարն ու բարին…

Եվ երբ առաջին ճիչով հնչում է
հոգեցունց համրության
Մեծ Պայթյունը,
բառեր են թափվում
աշխարհասփյուռ,–
տա՛ք, ծո՛ւխ արձակող բառեր՝

շրմփոցով կտրատող
ծա՛նր բեկորներ:

***

Օդը մեղմ էր ու փափուկ,
լայնածավալ էր ու հանդարտածուփ,
ամբողջովին ներծծված
ծաղկունքի բույրով
ըղրե և հազարաճաճանչ:

Ծաղկունքի
նախաստեղծ ու անարատ բույրը
այնպե՛ս էր ներթափանցել
օդի բջջիջների մեջ,
որ դարձել էր նրա հոգին ու էությունը:

Եվ երջանիկ էր օդն իր մաքրությամբ,
իր սրբությամբ ու վեհությամբ:

Եվ փռվե՛լ էր օդը փափուկ-փափուկ՝
ցամաքի ու ջրի վրա՝
իր գեղեցկությամբ զարդարելով
ու իմաստավորելով
աշխարհն համայն:

Եվ ահա մի օր
ծաղկունքի նախաստեղծ բույրով
խելահեղորեն արբեցին
ժրաջան ու անդադրում մեղուները,
թափահարեցին թևիկները
և աշխատեցին օրնիբուն՝
տանելով
օդի բջիջների մեջ ներթափանցված
նախաստեղծ բույրը ծաղկունքի,
և քիչ-քիչ դատարկվեցին
օդի հոգին ու էությունը…

Եվ ցավից ու անզորությունից
այնպե՛ս ցնցվեց օդը,
որ ամեհի գալարվե՛ց
ցամաքի վրա ու ջրերի
և ոռնա՛ց կատաղի
ու անզոր ոռնա՛ց
և ջարդեց իրեն անխնա:

Ահա այսպես
մի օր մեղմ ու փափուկ,
լայնածավալ ու հանդարտածուփ օդը
փոթորի՛կ դարձավ
ու անսանձ տարե՛րք
աշխարհասասան:

***

Քարն ամեն տեղ էլ կար:
Հատկապես շա՛տ էր մե՛ր արտում –
Գոնե ինձ այդպես էր թվում:

Եվ մենք՝
Հայրս, մայրս ու ես,
(Ի՜նչ տարիներ) –
Տասնամյակնե՛ր շարունակ
Ջանասիրաբար ու քրտնաթոր
Մեր հողը ծնկաչոք մաքրեցինք
Մանր ու խոշոր քարերից՝
Ինչպես ավելորդ բառերից
Խո՛սքն են մաքրում…

Եվ զարմանալի՛ բան.
Ինչքան շա՛տ,
Բուռ առ բուռ
Մաքրեցինք հողը,
Այնքան տկարացա՛վ,
Այնքան խեղճացա՛վ
Ու՞ վերջիվերջո դարձավ …
Չբե՛ր:

Եվ ես տառապանքո՛վ
Հասկացա,
Որ քարը
Արեգակի ջերմությունն է կուտակում
Հողում՝
Արմատներին շռայլելու,

Եվ մեկ-մեկ էլ չդիմանալով՝
Պայթո՛ւմ է
Նրա զգայուն սիրտը…

*1991*

***

Դու ինձ գտա՛ր…
Հանց փոթորիկն իր խելահեղ գալարումին
Ծա՛ռ է գտնում ու կողոպտում անգթորեն,
Ու՛ ոլորո՛ւմ ու ոլորո՛ւմ,
Ու՛ կոտրատո՛ւմ ու կոտրատո՛ւմ գժի՛ նման
Ու՛՝ անհագո՛ւրդ, հոգի՛ն հանում
Ճողակոտոր ու հյութաթա՛փ…

Հետո քաշում-պատառոտում,
Տերևների նման քշում
Ու՛ շա՛ղ տալիս արյունլվա ու քարածեծ
Այստեղ-այնտեղ – ո՛ւր պատահի՝
Ցեխերի՛ մեջ, ճահիճների՛,
Հանդերում ու տանիքներին…

…Դու ինձ գտա՛ր…
Ինչպես ասեմ, թե որպես ի՛նչ,–
Ասենք. ինչպես թեթև՛, անմի՛տ,
Ավելո՛րդ բան՝
Այնպես հեշտ ու այնպես հանգիստ
կորցընելո՛ւ…

*1991*

***

Պատերազմն սկսվեց
իմ երազանքները խորտակելու համար:
Պատերազմն ավարտվեց
խորտակված երազանքներս ողբալու համար:
Ես արդեն երեք օր եմ ապրել.
նախապատերազմ,
պատերազմ,
հետպատերազմ:–

Ընդամենը՝ երե՛ք օր…
(Վերջինը դեռ շարունակվում է)
Եվ դա
իմ կյանքի ամենամեծ սխալն է,
որն էլ, ի վերջո,
եղավ իմ կյանքի
մեծագույն ճշմարտությունը:

*1993*

***

Բրունոյի պես
Այրվելու համար
Պարտադիր չէ, որ
Անպայման գնա՛ս –
Հասնե՛ս … միջնադա՛ր…

## ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություն գրելու
Ամենակարևոր պայմանը
Խորին հարգանքն է բառի նկատմամբ
Ու ակնածանքը,
Բանաստեղծությունն ավարտելունը՝
Անսահման ատելությունը…

Եվ եթե հանկարծ խզվի-խաթարվի
Այս նրբագույն ներդաշնակությունը,
Բանաստեղծական Բառը
Կկորցնի իր էությունը,
Որը կախարդանք է կոչվում:

## ՀԱՅՈՑ ԲԱՌԵՐ

*Լուիզա Մովսիսյանին*

Ծնվել եք դուք, որ ձեզանով
Նարեկացին աղոթեր լուռ,
Որ Քուչակն իր սերը տաղեր
Եվ արտասվեր մաքուր-մաքուր:

Ծնվել եք, որ Նալբանդյանը՝
Շռնդալից որպես հրակ,
Խոսքերով իր անզարդ ու պարզ
Հրդեհեր նոր ցասման կրակ:

Ծնվել եք, որ Մեծ Լոռեցին
Երգեր հայի և՛ խինդ, և՛ վերք,
Որ ավաչեր Տերյանը՝ որբ
Հայրենիքում իր արնաներկ:

Ծնվել եք, որ Չարենցն հուժկու
Ամբոխները խելագարված
Դեպի Արև տաներ ու Կյանք՝
Արշալույսի հրով վառված:

Ծնվել եք, որ Բակունցն երգեր
Ընկուզենին եղբայրության,
Վարպետը խոր զրույց տաներ
Սրտերի հետ ու բնության:

Ծնվել եք, որ Հայն ունենա
Եռագույն ու Նոր Հայրենիք,
Եվ լեռներին աստվածահաս՝
Թռիչքների արևերկինք:

*1977*

## ԵՐԳ ԱՐՏՈՒՅՏԻ ՄԱՍԻՆ

Ծագող Արևի շողին ընդառաջ
Թռչում է փոքրիկ Արտույտիկը քաջ:

Փետուրներն անգամ հպարտ թռչունի
Լույսով են լեցուն կապույտ անհունի:

Սավառնում է վեր թռչունը թափով
Եվ երգն իր չափում
Արփու բարձունքով:

Եվ երգ է թափվում սարերի վրա,
Եվ երգ է թափվում քարերի վրա:

Ձյուներից ծնված ջուրն է կարկաչում,
Սարերի վրա խոտը կանաչում:

Եվ ծովի խայտող ալիքների հետ
Մանուկներն են ժիր կչկչում վետ-վետ:

Բարձրանում է վեր թռչունը հպարտ,
ԷությաՆ երգ է մեծ թռիչքը այդ:

Արտույտը արդեն մոտ է Արևին,
Քիչ էլ, մի քիչ էլ՝
Կառնի թևերին:

Եվ թվում է, թե Արևը արդեն
Առանց Արտույտի՛ չի կարող ապրել:

Եվ թվում է, թե Երկինքը կապույտ
Բարձունքն Արտույտի՛ երգով է չափում:

## ԼԵԳԵՆԴ ԱԳՌԱՎԻ ՄԱՍԻՆ

Մի տերևաթափ ծառի հավաքվել՝
Թռչուններն են մեծ ժողով գումարել:

– Ձմե՛ռ է գալիս, ծի՛վ,
Ցեղակիցնե՛ր,
Եկեք որոշենք անելիքը մեր:

– Որոշելու ի՞նչ կա, ծի՛վ, ընկերնե՛ր,
Չվենք-հեռանանք
Տաք-տաք երկրներ:

– Քվեարկում ենք, ծի՛վ,
Ո՞վ է համաձայն:
– Անշուշտ, դեմ չկա…
– Անցա՛վ…
– Միաձա՛յն…

– Ե՛ս դեմ եմ…
– Ագռա՞վ…
– Ի՞նչ ես դուրս տալիս…
– Դրախտը վերջացա՛վ…
– Ձմե՛ռ է գալիս…

– Թող գա,
Մի՞ թե դա առիթ է տալիս…
– Կատակո՞ւմ ես դու,
Ձմե՛ռ է գալիս,–
Սարյակը առաջ բարկացած եկավ
Եվ Ագռավին խիստ ասաց,–
Անիրա՛վ,
Թառե՞նք չորացած ճյուղերի վրա
Եվ սովից սատկե՞նք
Ձյուների վրա:
– Ի՞նչ ես դուրս տալիս,

Տո՛, Ագռա՛վ, անպե՛տք,
Ծննդավայրին մենք մեռա՞ծ ենք պետք,–
Չոր ճյուղի վրա Սոխակը ցատկեց
Եվ հանդիսավոր խիստ շարունակեց,–
Երբ անցնեն ձմռան
Հողմերը սաստիկ,
Կվերադառնանք
Նորից Հայրենիք
Եվ մեր դայլայլով
Աստվածաընծա
Կգովերգենք մեծ գարունը նրա,
Վերածնունդը
Մեր Հայրենիքի
Կփառաբանենք
Զորությամբ երգի:

– Դուք, ցեղակիցնե՛ր,
Չգիտեմ՝ ինչպե՛ս,
Բայց Հայրենիքից
Չե՛մ հեռանա ես:
Բույրաշունչ գարնան
Օրերին ծաղկուն
Մայր հողն է տվել
Մեզ կենդանություն,
Հողմաշունչ ձմռան
Մահաբեր օրին
Ե՛ս կենդանություն
Կտամ մայր հողին:
– Ուշքի եկ, Ագռա՛վ,
Ո՞վ քեզ կգթա,
Փորձանքի ժամին
Ո՞վ քեզ հաց կտա:
– Ո՞վ կտա, ոչ ո՛ք,–
Կռունկն ասաց ծեր,–
Ստիպված պիտի
Դառնա ... լեշակե՛ր:

– Թեկուզ լեշակեր,
Բայց Հայրենիքից
Ոչ մի հզոր ուժ
Չի՛ բաժանի ինձ:
Թեկուզ մահվա՛ն դուռ
Սովը հասցնի ինձ,
Չէ, չեմ հեռանա
Իմ Հայրենիքից:

– Ճիշտ է, ճիշտ, Ագռա՛վ,–
Ճնճղուկը ասաց:
– Ծովը չե՛մ թողնի,–
Ճայը շշնջաց:

– Լեզուդ պապանձվի,
Դավաճա՛ն Ագռավ,–
Սոխակն անիծեց
Ու չվեց հարավ:

Ծիծեռնակն օդը
Պոչով մկրատեց,
Մաքրեց կոկորդն ու ժողովն ամփոփեց.
– Մեծամասնությամբ ձայների անցավ
Մեր առաջարկը –
Չվո՛ւմ ենք հարավ…

Ու ոմանք խմբով,
Ու ոմանք մենակ
Հարավ չվեցին՝
Երկիրները տաք:

…Սակայն անեծքն է
Ի կատար ածվում,
Եվ լեշակեր է
Ագռավը դառնում,
Ձայնն է խըռպոտվում –

Կըռա, կըըռ, կըռա՛ա՛ –
Եվ խուլ տարածվում
Ձյուների վրա:

Սակայն փորձանքի
ժամին Ագռավը
Երբեք չի՛ լքում ծննդավայրը:

## ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՅԳՈՒՄ

*Թոռնուհուս՝ Սոֆիային*

Հրա՛շք մանկություն,
Որտե՞ղ ես, արդյոք,
Ո՞ր կանաչափող ծառի հետևից
Ծիկրակում ես ժիր գոհությամբ անհոգ
Եվ – չարաճճի՛ – լեզո՛ւ ցույց տալիս:

Հրա՛շք մանկություն,
Որտե՞ղ ես, արդյոք,
Ո՞ր թթենու խիտ տերևների մեջ
Թաքնվել ես ու մատնաչափ թթով
Սևացրել նորից ձեռքեր ու երես:

Հրա՛շք մանկություն,
Որտե՞ղ ես, ասա՛,
Ինչո՞ւ ես անվերջ թաքնվում ինձնից,
Չէ՞ որ – տեսնո՛ւմ եմ – գետակի վրա
Նավակ ես թղթե բաց թողել նորից:

Հրա՛շք մանկություն,
Որտե՞ղ ես, արի՛…
Եկե՛լ ես արդեն ու խի՞նդ ես բերել…
…Թեկուզ մեծացել եմ առանց շապիկ,
Շապկո՛վ եմ, սակայն, ես աշխարհ եկել:

## ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

*Թոռանս՝ Ադրիանին*

Ես որտե՞ղ գտնեմ
Հոգի ջերմացնող մի պաղ արշալույս,
Մի հախճապակյա ղողանջ երկնքում,
Որը հինում է կարոտի թախիծ:

Ես որտե՞ղ գտնեմ
Բողբոջած, լցված լռության մի փունջ –
Շռայլ՝ արփո՛ւ հետ,
Մաքուր՝ ձյուների՛,
Դյութիչ՝ երկնքի կապույտ խորությա՛մբ:

Ես որտե՞ղ գտնեմ՝
Տների վրա ծխերի ճերմակ սյուներն՝
ապստամբա՛ծ…

## ԾՆՆԴԱՏՈՒՆ

*Աղջկաս՝ Սուսանին*

Եվ արշալույսը դեռ չի երկինքվել,
Սակայն, աստվա՛ծ իմ,
Ինչպե՛ս են զարկում
Զանգերը նրա –
Հուսալցվում է ճիչը մայրացման
Եվ նորածընի լացը արևոտ:
Եվ ամեն շշուկ,
Եվ ամեն հառաչ
Ապրում է հույսով՝
Շաղախվելով Մեծ Խմբերգում Ցավի:

…Այս էլ որերորդ անգամ աշխարհում
Նորից Առաջին օրն է Արարման:

## ԶՐՈՒՅՑ ՏԱՏԻՍ ՀԵՏ

*Սաթենիկ և Էլմաս*
*տատիկներիս հիշատակին*

Երբ մեր դիմացի սարի կատարին
Ամպն էր որոտում
Եվ ուժգին ցնցում ծառեր ու տներ,
Դուռ ու պատուհան,
Ես՝ մոռանալով
Ամեն մի տեսակ
Չարաճճի խաղ,
Վազում էի իմ
Մեծ մայրիկի մոտ,
Որ երեք անգամ
Քաշեր ինձ բերան:

– Մոտ արի, բալա:
Արի՛, քո հոգուց
Վախն հանեմ-այրեմ երկնքի խորքում,
Որ կյանքի բոլոր ցավերի առաջ
Եվ փորձանքների առջև անհամար
Լինես միշտ անվա՛խ,
Աննկո՛ւն լինես, համարձա՛կ ու քա՛ջ,–
Եվ ցուցամատով, մեղմ, թեթևակի,
Նա՝ երեք անգամ
Ծնոտս վերև քաշելուց հետո
Ժպտում էր,– բալի՛կ, վախը քո հոգուց,
Զգո՞ւմ ես, հանեցի-նետեցի երկինք,–
Եվ երբ մի քիչ անց կայծակն էր փայլում,
Ասում էր,– նայի՛ր, վախն է քո այրվում…

…Վաղուց, շա՛տ վաղուց մեծ մայրս չկա:

Սակայն այսօր էլ,
Երբ որ իմ առջև

Կյանքի խոչընդոտ, փորձանք է հառնում
Եվ այնքան-այնքան դժվար է լինում,
Հուսադրում եմ ինձ.
– Դե, դե, տատի՛ թոռ,
Գլուխդ պահիր
Բարձր ու հպարտ
Եվ առաջ շարժվիր՝
Դեպի նպատակ,
Համարձա՛կ, զվա՛րթ:

Եվ ավելացնում եմ լուրջ կատակով.
– Չէ՞ որ տատիկը վախը քո հոգուց
Հանել-այրե՛լ է:

Եվ – հավատացե՛ք –
Այդպես ավելի՛ հեշտ է
Ապրե՛լը:

## ՁԱՐԹՈՆՔ

*Աղջկաս՝ Սուսանին*

Եվ որպես կյանքի
Գարնանաբեր ճիչ,
Սերմն է արթնանում
Հողի մեջ քիչ-քիչ,

Որպեսզի փակի
Բախտահյուս շղթան
Մեծ ակնթարթի
Ու հավերժության:

Եվ քո՛ր է գալիս
Հողի շերտը պինդ,
Ինչպես նոր ատամ
Հանող մանկան լինդ:

## ԳԼՈԲՈՒՍ

Սուսանը պապին
Գլոբուս է բերում՝
Քնքշանքով սեղմած
Թպրտուն կրծքին,
Եվ … նրա սրտի՛
Տրոփյունն է սուրբ
Կյանքի շունչ տալիս
Մեր … երկրագնդին:

## ՀՐՈՒՅՑ

– Ուշադի՛ր նայիր
Նկարին, Սուսա՛ն,
Տեսնո՞ւմ ես՝
Այրվող գրքեր, նստարան…
– Ավերակնե՛ր են,–
Սուսիկը ասաց:
– Շե՛նք է դպրոցի՝
Ռումբից փուլ եկած:
Տեսնո՞ւմ ես
Պատի տակ աշակերտին…
– Այո՛, գնդա՛կ է
Նա սեղմել կրծքին…
Պապը հառաչեց.
– Գլոբուս է, Սուսա՛ն,
Ծովեր ու լեռներ,
Քաղաքնե՛ր վրան,
Մանկապարտեզ կա
Ուր դպրոց սիրուն,
Ուր մանուկներն են
Կարդում ու գրում…
– Իսկ ինչո՞ւ է, պապ,
Գլոբուսը գրկել,
Նա երկրագո՞ւնդը
Ուզում է փրկել…

*1985*

## «ԱՐԻ ՏՈՒՆ»

### *Ա. ՀՐԱՆՈՒՇ ՏԱՏԻԿԸ*

*Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին՝ «Արի տուն» ծրագրի առիթով*

– Արի՛ տուն,–
Կանչում են լեռներն Հայոց,
Ձանգերն են հնչում,–
Տիգրա՛ն, տուն արի՛:
Եվ այդ Կանչի մեջ
Կարոտ կա այրող,
Այդ Կանչի մեջ  կա
Մորմոք մի բարի:–
Այդ՝ կանչում է քեզ Հրանուշ տատին –
Հայորդիների՛
Տատիկն իմաստուն:
…Այդպես կանչում էր նենեն Սաթենիկ,
Երբ խաղով տարված՝
Չէի գալիս տուն…

Ինչ կա առավել առինքընողի
Հայրենականչից վսեմ՝ «Արի՛ տուն»:–
Դա … վերադա՛րձն է
Այն մի բուռ հողի,
Որ մեր պապերն են
Տարել ծոցերում…
*Հուր* կա կանչի մեջ
Ու հրաշք բարի,
Այնքան *անո՛ւշ* է
Կանչն այդ ու մաքուր:
Հայ մանուկներին
Համայն աշխարհի
*Հրանուշ* տատն է
Շուրջն իր հավաքում:

### *Բ. ՏԻԳՐԱՆԻ ԽՈՍՏՈՒՄԸ*

Տատին Տիգրանն է  ասում.
– Ես քեզ շատ եմ սիրում, շատ,
Ոչ ոք չունի աշխարհում
Քեզ պես բարի, անուշ տատ:

Տատն է ժպտում Գեղանուշ,
Իր անվան պես հեզ, անուշ.
– Ասա՛ տեսնեմ, իմ Տիգրան,
Ի՞նչ ես ուզում այս անգամ:

– Խոստանում եմ, իմ տատիկ,
Քեզ կլսեմ օրնիբուն,
Միայն թե դու այս տարի
Ինձ ուղարկիր «Արի՛ տուն»:

### *Գ. ՀԱՅՐԵՆԻ ԱՆՏԱՌ*

Մերթ ճոճվում ես դու
Ամռան մեղմ քամուց,
Մերթ՝ շրշում երգեր
Հայրենաբարբառ,
Հովանի անում
Աչքերիդ տամուկ,
Ու նայում հեռուն,
Հայրենի՛ անտառ:
Ու պատմում ես դու
Իղձերդ նրբին
Կարոտդ հինող
Առվակին կայտառ,
Ինչ-որ երգ հուշում
Հոգնած անցորդին,
«Արի՛ տուն» կանչում,
Հայրենի՛ անտառ:

## ԼՈՒՅՍ

*Հայկոյին*

Առավոտյան, երբ մութ է դեռ,
Գեղանուշ տատն է ելնում վեր,
Եվ աչքերից նրա քնքույշ
Դուրս է գալիս մի մանուկ՝ Լույս:

Լույսն էլ ահա տոտիկ-տոտիկ,
Փափուկ-փափուկ ու խորոտիկ
Բարձրանում է մահճակալիս
Ու վերմակս ետ է տալիս.
«Վեր կաց, Հայկո՛, հերիք քնես,
Պիտի գնաս մանկապարտեզ»:

Հետո Լույսը, կոհա՛կ-կոհա՛կ,
Պատշգամբից իջնում է բակ,
Հորթուկի հետ տրտինգ տալիս
Ու բակից էլ դուրս է գալիս:

Թիթեռնիկի պես ժրաջան
Ամբողջ օրը չունի դադար,
Մեկ վերև է թռչում, մեկ՝ վար,
Որպես հրաշք ու անրջանք:

…Երբ հոգնում է երեկոյան,
Արահետն է բռնում մեր տան,
Հավաքվում է նորից պերճ-պերճ
Իմ տատիկի աչքերի մեջ:

## ՏՈՒՆ

*Թոռանս՝ Աղրիանին*

Ասում էր հաճախ
Պապս իմաստուն.
– Ուր էլ որ գնաս՝
Կառուցիր նոր տուն:

Տուն կառուցիր այն
Հավատով, բալա՛ս,
Որ ուր էլ լինես՝
Անկյուն ունենաս:

Զարմանում էի,
Անչափ զարմանում –
Ամեն տեղ ինչպե՞ս
Կառուցեմ նոր տուն,

Որտեղի՞ց այդքան
Շինանյութ ու փող.
– Ի՞նչ ես ասում, պա՛պ,
Տուն այդպես շուտո՞վ…

…Հասկանում եմ արդ
Պապիս խոսքը պերճ.
Տուն պիտի շինել
Մարդկանց սրտի մեջ:

## ԱԾՈՒՆ

Գեղանուշ տատն ամեն օր
Աշնան պես է տուն մտնում,
Տանձ է բերում ու խնձոր,
Չիր ու չամիչ անհատնում:

Եվ աշունն էլ տատի պես
Քաղցր է, շռայլ ու բարի,
Ու՞ր այնպես է թվում մեզ,
Թե նա խինդն է աշխարհի:

Սխալված չենք լինի մենք,
Թե սխալվենք շատ անուշ –
Տատին Աշուն մենք կոչենք,
Իսկ աշնանը՝ Գեղանուշ:

## ՏԱՏԻՆ Ի՞ՆՉ ԱՆԻ

Գեղանուշ տատին
Շատ-շատ է նեղվում,
Գեղանուշ տատին
Իրեն ո՞ւր կորցնի –
Աջից ու ձախից
«Ռումբեր» են տեղում
Նրա խեղճ գլխին –
Թեժ հարցուփորձի:–

Տիկոն է նորից
«Հարձակման» անցել,
Տիկոն հարցերի
Պարկն է լայն բացել.
էլ «ինչո՞ւ», «որտե՞ղ»,
էլ «ե՞րբ» և «քանի՞»…
Հեշտ չէ՞՝ գլո՛ւխն իր
Առնի ու տանի…
Տատին համարյա
Լալիս է.
– Ափսո՛ս,
Որ ես չեմ ծնվել
Ակադեմիկոս…
Եթե լինեի ես
Համբարձումյա՛ն…

Թեև դա՛ էլ չէր փրկելու նրան…
Եվ նորից՝ հարցեր,
Նորից՝ «ի՞նչ», «ինչքա՞ն»…
Նորից տատին է
«Սրտնեղած տխրում».
– Աշխարհում չկա՛
Այնքան պատասխան,
Ինչքան հարցեր կան
Տիկոյի գլխում…

## ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ

– Լույսն ինչո՞ւ է աստղից
Կաթում
Եվ հովիտ ու դաշտ
Արծաթում:
– Որ մութի նուրբ քողը
Մաշվի,
Վախվխելով
Ձորակ քաշվի:
– Ապրե՛ս, Սեյրան,
Ճիշտ ես ասում,
Էլ ինչո՞ւ է
Լույսը բացվում:
– Կարելի՞ է՝ ասե՛մ,– Արշոն
Արգելակում է նոր ավտոն,–
Որ գլորվի սարից առուն,
Մենք էլ
Լողա՛նք նրա գրկում:
– Հանկարծ ծիտը՝
Քնով անցած,
Ծառի ճյուղից – թը՛մփ –
Չընկնի ցած,–
Անհանգիստ է
Սուսոն սաստիկ,
Ինքն էլ հրաշք
Մի թիթեռնիկ:
– Չէ՛, տատի հետ
Գնանք խանութ,
Առնենք «Սնիքերս»,
«Մարս» ու «Յոգուրթ»,–
Դա Սամվելն է մեր անրջում,
Նա վեճի մեջ
Չունի զիջում,–
Ես ուզում եմ
Ե՛վ «Սթիմորոլ»,

Ե՛վ «Բաունթի»,
Քաղցր «Դիրոլ»…

…Ամենաճիշտ
Պատասխանը
Սակայն գիտի
Լոկ Տիգրանը.
– Լույսն է մտնում
Տուն ու փողոց,
Որ Սուսանն ու
Հայկն արթնանան,
Ձեռք ու երես
Շուտ լվանան,
Գնան դպրո՛ց,
Գնան դպրո՛ց:

## ԱՔԼՈՐԱԿԱՆՉ

– Ծուղուրուղո՛ւ…
Ծուղուրուղո՛ւ…
Աքլորն է թափ թևին տալիս:–
Դա ասել է,
Թե առավոտն
Ի՛ր կանչով է
Աշխարհ գալիս:
Հայկն է մտնում վերմակի տակ,
Թե՝ գլո՛ւխդ քարեմ, տուտո՛ւց,
Մինչև հիմա չե՞ս հասկացել,
Որ տանն ունենք
Մենք … ժամացո՛ւյց:
– Ծուղուրուղո՛ւ…
Ծուղուրուղո՛ւ…

Չի՞ հասկանում,
Թե՞ զարմանում է

Տուտուցը.
– Չմոռանա՛ք,
Թե չկանչեմ,
Ո՞նց ... կուղղեք
Ձեր ժամացո՛ւյցը:

## ՉՈՐՍ ԵՐԳ ՏԻԳՐԱՆԻԿԻՍ

### *Ա.*

Դու եկել ես ահա դպրոց,
Որ սովորես լեզուն հայոց
Ու գեղեցիկ կարդաս, գրես,
Մեր երգերը քաղցրիկ երգես,
Որ մեր Հայոց ծառի վրա
Մի թռչնա՛կ էլ ավելանա:

### *Բ.*

Մենք Սևանա ունենք լիճ,
Ունենք սիրուն Մասիս սար,
Որ քո սիրտը լինի ջինջ,
Սևանի պես լուսավառ,
Լինի սեգ ու լինի վեհ
Մեր սուրբ Մասիս սարի պես:

## *Գ. ՄԱՐԽԱՈՒԼԻ ԱՐԵՎԻԿՆԵՐԻՆ*

*«Արևիկ» համույթի գեղարվեստական*
*ղեկավար Սուսաննա Սուրմենելյանին*

Ահա հրաշք տառերն հայոց,
Որ սրտիդ մեջ պիտի պահես
Որպես անմար կրակ ու բոց,
Թալիսման ու երդում ահեղ,

Խոլ փոթորիկ ու մեղմ քամի,
Խենթ ավիշ ու հոգու անդորր…

Եվ հայորդի ամեն պիտի
Չմոռանա իր կյանքում, որ
Ծիածա՛ն է հոգեհմա
Այբուբենը Մեսրոպածին
Եվ երջանիկ կլինի նա,
Ով որ նրա տակով անցնի:

### *Դ.*

Դու պիտի հիշես
Քո ամբողջ կյանքում
Իմ այս խոսքը վես
Պատգամի հանգույն.

Ով չգիտի իր
Լեզուն աննման,
Ճամփա չի գտնի
Աշխարհում համայն:

### ՀՈՒՆՁ

Պապիկիս հետ հունձ եմ անում՝
Մեծավարի մի թաշկինակ
Հանգուցելով անկյուն-անկյուն՝
Քաշել գլխիս որպես գլխարկ:

Եվ այնպես է մի պահ թվում,
Թե հրդե՛հ է արտատարած,
Եվ կրա՛կն ենք մենք գերանդում,
Որ երկինքը չայրվի՛ հանկարծ:

## ԷՔՍՊՐՈՄՏ

*Սիրով նվիրում եմ Մարգարիտա Ավետիսյանի թոռնուհուն՝ Սվետլանային*

Դու ծնվեցիր արեգակի շողերի պես պայծառ
Ու խայտացիր մեր սրտերում
այնպես մաքո՛ւր-մաքո՛ւր,
Դու՝ սրտաչա՛փ, սակայն եղար
երջանկության մի ծառ,
Ու կարոտի կախարդական հրաշք ալիք՝
մի բո՛ւռ:

Ուզում ենք, որ սիրո՛ւն լինես –
այնպես, ինչպես որ կա՛ս,
Ու մանկական քո ծիծաղով լցնես սրտերը մեր:
Արբե՛լ ենք մենք քո խելքահան
անող բույրով – երա՛զ,
Եվ մեր կյանքն է շարունակվում
որպես բերկրանք ու սեր:

***

Արև՛, կայծա՛կ ու որո՛տ…
Ծիածա՛ն ու … կույր անձրև՛…
Բնությունն այս առավոտ
Թա՛րս ոտքից է բարձրացել…

*2001*

## ԴՌՆԵՐՆ ԻՄ ԲԱ՛Ց ԵՆ

Կարոտի առջև իմ սիրտն եմ բացել,
Սպասում եմ մեծ Հրճվանքի գալուն,
Եվ պատրաստ եմ ես անգամ տապալվե՛լ,
Եթե մեկին մահն իմ բերի գարուն:

Երջանկությո՛ւնն է բախում դուռն ահա,
Բացում եմ դուռս՝ ժպիտով անեղծ,
Նա եկել է ինձ հանց Բախտի մուրհակ,
Եկել է որպես մեծ Սիրո կանթեղ:

Բայց նրանց երկար չեմ պահի ինձ մոտ,
Մի քի՛չ կպահեմ, ձեռքսեղմումի՛ չափ:
Մի գավաթ գինի կտամ արփիոտ՝
Մաղթելով բարի ու անվերջ ճամփա:

Գնացե՛ք, կասեմ, ձեր ուղին՝ դժվա՛ր,
Քա՛ր ու խո՛ւթ ունի, անդո՛ւնդ ու կիրճե՛ր,
Ոէզում եմ՝ հազար դուռ բախեք գժվա՛ծ,
Ոէ կամուրջ դառնաք սրտերի միջև:

...Բայց ամենի՛ց շատ ու շատ անհամբե՛ր,
Աչքն իմ ջուր արած՝ սպասում եմ ձե՛զ՝
Իմ ուղեկիցներ, ծանոթներ անվրեպ –

Բանսարկությունննե՛ր,
Սադրանքնե՛ր,
Ցավե՛ր –
Որ ամուր-ամուր սեղմեմ իմ կըրծքին,
Որ բաց չթողնեմ իմ կըրծքից հրկեզ,
Որ մնաք այստե՛ղ՝
Ինձ հե՛տ, ի՛մ կողքին:

Ձեզ համար սեղան կբացեմ ընտիր,
Կբորբեմ օջախն հոգուս լույսով վառ,
Սիրտն իմ հոգեցունց բառեր կգտնի,
Որ չդավես ինձ, Դա՛վ, պատահաբար:

Այնքան կխմենք, որ իրար գրկած
Եվ ուշակորույս գետնին տապալվենք,
Միայն ... չգնա՛ք իմ տնից հանկարծ,
Միայն ա՛յլ սրտեր հանկարծ չայցելեք:

…Հյուրերիս առջև դռներն իմ բա՛ց են,
Նրանց գալուստն է Հավատի հեղեղ,
Բարձրացրել եմ հար այդ սուրբ կենացը,
Որ Ներշնչանքիս հրա՛շքն է եղել:

Դեռ սիրտն իմ ունի  Հույզեր ու Մուրազ,
Դեռ Ջերմություն կա կանչում ափերիս,
Ես չեմ սպասում լոկ Քեզ, Դո՛ւ չգաս,
Միայն Դու չգա՛ս, Անխուսափելի՛ս:

## ՍԽԱԼ ՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐՑԵՐ

Եվ եթե բարին պիտի անկասկած
Բռո՛ւնցք ունենա, բայց … ինչո՞ւ անվարժ:

Մեղքաքավություն կոչվածն էլ կյանքում
Պարզ չէ՝ չարի՞ն է ծառայում, բարո՞ւն:–
Ու մե՞ղքն է, արդյոք, նրան արարել,
Թե՞ նա է աշխարհ մեղքերը բերել:

Ինչո՞ւ է առողջ սիրտը միշտ … տկա՛ր,–
Տառապում է ու տնքում միալար
Ու իր մեջ կրում ցավերը բոլոր…
Նա, հավանաբար, կպայթի՛ մի օր:
Եվ ինչո՞ւ պիտի խի՛ղճը մանավանդ
Գերիզոր լինի, բայց … անզորությամբ:
Ինչո՞ւ հավատը լինի … անհավա՛տ,
Հույսն ամենազոր լինի … հուսահա՛տ:
Ինչո՞ւ հենց նա՛ է քեզ դավաճանում,
Ով կյանքով է քեզ պարտական կյանքում:
Եթե ամեն դար պիտի անպայման
Ա՛ղն իր ունենա, բայց ինչո՞ւ … արյա՛ն:

Եվ … ինչքա՞ն ճոճվեմ անվերջից անծայր՝
Հարցական-կարթից կախված … գլխիվա՛յր…

## ՏԱՏԻԿԻՍ ՍՈՒՐՃԻ ԲԱԺԱԿԸ
**(համարյա պատմվածք)**

Սուրճի բաժակն այն,
ինչքան հիշում եմ, մեր տանը միշտ էլ կար –
երևի իմ ծնունդից առաջ էլ էր եղել –
մի ժամանակ՝ մաքո՛ւր ու պլպլա՛ն,
իսկ հիմա արդեն անշուք ու քերծված,
մի քանի տեղից ճաքճքած ու եզրածեծ
բայց ... յուրայի՛ն ու նույնիսկ այնքա՛ն,
որ ուր էլ դրվեր, միշտ էլ նրա տեղը կլիներ...
Ինչպես նաև մեր պղնձե սրճաղացը,
որը տատիկիս խնդրանքով
մեր հեռավոր բարեկամներն էին բերել Երևանից:
Տեղին համարելով ասենք,
որ նա մինչև օրս բարեխղճորեն ծառայում է մեզ,
և նրա արտադրանքը համընդհանուր հիացմունք
ու զարմանք է առաջացնում:
Սրճաղացը մեր ընտանեկան մասունքն է այլևս,
և ես այն ժառանգաբար կփոխանցեմ
Սոֆիա թոռնուհուս:
Սուրճի բաժակն իր ուրո՛ւյն տեղն ուներ.
հին ու ձեռակերտ,
գեղեցիկ ու սիմետրիկ նախշազարդերով,
պատի ամբողջ երկայնքով ձգվող՝
սուրճի բաժակի պես մաշված պահարանի
դարակներից մեկում,
ուր ոչ մի այլ սպասք չէր դրվում:
Պահարանն էլ (այն էլ ասեմ)
շատ ու շատ տարիներ առաջ պապս էր շինել
մաշմուրքի պնդագույն տախտակներից՝
խնամքով տաշելով ու հղկելով դրանք,
ու կրկնելով հիշեցնեմ,
որ շա՛տ էր հին, անգամ հնագույն,
և բոլոր հարևանները՝
խոսքերը մեկ արած՝ պնդում էին,

որ եթե այն նորոգվի ու լաքապատվի
(իսկ լաքը հեռավոր Արմավիր քաղաքից
կահույքի գործարանում աշխատող
իմ մորաքույր Նվարդն անվճար կբերեր),
կարելի է անասելի թանկ գնով
(իհարկե, մեր չափանիշներով)
ծախել և ստացված գումարով
ոչ վատ վիճակի ստալինյան «Մոսկվիչ» գնել,–
նման ձեռակերտ գործերի սիրահարներ,
նրանց ասելով,
միշտ էլ եղել են ու կան և միշտ էլ կլինեն.
– Չէ՞ որ սա *ռարիտե՛տ* է,–
որպես ծանրակշիռ փաստարկ՝
ասում էին հարևանները…
Բայց տատիկս այդ մասին,
հասկանալի է ու ինձ համար՝ ցավո՛ք սրտի՛,
լսե՛լ անգամ չէր ուզում…
– *Ռարիտետ-մարիտետ* չգիտեմ
ու գիտենալ էլ չեմ ուզում,– համառում էր նա:–
Ա՛յ, երբ ես այլևս չլինե՛մ, դե ա՛յն ժամանակ…,–
սկսում էր տատիկս ու բազմանշանակ լռում,
թեև, հասկանալի է, որ այդ բազմանշանակը
միանշանա՛կ «ոչ» էր նշանակում:
Ես չգիտեի, թե ինչ է նշանակում
*«ռարիտետ»* անսովոր բառը,
բայց այն համարյա թե հարազատ էր դարձել
և այնպե՛ս դուրալի շոյում էր իմ լսողությունը:

Սուրճի բաժակը տատիսն էր:–
Միայն նա՝ ի՛նքն էր խմում այդ բաժակից
և ոչ թե նրա համար,
որ ոչ ոքի չէր թույլատրում օգտագործել –
պարզապես (տնեցիներիս կարծիքով)
բաժակն այնքան էր
«հալումաշ եղել,
որ ուրիշներին ցույց տալն անգամ ամոթ էր

և նրա տեղը աղբանոցն էր»,
որի «պարտականությունները»,
ինչպես արդեն հասկացաք,
կատարում էր պահարանի դարակը:

Բաժակն օրական օգտագործվում էր
միայն մեկ անգամ՝ առավոտյան,
երբ հարևանուհիները հավաքվում էին
մեր տանը՝ «ասելու-խոսելու – ղայֆե խմելու»,
նորություններ հաղորդելու,
այսինքն՝ «քիչ-միչ բամբասելու»:

Սուրճը խմելուց հետո,
հատուկ արարողությամբ
անպայման ձախ ձեռքով
բաժակները երեք անգամ շրջանաձև
թափահարելուց հետո
շուռ էին տալիս «իրենից դուրս»
և կիսաթեք թողնում չորանալու ափսեների վրա:
Եվ մի քիչ անց,
երբ բաժակներն արդեն «հասած էին»,
այսինքն՝ սուրճի նստվածքը
չորացել-համրացել էր բաժակի հատակին
ու պատերին,
մորաքույր Մարիկան անցնում էր սրճախմության
ամենահետաքրքիր ու բովանդակալից՝
գուշակությունների՛ մասին,
որը կատարվում էր բաժակի հատակին
համրացած թունդ նստվածքի վրա:

Օ՛, այդ գուշակությո՛ւնը սուրճի՝
գիշերվա պես սև մնացորդի վրա…
Հատուկ արվեստ է դա՝
կատարելության աստիճանի հղկված
արարողակարգ.
այստեղ ամեն մանրուք

իր կարևորագույն խորհուրդն ունի՝
սուրճի երեսին լողացող պղպջակներից
մինչև բաժակի պատերին դաջված
նախշազարդերը
(նշանակություն չունի՝
ներսի՞ց  են դրանք, թե՞ դրսից),
և ամեն ինչը՝ պատկերների
դասավորությունն ու հերթականությունը,
գունային հագեցվածությունը,
իր խոր իմաստն ունի…

Տատիկս անսահմանորեն հավատում էր
այդ գուշակություններին:
Երևի բոլոր հարևանուհիներն էլ էին հավատում,
բայց տատիկս՝
առանձնապե՛ս :–
Նա լարված լսում էր մորաքույր Մարիկային՝
մի քիչ առաջ թեքված,
և անհանգիստ տրորում էր
աշխատանքից ճաքճքած ու կոշտացած,
բայց այնքա՜ն քնքույշ մատները՝
կոտրատելով դրանք
(կարծում եմ ցավեցնելու չափ,
բայց նա չէր զգում ցավը, որովհետև
– ես հիմա հաստա՛տ գիտեմ –
նրա սիրտն ավելի ուժեղ էր ցավում)…

Տատիկս սպասում էր…

Ես շատ լավ գիտեմ, թե նա
երկա՛ր տարիներ ինչ էր սպասում,
իսկ ավելի ճիշտ՝ ո՛ւմ:
Սպասում էր մի խորին հավատով ու հույսով,
ամեն տարի, ամեն ամիս, ամեն օր ու ակնթարթ…
Նա սպասում էր Մեծ Հայրենականում անհայտ
կորած իր զավակներին՝

իմ հորեղբայրներ Գրիգորին ու Վահանին,
որոնց մեծադիր լուսանկարները
դրված էին մեր պահարանին
(ի դեպ, տատիկս մինչև իր վերջին օրը
ինձ Վահանիկ էր անվանում՝
չհամակերպվելով Արտավազդի հետ՝
երևի իմ մեջ իր որդուն տեսնելով.
իմ հայրենի գյուղում
ես մինչև հիմա էլ Վահանիկ եմ,
և շատերն իմ իսկական անունը չգիտեն:
Շատ տարիներ անց,
տատիկիս մահվանից հետո արդեն,
մեր համագյուղացիներից շատերը
զարմացած հարցնում էին, թե ո՞վ է այդ Սարեցյանը՝
խմբագիր – մերոնցից չէ՞ արդյոք:
Եվ երբ իմ հորեղբորորդի Ալբերտը
հիշեց անվանս հետ կապված
զվարճալի պատմությունը,
ուրախացած բացականչեցին՝ իհարկե մե՛րն է,
մեր Հայկի Վահանի՛կն է, բա էլ ո՞ւմը պիտի լինի):
Ամեն Աստծո առավոտ
տատիկս կոշտացած ձեռքերով
սրբում էր լուսանկարները
և թարմ ծաղիկներ դնում առջևում:
Այն էլ ասեմ, որ նա նստում էր պահարանի դիմաց,
իր թախտին, դա նրա տեղն էր,–
այնտեղից լավ էին երևում
հորեղբայրներիս լուսանկարները:

Տատիկս ավելի՛ էր առաջ թեքվում,
ավելի՛ ուժգին էր տրորում մատներն ու կոտրատում,
նրա դեմքն ավելի՛ էր լարվում,
աչքերն ավելի՛ էին պայծառանում հույսի շողերով,
նա ավելի՛ անհանգիստ ու անհամբեր էր դառնում,
և երևի սիրտն է՛լ ավելի արագ էր խփում,
երբ մորաքույր Մարիկան

սուրճի բաժակի պատերին
հեռուներից եկող ոլորապտույտ
ճանապարհ էր տեսնում,
ինչն էլ նշանակում էր,
որ մոտակա երեք օրվա ընթացքում
մեր տուն հյուր է անպայման գալու.
Իսկ գո՞ւցե… Իսկ հանկա՞րծ…

Օ՛ այդ սուրճի բաժակը՝ հնամա՛շ, ճաքճքա՛ծ,
կնճռապատ ու խորշոմած,
տատիկիս դեմքի ու ձեռքերի նման…
Ինչքա՜ն հավատ էր ամփոփվել նրա մեջ,
ինչքա՜ն երազանք, ինչքա՜ն սպասում,
ինչքա՜ն տառապանք ու նաև …
հույսերի ու երազանքների խորտակում…

… Մի օր երեկոյան,
երբ մենք մեծ քրոջս հետ Լենին պապիկի
«Սովորե՛լ, սովորե՛լ, սովորե՛լ»
պատգամն էինք պարտաճանաչորեն կատարում,
իսկ տատիկս իր սովորական տեղում նստած՝
քույրիկիս համար մաշիկներ էր գործում,
հանկարծ թեթև ճայթյուն լսվեց պահարանից։–
Սուրճի բաժակն էր անսպասելիորեն պայթել՝
փշո՛ւր-փշո՛ւր թափվելով դարակում՝
տատիկիս հույսերի նման։

Ես կարծում էի տատիկս անպայման կասի,
որ խափանվեց չարը, որ մենք Տիրոջ օգնությամբ
ազատվեցինք հերթական փորձանքից,
ինչպես ասում էր ամեն անգամ,
երբ անզգուշաբար բաժակ կամ ափսե էր ջարդվում։
Բայց այս անգամ նա ոչինչ չասաց,
մի քանի րոպե համրացած ու վշտացած նայեց
փշրանքներին…
Հետո լուրթ աչքերի անտակ թախիծը հառեց մեզ

ու հազիվ լսելի շշնջաց.
– Չդիմացա՛վ…

Եվ մենք հանկարծ զարմացանք,
թե ինչո՞ւ մինչև հիմա չէինք հասկացել,
որ նրա սուրճի բաժակն այլևս
բաժա՛կ չէր պարզապես -
նա վաղո՛ւց արդեն սի՛րտ էր դարձել…

*…Որպես հետգրություն ուզում եմ ավելացնել, որ տատիկս բազմաթիվ իմաստուն ժողովրդական գրույցներ գիտեր, և նշանավոր աբխազ արձակագիր Միխայիլ Լակերբայը հաճախ էր հյուրընկալվում մեր պապական տանը՝ Գուլրիփշի շրջանի Սաճարա գյուղում: Նա գրի էր առնում տատիկիս գրույցները, որոնք գեղեցիկ նովելներ են դարձել…*

***

Ինձ արդեն քիչ մնալուց առաջ
ես ներում եմ իմ հոգոցները,
որոնք խոր պատռվածքների նման
իրար են բերել ափերն իմ մաշված:

Արդեն ոչինչ չկորցնելու պես
ու իրար խառնելու հանգույն
ներում եմ իմ ճիշտն ու սուտը,
որոնք նույն նպատակին են ծառայել,
թեև արդյունքը
միշտ էլ հակառակն է եղել:

Ձեռք թափ տալու անփութությամբ
ներում եմ անգամ
քո գոյությունն իմ կյանքում,
որը բացակա՛ չասելու համար
ասենք թե հեռակա է եղել:

***

Պապս ասում էր.
– Յոթ անգամ չափիր մեկ անգամ կտրելու համար…

Հայրս ասում էր.
– Յոթ անգամ չափիր, գուցե կտրելու կարիք չլինի…

Ես ասում եմ.
– Չափելու դեռ ոչինչ չունեմ:

***

*Քո մի աչքը կո՛ւյր պիտի լինի,*
*մի ականջը՝ խուլ:*
*Ժողովրդական*

Այսօր ես հաստատ
Որոշեցի կո՛ւյր աչքով աշխարհին այսուհետ նայել՝
Չընկատելով անընդունելի շա՛տ բան ինձ համար,
Որ խեղաթյուրում են մեր աշխարհի
Ներդաշնակությունն իրենց գոյությամբ…
Նույն նպատակով
Որոշեցի խո՛ւլ ականջով աշխարհն ընկալել…
Եվ ի՞նչ
Ես տեսա և ի՞նչ լսեցի հանկարծ.
Ես սոված մանկան
Դեպ ինձ կարկառած ձեռքը չտեսա
(Թեև ձեռքն այդ կար – ե՛ս չէի տեսնում)
Եվ մի պատառ հաց աղերսող նրա
Պաղատանքն անլուր ես չլսեցի
(Թեև կա՛ր աղերս-պաղատանքն անլուր -
Ե՛ս չէի լսում)…
Եվ … չըմըղկըտա՛ց իմ սիրտ ու հոգին,
Եվ այնպե՛ս հանգիստ ես խոր քուն մտա
Եվ ի՞նչ գունավոր երազներ տեսա:–
Իմ երազներում ես տեսա հանկարծ,
Որ … բարո՛ւ կարիքն էլ չի՛ զգացվում,

ՈՒ ինչպես նաև սրտացավությա՛ն ու կարեկցանքի՛,
Քանզի անելիք չունեին նրանք
Կատարյալ՝ մաքո՛ւր-անչա՛ր աշխարհում…
Օ՛, ինչպիսի՛ բախտ,
Անսպասելի՝ մանանա ինչպես՝
Այնքան հե՛շտ եղավ ապրելն ու թեթև,
Քնելը՝ դյուրի՞ն, զարթնելն՝ առավե՛լ,
Երբ հանկարծ պարզվեց,
Որ աշխարհում լա՛վն է տիրում միայն
Եվ առհասարակ վա՛տ չկա կյանքում…
Եվ ի՞նչ… Եվ բարին պակասե՛ց կյանքում,
Եվ այն աստիճան պակասեց բարին,
Որ քիչ էր մնում
Բառարաններից արտաքսվե՛ր անգամ…
Եվ քանի որ սուրբ տեղը չի մնում
դատարկ ու թափուր,
Նրա տեղը չա՛րն սկսեց լցվե՛լ
ՈՒ մեծանալով-հզորանալով՝
Հեղվե՛ց-գրավե՛ց աշխարհը համայն…

Բայց ի՞նչ լավ եղավ, որ ժամանակի՞ն
Հանկարծ սարսափած արթնացա քնից
ՈՒ որոշեցի հաստա՛տ, անտատա՛ն՝
Աշխարհին նայել առողջ աչքով ու
Աշխարհն ընկալել առողջ ականջով՝
Չարը տեսնելու-լսելու համար՝
Եվ ամեն գնով Բարի՞ն պահելո՛ւ:

**ԵԹԵ ՆԱԽՕՐՈՔ ԳԻՏԵՆԱՅԻ,**

որ ապաշխարությունը խարույկ է բարձրացվելու,
որ Տիեզերքը հրաժարվելո՛ւ է նոր երկունքից
և գլխատվելո՛ւ է մեղքաքավությունը…
Ինչի՞ մասին է մեր զրույցը…
Տե՛ս, եկեղեցու որբ պատերի տակ
պահը դողդոջուն ձեռքն է պարզել

մուրացկանի նման:
Եթե ես նախօրօք գիտենայի,
ձեռքս պարզեի պահին մուրացկանի նման
Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու պատերի տակ…

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՓՈԹՈՐԻԿ

Նույն առաստաղն է ճնշում՝ ծանրանալով հոգուս,
իսկ կողքից ու վերևից լացախառն ծիծաղ է որսում
իմ մաշվող լսողությունը…

Հիմա առանց ինձ լքելու
ինձանից հեռացե՛լ են բոլորը՝ իմ հիշատակը
ցմահ թարմ պահելու երդումը թվատող շուրթերին:
Բայցևայնպես լավ կլինի, իհարկե,
եթե այլևս ոչ ոք  ինձ չհայցելի…

…Սակայն այնտեղ՝ դրսում,
ո՞ւմ եք դուք դրսում որոնում հիմա:
Եթե պատահաբար ինձ եք որոնում,
ապա իմ անհրաժեշտությունը
ես կորցրել եմ արդեն՝ հաստատ այստե՛ղ:

## ՈՐՊԵՍ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Ես առաջին անգամ պիտի
Վերջին խոսքով այս ջերմ
Ասեմ՝ ձեռքս դրած սրտիս՝
Դեռ բաբախող տաքուկ.

Մաքուր եմ ես ծնողներիս
Հիշատակի՛ առջև,
Բալիկներիս ապագայի՛
Առջև՝ մաքուր-մաքուր…

*26.05.2012*

# ԱՐՁԱԿ ՀՈԴՎԱԾՆԵՐ

## ԱԲԽԱԶ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ

Դըրմիտ Իոսիֆի Գուլիա…

Նվիրական այս անունը հավատի լույսի հանգույն անմար է յուրաքանչյուր աբխազական օջախում, յուրաքանչյուր աբխազի սրտում: Ափսնի՝ Հոգու երկիր կոչվող աշխարհում յուրաքանչյուր ոք գիտակցում է Դըրմիտ Գուլիայի անձի անփոխարինելի նշանակությունը հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի քառուղիներում:

Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, գիտնական, աբխազական գրականության հիմնադիր, առաջին աբխազական թերթի խմբագիր, առաջին աբխազական թատերական խմբի հիմնադիր ու ղեկավար:

Մեծ է, բազմազան ու անգնահատելի լուսավորչի ներդրումն իր ժողովրդի մշակույթի մեջ: Հիրավի, չկա ազգային մշակույթի մի բնագավառ – լինի դա լեզվագիտություն թե պատմություն, ազգագրություն թե բանահյուսություն, գրականագիտություն թե գեղարվեստական գրականություն, թատրոն թե գեղարվեստական թարգմանություն – ուր չերևար նրա՝ ռենեսանսային գործչի բեղմնավոր գրիչը, չկա մի բնագավառ, որը նա դուրս բերած չլիներ ընդարմությունից՝ հուզելով թմրամած արյունը հանուն կյանքի ու զարգացման:

*Իմ ամբողջ կյանքում աշխատանքի մեջ,*
*Հանց լեռնային գետ,–*

գրել է Դըրմիտ Գուլիան իր բանաստեղծություններից մեկում: Հիրավի, իր ամբողջ կյանքում նա լեռնային ջրի նման հորդահոս է եղել՝ անխնա աշխատելով զօր ու գիշեր:

Մեզ՝ հայերիս համար անսահմանորեն գնահատելի է նաև այն փաստը, որ Գուլիայի անմիջական մասնակցությամբ 1954 թվականին ստեղծվել է Աբխազիայի հայ գրողների «Սևծովյան այգաբաց» գրական միավորումը,

ինչը հնարավոր եղավ նաև նրա և Արշավիր Ջիդարյանի մտերմության շնորհիվ:

19-րդ դարի 90-ական թվականներին նա ուսուցչություն է արել Օչամչիրայի Կուտոլ գյուղի, ի դեպ, իր ջանքերով բացված աբխազական դպրոցում:

Գուլիան մեծ հեղինակություն ու ժողովրդականություն էր վայելում, անսահմանորեն հարգված էր ու սիրված:

Իսկական իրադարձություն էր աբխազների կյանքում, երբ 1907 թվականին Թիֆլիսում աբխազերեն ու ռուսերեն լույս տեսավ նրա կազմած «Աբխազական առածներ, հանելուկներ և շուտասելուկներ» ժողովածուն: Անհերևակայելի էր. աբխազը նման գիրք է հրատարակել՝ անդրադառնալով ժողովրդական իմաստությանը: Այնքան մեծ էր այդ գրքի նշանակությունը, որ Ջգիարդա գյուղի ավագանին համաժողովրդական տոնախմբություն կազմակերպեց:

Անշուշտ, Դըրմիտ Գուլիայի անձի նշանակությունը գիտակցում էին բոլորը: Այսպես, 1920 թվականին աբխազ նշանավոր հրապարակախոս Միխայիլ Չալմազը «Ափսնի» թերթում գրել է. «Մեզ՝ աբխազներիս համար, Դըրմիտ Գուլիան հավասար է Լոմոնոսովին, Շոթա Ռուսթավելուն, Սոկրատեսին: Բայց մենք ե՞րբ կհասկանանք նրան և կսկսենք օգնել ու սատարել»:

Դըրմիտ Գուլիան անսահմանորեն շատ է արել աբխազ երիտասարդ տաղանդավոր ստեղծագործողների համար: Այսպես, նրա ղեկավարությամբ 1919-1925 թվականներին Սուխումի ուսուցչական ճեմարանում գործում էր գրական խմբակ: Այստեղ սկսնակ գրողները Գուլիայի ներկայությամբ կարդում էին իրենց ստեղծագործությունները, իսկ հետո քննարկում էին դրանք: Խմբակն ուներ իր ձեռագիր գրական ամսագիրը, որը կոչվում էր «Շարփը-եցվա» («Վաղորդյան աստղ»): Այստեղ լույս են տեսել Իուա Կողոնիայի,

Ձաձ Դարսալիայի, Իվան Պապասկիրի առաջին թոթովանքները:

Ի դեպ մանկական «Ամցաբզ» ամսագիրն էլ է հիմնադրվել Դ.Գուլիայի ջանքերով 1957 թվականին: Որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, նա նամակով դիմել է այդ խորհրդային բարձրագույն օրենսդրական մարմնի այն ժամանակվա նախագահ Կլիմենտ Վորոշիլովին, ի թիվս այլ, հրատապ լուծում պահանջող հիմնական խնդիրների նշելով նաև մանկական ամսագրի հրատարակության անհրաժեշտությունն Աբխազիայում:

Աբխազ մտավորականներն ակնածանքով էին վերաբերվում նրան: Նշանավոր գիտնական, պատմաբան Գեորգի Ձիծարիան չէր հոգնում կրկնել, որ 40-ական թվականների վերջին և 50-ականների սկզբին, երբ աբխազների ճակատագիրը մազից էր կախված և արդեն քայլեր էին ձեռնարկվում նրանց տեղահանելու ուղղությամբ, Դըրմիտ Գուլիայի անունը մեծ նշանակություն է ունեցել ժողովրդի պահպանման գործում: Ամեն անգամ, երբ Ստալինը այցելում էր Աբխազիա, անպայման հետաքրքրվում էր. «Ինչպե՞ս է ապրում ծերուկ Դըրմիտ Գուլիան»:

Դեռ 1913 թվականին ակադեմիկոս Նիկողայոս Մառը գրել է. «Անկասկած է, որ մինչև այսօր ոչ ոք այն սահմաններում, ինչպես Գուլիան, միաժամանակ չի հետաքրքրվել Աբխազիայի անցյալ ճակատագրով ու ապագա կենցաղով, ոչ մի գիտնական ոչ Եվրոպայում, ոչ էլ Կովկասում… չի բարեհաճել և դեռ երկար ժամանակ չի բարեհաճելու աշխատանքներ ձեռնարկել անկեղծ հետաքրքրության խորությամբ, ինչպիսիք արդեն իսկ պատրաստ ունի Գուլիան»:

Գուլիային բազմաթիվ բանաստեղծություններ են նվիրել աբխազ հեղինակները, բայց ամենախորն ու նշանակալիցը Միխայիլ Լակերբայինն է, որը լույս է

տեսել 1919 թվականին «Ափսնի» թերթում: Բանաստեղծության մեջ Դ.Գուլիան ներկայացված է իր ամբողջ վեհությամբ՝ որպես հայրենասեր, անխոնջ մարտիկ ու ժողովրդի լուսավորիչ:

Դ.Գուլիան՝ առաջին աբխազ բանաստեղծը, իր առաջին իսկ ստեղծագործություններով ծառանում է այն կործանիչ երևույթների դեմ, որոնք խեղաթյուրում ու քայքայում են մարդուն, նրա ազգային նկարագիրը: Նրա ստեղծած երգիծական բնույթի կերպարներն այսօր էլ արդիական են ու չեն կորցրել իրենց դաստիարակչական նշանակությունն ու ազդեցությունը:

Անշուշտ, հաշտ ու խաղաղ չի եղել Դըրմիտ Գուլիայի կյանքի ուղին: Խորհրդային իշխանության հաստատումն Աբխազիայում նա միանշանակ չի ընդունել: Երիտասարդ սկսնակ գրողներ Իուա Կողոնիան, Միխայիլ Լակերբայը, Լեուարսա Կուծնիան և ուրիշներ նկատելիորեն հեշտ են ընդունել նոր ժամանակները:

Եվ տասնամյակներ շարունակ լռել է մեծն Գուլիայի քնարը, այսինքն՝ նա չի ստեղծել խորհրդային իշխանությունը փառաբանող գեղարվեստական ստեղծագործություններ, թեև իր հրապարակախոսական հոդվածներում խորհրդային իշխանության որոշ դրական կողմերն է նշել, իսկ ավելի վաղ՝ 1917 թվականին մի բանաստեղծությամբ ողջունել է փետրվարյան հեղափոխական իրադարձությունները Պետրոգրադում:

Բայց չարդարացան Գուլիայի ակնկալած մեծ բարեփոխումները:

Ինչպես հայտնի է, Դըրմիտ Գուլիան Աստվածաշնչի աբխազական թարգմանության չորս հեղինակներից մեկն է եղել, ինչի համար էլ ենթարկվել է սուր քննադատության: Անասելի ծանր փորձություն էր հավատացյալ Դըրմիտ Գուլիայի համար, երբ 1927 թվականին Նոր Աֆոնի վանքի բակում անխղճորեն այրեցին Աստվածաշնչի ամբողջ տպաքանակը:

Այստեղ էլ ավելացնենք, որ նրա թարգմանությամբ աբխազերեն հնչեցին Ա.Պուշկինի, Մ.Լերմոնտովի, Տ.Շևչենկոյի, Ն.Բարաթաշվիլու, Ա.Ծերեթելու մի շարք բանաստեղծություններ, ինչպես նաև Ծ.Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմը:

1928 թվականին հիմնադրվեց Աբխազիայի գրողների ասոցիացիան, և Դըրմիտ Գուլիան ստացավ անդամության թիվ 1 գրքույկը, սակայն հետո նա չընդգրկվեց ասոցիացիան գրողների միության վերափոխելու համար ստեղծված կազմկոմիտեի կազմում, որը տեղի ունեցավ 1933 թվականին: Իսկ 1934-ին նա չընտրվեց ԽՍՀՄ գրողների առաջին համագումարի պատգամավոր: Եվ դա ցավալի պատահականություն կամ թյուրիմացություն չէր:

30-ական թվականների սկզբին Գուլիան իր «Աբխազիայի պատմություն» գրքի համար ենթարկվեց դաժան քննադատության: Գիրքը հայտարարվեց հակամարքսիստական, հակաժողովրդական և հեղինակին հրաշքով հաջողվեց խուսափել բռնաճնշումից:

Սակայն Գուլիան երբեք չի կորցրել ոգու արիությունը, միշտ էլ սատարել է երիտասարդ ստեղծագործողներին, և 1954 թվականին դառնալով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ամեն ինչ արել է հանուն իր ժողովրդի բարգավաճման: Եվ երբ լույս տեսավ Ինգորոկվայի գիրքը, որն աբխազների «եկվորությունն էր ապացուցում», Գուլիան գրում է իր հըռչակավոր «Ահա ով եմ ես» բանաստեղծությունը: «Ո՞վ ես դու» հարցին նա հպարտորեն պատասխանում է.

*Որդին եմ հողիս: Սակայն առավել՝*
*Իմ ժողովրդի որդին եմ հպարտ,*
*Հետնորդը նրանց, ովքեր չեն այրվել*
*Բոլոր դարերի հրդեհներում բարկ:*
*Ե՛ս եմ հարազատ լեռներիս որդին –*
*Որդին այն հողի, ուր նախնիներն իմ*
*Պառկած են հիմա…*

Իհարկե, այսօրվա ընթերցողը նախատելու պես կարող է ասել, որ Դըրմիտ Գուլիան բանաստեղծություններ և անգամ մի ամբողջ պոեմ է նվիրել «ժողովուրդների հոր» 70-ամյա հոբելյանին (Գուլիային մերձավորները համարյա թե ստիպել են գրել այդ գործերը միայն և միայն կյանքը փրկելու համար):

Բայց եկեք առանց չարախնդալու ասենք. իսկ ո՞ր խորհրդային գրողն այն տարիներին Ստալինին փառաբանող բանաստեղծություն ու պոեմ չի գրել:

Անձի պաշտամունքի սարսափելի տարիներին, ինչպես գրել է Վարպետի որդի, հայտնի արձակագիր Գեորգի Գուլիան, «նրան փրկել է կենդանի կապն իր ժողովրդի հետ, նա ոչ մի րոպե չի լքել իր պաշտոնը, միշտ էլ գտնվել է ժողովրդի մեջ, որի հետ խոսել է մայրենի լեզվով, բարի խոսք է բերել նրան և իրեն երբեք չի գիտակցել առանց իր ժողովրդի: Եվ այս օրգանական միասնության մեջ անձնականը միշտ էլ զիջել է ժողովրդի հանդեպ ունեցած պարտքի զգացումին: Ժողովուրդը միշտ էլ նրա հենարանն է եղել, և դա Գուլիային ճանաչում է բերել, հաջողությունն ու համընդհանուր սեր»:

Այդ սիրո ու հարգանքի արտահայտությունն է Դըրմիտ Գուլիայի ստեղծագործության թարգմանությունը աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Սրտառուչ տողեր են նվիրել նրան Կ.Սիմոնովը, Ռ.Համզաթովը, Կ.Կուլիևը, Գ.Տաբիձեն, Շ.Դադիանին:

Նրա առանձին ստեղծագործություններ թարգմանվել են նաև հայերեն, որոնք, ցավոք սրտի, սփռված են տարբեր պարբերականների ու ժողովածուների՝ ինչպես նաև իմ «Ափացխա», «Էլեգիաներ երևույթների մեջ», «Առանց բացականչական նշանների...» գրքերի, «Գրական Համշեն» և «Կամուրջ» ալմանախների էջերում, և ժամանակն է դրանք ի մի բերելու՝ առանձին գրքով հրատարակելու համար:

## ՊԱՀՊԱՆԵԼ ՍԵՐՆ ՈՒ ՀԱՎԱՏԸ

Դժվար է գրել աբխազ խոշորագույն բանաստեղծ Շալուա Լեուարսանի Ծըյջբայի մասին, այն էլ անցյալ ժամանակով:

Նա՝ 23-ամյա խոստումնալից բանաստեղծը, 1935 թվականին բանսարկության զոհ դարձավ, ձերբակալվեց և համարյա 20 տարի անցկացրեց աքսորավայրում՝ դաժան ու խիստ Կոլիմայում, սակայն կարողացավ պահպանել ոգու արիությունը, հավատն ապագայի նկատմամբ, սիրո ու բարության լույսը, և երբեք չլքեց իր քաղաքացիական ու ստեղծագործական սկզբունքների դիրքերը:

*Դաժան ես անչափ եղել ինձ հետ, կյա՛նք,*
*Իմ ուղին տեսավ միայն տառապանք:*
*Բայց կյանքի-մահու ահեղ պայքարում*
*Ես քե՛զ եմ նորից անձնազոհ սիրում:*

Արդեն քանի՛ տասնամյակ մենք չենք լսում նրա բարի խոսքը, իմաստուն խորհուրդները, որոնք այնպե՛ս անհրաժեշտ են այսօր, երբ հաճախ խիզախությունն է պակասում չարին դիմագրավելու, ժամանակին կանգ առնելու, ետադարձ հայացք գցելու, չէ՞ որ «պահն է ըսթափվելու», քանզի

*Ինչո՞ւ է այսպես աշխարհում նեղվածք,*
*Երբ այսքան ազատ տեղ կա աշխարհում:*

Եվ երևի յուրաքանչյուրիս հոգում անպայման պիտի լինի բանաստեղծի գովերգած այն խարիսխը, որը կնետվի հորձանուտի մեջ հատկապես այն պահին, երբ դաժան տարերքը մեր ճակատագրի նավը կտանի մռայլ ժայռերի վրա.

*Գովերգում եմ ես այն խարիսխը, որ*
*Մեզ ետ է պահել փորձանքից մի օր:*

Կենցաղային դառը փորձով իմաստնացած բանաստեղծի խորհուրդներն անպայման ուսանելի դասեր կլի-

նեին մեզ համար այսօր, սակայն մենք, ավա՛ղ ու ա՛խ, կրկին

*Ժամանակ չունենք մի պահ կանգնելու,*
*Լսելու իրար ու հասկանալու…*

…Ես Շալուա Ծոյջբայի հետ ծանոթացա 1978 թվականին, երբ սովորում էի Աբխազական պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի առաջին կուրսում: Ծանոթացրեց Աբխազիայում «Վրաստան» թերթի հատուկ թղթակից Վլադիմիր Վարդանյանը (Սիրավան Սևունի): Մի անգամ նա ինձ իմիջիայլոց ասաց, որ Շալուա Ծոյջբան շատ է ուզում ունենալ Բենիկ Սեյրանյանի՝ «Մերանի» հրատարակչությունում վերջերս լույս տեսած «Ծովահավքի կանչը» գիրքը, որտեղ նրան նվիրված պատմվածք կա՝ «Թալիսմանը» վերնագրով: Գիրքն արդեն սպառվել էր, իսկ ձեռք բերած երջանիկներն այն տալու մասին լսել անգամ չէին ուզում: Ես երկու օրինակ ունեի, և մեկը նվիրեցինք Ծոյջբային: Դա մեր առաջին հանդիպումն էր: Հետո եղան բազմաթիվ՝ ինձ համար ուսանելի հանդիպումներ ու զրույցներ:

Ես հաճախ էի այցելում անվանի բանաստեղծին մանկական «Ամցաբզ» («Բոց») ամսագրի խմբագրությունում, որտեղ նա աշխատում էր որպես պատասխանատու քարտուղար (խմբագրությունը գտնվում էր Աբխազական հումանիտար հետազոտությունների ինստիտուտի ներկայիս շենքի առաջին հարկում, իսկ երկրորդ հարկը գրողների միության վարչությունն էր զբաղեցնում): Լսում էի նրա իմաստուն խորհրդածությունները գրականության, մասնավորապես պոեզիայի դերի, ժողովրդի ճակատագրում բանաստեղծի ունեցած տեղի մասին:

Շուտով մեր անձնական ծանոթությունը վերաճեց ստեղծագործական բարեկամության: Այսպես, Շալուա Ծոյջբան թարգմանեց իմ մանկական «Նունեի նամակը» բանաստեղծությունը, որը տպագրվեց «Ամցաբզի» 1978 թվականի 3-րդ համարում: Բանաստեղծության

հերոսուհի Նունեն, որը նոր է սովորել գրել-կարդալ, նամակ է գրում տատիկին ու՝

*Շատ եմ խնդրում, տատիկ ջան,*
*Երբ որ գրես պատասխան,*
*«Փոքրիկ Նունե» չգրես,*
*Մեծացե՛լ եմ արդեն ես:*

Իմ հերթին, որպես երախտագիտության նշան, ես էլ թարգմանեցի նրա բանաստեղծություններից մի քանիսը («Գլուխս սպիտակեց», «Դաժան ես անչափ», «Ծաղիկը» և այլն), որոնք տպագրվեցին Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի «Կամուրջ» ալմանախում և «Վրաստան» թերթում: Տողատակի թարգմանությունները մի առանձին խնամքով կատարում էր ինքը՝ Շալուա Ծըյջբան:

Իհարկե, մեր զրույցները վերաբերում էին ինչպես հայ գրականությանը, այնպես էլ հայ ժողովրդի պատմական ճակատագրին:

Եվ ես չկարողացա դիմակայել նրա՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրին նվիրված հրաշալի «Դարերի ընծան», «Երգերի հատորյակը», «Թզենի» բանաստեղծությունները թարգմանելու գայթակղությանը, մանավանդ երբ այդ հարցում ինձ խրախուսեց «Գարուն» ամսագրի պոեզիայի բաժնի վարիչ, բանաստեղծ Ղուկաս Սիրունյանը:

Թարգմանությունները տպագրվեցին «Գարունի» 1986 թվականի 12-րդ համարում «Համաստեղություն» խորագրի ներքո: Այս բանաստեղծությունների թարգմանությունները բազմիցս վերահրատարակվեցին՝ արժանանալով ընթերցողների հավանությանը:

Ցավոք սրտի, երբ լույս տեսավ «Գարուն» ամսագրի վերոհիշյալ համարը, Շալուա Ծըյջբան արդեն մահացու հիվանդ էր: Բայցևայնպես, գոհ եմ իմ ճակատագրից, որ գոնե այսպես, գոնե վերջին պահին, կարողացա մահամերձ բանաստեղծ Շալուա Ծըյջբային՝ հայ ժողովըրդի մեծագույն ու անշահախնդիր բարեկամին, ուրախության մի քանի րոպե պարգևել:

Ես գրել եմ Եղիշե Չարենցի և Շալուա Ծըյջբայի սուխումյան երկու հանդիպման մասին: Եվ «Երգերի հատորյակը» ոչ միայն հեղինակի կյանքի տարեգրությունն է աքսորավայր Կոլիմայում, այլև նրա խոր հարգանքի ու երախտիքի տուրքը ողբերգական Չարենցին, ում չգիտես ինչ հրաշքով ճամբար ընկած գիրքը «հավատի զանգի նման ղողանջում էր ժողովրդի թշնամիների սրտում».

*Եվ եկավ իմ օրն երազած,*
*Դեպի քեզ եմ թռչում ահա,*
*Որ շշնջամ՝ ճամփից եմ ես,*
*Ես կենդանի՛ քեզ մոտ եկա…*

Սակայն, ավա՛ղ, նրանց վիճակված չէր հանդիպել, և, բնականաբար,

*…երերաց հողն ոտքիս տակ,*
*Հոգիս մթնեց – աստված վկա –*
*Երբ ասացին, որ աշխարհում*
*Իմ Եղիշեն վաղուց չկա՝*

դառնալով 30-ական թվականների քաղաքական ահաբեկության զոհը, բայց «անգամ գեթ մի ակնթարթ նրա վառած կրակը չհանդարտվեց» մարդկանց սրտերում՝ ղողանջելով հավատի զանգի նման:

Եվ ամեն անգամ, երբ սրտի տրոփով ու հուզմունքով սեղմում էի Շալուա Ծըյջբայի առնացի ձեռքը, զգում էի Չարենցի՝ թալիսմանի նման ձեռքից ձեռք անցնող այն գրքի կրակը, որը նորից ու նորից հառնում էր ձյուների տակ, նորից ու նորից ծառսվում էր փոթորիկների դեմ:- Այն կրակը, որն ամբողջ կյանքում իր ազնվագույն հոգում կրել է Շալուա Ծըյջբան, և որը երբեք չի մարել նրա ստեղծագործություններում:

Իհարկե, իմ թարգմանչական գործունեությունը շարունակվեց նաև Շալուա Ծըյջբայի մահվանից հետո:

(1987-ի մայիսին երկարատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ մեծ արվեստագետը: Եվ այսօր աբխազ նշանավոր բանաստեղծներից շատերը Շալուա Ծըյջբայի աշակերտն են հպարտորեն համարում իրենց)

Ես ոգևորված թարգմանեցի նրա ստեղծագործություններից մի ամբողջ շարք՝ այն, ինչ ինքն էր պատրաստել հայ ընթերցողին ներկայացնելու համար. «Ամեն ինչ ծաղկում է», «Լուսին», «Սև քարեր», «Ճայը», «Մայր», «Ոռենին», «Թզենի», «Խոսակցություն», «Անփոփոխ ընկեր», «Եվ նորից Բեթհովենի մասին», համարյա ամբողջությամբ «Թալիսման» պոեմը: Զուգահեռաբար աշխատում էի նաև «Ափացխա» թարգմանական ժողովածուի վրա, որից առանձին կտորներ արդեն ներկայացրել էի հայ ընթերցողին:

Բայց, ավա՛ղ, շուտով սկսվեց վրաց-աբխազական պատերազմը և մի սև խավ դրեց իմ ստեղծագործական պլանների վրա. անհետ կորավ իմ թարգմանությունների մեծ մասը, ինչպես նաև մանկական «Հատուկ աթոռը» ժողովածուն, որոնք պահել էի Սուխումի շըրջանի Լեչկոպ գյուղի դպրոցում՝ ուրիշ հուսալի տեղ չգտնելով և միամտաբար կարծելով, թե սրբության սրբոց դպրոցին դիպչող չի լինի: Ավա՛ղ, ինչպես արդեն գրել եմ իմ «Գնդակահարված հատորներ» հոդվածում, դպրոցը ենթարկվեց անխնա կողոպտման:–

Դառն ու անվերականգնելի կորուստ, եթե չասենք ավելին:

Անշուշտ, ես հետագայում հիշողությամբ կարողացա վերականգնել ստեղծագործություններիս մի մասը, որոնք 2002 թվականին առանձին գրքով («Ափացխա») լույս ընծայեց Աբխազիայի գրողների միությունը, որն այն տարիներին ղեկավարում էր հայ ժողովրդի նվիրյալ Բորիս Գուրգուլիան: Բայց դա իմ 15-ամյա աշխատանքի մի մասն էր միայն:

Երկար տարիներ են անցել, տասնամյակներ, բայց այսօր էլ իմ ձեռքի տակ են Ծալուա Ծըյջբայի՝ Մոսկվայի «Սովետսկի պիսատել» և «Խուդոժեստվեննայա լիտերատուրա» հրատարակչություններում լույս տեսած «Դեղձի կորիզ», «Թալիսման», «Բանաստեղծություններ և պոեմներ» ժողովածուները, որոնցից առաջին երկուսը լույս են տեսել հեղինակի կենդանության օրոք:

## ԱՐԴԱՐԱՑՆԵԼՈՎ ԻՐ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ է ու անփոխարինելի հայատառ հրատարակությունների դերն ու նշանակությունը Սփյուռքի կյանքում, և սխալված չենք լինի, եթե ասենք, որ նրանք հայապահպանության և հայ գրականության զարգացման հիմնական, ամենակարևոր պայմաններն են:

Եվ այդ հրատարակությունների մեջ հրաշալիորեն առանձնանում է, իր ուրույն տեղն ունի «Կամուրջ» տարեգիրքը, որի գլխավոր խմբագիրն է մեր սիրելի Անահիտ Բոստանջյանը:

«Կամուրջի» էջերում պարբերաբար իրենց լավագույն արձակ ու չափածո ստեղծագործություններն են լույս ընծայել աբխազահայ գրողներ Արշավիր Ջիդարյանը, Հակոբ Գուրունյանը, Անդրանիկ Բահարյանը, Իշխան և Հայկ Ռահանյանները, Նիկոլայ Դեմուրչյանը, Արշավիր Կրբաշյանը, Վազգեն Կանսուզյանը, Լյուդվիգ Քյուլյանը, Սիրավան Սևունին…

Ես շատ լավ գիտեմ, թե ինչ է նշանակում հայատառ պարբերականների, առավել ևս ծավալուն տարեգրքերի տպագրությունը Մայր Հայրենիքի սահմաններից դուրս:

Այդ աշխատանքը ֆիզիկական և մտավոր ուժերի ահռելի լարում ու զոհողություն է պահանջում՝ չխոսելով արդեն նյութական և տեխնիկական այլևայլ դժվարությունների մասին:

Միայն նվիրյալը կարող է լծվել այդ, առանց չափազանցության, տաժանակիր, բայց այնքա՜ն պատվաբեր՝ օդուջրի պես անհրաժեշտ աշխատանքին:

Եվ այսօր այդ եզակի նվիրյալներից մեկը մեր սիրելի քույրիկն է՝ վաստակաշատ գրող, թարգմանիչ և հրատարակիչ Անահիտ Բոստանջյանը:

Անսահմանորեն երջանիկ եմ, որ երկար տարիներ ճանաչում եմ նրան, և իմ գրական կյանքի լուսավոր

պահերն անխզելիորեն կապված են նվիրական Անահիտ Բոստանջյան անվան հետ:

Եվ զարմանում եմ, թե ինչպես է այդ փխրուն ու ըզգայուն հոգին արժանապատվորեն ու համբերատար, տասնամյակներ շարունակ քաշում խմբագրի, հրատարակչի, հովանավորի ծանր լուծը՝ դեռ ժամանակ գըտնելով նաև բարձրարվեստ ու ինքնատիպ գրական գործերի ու թարգմանությունների համար, էլ չխոսելով լրագրողի ոչ դյուրին աշխատանքի մասին:

Եվ այդ ծանր առաքելությունը, ես հաստատ գիտեմ, կատարվում է նաև նրա գեղեցիկ ընտանիքի հաշվին, մի ընտանիք, որը գիտակցում է Անահիտի տեղն ու դերը մեր գրական աշխարհում:

Տարիներ շարունակ Անահիտը մի շատ կարևոր ու շնորհակալ պարտականություն է ստանձնել – նա հետևողականորեն ճանապարհ է հարթում երիտասարդ տաղանդավոր ստեղծագործողների համար՝ իր բարի սրտի ջահով լուսավորելով նրանց ուղին: Նա հրաշալիորեն շարունակում է դասական բարձունքների հասած գրող, մեր գրական ուսուցչի՝ Բենիկ Սեյրանյանի ազգանվեր գործը:

Ուրախալի է ու խրախուսելի, որ Անահիտ Բոստանջյանի խմբագրած մեծածավալ «Կամուրջը», որը լույս է ընծայում Երևանի «Զանգակ» հրատարակչությունը, նկատելիորեն ընդլայնել է սահմաններն ու իր էջերում հյուրընկալում է աշխարհասփյուռ հայ գրողներին՝ նըրանց ստեղծագործությունները դարձնելով հայ ընթերցողի սեփականությունը:

Տարեգիրքը պատվով է արդարացնում իր նվիրական անունը՝ Կամուրջ:

Ես անսպառ ուժ ու եռանդ եմ մաղթում իմ շատ սիրելի Անահիտին: Թող Հայոց աստվածները հովանավորեն սատարեն նրան:

*2013*

*Անահիտ Բոստանջյանը հանկարծամահ եղավ 2017 թվականի հունվարի 8-ին: Խոնարհվում եմ նրա լույս հիշատակի առջև:*

## ՀՈԳՈՒ ՏՈՒՆ

*Սիրով նվիրում եմ*
*մեր աննման Նինա Գասպարյանին*

*Ափ մը մոխի՛ր աճյունիս հետ, Հայրենի տուն…*
*Սիամանթո*

*Նորից ու կրկին հուշերս անքուն*
*Արևաքամու ցոլանքով հրկեզ*
*թափառում են իմ ծննդավայրում:*
*Ծննդավայրո՛ւմ, ուր չեմ ծնվել ես:*
*Ա.Ս. («Որ մաքուր մնամ» ժողովածու, 2001 թ.)*

Հայրենի տուն… Հայրենի օջախ…

Ես հաճախ եմ անդրադարձել հայ հեղինակների համար նվիրական ու սուրբ այս թեմային:

Ահա «Տուն» բանաստեղծությունս պապիս՝ Տուն կառուցելու պատգամը խորախորհուրդ.

*Ասում էր հաճախ պապս իմաստուն.*
*-Ոհր էլ որ գնաս՝ կառուցիր նոր տուն,*
*Տուն կառուցիր այն հավատով, բալաս,*
*Որ ուր էլ լինես՝ անկյուն ունենաս…*

*Չարմանում էի, անչափ զարմանում –*
*Ամեն տեղ ինչպե՞ս կառուցեմ նոր տուն:*
*Որտեղի՞ց այդքան շինանյութ ու փող…*

– Եվ առաջին հերթին մարդկանց սրտերո՛ւմ պիտի կառուցես քո Տունը,– հայի հոգու իմաստությունն էր մեզ փոխանցում աշխարհի չարն ու բարին հասկացած պապս:

Ահա «Մինչև ե՞րբ պիտի քանդվի մեր տունը» հոդվածս, որը մտորում-խորհրդածություն է Համշենական

տան մասին վրաց-աբխազական պատերազմի առաջին իսկ օրերին: Դառն ու դաժան խորհրդածություն-իմաստավորում – այն Տան մասին, որը ո՛չ միայն պարզապես շինություն-բնակվելու տեղ է ու համար՝ այլ՝ Հոգու տուն…

Իմ գումիստացի մորքուրար Գրիգորի կյանքի դաժան պահերից մեկը նկարագրել եմ «Նոր Վաշդեն, կամ ըստ Րաֆֆու» հոդվածում.

*Ծխում է Լաբրան… Ծխում է Գումիստան… Ծխում է Ակադարան…*

*Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ կապտագույն ծուխին…*

Մորքուրար Գրիգորի երկհարկանի բարեշեն Տունը վրացական «գվարդիականները» այրեցին 1992-ի դեկտեմբերի 12-ին և խլեցին հրաշքով անվնաս մնացած մուրճը, որպեսզի անխնա ծեծերից կիսակենդան 85-ամյա հայը, ինչպես քմծիծաղեց «գվարդիականներից» մեկը՝ «չկարողանա սկսել *հայկական նոր տան* շինարարությունը ազատ ու անկախ Վրաստանի տարածքում»:–

Տիպական օրինակ Հայոս ու Քարթլոս եղբայրների լեգենդի վերաիմաստավորման համար:

Հանուն *Համշենական տան* պահպանման վրաց-աբխազական պատերազմի լեգենդար հերոս-հետախույզ Սեդրակ Ձատիկյանը վայրկյան անգամ չկասկածելով՝ պահանջեց ականանետով գնդակոծել իր դեռ անավարտ տունը, որտեղ վրացական «գվարդիականներն» էին հավաքվում:

Այդ մասին ես պատմել եմ «Եթե ե՛ս չեմ այրվելու…» հոդվածում:

Հայրենի տան, հայրենի օջախի թեման նվիրական է ու սուրբ, հատկապես հայ հեղինակի համար: Եվ դա զարմանալի չէ, քանզի մեր ժողովրդին պանդուխտի ցուպն է վիճակվել ու կարոտը կորուսյալ հայրենի օջա-

խի, որի մի բուռ մոխիրը ժամանակների հողմերն են ցրել աշխարհով մեկ:

*Ափ մը մոխիր… իմ սրտիս վրան ցանելու…*

…Ահա այս էլ որերորդ անգամ փորձում եմ թղթին հանձնել իմ ապուպապ Հովհաննեսի ու ապուտատ Համեստի կյանքի պատմությունը, իսկ ավելի ճիշտ՝ պատմությունը *Մեր տան՝* Տրապիզոնի Աղրիտ գյուղում:

Իմ սրտում ու հոգում այն վաղուց պատրաստ է:

Պատմությունը խորապես ապրված է ու արդեն հոգու ցավ ու ցասում է դարձել:

Ահա մեր վեհափառ Գալեյճուկ լեռը, որն այսօր էլ մեր ապուպապ Հովհաննեսի բոկոտն ոտքերի ջերմությո՛ւնն է հիշում և շողարձակում մեր ապուտատ Համեստի աչքերի լույսո՛վ:

Ահա մեր ջրվեժ Խուրչան-կապանը, որի ուղղահայացն է գրոհով առնում կարմրախայտը:

Իսկ մեր դարավոր ընկուզենին ու նրա արմատների տակից բխող սառնորակ աղբյուրը բարի ու իմաստուն լեգենդ են դարձել արդեն՝ *Լեգենդ Իմաստության ու Կամքի մասին*: Իսկ ավելի ճիշտ՝ եղելությո՛ւն:

Ահա և *մեր տունը* – բարեշեն, լուսավոր, փայտաբույր:

Ես նույնիսկ մորս օրորոցայինն եմ հիշում:

Բայց ես չե՛մ ծնվել *Մեր այս տանը*:

Չե՛մ ծնվել, որովհետև թուրք ենիչերիներն սպանեցին ապուպապիս մեր դարավոր ընկուզենու տակ, իսկ մեր ապուտատը՝ մեր այնքան փխրունն ու քնքույշը, ազատվելով ենիչերիների ձեռքից, հասցրեց փակվել *Մեր տանը…*

Նա իր այրվող մարմնով հրկիզեց իր իսկ ձեռքերով կառուցված բարեշեն, լուսավոր ու փայտաբույր *Մեր տունը*, որպեսզի այն պահպանի-պահի *Հայկական…*

*Այրեց, որպեսզի … պահի՛…*

Ես շատ լավ եմ հիշում:

## ԿՈՒՅՐ ԱՆՁՐԵՎ
## (գլուխներ անավարտ վիպակից)

*Սիրով նվիրում եմ թոռնիկներիս՝*
*Սոֆիային և Ադրիանին*

### 1. «ԾԱՌԵՐԸ ԾԱՂԿԵ՛Լ ԵՆ: ՁՄԵ՛Ռ Է...»

*«Ծառերը ծաղկե՛լ են: Ձմե՛ռ է...»*

Այս տողերը հաճախ էր երգում հայրիկս, համարյա ամեն օր, երեկոյան, աշխատանքից հետո, երբ հոգնած գալիս էր տուն ու նստում հանգստանալու մեր բակում փարթամորեն աճող խնձորենու տակ:

Հրաշալի՛ էր հայրիկիս ձայնը՝ մաքո՛ւր, հարո՛ւստ, ասես հողի ընդերքից էր զուլալ բխում՝ ինչպես մեր պապական այգում քչքչող արծաթախաղ աղբյուրը...

Եվ ա՛յ քեզ զարմանալի բան. հայրիկիս ձայնը երբե՛ք չէր հոգնում, երբե՛ք չէր խամրում... Դա իմ հայտնագործությունն էր, որը մինչև այսօր ոչ ոք չի կարողացել հերքել, ասենք, չի էլ փորձել. ծնողի ձայնը երբեք չի կորցնում իր նախնական հմայքը:

Ես չգիտեի, թե ով էր երգի հեղինակը: Ես նույնիսկ չէի էլ մտածում այդ մասին, որովհետև չգիտեի անգամ, որ երգը հեղինակ է ունենում: Ես միայն մի բան շատ լավ գիտեի. դա իր հայրիկի երգն էր, միայն նրա՛նը, թեև մեկ-մեկ էլ զարմանում էի, թե այդ ինչպե՞ս է, որ ծառերը ծաղկում են ձմռանը: Չտեսնված-չլսված բան: Բայց որ նրանք հաստա՛տ ծաղկում են նաև ձմռանը, ես անգամ չէի կասկածում. այլապես հայրիկս այդ մասին չէր երգի: «Երևի ե՛ս չեմ տեսել: Երևի գյուղո՛ւմ են ձմռանը ծաղկում ծառերը... Ո՞վ գիտի»,– մեծավարի մտորում էի ես և միայն տարիներ հետո պիտի հասկանայի, որ ծառերը ծաղկում են նաև ձմռանը, եթե գարո՛ւն է մարդու հոգում ու արև՛, արև՛:

Մենք նստում էինք մեր տնակի շեմին, կողք կողքի, իրար հպված – ինչպես սենյակում պատից կախված նըկարի սիրուն լեռան երկու սեգ գագաթները: Հայրիկս երգում էր, իսկ ես՝ լսում: Եվ հաղորդակցման այդ պահին չէր միջամտում նույնիսկ մայրիկս. եթե ինչ-որ բան էր խնդրելու, անպայման կսպասեր երգի ավարտին:

Ես ոչ թե լսում էի երգը, այլև կլանում էի այն, ամեն բառն ու հնչյունը ներծծում ագահորեն ու անմնացորդ – ինչպես ձյունն էր կլանում արևի ճառագայթներն ու հալվո՛ւմ-հալվո՛ւմ՝ կենարար ներծծվելով հողի կարոտաբաղձ ծալքերում:

Երգը ջերմության պես տարածվում էր իմ էության մեջ, թափանցում հոգուս խորախոր անկյուններն ու պրկորեն լցվելով ոգեղեն կենսահյութով՝ պայթում հարսնացած բողբոջի նման:

Եվ այդ պահին ինձ թվում էր, թե իմ հոգում մի անանուն, կախարդական հրաշք ծառ է աճում, որի նմանը չկա ո՛չ մի տեղ, աշխարհի ո՛չ մի անկյունում… Ոչ միայն չկա. նույնիսկ չէր եղել և չի լինելու երբեք:

Բայց ինչո՞ւ՝ թվո՛ւմ, եթե ծառն իսկապե՛ս աճում էր իմ հոգում, և ես զգո՛ւմ էի նրա արմատների խլրտոցը, որոնք խուտուտ տալով խորանում էին իմ երակներում, հասնում սրտիս ու այնտեղ … հրաշալիորեն պրպտում այնպե՛ս դուրալի:

Ես զգում էի, թե ինչպե՛ս են թևերի հանգույն աճում ճյուղերն ու փարթամանում՝ մեղմորեն շաղվելով հայրիկիս երգի ելևէջների վրա՝ մեր տան վառարանից քուլայվող քաղցր ծխի նման:

***

Կախարդական այդ Ծառը խոր արմատավորվեց իմ հոգում, աճե՛ց, զորացա՛վ, փարթամացա՛վ ու շուտով դարձավ Երգի սիրուն ծառ, բարն էլ՝ քաղցր ու հյութալի:

Բայց այդ մասին ես, իհարկե, դեռ ոչինչ չգիտեի:

Ես դեռ չգիտեի, որ կյանքում չար ձեռք է լինում, որն անպայման քար կգցի Ծառի պտուղներին, ճյուղերը

կկոտորի անխնա, կփորձի արմատները կտրել-հատել, միայն թե ծառը չորանա՛-չլինի՛, անհետ կորչի այս լույս աշխարհից:

Ես դեռ չգիտեի, որ վատ հոգի ու մարդատյաց կա՝ բարը յուրացնելու համար Ծառեր հատող՝ անխնա, չարախնդորեն… թեև բազմաթիվ անգամ կենսատու շվաքում ազատ շունչ է քաշել՝ փրկվելով կիզիչ շոգից:

Ես դեռ շատ բան չգիտեի:

Ես պարզապես շա՛տ էի երջանիկ, որ հայրիկս կար ու կար նրա երգը, կար մայրիկս, որը երբեք չէր միջամըտում, երբ հնչում էր հայրիկիս սրտահույզ երգը:

Ես դեռ չգիտեի, որ իմ հոգում փարթամորեն աճած ծառը պիտի բողբոջեր ու շռայլորեն ծաղկեր նաև ձըմռանը:

*«Ծառերը ծաղկել են: Ձմե՛ռ է…»*

…Շատ տարիներ հետո ձմեռային մի օր հայրիկս այդպես էլ հեռացավ. լուսավո՛ր, հանգի՛ստ, խաղա՛ղ:– Այնպես, ինչպես ոչ երկարատև իր կյանքն էր ապրել:

Երեսունհինգ տարվա հիվանդությունից հալումա՛շ, իսկ վրաց-աբխազական պատերազմից հետո՝ համայա անկողնուն գամված՝ նա չգիտեր, որ քիչ առաջ Սուխումի կլինիկական հիվանդանոցում, վիրահատության ժամանակ, մահացել է իր ավագ եղբայրը՝ Վարդանը…, և ես նրա դին հայրենի գյուղ՝ Մաճարա եմ տարել:

Վիրաբույժ Հարություն Չաքրյանը՝ իմ լավ ծանոթը, այդպես էլ ասել էր.

– Հորեղբայրդ մահանում է… Վիրահատենք, գուցե փրկենք հրաշքով…

Բայց հրաշք չեղավ… Եղավ վատթարագույնն ու սպասելին:

Հայրիկս եղբոր հիվանդության մասին ոչինչ չգիտեր, այդ մասին նրան ոչ ոք ոչինչ չէր ասել… Բայց հոգով ու սրտով զգացել էր սիրելի ավագ եղբոր հեռացումն ու տնեցիներին հաղորդել.

– Ես պիտի գնամ Վարդանի մոտ, նա կանչում է ինձ, նա սպասում է ինձ… Ես արդեն պատրաստ եմ… Ես

պիտի ընկնեմ ճանապարհ… Ես շուտով կտեսնեմ իմ ավագ եղբորը…

Հետո նա կանչել էր թոռնիկներին՝ 7-ամյա Սուսանին ու 5-ամյա Հայկին, և խնդրել բանաստեղծություններ արտասանել, երգել…

Այդպես էլ ճանապարհ էր ընկել նա՝ հայոց իմաստուն խոսքի ու երգի սիրահարը, հայոց իմաստուն խոսքի ու երգի ուղեկցությամբ…

Իսկ դրսում ձմեռ էր, և ծառերը ծաղկել էին խենթաշռա՛յլ…

Այսօր ոչ ոք չի կասկածում, որ նրա հոգին դրախտում է, քանզի աստվածային են հայոց խոսքն ու երգը…

*«Ծառերը ծաղկե՛լ են: Ձմե՛ռ է…»*

*Հետգրություն*

Կոմիտասի «Ես սարէն կուգայի» երգը միայն մեկ անգամ էր երգել հայրիկս… Գոնե ես մեկ անգամ եմ լսել: Ես հիմա չեմ հիշում, թե ինչ առիթով: Թեև նման երգի համար մի՞ թե առիթ էր պետք:

Նման երգերը մարդու հոգում են լինում ու պոռթկում հանկարծ, ինքնիրեն՝ ամեն ինչ տակնուվրա անող երկրաշարժի հանգույն:

Այնքա՜ն տխուր էր այդ երգը, այնքա՜ն հոգեցունց, որ անգամ լսելո՛ւ համար ուժ պիտի ունենաս, ուր մնաց թե՝ երգե՛ս…

Միայն մեկ անգամ երգեց հայրիկս ու ասաց.

– Էլ չեմ երգելու այս երգը, կվառվեմ-կհալվեմ…

Նա չասաց, որ երգելու համար ուժ է պետք ունենալ: Նա ասաց.

– Երգելու համար սի՛րտ պիտի ունենաս…

*Ես սարեն կուգայի,*
*Դուն դուռը բացիր,*
*Ձեռդ ծոցդ տարար,*
*Ա՛խ, արիր լացիր:*
*Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառվում եմ,*
*Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալվում եմ…*

## 2. ԿՈՒՅՐ ԱՆՁՐԵՎ ԿԱՄ ԱՐՋԻ ՊԱՐ

Ես անձրև չէի սիրում, որովհետև անձրոտ օրերին հայրիկս աշխատանքից վերադառնում էր թաց ու ծանր կոշիկներով և հոգնած նստելով վառարանի մոտ՝ հանում գուլպաներն ու չորացնելու փռում հատուկ դրա համար սենյակի անկյունում վառարանի վրա քաշված պարանից: Ես տեղավորվում էի հատակին, հայրիկիս ոտքերի մոտ:

Նա ցրտից կապտած ձեռքերն ու ոտքերն էր տաքացնում:

Վառարանից ճարճատող ուրախ ջերմությունից գուլպաները քիչ-քիչ սկսում էին թեթև գոլորշի արձակել՝ չորանալ: Եվ չորացմանը համընթաց՝ պարանը ձգվելով բարձրանում էր վեր, պրկվում:

Ես անձրև չէի սիրում, ես սիրում էի համազարկի պես հանկա՛րծ «կույր անձրևը»,–

երբ պայծառ, արևոտ օրն անսպասելիորեն՝ կուրորեն սկսում էր մարգարտահատիկ տեղալ, խոշո՛ր ու լուսավո՛ր, բազմերա՞ն ... և մենք այդ փոքրիկ ճառագայթող արեգակները հատիկ առ հատիկ, ծըլը՞նգ առ ծըլը՞նգ, հավաքում էինք մեր ափերում,

երբ թեթև շաղվող գոլորշի էր ալի՛ք-ալի՛ք բարձրանում հողից (հայրիկիս չորացող գուլպաներից ձգվող գոլորշու նման), և այդպես էլ թեթև՛-թեթև՛ շաղվելով տարածվում էր նրա խոնավ բույրը,

երբ ծիածանը գույնզգույն-գույնզգույն կորաձգվելով՝ բռնում էր ամբողջ երկնակամարն ու այն կապում մայր հողի հոգու հետ:

Կույր անձրևը նաև «արջի պար» էր կոչվում, բայց ես մինչև այսօր էլ չգիտեմ, չեմ հասկացել, թե ինչո՞ւ՝ հատկապես «արջի՛ պար» ու նաև «կույր անձրև»...

Մայրիկս էլ չգիտեր այս հարցի ստույգ պատասխանը, թեև մեր ժողովուրդը սիրուն զրույց է հյուսել բնության այս գեղեցիկ երևույթի մասին՝ յուրովի իմաստավորելով նրա խորհուրդը:

…Մայրիկս ասում էր, որ եթե մեկն «արջի պարի» ժամանակ անցնի ծիածանի տակով, անպայման երջանիկ կլինի: Այն ժամանակ ես համոզված էի, որ հորեղբայր Կարենն անշո՛ւշտ ծիածանի տակով էր անցել, որովհետև նա երջանիկ մարդ էր՝ ուրա՛խ, կատակասե՛ր և, որ ամենակարևորն էր, «Մոսկվիչ» մեքենա ուներ: Եվ դա ամենամեծ երջանկությունն էր:

Հիշում եմ տատիկիս զրույցն այն մասին, որ շա՛տ ու շա՛տ տարիներ առաջ, երբ մեր նախնիները դեռ ապրում էին մեր աստվածատուր հողում, հայրենի Աղրիտ գյուղում ահավոր երաշտ է սկսվում – հողը ճաքճքում էր ծարավից, չորանում էր բուսականությունը, և եթե այդպես շարունակվեր, մահասփյուռ սովը դաժան թշնամու նման կխուժեր յուրաքանչյուր տուն, յուրաքանչյուր օջախ՝ չխնայելով փոքրին ու մեծին, էլ չխոսելով անասունների մասին, կչորանային խնամված այգիներն ու արտերը … Կփրկեր միայն անձրևը, առա՛տ, բարի՛ ու շռա՛յլ անձրևը:

Եվ մարդիկ հույսով երկնքին են հառում իրենց հայացքն ու սպասո՛ւմ: Սպասո՛ւմ են՝ հուսալով, հավատալով, աղոթելով… Իսկ ուրիշ էլ ի՞նչ կարող էին անել՝ սպասելուց, հուսալուց, հավատալուց ու աղոթելուց բացի: Խե՛ղճ մարդիկ:

Եվ ահա ամառային մի անտանելի շոգ օր հանկարծ հորդառատ անձրև է տեղում…

Զարմանալի ու հիասքա՛նչ. արև ու անձրև, և գյուղի վրա կամարակապ կորաձիգ ծիածան է կապվում…

Ռանչպարներն ուրախությունից սկսում են պարել անձրևի տակ – խրոխտ ու թափով և այնպե՛ս, որ հողն է նրանց ոտքերի տակ դղրդում-դողում…

Ո՛ւ այնքան ծանր է դղրդում հողը, որ պարն «արջի պար» են կոչում…

– Տնաշեննե՛ր, ուրախությունից աշխարհն եք քանդելու… Հիրավի, ճիշտ են ասել մեր իմաստուն մեծերը, որ արջին խնդրել են պարել, իսկ նա էլ ելել ու տո՛ւնն է քանդել…

Ու այդ օրվանից արևոտ անձրևը կամ անձրևոտ արևը կոչվում է նաև «արջի պար», որը ժողովրդի հիշողության մեջ որպես հոմանիշ է մնում «կույր անձրևին»:

Բայց սա ընդամենը զրույց է:

Եվ ես չգիտեի՝ հավատա՞լ, թե՞ չհավատալ:

Բայց մի՞ թե զրույցներն իրական հիմք չեն ունենում:

Ինչպես, օրինակ, տատիկիս այն գեղեցիկ զրույցը, որը տարիներ հետո պիտի գրի առնեի որպես «Եղելություն իմաստության ծառի և կամքի աղբյուրի մասին»:

Եվ մենք ընկերներիս հետ վազո՛ւմ էինք ու վազո՛ւմ, որպեսզի հորեղբայր Կարենի պես հասնենք ծիածանին… Բայց դա մեզ երբեք չէր չհաջողվում, քանզի ծիածանը նույն արագությամբ էլ փախչում էր մեզանից, և չարաճճի՛՝ ձեռ առնելու նման՝ ո՛չ մոտ էր թողնում, ո՛չ էլ հեռանում… Եվ երբ մենք հուսախաբ վերադառնում էինք՝ նա՛ էր շտապում մեր ետևից՝ կարծես ուզում էր մեզ հասնել ու ասել՝ բա մարդ էլ այդպես շուտ հուսահատվի՞: Եվ այդ խելահեղ վազքը շարունակվում է իր նման խելահեղ մեր ամբողջ կյանքում:

…Շատ տարիներ հետո, անսպասելիորեն «կույր անձրև» տեղաց իմ հոգում, ու այնտեղ էլ իր կամարը կապեց երջանկության ծիածանը…

…Ընթերցվող վիպակի «Հորեղբայր Կարենը» գըլխում մենք կպատմենք այն մասին, որ մայրիկս ու հորեղբայր Կարենի կինը՝ Հնչակ մորաքույրը, «իրենց կաշվի վրա զգացին վրաց-աբխազական պատերազմի ամբողջ ահավորությունը»:

Ամեն ինչից բացի, խոսքը նաև խմելու ջրի մասին է, ավելի ճիշտ՝ նրա բացակայությա՛ն, որովհետև վաղուց չէր աշխատում քաղաքի ջրամատակարարման կենտրոնական համակարգը…

Ու նաև շատ ուրիշ համակարգեր չէին աշխատում վրաց-աբխազական պատերազմի ժամանակ:

Բայց ամենակարևորն ու սարսափելին այն էր, որ խաթարվել էր «մարդկային հարաբերությունների համակարգը»:

Առաջին հայացքից թվում էր, թե մեր փողոցի բնակիչները ջրի պակաս չպիտի ունենային, որովհետև նրանց աչքի առաջ մեծացած, նրանց տանը բազմաթիվ անգամ հաց կտրած հարևան Բուխութին ջրատար մեքենայի վրա էր աշխատում, և ամեն օր աշխատանքից հետո նրա՝ ջրով լեփ-լեցուն ԶԻԼը հռնդալով գալիս կանգնում էր մեր փողոցում… Բայց Բուխութին հայերին ջուր չէր տալիս… Նրա համար հայերը, աբխազներն ու ռուսները գոյություն չունեին. նրանք պարզապես տեղ չունեին «ազատ ու անկախ Վրաստանում»: Բուխութիի ջուրը միայն վրացիների համար էր: Ընդամենը մեկ անգամ մայրիկս և հնչակ մորաքույրը ստիպված ջուր խնդրեցին նրանից հիվանդ հայրիկիս համար, բայց կոպիտ ու թունոտ՝ հայհոյախառն մերժում ստանալով՝ ձեռնունայն վերադարձան տուն և այլևս երբեք չդիմեցին նրան և ոչ մի խնդրանքով:

Քաղաքում մնացած սակավաթիվ հայերը մեքենա չունեին, որպեսզի ջուրն այլ վայրերից բերեին. նրանց մեքենաները պատերազմի առաջին իսկ օրերին խլել-տարել էին վրացական «գվարդիականները»…

Իրենց բազմապիսի կենցաղային կարիքները հոգալու համար հայերը հիմնականում անձրևաջուր էին օգտագործում. երբ անձրև էր գալիս, լցնում էին դույլերը, բաքերը, տարբեր տարողության բալոնները…

Անձրևաջրի պաշարն սպառելուց հետո մերոնք ջուրը բերում էին մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող ջրհորից, որի հատակը ծածկված էր հագեցած կրով… Ջուրը չպղտորելու համար զգուշորեն բարձրացնում էին դույլը, լցնում թեյնիկներն ու առանց ժամանակ կորցնելու վերադառնում տուն, քանզի հայերի համար դրսում երկար մնալը շատ էր վտանգավոր՝ կարելի էր թմրամոլ գվարդիականների զոհը դառնալ… Իհարկե, մեր հարևաններից բացի նաև ուրիշներն էին օգտվում ջրհորի «ծառայությունից», և նրանց միահամուռ «ջանքերով» ջուրը հետզհետե պղտորվեց ու վերջիվերջո վերածվեց կիր ու ցեխի

թանձրիկ շաղախ-խառնուրդի, որն արդեն պիտանի չէր օգտագործման համար:

Իմ ընթերցողն արդեն գիտի, որ ես մանկությունից անձրև չէի սիրում... Բայց պատերազմի ժամանակ հավատացյալի պես աղոթում էի, որ անձրև գար, քանզի նա մեր միակ փրկությունն էր, մեր միակ հույսը:

Եվ նույնիսկ այն ծանր օրերին ես չէի կորցնում ոչ միայն իմ ոգու արիությունն ու հումորի զգացումը, այլև երգիծական գրառումներ էի անում ու հաճախ կարդում ծնողներիս համար: Օրինակ, հետևյալ տողերը նվիրել եմ դատարկախոս Թամազ Նադարեիշվիլուն՝ ինքնավար Աբխազիայի նախարարների խորհրդի նախագահին.

*Դուք ասացվածքն եք հաստատում այն, որ*
*Առանց չարիքի բարիք չի լինում.*
*Եվ այս ջրասուղ օրերին ցավոտ*
*Ձեր խո՛ր ճառերի ջուրն է մեզ փրկում...*

Ես չէի մոռանում նաև մեր այն ազգային «գործիչներին», որոնք պատերազմից առաջ հանրապետության հայ հատվածի խնդիրներն իրենց կյանքի գնով լուծելու երդում էին տալիս բարձր ամբիոններից, սակայն պատերազմն սկսվելուց հետո նրանց ձենուձունը կորա՜վ՝ չէր լսվում.

*Որտե՞ղ եք, ա՛ո՛ւ, ո՞ւր եք դուք կորել,*
*Ճագարների պես որտե՞ղ անաղմուկ*
*Ականջներն եք ձեր խլշկոտ սրել...*
*Թե՞ արդեն այստեղ դուք չկաք վաղո՜ւց:*

Անշուշտ, պատերազմի ավարտից հետո հայտնվեցին արդեն առյուծ դարձած «ճագարները»:

«Առյուծաճագարնե՛ր» – երևի այսպես կասեր մեծն Ֆազիլ Իսքանդերը:

Իմ՝ վրացական գվարդիականների վայրագությունների մասին փաստագրական մանրապատումներից մի քանիսը լույս տեսան տարբեր պարբերականներում: Այսպես, «Մինչև ե՞րբ պիտի քանդվի մեր տունը» հոդվածս տպագրվեց Երևանի «Ազատամարտ» թերթի 1992 թ. սեպտեմբերյան համարում:

## 3. ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԾԱՌԻ ՈՒ ԿԱՄՔԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ
**(միջանկյալ պատմություն –1)**

*Թոռնուհուս՝ Սոֆիայի համար*

Իմ սիրելի թոռնուհի:

Ես այսօր քեզ եմ փոխանցելու այն հարստությունը, որն իմ տատիկից եմ ժառանգել ու աչքի լույսի պես պահել-պահպանել իմ սրտում, ահա արդեն, պատկերացնո՞ւմ ես, հիսուն տարի:

Ոսկի չէ, թեև ոսկու անթառամ փայլ ունի և հիսուն երկա՛ր տարիների ընթացքում ավելի՛ է առաքինացել ու վեհացել…

Ասում են, այդպես Նոյ Նահապետի հայոց արեգակնացայտ անարատ գինին էր տարիների հետ ինչքան հնանում, այնքան ազնվանում ու քաղցրանում՝ ամփոփելով արեգակի կենարար ուժն իր խորքերում փոթորկվող կրակների մեջ:

Եվ իմ գանձն էլ ոգեղեն գինի է – գի՛ժ, ծո՛ւռ, խե՛նթ:

Գանձն իմ … լեգե՛նդ է՝ սերնդեսերունդ սրբությամբ փոխանցվող ու պահպանվող՝ որպես բնութագիր, որպես հարատևության վկայագիր, ու նաև՝ հավատ, նաև հույս, նաև, մի խոսքով, այն ամենը, ինչն ինքնություն է կոչվում:

Բայց սպասի՛ր, իմ սիրելի թոռնուհի:

Իսկ ինչո՞ւ եմ ես համառորեն կրկնում հա՛ կրկնում՝ լեգենդ է ու լեգենդ:

Ախր ես հիմա չե՛մ հավատում լեգենդների, հեքիաթների, զրույցների:

Լեգենդները, հեքիաթները, զրույցները – առա՛ջ էին լեգենդներ, հեքիաթներ, զրույցներ,– առաջ, հազա՛ր տարի առաջ:

Այո՛, մի զարմանալի հատկությամբ ժամանակի ընթացքում լեգենդը, զրույցը, հեքիաթը՝ հայոց արեգակնացայտ գինու նման մաքրվելով, դառնում են եղելություն:

Հիմա ինձ համար լեգենդներ, զրույցներ, հեքիաթներ չկան:

Կա միայն ու միայն եղելություն՝ վեհացնող ու ապրեցնող:

Մի՞ թե լեգենդ, հեքիաթ կամ էլ զրույց կարող է լինել այն, որ դարեր շարունակ թշնամիները փորձել են բռնի ուժով, յաթաղանի ու հրացանի զորությամբ, իրենց ենթարկել մեր ազատատենչ ու ստեղծարար նախնիներին, որոնց արահետներն անցնում էին մահասարսուռ անդունդների վրա գլխիվայր կախված՝ հաղթահասակ ծառերի կատարներով:

Մի՞ թե լեգենդ, հեքիաթ կամ էլ զրույց կարող է լինել այն, որ դարեր շարունակ մեր ազատատենչ ու ստեղծարար նախնիները հերոսաբար դիմադրել են թշնամիներին:

Իմ սիրելի թոռնուհի:

Այստեղ ցանկացած բառ ճշմարտություն է, որը դու պիտի գիտենաս անպայման:

Ասա՛ինձ, մի՞թե ճշմարտություն չէ, որ շրջապատված իրենց տասնապատիկ անգամ գերակշռող արնախում թշնամիներով՝ մեր նախնիները դիմադրել են համառ ու անձնազոհ, և երբ արդեն հացի մի կտոր իսկ չէր մնացել, և առավելագույնս տանջում էր ծարավը, մի պահ անգամ չեն մտածել հանձնվելու կամ մահանալու մասին՝ իրենց կյանքի գնով հաստատվելով իմ «Առաջվանը չենք» բանաստեղծության մեջ.

Ապրելու համար մենք այսօր կապրե՛նք…

Այո՛, միայն և միայն ապրե՛լ – թեև իմ նախնիների՝ թշնամիներով շրջապատված Աղրիտ գյուղում պարեն չկար արդեն, սպառվել էին ջրի ամենավերջին ու ամենաթանկ կաթիլները:

Եվ սովից առավել չարչրկին պատուհասում էր ծարավը.

– Ջո՛ւո՛ւր, միայն մի կում ջո՛ւո՛ւր…

Եվ մարդկանց պապակ շուրթերը ճաքճքելով պայթում էին ու տառապագին արնահոսում.

– Ջո՛ւո՛ւր, միայն մի կում ջո՛ւո՛ւր…

Իսկ ամենասարսափելին թերևս այն էր, որ արդեն մարդկանց ոչ միայն աչքերն էին մթագնում, այլև՝ մի՛տքը:

Դա ահավոր է, երբ մարդու միտքն է մթագնում, մարդու միտքը միշտ էլ պիտի առողջ լինի, լուսավոր, իսկ դատողությունը՝ սթափ…

Եվ հանկարծ, այդ օրհասական պահին, Աղրիտի՝ սովից ու ծարավից տառապող պաշտպանների մեջ մի Ազնվազարմ ծերունի է հայտնվում –

Հայոց աշխարհի լեռների պես պարթևահասակ,

Մասիսի ձյան պես սպիտակ մազերով,

Սևանի ջրերի պես կապտախորունկ աչքերով:

– Սիրելի ժողովո՛ւրդ,– դիմում է նա աղրիտցիներին,– մեր միակ փրկությունը մեր Մայր հողի մեջ է: Մեզ կարող է փրկել միայն Մայր հողը: Ա՛յն հողը, որը դարեր շարունակ սնել է մեզ, ուժ ու կորով է ներարկել մեզ… Նա կաթիլ առ կաթիլ անմնացորդ լուծել է մեր արյան, մեր էության մեջ իր վեհապանծ ոգին ու … կաթիլ առ կաթիլ սպառվե՛լ… Նա դարեր շարունակ ոգեշնչել է մեզ: Իսկ հիմա այն սրբագույն պահն է հասել, երբ Մայր հողն է կարոտ մեր անձնազոհությանը…

Եվ հուսահաստատ բացականչություններ են լսվում չորս կողմից.

– Մենք ամեն ինչ կանենք հանուն Մայր հողի…

– Ասացե՛ք, իսկ ի՞նչ է պետք անել…

– Ապրելու համար պատրաստ ենք անգամ մեռնե՛լ…

Ազնվազարմ ծերունին բարձրացնում է իր գավազանը, և ակնթարթապես տիրում է սպասողական լռություն:

– Ձավակնե՛րս,– խախտում է լռությունը Ազնվազարմը,– ապրելու համար մեռնել պետք չէ, ապրելու և ապրեցնելու համար պետք է ընդամենը … անմահանա՛լ: Եկել է ապրեցնելու համար անմահանալու սրբազան պահը: Իմ խոսքն այն մասին է, որ այսօր մենք պիտի

Մայր հողին ուժ տանք, որպեսզի ուժավորված Մայր հողն էլ իր հերթին կարողանա մեզ ապրեցնել…

Ծանրախոհ լռում է մի պահ Ազնվազարմը, ապա շարունակում հոգուց՝ ասես հողի ընդերքից աղբյուրի պես բխող խոստովանություն-բառերով.

– Ինձ Մայր հողն է կանչում: Ես հստակորեն լսում եմ նրա կանչը: Եվ ես պիտի նրան վերադարձնեմ այն, ինչը նա՛ է ինձ տվել – Իմաստությո՛ւնը: Բայց դա քիչ է: Նույնը պիտի ինձ հետ կատարի նաև ձեզանից երիտասարդ մեկը – նա՛, ով ինձ պես հիմա հստակորեն լսում է Մայր հողի կանչը: Նա պիտի վերադարձնի Մայր հողին այն, ինչը Մայր հողն է նրան շնորհել – Կա՛մքը: Մենք պիտի մեր մեջ ամփոփված Իմաստությունն ու Կամքը պարփակենք Մայր հողում:

Եվ նորից լռում է Ազնվազարմը՝ իմաստուն հայացքը հառելով կարոտած Մայր հողին: Իսկ հետո բարձրացնելով հայացքը՝ հարցնում՝ ցածրաձայն, արդար ու շիտակ.

– Կա՞ ձեր մեջ Մայր հողի կանչը լսող երիտասարդ: Եթե կա, նա պիտի ինձ հետ այսօր ողջ-ողջ թաղվի Մայր հողում՝ նրան հաղորդելով իր աննկուն Ոգին, անկոտրում Կամքը…

Եվ աղրիտցիների մեջ անշո՛ւշտ կար Մայր հողի կանչը լսող *այդպիսի* երիտասարդ, որն իր մեջ ամփոփված աննկուն Կամքն ու անսպառ Ոգին պատրաստ էր պարփակել Մայր հողում՝ նրան հանձնելով իր սրտի մաքուր ու հստակ տրոփյունը:

***

Իմ սիրելի թոռնուհի:

Ես չեմ պատմելու, թե ինչպես դա տեղի ունեցավ:

Ճիշտ ասած՝ դա այնքան էլ կարևոր չէ:

Կարևորն այն է, որ Ազնվազարմ ծերունին և անձնազոհ երիտասարդը … չե՛ն մահանում ապրելու և ապրեցնելու համար:– Ապրելու և ապրեցնելու համար նրանք *անմահանո՛ւմ են*:

Կարևորն այն է, որ նրանց թաղման տեղում աճում է մի հսկա ընկուզենի, իսկ արմատների տակից բխում է մի մաքո՛ւր-մաքո՛ւր աղբյուր:

Խմում են աղրիտցիներն այդ մաքուր-մաքուր, կլկլան ջուրը և զգում, թե ինչպե՛ս է սկսում լուսավորվել իրենց Միտքը, ինչպես են սկսում ամրապնդվել-հաստատվել իրենց Կամքն ու Ոգին:

Եվ ահա, անհաղթ ու խրոխտ՝ նրանք դուրս են գալիս իրենց գյուղից և կոտորելով քշում թշնամուն ու հաղթական երգերով վերադառնում տուն:

Իհարկե, այդ մասին կարելի է մի ամբողջ հերոսապատում գրել, իսկ ավելի ճիշտ՝ գրի առնել, որովհետև այդ հերոսապատումը կա՛, որովհետև այն ստեղծել են մեր իմաստուն ու խիզախ նախնիները և փոխանցել սերունդներին:

Ու՛ր ահա հաղթական երգերով վերադառնալով ետ՝ տուն՝ հանգստանալու են նստում իրենց հսկա ընկուզենու տակ, այնքա՜ն հսկա, որ Աղրիտի բոլոր պաշտպանների համար էլ տեղ է գտնվում շվաքում, և երբ բացում են ընկուզենու բարը, զարմանքով տեսնում են, որ նման է … մարդու երկգունդ ուղեղին:

Եվ այդ օրվանից մեր նախնիները ընկուզենուն անվանում են Իմաստության ծառ:

***

Իմ սիրելի թոռնուհի:

Ականատեսները վկայում են, որ Տրապիզոնի Աղրիտ գյուղում հիմա էլ կա մեր պարթևահասակ, փարթամ Իմաստության ծառը:

Իսկ դու գիտե՞ս, թե ինչպես է, որ մինչև հիմա նա չի տապալվել ո՛չ ամենազոր ժամանակի, և ո՛չ էլ փոթորկի մահացու հարվածներից:

Եթե չգիտես, ասե՛մ.

Իմաստության ծառը մինչև օրս կանգուն է մնացել, որովհետև նրա արմատներն արյան հուժկու երակների

նման տարածվել են Մայր հողում, միահյուսվելով ամուր-ամուր և փաթաթվել դեմ առած հսկա քարերին:

Կա Կամքի աղբյուրը,– նրա մաքրությունը Մայր հողի խորքերից է բխում, նրա ընդերքից:

Մայր հողի հոգուց:

Իսկ դու գիտե՞ս, թե ինչպես է, որ մինչև հիմա նա չի սպառվել, չի ցամաքել:

Եթե չգիտես, ասե՛մ.

Կամքի աղբյուրը մինչև հիմա չի ցամաքել-սպառվել, որովհետև նրա ակունքը *այն* երիտասարդի ոգին է, որը կոհակ-կոհակ, սրտի զարկերի պես՝ կենդանություն է հաղորդում մեր լեռնաշխարհին, որտեղ արահետները ծառերի կատարներով են անցնում՝ գլխիվայր կախվելով մահասարսուռ անդունդների վրա:

Ծառի կանաչ խշշոցն ու աղբյուրի հայրենաբարբառ կարկաչը որպես սուրբ նշխար փոխանցվում են դարեդար ու սերնդեսերունդ, նաև՝ սրտեսիրտ:

Ես հիմա քեզ եմ փոխանցում այդ հարստությունը, այդ գանձը, որը քոնն է, միայն քո՛նը:

Իսկ դու որոշիր – լեգե՞նդ է պատումն այս, թե՞ եղելություն:

## 4. ՀՈՐԵՂԲԱՅՐ ԿԱՐԵՆԸ

Ես էլ համարյա իմ բոլոր հասակակիցների նման ավտոմեքենա շատ էի սիրում, ինչպես ասում են՝ ավտոն իմ կյանքի թուլությունն էր դեռ «էն գլխից»: Բայց, որքան էլ տարօրինակ ու զարմանալի չթվա, ես այդպես էլ մեքենա չունեցա, պարզապես չցանկացա ունենալ:

Կտրականապես չցանկացա ու վերջ…

Ծնողներս էլ շատ էին գոհ դրա համար: «Տե՞ղ ունես գնալու,– հարցնում էր հայրիկս ու ինքն էլ պատասխանում,– կա տաքսի, տուր երկու ռուբլի և սիրտդ ո՛ւր քաշի՝ քշի գնա՛»: Նա երբեք չհետաքրքրվեց, թե ինչո՛ւ, ի՛նչ պատճառով եմ կտրականապես հրաժարվել

մեքենա ունենալու այնքան գայթակղիչ ու տարիներ շարունակ փայփայածս երազանքից, երբ մեր բոլոր հարևաններն արդեն մեքենայատեր էին դարձել, բացի Աշոտ Հովհաննիսյանից:

Հայրիկիս համար կարևորն այն էր, որ ինձ ավտոներն այլևս չէին հետաքրքրում, և մայրիկս լիովին կիսում էր նրա կարծիքը:

Մանկությանս տարիներին ես գժի նման պաշտել եմ մեր հարևան հորեղբայր Կարեն Կաբասաքալյանի ստալինյան մուգ կապտագույն «Մոսկվիչը» , որովհետև այն տարիներին մեր թաղամասում այդ «Մոսկվիչից» բացի ուրիշ մեքենա չկար:

Ներեցեք, քիչ էր մնում թյուրիմացության մեջ գցեի ձեզ. ճիշտ ժամանակին հիշեցի, որ Հորս քեռու Վահանն էլ մի գունաթափ անդուռ «Վիլիս» ուներ, որի խարխուլ, այրված-ծակծկված խլացուցիչը, հակառակ իր նշանակության, բազմապատկում էր շարժիչի՝ հեռու հեռվից լսվող հռնդյունը՝ մեր ցնծությունից բացի ծնելով նաև կանացի բազմապիսի երանգածեփ անեծքներ:

Հորս քեռու Վահանը (այս բառակապակցությունը օգտագործվում էր որպես հատուկ անուն) հաճախ էր մեզ հյուր գալիս կնոջ՝ Վարյակի և որդու՝ Մըգըրի հետ: Այն էլ ասենք, որ այդ «Վիլիսով» նա պատվերով վառելափայտ էր բերում լեռներից ու անտառներից՝ գնորդներին չկորցնելու համար էժան գնով ծախելու:

Նա նաև երկու 4-մետրանոց ռելս էր բերել երկաթուղային կայարանից, որոնք մեր դարպասի սյուները դարձան և մինչև օրս էլ ծառայում են հուսալիորեն:

Բավականին ուշ մեր փողոցում հայտնվեցին հարեվաններ Վաղարշակ Քեհյանի և Տիգրան Սուրմենելյանի «Վոլգաները»՝ պլպլան եղնիկով: Իսկ դա արդեն մարտահրավեր էր նշանակում. դիմանալը վեր էր իմ կամքից, և ես մի երեկո պահանջելու պես խնդրեցի, որ հայրիկս շուտով մեքենա գնի՝ «անպայման պլպլան եղնիկը կապոտին»: Երևի իմ խնդրանքը շատ էր թախանձագին, որովհետև հայրիկս չդիմանալով՝ մի օր

հանդիսավոր նստեց խոհանոցի սեղանի մոտ և մի շնչում երկէջանոց նամակ գրեց ... քեռի Նիկիտա Խրուշչովին, մտքում ուշադիր կարդաց, ապա այն եռանկյունածալեց Հայրենական պատերազմում կորած Հայկ քեռուցս ստացված միակ նամակի նման ու տվեց ինձ:

Եվ այդ գիշեր ես հանգիստ ու երջանիկ քնեցի՝ նամակը բարձիս տակ:

Չեմ պատմելու այն մասին, թե ի՞նչ գեղեցիկ երազ տեսա այդ գիշեր – այդ գերագույն հաճույքը թողնում եմ ընթեցողիս վարդագույն երևակայությանը: Միայն ասեմ, որ ես այդ նամակը ցույց էի տալիս մեր հարևաններին ու բարեկամներին և մեծավարի բացատրում, որ մենք էլ շատ շուտով «Վոլգա» կունենաք՝ պլպլան եղնիկը կապոտին»: Ես քնում էի նամակը սրտիս սեղմած ու այդ նամակով էլ արթնանում էի:

Մի անգամ մեր հարևան Լևոն Սարգսյանը հետաքրքրքրվեց, թե ինչո՞ւ նամակը չեմ ուղարկում: «Որովհետև կարող են կորցնել,– լրջորեն պատասխանեցի ես:– Երբ հորեղբայրս գնա Մոսկվա, տանելու է հետը»:

Խոսքը իմ հորեղբայր Արշավիրի մասին էր. ես նրան շատ էին սիրում և նամակը միայն նրան կվստահեի:

Եվ ահա մի օր հորեղբայրս այցելեց մեզ և ասաց, որ եկել է նամակը տանելու, որովհետև զորակոչվել է և անցնելու է Մոսկվայով, հնարավոր է, որ հենց այնտեղ էլ ծառայի:

Վերջապե՛ս... Ես շատ խնդրեցի, որ նամակն ինքը հանձնի Խրուշչովին, ոչ ոքի չվստահի այդ կարևորագույն առաքելությունը: Հորեղբայրս խոստացավ ու բանակից գրած հենց առաջին նամակով հայտնեց, որ ամենայն պատասխանատվությամբ կատարել է իմ խնդրանքը:

Բայց իմ չար բախտից Խրուշչովին շուտով հանեցին աշխատանքից, և ով գիտի, թե հիմա իմ նամակը Կրեմլի որ արխիվային գաղտնի սենյակում է անտեր-անտիրական փոշոտվում...

Հորեղբայր Կարենը բարձրահասակ էր, թիկնեղ ու անչափ բարեսիրտ: Մաքրամաքուր հոգու տեր մարդ էր

նա, ինչպես ասում էին նրան լավ ճանաչողները՝ շա՛տ մեծ սիրտ ուներ. և, իհարկե, պիտի բարձրահասակ ու հաղթանդամ լիներ, այլապես այդքան մեծ սիրտն ինչպե՞ս էր տեղավորվելու սովորական մարմնի մեջ, այդքան բարությունն ինչպե՞ս էր ամփոփվելու սովորական մարդու հոգում:

Նա մեր՝ թաղի տղաներիս, բարեկամն ու հուսալի պաշտպանն էր, ինչպես ասում էին մեր մեծերը՝ մեր «ակուբատը[1]», երբ ֆուտբոլի գնդակն ամբողջ թափով հայտնվում էր հարևանների տնամերձում կամ ջարդուփշուր էր անում պատուհանների ապակիները, կամ էլ փոթորկի նման ավերածություններ թողնում ծաղկանոցներում (ֆուտբոլը մեր ամենասիրած խաղն էր, մենք հպարտանում էինք մեր փառապանծ համաքաղաքացիներ Նիկիտա Սիմոնյանի, Սարգիս Հովիվյանի հաջողություններով՝ թաքուն երազելով դառնալ նրանց պես հայտնի ֆուտբոլիստ): Նա վերականգնում էր այն ամենը, ինչը կարելի էր նորոգել. պարզ է, որ դրանք հիմնականում պատուհանների ապակիներն էին լինում, իսկ կոտրտված-ջարդոտված ծաղիկներն ու տնկիներն ինչպե՞ս վերականգներ: Եվ այդ ծանր պահին նա կարողանում էր բարի ու քնքույշ խոսքով ծաղկանոցի տիրուհու սիրտն առել, փափկացնել…

Ամենակարևորն այն էր, որ մեր «օյինբազությունների» ժամանակ նա տանը լիներ: Հակառակ դեպքում մենք պիտի կայծակնային արագությամբ չքվեինք թաղից ու համբերությամբ սպասեինք մեր «ակուբատին»:

Հորեղբայր Կարենը լավ հարևան էր: Հենց նրա մասին է ասված. «Հարևանն արևից առաջ է»: Եթե դրկիցներից մեկն ինչ-որ աշխատանք էր ձեռնարկում, նա առանց հրավերի շտապում էր օգնության, անհրաժեշտության դեպքում՝ սեփական աշխատանքային գործիքով…

Մարդատար ավտոբուսի փորձառու վարորդ էր նա, երկար տարիներ աշխատել էր Սուխումի ավտոտրանս-

[1] *Ակուբատ – адвокат բառի աղավաղված ձևն է:*

պորտային կայանում: Մեզ հաճախ էր քաղաքամերձ Գումիստա ավան տանում՝ նույնանուն գետում լողալու, կամ այլ տեսարժան վայրերում զբոսնելու… Երբեք չըմերժելով մեր խնդրանքը, աշխատում էր ընդառաջել, օգնել, ինչպես ասում են՝ մեր «սիրտը շոյել»:

Աշխատանքից չուշանալու համար նա վաղ էր արթնանում, ժամը 5-ին արդեն ոտքի վրա էր լինում և շտապում էր բացել փայտաշեն գարաժի երկփեղկ դուռը:

Չգիտեմ, ես հորեղբայր Կարենից շո՞ւտ էի արթնանում, թե՞ ոչ, բայց սովորությանս համաձայն՝ իսկույն վազում էի գարաժի մոտ և համբերությամբ սպասում, թե երբ է բացվելու երկփեղկը, որը ներսից էր փականվում: Իսկ մինչ այդ հասցնում էի մի երկու հյութալի տանձ ուտել, որոնք առատորեն թափվում էին հարևան քեռի 8-Բորիսի այգուց փողոցի վրա ծանրացած երկու հսկա տանձենիներից…

Եվ երբ վերջապես ճռռոցով ետ էին գնում գարաժի փեղկերը և թմփոցով դեմ առնելով երկկողմանի ցանկապատի ելուստներին՝ համրանում, ես իսկույն վազում էի «Մոսկվիչի» մոտ:

Սկզբում ստուգում էինք շարժիչի յուղի մակարդակը, որն անպայման պիտի համապատասխաներ մեքենայի տեխնիկական պահանջին, հետո՝ ռադիատորի ջուրը, անվադողերը:

Այս նախապատրաստական աշխատանքից հետո հորեղբայր Կարենը բանալին տալիս էր ինձ, և ես ձեռքի թեթև շարժումով միացնում էի շարժիչը՝ տաքացնելու:

Եվ այս արարողակարգը շարունակվում էր հորեղբայր Կարենի ու իմ միջև ընթացող հարցուպատասխանով. հենց որ նա ձեռքը դնում էր մեքենայի ինչ-որ մասի վրա, ես իսկույն պատասխանում էի. բախարգել… լուսարձակ… թափք… հաղորդումների տուփիկ… արգելակման ոտնակ…

Դե, հիմա ասացեք. մի՞ թե այս հիասքանչ պահի համար արժ չէր վա՛ղ առավոտյան արթնանալ ու բարձրանալով տաքուկ անկողնուց՝ քնաթաթախ վազել փողոց:

Եվ սա կրկնվում էր համարյա ամեն օր, բացառությամբ այն օրերի, երբ ես «գրիպ էի ընկնում» կամ ծնողներիս հետ այցելում էի մեր հարազատներին Փըսիրցխա ու Մաճարա գյուղերում:

Այն էլ ասենք, որ հասկանալի պատճառով ես չէի սիրում բացակայել մեր տնից, ճամբար կամ գյուղ գնալ:

Այնուհետև հորեղբայր Կարենն անցնում էր տվյալ պահին ինձ ամենևին չհետաքրքրող գործողությունների. բավականությամբ լվացվում էր պարթևահասակ թզենու շվաքում 200-լիտրանոց բաքից ծորող սառնորակ ջրաշիթի տակ, պարտադիր թրաշվում էր, նախաճաշում՝ չմոռանալով ինձ էլ հրավիրել, ապա առույգ ու կայտառ՝ Հնչակ մորաքրոջ հետ նստում սրճախումի, ինչը սուրբ արարողակարգ էր մեր կողմերում:

Եվ այս ամբողջ ժամանակահատվածում ավտոմեքենայի շարժիչն անընդհատ աշխատում էր, համարյա անլսելի, անխափան ու համաչափ, ինչպես ասում էին վարորդները՝ «ժամացույցի պես»: Հորեղբայր Կարենի մեքենան պիտի սարքուկարգին լիներ, ամեն ինչը տեղը տեղին, մաքո՛ւր ու պլպլա՛ն: «Պետք է հարգել մեքենայի ինքնասիրությունը»,– ասում էր հորեղբայր Կարենը:

Ես գժվելու չափ սիրում էի բենզինի հոտը. կանգնում էի խլացուցիչի մոտ ու ագահորեն ներշնչում այդ խելահեղ … բո՛ւյրը, որը կենսատու ավիշի նման տարածվում էր իմ երակներում՝ կախարդիչ ու լիացնող…

Այսպես շատ տարիներ հետո ես սիրեցի … տպագրական ներկի հոտը, երբ իմ կյանքն անխզելիորեն կապեցի հայատառ թերթի ու գրքի հրատարակման հետ:

Իսկ դրանից առա՛ջ…

Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես էի շնչում «Սովետսկայա Աբխազիա», «Պիոներ-կանչ» և «Սովետական Վրաստան» թերթերի թարմ համարները, որտեղ տպագրվում էին իմ առաջին թղթակցություններն ու բանաստեղծական թոթովանքները…

Շնչում էի թղթի ու տպագրական ներկի բույրը և զգում, թե ինչպես եմ հրաշալիորեն կորցնում գլուխս…

Ընչում էի, լիաթոք շնչում ու … չե՛մ հագենում ցայսօր… Ահա այսպիսի չխամրող սեր՝ ամբողջ կյանքի տևողությամբ:

Հետո ես դարձա բոլորիս սիրելի թերթի՝ «Պիոներկանչի» ակտիվ պատանի թղթակիցը, ինչի համար էլ 10-րդ դասարանում խրախուսվեցի խմբագրության պատվոգրով, որը ստորագրել էր ինքը՝ գլխավոր խմբագիր Վարդգես Քալանթարյանը:

Ես այսօր էլ խորապես համոզված եմ, որ թերթերն ու գրքերը երբեք չեն փոխարինվի էլեկտրոնային տարբերակով: Թերթն ու գիրքը, ընթերցելուց բացի, պետք է նաև ֆիզիկապես զգա՛ս, շոշափե՛ս, շնչե՛ս:

Իսկ ինչի՞ հետ կարելի է համեմատել բազմոցին կիսապառկած կարդալու գերագույն հաճույքը… (Հիշում եմ, մի ժամանակ մեզ մոտ լույս էր տեսնում «Վեչերնի Սուխում» թերթը, որի գլխագրի տակ տպագրված էր՝ «Թերթ բազմոցին կիսապառկած կարդալու համար՝ արևելյան սուրճով»):

ՈՒ այդ ամենից բացի, մայրիկս ասում էր, որ քնելուց առաջ գիրքն անպայման պետք է դնել բարձի տակ.

– Այդպես գիրքը միշտ քեզ հետ կլինի, նրանից երբեք չես բաժանվի…

Եվ այդ սովորությունը, որի զորությանը հավատացել եմ ոչ միայն մանկությանս տարիներին և համալսարանում ուսանելիս, մինչև հիմա ուղեկցում է ինձ:

Գուցե նաև ա՞յդ պատճառով գիրքը դարձավ իմ կյանքի հավատարիմ ուղեկիցն ու իմաստուն խորհրդատուն…

Երևի արդեն ժամանակն է բացելու իմ՝ տասնամյակների թանձր մշուշի տակ թաքնված գաղտնիքն այն մասին, թե ես ինչու այդպես էլ չգնեցի մեքենա, թեև զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո, երբ աշխատանքի անցա Սուխումի գինու կոմբինատում, պատրաստվում էի սովորել վարորդական դպրոցում, իսկ վկայական ստանալուց հետո 3-րդ մակնիշի «Ժիգուլի» գնել… Ճիշտն ասած, ոչ մի գաղտնիք էլ չկա…

…Ես հրաժարվեցի մեքենա ունենալու մտքից, երբ հորեղբայր Կարենը, թոշակի անցնելուց անմիջապես

հետո թողնելով աշխատանքը (նա այդպես էլ ասում էր՝ «Թոշակի անցնելուս հաջորդ օրը թողնելու եմ աշխատանքս», և ճշգրտորեն կատարեց իր խոստումը), գնեց նոր՝ 6-րդ թողարկման «Ժիգուլի» ավտոմեքենա և շատ չանցած Սոչի գնալիս Խոլոդնայա ռեչկա ճանապարհահատվածում դիմացից եկող բեռնաքաշից ընկած «սիմքար» տիպի երկաթբետոնե լցվածքի տակ մնաց նրանց մեքենան, որը ճզմվեց այդ ահռելի ծանրության ներքո:

Բազմաթիվ ներքին վնասվածք ստացած հորեղբայր Կարենին մեծ դժվարությամբ հանելով մեքենայի սրահից՝ տեղափոխեցին Սուխումի հանրապետական հիվանդանոց… Սակայն, չնայած բժիշկների ձեռնարկած բոլոր անհրաժեշտ միջոցներին, ցավոք սրտի, չհաջողվեց փրկել նրա կյանքը…

Չգիտես ինչ հրաշքով ողջ մնացին մորաքույր Հընչակն ու նրանց կրտսեր թոռնիկ Ռաֆիկը…

Ճիշտ է, վնասվեց մորաքույր Հնչակի ոտքը, և նա մինչև իր կյանքի վերջը ձեռնափայտով էր քայլում՝ համահավասար անիծելով ճանապարհային կանոնները խախտողներին էլ, պատերազմն սկսողներին էլ:

Նա հասցրեց տեսնել վրաց-աբխազական պատերազմն ու իր կաշվի վրա զգաց այդ չարիքի ամբողջ ահավորությունը:

Ահա այս ողբերգական դեպքից հետո ես հրաժարվեցի սեփական ավտոմեքենա ունենալու մտադրությունից:

Իսկ «Մոսկվիչը» տարիներ հետո՝ անցած դարի 80-ական թվականների քաղաքական իրադարձությունների ազդեցության տակ դարձավ… ճեպանկար.

*Ստալինյան «Մոսկվիչի»*
*կմախքում թառած հավերը*
*փորձում են լուծել*
*«Հա՞վն է առաջ եղել, թե՞ ձուն»*
*քաղաքական հարցը:*

Մնում է ավելացնել, որ այս հարցի պատասխանը ես դեռ չգիտեմ:

## 5. ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԾՆՎԵԼ ՄԻ ՆՈՐ ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔ

Շատ տարիներ առաջ, երբ 7-8 տարեկան երեխա էի, ոչ միայն «խմբագրել» եմ «Էշ նստելը մի ամոթ է, էշից իջնելը՝ երկու» ժողովրդական իմաստության երկրորդ մասը, այլև այն հարստացրել «Մեկ-մեկ էլ էշից չիջնելն է ամոթ» այսօր արդեն թևավոր դարձած խոսքով:

…Գեղանուշ մայրս մեզ՝ ինձ ու փոքր քույրերիս, հաճախ էր տանում հորանց տուն, որը գտնվում էր Աբխազիայի Գուդաութայի շրջանի գեղատեսիլ բարձրալեռ հայկական գյուղերից մեկում՝ Փսիրցխայում:

Եվ ահա հերթական անգամ մորս հետ ոլոր-մոլոր ճանապարհով բարձրանում ենք վերև՝ համարյա աստղերի մոտ, որտեղ սկսվում է հինգերորդ՝ երկնքի օվկիանի թագավորությունը:

Հեշտ է ասել՝ բարձրանում ենք:

Եկեք մի պահ պատկերացնենք մեր վերելքը. ահա մայրիկս՝ մի ձեռքով փոքր քրոջս՝ Գոհարին գրկած, մյուսով միջնեկի՝ Քնարի թաթիկից բռնած, ուսած բավականին տարողունակ ծանր պայուսակը, որը ծեփծփված է լվացքի սապոնով, տարբեր տեսակի կոնֆետներով ու այլ նվերներով, «Ռաֆինատ» շաքարի, լուցկու և «Կազբեկ» ու «Պրիմա» ծխախոտի տուփերով (ծխախոտը Հմայակ քեռուս և Սարգիս մորքուրարիս համար էր: Եփրեմ պապս իր աճեցրած ու ջարդած «Տրապիզոն» կամ էլ «Սամսուն» բուրումնավետ թութունն էր ծխում):

Չմոռանամ ասել, որ մենք մորքուրարիս համար անպայման բերում էինք «Իզվեստիա» թերթի հերթական՝ մեր նախորդ այցելությունից հետո լույս տեսած համարները, որովհետև նրա մշտական հետաքրքրության ոլորտում էր գտնվում մեր երկրի գլխավոր օրենսդիր իշխանության՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Նախագահության աշխատանքը: Նա գիտեր, թե ո՛ր հրամանը, հրահանգը, որոշումը

կամ օրենքը երբ և որ համարի տակ է գրանցվել: Եվ այդ պատճառով գյուղական տեղական իշխանությունը, ինչպես նաև շրջանայինը, հաճախ էր դիմում նրան՝ որոշ հարցեր ճշտելու-պարզաբանելու խնդրանքով: Եվ մորքուրարս՝ ըմբոշխնելով իր առավելության հաճույքն այդ պաշտոնատար մարդկանց նկատմամբ, արհեստավարժ կոնսուլտացիաներ էր շռայլում աջուձախ՝ համապատասխան հղումներով ու մեկնաբանություններով. և դա, ինչ խոսք, բարձրացնում էր նրա նշանակությունն ու հեղինակությունը ծանոթ-անծանոթների շրջանում: Այն էլ ասեմ, որ արդարություն փնտրող մարդիկ, երբ հերթական նամակն էին հղում «վերևներին», անպայման խորհրդակցում էին մորքուրարիս հետ: Եվ դրա գինը ընդամենը մի շիշ օղի էր լինում, որը նամակն ավարտելուց հետո միասին էլ դատարկում էին՝ համով-հոտով զրուցելիս, իսկ ավելի ճիշտ՝ մորքուրարիս մենախոսությանը զուգահեռ:

«Իզվեստիայից» բացի մենք բերում էինք նաև «Հայրենիքի ձայն» թերթի համարները. Հայրենական Մեծ պատերազմում կորած իր ավագ եղբորն ու Հայկ քեռուս էր փնտրում Սարգիս մորքուրարս, և այդ մասին համապատասխան հայտարարություն էր տվել թերթում: Ոի թեև հարազատների որոնումները ոչ մի արդյունք էլ չտվեցին, բայց նա, այնուամենայնիվ, մինչև կյանքի վերջը մնաց «Հայրենիքի ձայնի» երկրպագուն: Ի դեպ, նա շատ էր սիրում բանաստեղծություններ կարդալ և հաճախ էր, սեղանապետություն անելիս, հերթական կենացին համապատասխան տողեր մեջբերում իր կորած եղբոր՝ ինչպես ասում էր նա՝ անգիրներից.

*Երբ ալիքներն են դեպ ծովափ գալիս,*
*Սիրածիս շուրթին ծիծաղ են տալիս:*

Կամ՝

*Մեր Փսիրցխա գյուղում շենշող*
*Համբուրվում են երկինք ու հող:*

Այնպես որ, երբ տարիներ անց իմ «Հայոց բառեր» գրվածքը տպագրվեց հենց իր սիրելի «Հայրենիքի

ձայնում», Սարգիս մորքուրարս ինձ շա՛տ հարգեց ու գնահատեց ըստ արժանվույն. նա թեյի անկյունավոր բաժակը կիսով չափ ինքնաթոր օղի լցրեց, ապա հանդիսավոր բարձրացրեց իմ կենացն ու օրհնեց. «Ապրիս, եղանս, աչքիս լավ էրեվցար»: Եվ դա շա՛տ բարձր գնահատական էր՝ խրախուսող ու պարտավորեցնող:

Բայց վերադառնանք մեր բուն թեմային:

Ուրեմն, ահա այսպես բեռնավորված՝ մենք բարձրանում էինք գյուղ. այն տարիներին ձեռքերը թափ տալով հյուր գնալը շատ էր ամոթ:

Ես անպայման բարևում էի գյուղի ճանապարհին հանդիպածս մարդկանց՝ ծանոթ լինեին թե անծանոթ. այդպես էին մեզ սովորեցնում ծնողներս տանը, իսկ ուսուցիչները՝ դպրոցում: Համարյա բոլորը կանգնում էին, հետաքրքրվում, թե ո՞վ եմ ես, ո՞ւր եմ գնում այսպես մենակ…

Ես մեծավարի պատասխանում էի, որ Արտավազդն եմ, սուխումցի Սարեց Հայկի տղան, Դեմիրճի Եփրեմի թոռը… «Քա՛, մեր Գեղանուշին դղան է, էս ինչքա՜ն էլ մեծըցած է, դարձած է իսկական փեսացու»,– անկեղծորեն զարմանում և ուրախանում էին զրուցակիցներս…

Ես հաղորդում էի, որ մենակ չեմ, մայրիկս էլ է գալիս քույրիկներիս հետ, շուտով կմոտենան, հետո ցտեսություն էի ասում ու շարունակում ճանապարհը:

Ես մերոնցից միշտ էլ բավականին առաջ էի անցնում, որովհետև կրիայի «արագությամբ» շարժվելն անտանելի էր ինձ համար, իսկ ամենակարևորը՝ դա նաև իմ մանկական թեթև խորամանկությունն էր, որը հնարավորություն էր տալիս մի որևէ հարմար տեղ սպասելու-հանգստանալու՝ մինչև մերոնք շնչասպառ կհասնեին ինձ:

Մի խոսքով, մեր վերելքը տևում էր մի քանի ժամ: Իհարկե, ճանապարհի մի մասը կարելի էր մեքենայով մի շնչում կտրել-անցնել, եթե մեքենա հանդիպեր:

Բայց գյուղում այն տարիներին միայն մի մեքենա կար՝ Մեղրիկ Հայկի «Պոբեդան», որը «չռաստի պես մեզ

երբեք էլ ռաստ չէր գալիս». կամ մեզանից մի քանի րոպե առաջ էր անցած լինում, կամ էլ մեր տեղ հասնելուց մի քանի րոպե հետո էր երևում: Եթե հանդիպեր, իհարկե, կկանգներ, մենք էլ կտեղավորվեինք մեքենայում, և նա փրթփրթալով կտաներ մեզ: Բայց որ չէր հանդիպում, ինչպե՞ս տաներ:

Թարսի պես՝ բջջային հեռախոս էլ այն ժամանակ չկար, որ զանգեինք-խնդրեինք Մեղրիկ Հայկին՝ գար ու տաներ մեզ:

Այնպես որ, Մեղրիկ Հայկից նեղանալու իրավունք չունեինք (եթե նույնիսկ հանդիպեր ու չճանաչեր կամ էլ չճանաչելու տալով քշե՛ր «Պոբեդան» ու մեր կողքով անցներ՝ թանձր փոշու մեջ թաթախելով մեզ կամ ցեխաջրով ոտքից գլուխ ողողելով), որովհետև նա, ամեն ինչից առաջ, Սարգիս մորքուրարիս անդրանիկ դրկիցն էր ու թասընկերը: Բացի դրանից, մեր ճանապարհը զգալիորեն կրճատելու համար մենք նրա բակով էինք անցնում:

Ես բակ եմ ասում, բայց իրականում դա հարուստ կաղնուտ էր. ես մերոնց հաճախ էի սպասում այստեղ՝ կաղնիների տակ, և մինչև նրանք կմոտենային, հասցընում էի գրպաններս կաղինով ծեփել:

…Ահա զգուշորեն անցնում ենք քիչ-քիչ ճահճացող բացատի եզրով՝ աշխատելով չցեխոտել կոշիկներս, ինչն ինձ, իհարկե, երբեք էլ չի հաջողվել. ես անպայման պիտի մինչև ծնկներս խրվեմ ցեխի մեջ՝ առաջացնելով մայրիկիս դժգոհությունը: Եվս մի քանի րոպե, և մենք արդեն Սարգիս մորքուրարիս երկհարկանի տան թեք բակն ենք մտնում, որի աջ կողմում մի հսկա թթենի է աճում: Այդ թթենու մասին է, որ տարիներ հետո պիտի գրեի «Մանկության այգում» բանաստեղծությունը, որտեղ կան այսպիսի տողեր.

*Հրա՛շք մանկություն, որտե՞ղ ես, արդյոք,*
*Ո՞ր թթենու խիտ տերևների մեջ*
*Թաքնվել ես ու մատնաչափ թթով*
*Սևացրել նորից ձեռքեր ու երես:*

Հենց այս թթենու տակ մեզ դիմավորում է Վարսենիկ մորաքույրս՝ մի ուրիշ տեսակ մեղավոր, մի ուրիշ տեսակ տխուր ժպիտը դեմքին: Այդ ժպիտը չի խամրել իմ հիշողության մեջ՝ տխո՛ւր-տխո՛ւր, դա՛ռը-դա՛ռը…

Ես շատ եմ սիրում մորաքույրներիս՝ Անիկին, Նվարդին, Զվարթին, բայց Վարսենիկ մորաքրո՛ջս… սիրելուց բացի ես խղճո՛ւմ եմ նաև: Որովհետև նա… անիծվա՛ծ է… Իսկ անիծել է նրան սկեսուրը՝ Սարգիս մորքուրարիս մայրը, որովհետև չէր ուզում նրան հարս բերել: Բայց մորքուրարս չի լսել մորը; դե, նա էլ, ո՞վ գիտի՝ ջղայնությունի՞ց, վիրավորանքի՞ց, իսկ գուցե հոգու չարությունից, մահվան անեծք է «գրել» հարսին, այսինքն «ջինջու գիր արել», ինչպես ասում են համշենցիները…

Եվ մինչև օրս ոչ մի ուրիշ հմուտ «գրող-ջինջի» չի կարողացել ոչ միայն «ջնջել» այդ գիրը, այլև բացատրել, թե ինչո՞ւ անեծքը չի «կպել» մորաքրոջս, այլ տարօրինակորեն ու դժբախտաբար շրջանցելով՝ անցել է երեխաներին, երբ մեկը մյուսի ետևից ծնվել են Անահիտը, Արտաշեսը, Ալվարդը, Զինաիդան (աղջկան օտար անուն են տվել, որ չարը մոլորվի՝ չգտնի նրան, բայց չարը չա՛ր չէր լինի, եթե մոլորվեր ու չգտներ) – բոլորն էլ խուլուհամր… Եվ միայն ամենակրտսերը՝ Վլադիմիրը, ծնվել է նորմալ:

Բայց, ավա՛ղ, այս տան չռաստն այսքանով չի ավարտվել. տարիներ անց ընտանիք կազմած Վլադիմիրի եռամսյա տղան մոր ձեռքից ընկնում է գլխի վրա, և ստացած հարվածից խանգարվում է երեխայի բնականոն ու նորմալ զարգացումը… Իսկ Արտաշեսի 27-ամյա որդին զոհվում է ավտովթարից… Չեմ ուզում շարունակել այս ծանր պատմությունը, միայն ավելացնեմ, որ Վարսենիկ մորաքույրս իրեն էր մեղադրում ընտանեկան այս ահավոր չռաստի համար. «Եթե անեծքը տեղ հասներ, երեխաներս այսպես չէին լինի, տունս չէր քանդվի»:

Է՛խ իմ խեղճ Վարսենիկ մորաքույր, եթե անեծքը տե՛ղ հասներ… Մի՞ թե տեղ չի հասել անեծքը… Բա մոր

համար սրանից ավելի դաժան պատիժ կարելի՞ էր հորինել այս մեղավոր ու դաժան աշխարհում…

Իսկ մորքուրարիս տունն իսկապես քանդվեց. «հողը խաղաց ու գնաց տան տակից», խարխլելով հիմքերը, պատերն ահռելի՝ հետզհետե ավելացող ճեղքեր տվեցին, քանդվեց երկրորդ հարկը, առաջինից էլ երկու լղարիկ սենյակ մնաց, որտեղ այսօր ճգնավորի պես ապրում է Անահիտը:

Վարսենիկ մորաքույրս մեղավորության զգացումով ապրեց իր կյանքն ու այդպես էլ հեռացավ՝ մի ուրիշ տեսակ տխուր ու դառը ժպիտ դեմքին:

…Սարգիս մորքուրարիս տանը մենք հանգստանում ենք. ով թան է խմում, ով ջուր, ով էլ կաթ:

Մեր բերածի մի մասը թողնելով այստեղ – առաջին հերթին «Իզվեստիայի» և «Հայրենիքի ձայնի» օրինակները – մենք թեք լեռան լանջն ի վեր բացված նեղ կածանով բարձրանում ենք պապիս տուն:

Մեզ այստեղ միշտ էլ անհամբերությամբ են սպասում, շատ են կարոտում մեզ, մենք էլ ենք կարոտում պապիս, տատիս:

Պապս այս անգամ էլ տանը չէ – նա, ինչպես միշտ, գտնվում է իր պաշտած լեռներում. ա՛յ, եթե հանկարծ տանը լիներ, մենք հո շա՛տ կզարմանայինք:

Ի դեպ, հենց այնտեղ՝ լեռներում էլ ընդամենը երկու տարի անց նրան սպանեցին ոճրագործները, որոնք գյուղի անասունն էին քշում Հյուսիսային Կովկաս՝ ծախելու. հենց լեռնանցքում էլ հանդիպել էին արդարադատ ու խստաբարո պապիս: «Հաշվապարզության» ժամանակ գողության վկայից ազատվելու համար դավադրաբար թիկունքից կացնով խփելով գլխին՝ հանցագործները պապիս գցել էին ձորը… Պապս իսկույն չէր մահացել, տանջվել էր բավական երկար ժամանակ՝ եղունգներն արնոտելու չափ չանգռելով հողը…

…Մի քիչ հանգստանալուց հետո ես դուրս եմ գալիս բակ, հաճույքով զբոսնում այգում, նստում պապիս

«կանաչ, վիթխարի ընկուզենու տակ», որտեղ սառնորակ աղբյուրն էր հոսում:

Շուտով գալիս է Հմայակ քեռիս՝ էշը ճիպոտով «դրտմելով»: Նա էշը կապում է բակի կենտրոնում փարթամորեն աճող խնձորենուց, իսկ ինքը ծիծաղելով շտապում է ինձ գրկելու, գուրգուրելու:

Ինձ շա՜տ էր դուր գալիս Հմայակ քեռուս ծիծաղը՝ բարձրաձա՜յն, զրնգո՜ւն, վարակի՜չ:

Ես էլ եմ վազում սիրելի քեռուս ընդառաջ ու ցատկում նրա գիրկը:

Քեռիս գրկում է ինձ, համբուրում, քնքշորեն շոյում գլուխս, թեթևորեն հարցուփորձում և փայտաշեն աստիճաններով բարձրանում տուն (պապիս տունը թեև միհարկանի էր, բայց կանգնած էր բետոնե սյուների վրա՝ հողից բավականին բարձր):

Բակում մնում ենք ես ու քեռուս էշը:

…Ես քիչ-քիչ, զգուշորեն մոտենում եմ նրան, շոյում եմ կողերը, վիզը՝ բարեկամության հրավեր ուղարկելու պես – ինչպես այսօր ֆեյսբուքում են դա անում:

Էշը կարծես թե ընդունում է իմ հրավերը, որովհետև չի խրտնում, չի փորձում հեռանալ, այլ բավականությամբ պոչ է խաղացնում:

Համարձակություն ստանալով՝ ես մոտ եմ քաշում գերան սղոցելու համար պատրաստված «էշը», հարմարեցնում իսկականի կողքին և զգուշորեն բարձրանում-նստում էշի վրա:

Օ՜, ինչ հիասքանչ բան է դա՝ էշը հեծնելը: Իմ քաղաքացի ընկերներից ո՞վ կարող է համեմատվել հետս. նրանցից շատերը էշ չեն էլ տեսել (թերևս Այբբենարանի մեծատառ-փոքրատար է-ն սովորելիս):

Իսկ ե՜ս… Ես ինձ պատկերացնում եմ ոչ թե էշի, այլ ձիու վրա՝ զորավարի պես սուրը ձեռքիս, զրահապա՜տ, թշնամուն հետապնդելիս… Սասունցի Դավթի նման՝ Քուռկիկ Ջալալին հեծած… Համշենի լեռներում… Է՜հե՜յ, ահա գալի՜ս եմ… Թե քնած եք, արթուն կացեք…

Ես կարող էի ինձ հերթականությամբ պատկերացնել Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Գևորգ Մարզպետունի, Մխիթար Սպարապետ…, եթե նրանց մասին լսած լինեի…

Ես «ճանաչում էի» միայն Հովհաննես Թումանյանի Սասունցի Դավթին ու մեկ էլ Սերո Խանզադյանի Մխիթար Սպարապետին. Սուխումի երկաթուղայինների տան ակումբում ծնողներիս հետ դիտել էի «Մխիթար Սպարապետի» բեմադրությունը, որն իրականացրել էր Երևանից ժամանած թատերական խումբը: Ես մինչև օրս էլ տեսում եմ ակումբի լեփ-լեցուն դահլիճը, ներկայացման առանձին դրվագներ մխրճվել-դաջվել են իմ հիշողության մեջ: Չգիտես ինչու, ցավալիորեն թարմ եմ հիշում Սպարապետի սպանության դրվագը:

Ես այնքան եմ տարվում իմ պատկերացումներով, որ… անփութորեն աչքաթող եմ անում էշից ժամանակին իջնելու պահը: Ուշքի եմ գալիս լոկ այն ժամանակ, երբ զգում եմ, իսկ ավելի ճիշտ՝ չեմ զգում իմ արդեն թմրած աջ ոտքը, որովհետև Հմայակ քեռուս էշը արածելով, քիչ-քիչ, ինձ համար աննկատ, մոտեցել էր ծառին և ոտքս բնին սեղմել:

Ես մի քանի անգամ փորձում եմ ազատվել թակարդից, բայց ապարդյուն: Փորձում եմ էշին հորդորել-խնդրել, որ գոնե մի քիչ հեռանա ծառից,– բայց նա չի հասկանում ինձ, կամ էլ չհասկանալու է տալիս:

Ուրիշ էլ ի՞նչ կարող էի անել. ինձ համար ամենաանհարմար պահին բռնե՛լ էր նրա դասական համառության նոպան:

Իհարկե, հիմա ես էլ եմ ծիծաղում՝ պատկերացնելով իմ անմխիթար վիճակը: Իսկ ա՛յն ծամանակ…

Ես պատրաստ էի էշից իջնել «էշի» օգնությամբ, ընկնելով ու գետինը խրվելով, միայն թե այս անհարմար ու խայտառակ վիճակում ոչ ոք չտեսներ ինձ… Բայց ավա՛ղ, էշը կանգնել-համրացել էր իր տեղում՝ անհաղորդ իմ տառապանքին: Ոտքս մնացել-թմրել էր էշի և ծառի քիփ առանքում:

Անցնում է բավականին երկար ժամանակ: Ես արդեն համաձայն էի, ոչ, փափագո՛ւմ էի, որ մեկը դուրս գար տնից և ինձ ազատեր գերությունից.– տվյալ պահին դա կլիներ լավագույն տարբերակն ինձ համար, որովհետև կարելի էր կեսբերան, ընդամենը կեսբերա՛ն, ասել, որ դեռ իջնել չէի ուզում, բայց, դե, քանի որ պնդո՛ւմ եք… իհարկե… ձեր խոսքը չկոտրելու համար…

Օգնության կանչել չէի կարող, որովհետև դա անձնատուր լինել կնշանակեր:

Ցավոք սրտի, տարված իրենց խոսք-զրույցով՝ ոչ ոք չհիշեց ինձ. լավ գիտեին, որ ես բակից դուրս չեմ գա:

Իսկ ավանակն էլ իր մտադրությունը չէր փոխում…

Ուզում եմ նաև հիշեցնել, որ և՛ Սասունցի Դավիթը, և՛ Տիգրան Մեծը, և՛ Վարդան Մամիկոնյանը, և՛ Գևորգ Մարզպետունին, և՛ Մխիթար Սպարապետը մեկ-մեկ էլ իջնում էին իրենց հավատարիմ ձիերից… որոշ անհրաժեշտ ճանապարհ նաև քայլելով անցնելու:

…Խայտառակությունից ինձ փրկեց Եփրեմ պապս. երբ նա երևաց ցանկապատի մոտ, էշը, չգիտես ինչու, մի քայլ արեց դոփելու պես… և դա բավական էր, որ ես կարտոֆիլով ծեփված պարկի նման թրմփայի ցած: Աճապարած պապս ինձ բարձրացրեց գետնից, սեղմեց կրծքին և ամեն ինչ հասկացավ, որովհետև թմրած աջ ոտքիս սառնությունը եղելությունն անմիջապես «պատմեց» նրան:

Երեկոյան ես ու պապս երկա՛ր խոսեցինք, նա հետաքրքիր ժողովրդական զրույցներ պատմեց, կյանքից բազմաթիվ օրինակներ բերեց, և մենք միահամուռ ստեղծեցինք մի նոր իմաստություն, որն, ինչպես արդեն կարդացել եք սույն պատումի սկզբում, այսօր թևավոր խոսք է դարձել. «Մեկ-մեկ էլ էշից չիջնելն է ամոթ»:

Կյանքը ցույց տվեց մեր թևավոր խոսքի օրեցօր հաստատվող իրավացիությունը:

…Այն էլ ասեմ, որ Եփրեմ պապիս սպանությունից հետո շուտով մահացավ նաև Սաթենիկ տատիկս:

Կարճ ժամանակ անց մեր պապոնց տունը գնեց Խորեն Գդլյանը. նրա որդիներից մեկը՝ Թելմանը, հետագայում դարձավ ականավոր պետական, հասարակական-քաղաքական գործիչ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ԽՍՀՄ գլխավոր դատախազության հատուկ կարևորության գործերի քննիչ: Նա հայտնի է «բամբակի» գործով, որը ԽՍՀՄ-ում կոռուպցիոն առաջին աղմկահարույց բացահայտումն էր:

Բայց մեր խոսքն, իհարկե, այդ մասին չէր:

## 6. ՖԻՐՍԸ

*Նվիրում եմ*
*մանկությանս ընկերներին*

Ֆիրսը մեր հարևան քեռի 8-Բորիսի շնիկն էր:

Իսկույն ասեմ, որ քեռի Բորիսի անվանը մենք էինք «սոսնձել» 8-ը, որովհետև նա համարյա միշտ հարբած էր ու քայլում էր երերալով, այսինքն՝ «8 գրելով», և նրա տատանումների լայնույթը մի ցանկապատից հասնում էր մյուսը՝ հաճախ կտրվելով չափարի տակ կամ եղինջածածկ առվում, որտեղ ի տարբերություն այսօրվա, այն տարիներին մոծակներ չէին վխտում, որովհետև ամիսը 2-3 անգամ սանէպիդկայանից «մոծակների աստվածուհին» էր գալիս ու մշակում այն, այսինքն՝ ձեռքի պոմպով դուստի լուծույթ փչում առվի մեջ ու եզրերին:

Այն էլ ասենք, որ եղինջը փարթամորեն աճում էր նաև մեր այգում՝ չափառի տակ: Մայրիկս հավաքում էր թարմ ու նուրբ տերևները՝ եղինջի ճաշ պատրաստելու համար:

Օ՛, եղինջի ճաշը շատ օգտակար խորտիկ է. այն պիտի ուտես յոթ անգամ, հետո տասչորս անգամ, ապա քսանմեկ ու, վերջապես, քսանութ անգամ: Անպայման պիտի ուտես, «որպեսզի եղինջի օգտակար զորությունը

տեղ հասնի»,- ասում էր մայրիկս՝ հերթական անգամ պատրաստելով իսկապես համով ճաշը, որովհետև տանը ուտելու ուրիշ ոչինչ չէր լինում:

Մենք՝ մեր նրբանցքի տղաներս, միահամուռ ուժերով քեռի 8-Բորիսին առվից քաշում հանում էինք ու կանչում կնոջը՝ մորաքույր Անյային:

–Ե՞րբ ես դու վերջապես սատկելու, անտե՛ր, անասո՛ւն, որ ազատվեմ քեզանից,– մորաքույր Անյայի անեծքների ընտրանին հարուստ էր ու բազմաշերտ, հյութալի հավելումներով ու մանրամասներով, որոնք այստեղ արտաբերելու ոչ մի հնարավորություն չկա: Ի դեպ, մորաքույր Անյան քեռի Բորիսի անվանը «սոսընձված» 8-ը յուրովի էր մեկնաբանում,– մեկ սրա՜ն տեսեք, աշխարհի 8-րդ հրաշալիք…

–Ո՛ւ, ո՛ւ, ֆաշիզմի մնացո՛ւկ,– ի պատասխան թլվատում էր քեռի 8-Բորիսի լեզուն,– ես քե՛զ… ես քո՛…

–Դե, քեզ տեսնեմ, արի՛, արի՛… գոնե մի՛ անգամ…

(Դասականի քաշող այս երկխոսության հյութալի շարունակությունը, որն այստեղ արտաբերելու ոչ մի հնարավորություն չկա, մենք անգիր գիտեինք – ինչպես Մաշտոցի այբուբենը, Պուշկինի «Զմեռվա իրիկունը» Թումանյանի թարգմանությամբ, կամ Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը: Շատ խիստ էր մեր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին՝ հարգելի Քարզուհի Սարգսյանը. մենք ծրագրից դուրս շատ ստեղծագործություններ էինք յուրացրել, անխտիր բոլորս գրանցվել էինք գրադարանում և ակտիվորեն մասնակցում էինք նրա աշխատանքին)

Մենք նրան համարյա քարշ տալով հասց-նում էինք իրենց բակն ու թողնում հսկա թզենու տակ խռմփալու՝ հավատարիմ ընկերոջ՝ Ֆիրսի աչալուրջ հսկողության ներքո:

***

Քեռի 8-Բորիսը հարևանների մոտ տարաբնույթ աշխատանք էր կատարում: Օրը մեկ անգամ ճաշին

նրան հոտած ու պղտոր ճաճա էին տալիս մամալիգայով՝ մի երկու կտոր ապխտած պանիր մեջը խրած: Կատարված աշխատանքն ընդունելուց հետո տանտերը կերած-խմածի հաշիվն էր ներկայացնում նրան, և շատ հաճախ քեռի 8-Բորիսը դեռ պարտք էլ էր մնում: Իհարկե, տանտերը ներողամտաբար «չեղյալում էր» նրա «պարտքը».

– Հարևաննե՛ր ենք, էլի, ախր իրար պիտի հասկանանք, նեղ օրերին իրար պիտի օգնենք ու նման մանրուքները չպիտի դնենք հաշվեկշռի վրա: Էլ ո՞ր օրվա դրկիցներն ենք:

Քեռի 8-Բորիսը ձեռքը թափ էր տալիս, չգիտես՝ որպես համաձայնությա՞ն, թե՞ անհուսության նշան, ու մեղավոր ժպտում, երևի յուրովի գնահատելով տանտիրոջ «մեծահոգությունը»:

Ասենք նաև, որ քեռի 8-Բորիսը բարի մարդ էր ու շռայլ: Բայց գնալով տարօրինակության երանգներ էին ստանում այդ բարությունն ու շռայլությունը:

Նա Հայրենական Մեծ պատերազմի վետերան էր, պահեստի մայոր, և պատվոգիր էր ստացել անձամբ Ստալինից: Բազմաթիվ մարտական շքանշաններ ու մեդալներ ուներ, որոնք քիչ-քիչ օղու էր վերածում…

Այո, խմելու անհագուրդ տենչն ստիպում էր, որ պատերազմի թոհուբոհով անցած այդ մարդն արյունով վաստակած մարտական պարգևները փոխանակեր օղու շշերի հետ: Նա ծախում էր իր իսկապե՛ս փառապանծ անցյալը, իր սխրագործություններն էր ծախում՝ մեդալ առ մեդալ, շքանշան առ շքանշան…

Ես չգիտեմ, թե քանիսո՛վ էր ծախում, և դա այնքան էլ կարևոր չէ, բայց կարծում եմ, որ շատ էժան էր գնահատում իր կյանքի դառնություններով և ուրախություններով հագեցած ռազմական շրջանի հերոսական ակնթարթները:

Իսկ «փառապանծ անցյալ» գնողներ, անշուշտ, կային: Խոսքը տարբեր ճանապարհներով պատերազմի

վետերանի գրքույկ «ձեռք բերածների» մասին է, որոնց ռազմական «փառքը» վկայող մեդալներն ու շքանշաններն էին պակասում: Նրանց մասին գրում էր տեղական մամուլը, նրանց հրավիրում էին հանդիպումների մոտակա դպրոցների աշակերտները: Եվ «վետերանները» ծանր, արցունքաբեր հիշողությունների գիրկն էին ընկնում…

Ի դեպ, այդ մարդկանցից մեկն էլ իմ մորաքրոջ ամուսինն էր՝ Սարգիս մորքուրարը, ասող-խոսող, այնպե՜ս հյութալի փչող մի մարդ, թեև՝ զարմանալի ու տարօրինակ… Եվ տարօրինակն ու զարմանալին այն էր, որ նա, այդ «հերոս մարդը, մահու չափ» վախենում էր գորտից ու մկնից, թեև կարող էր մերկ ձեռքով օձ բռնել՝ տեղավորելով գրպանում… Եվ այդ մասին շատ հետաքրքիր պատմություններ կան, որոնք դեռ գրի չեմ առել:

Մորքուրարիս զվարճալի ու սրամիտ զրույցները բերնեբերան էին անցնում:

Ի դեպ, նրա հերթական «հերոսապատումը» լսելուց հետո Մեղրիկ Հայկը մի անգամ քթի տակ քմծիծաղ տվեց. «Իսկ այդ ժամանակ ի՞նչ էին անում մեր մյուս զինվորները»…

Մենք, իհարկե, չհասկացանք նրա ասածի իմաստը, բայց նկատեցինք, որ մորքուրարս աչքով-ունքով սաստեց իր բոլոր՝ դառն ու ուրախ օրերի ընկերոջը:

Այսօր էլ են շատերը պատմում մորքուրարիս՝ տարիների ընթացքում ժողովրդական իմաստություն դարձած համուհոտով սրամտություններն ու զրույցները, բայց արդեն, իհարկե, չհիշելով սկզբնաղբյուրը:

Բայց մի՞թե դա է կարևորը:

Համոզված եմ, որ մեր այսօրվա ստեղծագործողներից շատերը կնախանձեին նրա գրական հաջողությանն ու փառքին…

***

Ես հատուկ վերաբերմունք ունեի քեռի 8-Բորիսի նկատմամբ, որովհետև ամեն ինչից բացի նա մեր

առաջին հարևանն էր, շատ էր շուն սիրում և, վերջապես, լուծում էր թվաբանության իմ խնդիրները: Թեև նրա՝ խնդրի լուծման ընթացքը յուրովի էր ու ամենևին չէր համապատասխանում իմ՝ առանց հասկանալու անգիր արած կանոններին, բայց միայն իրեն հատուկ մի կուռ տրամաբանությամբ քեռի 8-Բորիսը միշտ էլ ստանում էր խնդրի ճիշտ պատասխանը: Ի դեպ, նա սկզբում լուծում էր խնդիրը, ապա նոր բացում դասագրքի վերջին՝ պատասխանների էջը: Նրա՝ խնդիր լուծելու յուրահատուկ ոճն իմ ուսուցչուհու՝ հարգելի Հասմիկի անթաքույց զարմանքն էր առաջացնում: Երևի նաև հիացմունքը: Բայց խոսքն այդ մասին չէ, թեև իրադարձությունների զարգացման արդյունքում տուժեց նաև իմ թվաբանական առաջադիմությունը:

***

Գեղեցիկ շնիկ էր Ֆիրսը, աշխո՛ւյժ, չարաճճի՛ ու յուրովի կատակասեր: Մուգ շիկահեր էր, սևուկ դնչիկին՝ ճերմակ պուտեր՝ քեռի 8-Բորիսի գեղեցկուհի աղջկա՝ Տատայի պեպենների հանգույն, թաթիկները՝ ձյունասպիտա՛կ, ասես իսկը մայրիկիս գործած նրբահյուս մաշիկներն էր հագել: Աչիկները՝ խոշոր-խոշոր, լուսավոր, և ինձ թվում էր, որ ոչ թե աչիկեր են դրանք, այլ զույգ արեգակնե՛ր են ծագել սևով երիզված թարթիչների միջև: Մեզ հետ խաղալիս Ֆիրսն ասես թե ծիծաղում էր, հաճախ էլ երևի ձեռ առնելով՝ լեզու էր ցույց տալիս ու անգամ, կհավատա՞ք, աչքո՛վ անում:

Ա՛յ քեզ շնիկ, ա՛յ քեզ մոդայիկ անպիտան: Դե՛, արի ու մի՛ գժվիր նրա համար:

Ավելորդ է ասելն անգամ, որ Ֆիրսը բոլորիս սիրելին էր, հատկապես իմը, որովհետև ես ամեն օր խաղում էի հետը, մինչև լուծվում էր իմ հերթական խնդիրը:

Ֆիրսը մի անբացատրելի, վերին նվիրվածությամբ կապված էր տիրոջ հետ: Ասենք, քեռի 8-Բորիսն էլ սիրում էր իր չորքոտանի բարեկամին: Նրա գրպանում միշտ էլ շնիկի համար պաշար էր լինում: Ի դեպ, ամենալավ պատառը նա շնիկի համար էր պահում:

***

Բայց օղի՛ն, այդ անիծվա՛ծ օղի՛ն, խմելու այդ անհասկանալի ու անհագուրդ տե՛նչը, որ խելահեղորեն փոթորկվում էր քեռի 8-Բորիսի արյան մեջ…

Խմելու համար նա պատրաստ էր ամեն ինչի, կգնար ամեն զոհողության հանուն մի բաժակ «հրաջրի»:

Եվ երբ վերջացան մարտական մեդալներն ու շքանշանները, նա այլևս ծախելու ոչինչ չուներ:

Քեռի 8-Բորիսն ընդհանրապես ոչինչ չուներ այլևս:

Բացի իր հավատարիմ Ֆիրսից:

Եվ նա դիմեց ամենասարսափելի, մարդու մտքով չանցնող քայլի. նա որոշեց Ֆիրսին … ծախե՛լ:

Իհարկե, նրա որոշման մասին մենք ոչինչ չգիտեինք, մեր մտքով անգամ չէր անցնում, թե կարելի է շունը ծախել, այն էլ Ֆիրսի նման հրաշք շունը:

***

Դա տեղի ունեցավ անսպասելիորեն, երբ մորաքույր Անյան և Տատան տանը չէին: Վերջերս, մեր հարևան Բիճիկոյի՝ 12-ամյա Տատային անարգելուց հետո, նրանք հաճախ էին երկուսով բացակայում տնից. գնում էին սուսիկ-փուսիկ՝ համարյա թե ցանկապատին քսվելով՝ աշխատելով հարևանների աչքին չերևալ:

***

Գնորդը եկավ «Պոբեդա» մակնիշի մեքենայով:

Այն տարիներին մեր քաղաքում ստալինյան «Մոսկվիչն» էր գերակշռում, իսկ «Պոբեդան» հրաշքի պես բան էր:

Մենք, իհարկե, իսկույն շրջապատեցինք պլպլան, ներկի թարմությամբ խելքահան անող մեքենան՝ մանրամասնորեն ու հանգամանալից զննելու, շոշափելու, գնահատելու:

– Հը՞, ինչպե՞ս է,– մեզ մտերմաբար աչքով արեց վաճառորդը հին ծանոթի պես,- հրա՞շք է, չէ՞: Իսկ Ֆիրսը… կսազի՞ իմ մեքենային…

Մեր հիացական բացականչությունների ուղեկցությամբ նա մտավ քեռի 8-Բորիսի բակը:

Բայց հանկարծ մենք զգաստացանք – իսկ ի՞նչ է նշանակում՝ Ֆիրսը կսազի՞ իմ մեքենային: Ավելի ճիշտ չէ՞ր լինի հարցն այլ կերպ ձևակերպել՝ ձեր մեքենան կսազի՞ մեր Ֆիրսին: Ախր Ֆիրսն ուրի՛շ է…

Եվ հանկարծ ամեն ինչ պարզվեց՝ անսպասելիորեն ու դաժանությամբ, երբ լսվեց շան աղեկտուր մղկտոցը:

***

…Ֆիրսը չէր ուզում գնալ:

Դիմադրում էր՝ վերջին ուժերը լարած, ձյունասպիտակ թաթիկներով կառչում էր հողից ու կաղկանձո՛ւմ, կաղկանձո՛ւմ:

Անզոր դիմադրություն էր դա:

Նոր տերը անգթորեն քաշելով կապից՝ Ֆիրսին թավալգլոր բերեց «Պոբեդայի» մոտ և այնքա՜ն զգուշորեն բացեց պլպլան թափքն ու շնիկը գցեց մեջը, որտեղ նախօրոք բավականին պահպանված մի փալաս էր փռել:

Ապա հաղթական, թեթև ու անփույթ շարժումով փակեց թափքը և դարձավ աննկարագրելիորեն խեղճացած քեռի 8-Բորիսին.

– Դե՛, մենք գնացինք: Ցտեսությո՛ւն:

Ես չգիտեմ, թե այդ պահին ի՞նչ էր կատարվում քեռի 8-Բորիսի հոգում: Երևի նա էլ էր տառապում, նա էլ էր մղկտում, երևի հասկանում էր իր կատարածի ամբողջ ահավորությունը:

Չգիտեմ:

Իսկ իմ հոգում մի նուրբ, մի անբացատրելի բան դատարկվելու պես հանկարծ փլվեց: Եվ ես այսօր էլ չգիտեմ, թե ինչ զգացում էր դա: Եվ ինչ էլ որ լիներ այդ նուրբն ու անբացատրելին, որը կորուստ էր հաստատ, փլվեց այլևս չվերականգնվելու համար՝ երկրաշարժի նման փլատակների տակ թաղելով այն, ինչն անվերականգնելի է:

Բայց ինչի՞ կորուստ էր դա – հավատի՞, խղճի՞, նվիրվածությա՞ն…

Ինչ-որ բան որբացավ իմ հոգում, ինչ-որ բան անտեր մնաց…

Մեր փողոցն էլ ասես թե դատարկվեց, դարձավ անշուք, անհրապույր ու սառնորեն գունատ…

Գուցե իսկապե՞ս արեգակը Ֆիրսի աչքերից էր ծագում՝ գոնե մեզ համար, գոնե մեր փողոցում:

***

Ա՛խ, եթե պատմությունն այսքանով ավարտվեր: Բայց, ցավոք սրտի, այն անսպասելի շարունակություն և ողբերգական վերջ ունեցավ:

…Մի քանի շաբաթ անց Ֆիրսը վերադարձավ:

Եվ այսօր էլ, նույնիսկ տասնյակ երկար տարիներ անց՝ իմ կյանքի համարյա թե մայրամուտին, ամո՛թ է խոստովանելն անգամ, որ մենք հազիվ ճանաչեցինք նրան:

Մեր աշխույժ ու չարաճճի շնիկից ոչինչ չէր մնացել այլևս:

Նրա լուսավոր աչքերում խամրել էին մեր այն զույգ արեգակները…

Տանջված ու հյուծված՝ օրորվող քայլերով նա գլխահակ մտավ իր բույնը՝ այլևս դուրս չգալու համար:

Մի քանի օր նա բան չկերավ ու չխմեց…

Մի քանի օր նա անսահմանորեն ատեց մարդկային հոտն ու նրա ապերախտությունը և այդպես էլ վախճանվեց՝ վիրավոր հոգով ու սրտով, խոցված ինքնասիրությամբ…

Ես հիմա՝ շատ տարիներ հետո եմ հասկանում, որ նա չներեց մեզ:

Եվ ամաչո՛ւմ եմ, ամաչո՛ւմ եմ մինչև հիմա, որ մա՛րդ եմ կոչվում, և քրտնելու աստիճան կարմրում եմ մոխրացնող ամոթից:

***

…Ես օգնեցի քեռի 8-Բորիսին՝ Ֆիրսին թաղելու իրենց այգու հեռավոր անկյունում՝ երկու վիթխարի տանձենիների տակ, որոնցից մեկը մինչև այսօր էլ կա և պտղաբերում է:

Հետո մենք անխոս նստեցինք թարմ հողաթմբի մոտ – քեռի 8-Բորիսը՝ չգիտեմ, իսկ ես՝ մի անհասկանալի դատարկությամբ ծանրացած, անսպասելիորեն այնպե՛ս հասունացած…

Ֆիրսն իմ առաջին ու մեծ կորուստն էր…

–Շան տեղը դո՛ւ պիտի սատկեիր, անաստվա՛ծ,– հանկարծ այդ դատարկության մեջ դղրդալով խլացավ մորաքույր Անյայի՝ ինչպես միշտ դաժան, բայց այս անգամ՝ կարճ ու համառոտ, իր զսպությամբ՝ ավելի՛ հատու անեծքը:

Քեռի 8-Բորիսը չպատասխանեց: Երևի թե չլսեց էլ մորաքույր Անյայի անեծքը:

Նա անձայն լալիս էր…

Գուցե իր ճակատագի՞րն էր ողբում: Չգիտեմ:

***

Իսկ ինչ վերաբերում է իմ թվաբանական առաջադիմությանը, ապա այն կտրուկ հետընթաց էր արդեն ապրում, որովհետև Ֆիրսը ծախելու օրվանից ես այլևս երբեք չդիմեցի քեռի 8-Բորիսի օգնությանը: Ավելի ճիշտ՝ չկարողացա:

Ես արդեն մի քանի անբավարար գնահատական էի ստացել, սակայն շուտով ուսումնական տարին ավարտվեց և ես հասցրեցի բարեհաջող փոխադրվել հաջորդ դասարան: Իսկ դասարանական ծնողական ժողովից հետո (որտեղ առաջին անգամ մայրիկս կարմըրեց իմ անհասկանալի «օյինբազությունների» համար) շտապեցի գյուղ՝ ամառային արձակուրդն այնտեղ անցկացնելու:

Եվ այստեղ էլ մի երեկո անսպասելիորեն գրեցի իմ առաջին՝ «Մեր շնիկը» տողաշարն ու արժանացա իմ

հորեղբայր Արշավիրի խրախուսանքին (հորեղբայրս բանաստեղծություններ էր գրում և տպագրվում շրջանային «Դրոշա» թերթում).

–Ապրե՛ս, անկեղծ ես գրել, զգացմունքով,– ասաց նա ու նվիրեց ինձ Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքների ժողովածուն:

## 7. ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱՌԱՆՑՔԻ ՎՐԱ
## (միջանկյալ պատմություն–2)

Հիմա մեր այգում պապիս ե՞րբ բացած պաղ-սառնորակ աղբյուրի բյուրեղյա չխմված ջուրն է կում առ կում հոսում ներքև, սպիտակ գլաքարերի միջև ու խճաքարերի վրայով ուրախ-զվարթ ու խենթ-չարաճճի ցատկոտելով հասնում Սոնայի ձոր ու այնտեղ տարինե՛ր շարունակ կուտակվելով՝ լճանում-ճահճանում:

Եվ Սոնայի ձորը հիմա Սոնայի լճակ է դարձել, որի կենտրոնում Սոնայի կիսաքանդ տան երկաթե վառարանի ծխնելույզն է ցցվել-մնացել հեռադիտակի նման. նրանով, ինչպես համոզված են արդեն թունդ քաղաքացի դարձած երբեմնի մեր ծխախոտագործ համագյուղացիները, Սոնայի անմահ հոգին է հսկում երբեմնի գյուղի երբեմնի բանուկ արահետները, որոնց հետքն անգամ արդեն չի նշմարվում…

Գուցե հենց այդպես էլ կա, գուցե իսկապե՛ս Սոնայի անմահ հոգին աննկատ հսկում է երբեմնի բանուկ արահետները: Ի՞նչ իմանաս:

Համենայն դեպս, ոչ ոք մինչև հիմա չի վիճարկել սույն վարկածը, երևի գոնե այն պարզ պատճառով, որ, ինչպես ասում էին նրան ճանաչող մեր մեծերը, Սոնան շատ բարի կին է եղել, աղուհացո՛վ, ժպտերե՛ս:

Եվ մի՞ թե դրա ապացույցներից մեկն էլ այն չէ, որ մինչև հիմա ոչ մի՝ ներքևից մոլորվելով վերև բարձրացած անասուն գայլի բաժին չի դարձել, կամ էլ գլորվելով ձորը՝ փշուր-փշուր չի կորել փշով-բանով

խիտ-խիտ ծածկված-խճճված չգիտես ինչո՛ւ ցայսօր էլ անհամեստաբար գյուղ կոչվող այս ամայի ու սարսափազդու վայրում:

Ոչ ոք չի վիճարկում, բացարձակապես ոչ ո՛ք, բացի աշխարհագետ (չշփոթել աշխարհագրագետի հետ) Նապո Օվեսից, որի բերնափրփուր հավաստիացմամբ՝ դա ո՛չ ծխնելույզ է ու ո՛չ էլ հեռադիտակ – չէ՞ որ նույնիսկ գյուղական՝ արդեն հարթավայր իջած դպրոցի անգամ առաջին դասարանցին անգիր գիտի, որ դա ընդամենը … երկրագնդի բացված առա՞նցքն է, որի շուրջը հենց ինքն էլ՝ երկրագունդը, ճը՛ռ հա ճը՛ռ պտտվում է օրնիբուն: Դա մոտավորապես կարելի է համեմատել Դունդուլ Պակիի սայլի՝ սռնակի շուրջը պտտվող փայտե անվի հետ:

(Ի դեպ, Նապո Օվեսը մեկ-մեկ մեքենայի շարժիչի աշխատանց յուղ է լցնում առանցքն ի վար՝ շփումը հնարավորինս մեղմելու, քանզի առաջացած ահռելի ջերմությունը կարող է անսպասելիորեն ժայթքել … դե, ասենք թե ավերիչ երկրաշարժով:

Ավելորդ իրարանցում չառաջացնելու մարդասիրական մղումով Նապո Օվեսը չի ասում, բայց քիչ-միչ հասկացողներն ախր կռահում են, որ հնարավոր է նաև վատթարագույն վերջաբան. առանցքը կարող է հետզհետե մաշվել … ու մի գեղեցիկ օր էլ պարզապես առնել ու հո՛պ կոտրվել:

Ինչպես, ասենք, Մուկ Մինասի հեծանիվի անվադողի առանցքը, երբ դեռ չի պարզվել, թե որ տիեզերական արագությամբ սլացող Մուկն օդում մի քանի անգամ գլուխկոնծի տալով հայտնվեց 8-Բորիսի արտում՝ բազմաթիվ քերծվածքներով ու կապտուկներով:

Պատկերացնո՞ւմ եք, թե ի՛նչ ահավոր հեռանկարի առջև է հայտնվել մարդկությունը…

Իհարկե չեք պատկերացնում, որովհետև Նապո Օվեսն այդ մասին մեծահոգաբար լռում է, չի ասում՝ խնայելով ձեզ, սակայն ինքը դա շատ լավ է գիտակցում, ինչպես նաև ի վերուստ իր ուսերին դրված՝

մարդկությունը վերահաս ողբերգությունից փրկելու առաքելությունը… Եվ այդ պահին, այսինքն՝ յուղը երկրագնդի առանցքը լցնելիս, նա իրեն աշխարհի փրկիչն է իրավամբ համարում):

Եվ դա հաստատից էլ հաստատ է ու անկասկած, որովհետև երբ ինքը մի շիշ մանդարինի (չար լեզուներն ասում են՝ տեսողության վրա վատթարագույնս ազդող) պղտոր ինքնաթոր օղի խմելուց հետո մի կերպ կարողացել է հարմարվել երկրագնդի առանցքի վրա, հանկարծ այնպիսի խոր գլխապտույտ է զգացել, որ թրմփացե՛լ է պապիս աղբյուրի՝ կում-կում չխմվելու հետևանքով հավաքված ջրի մեջ, սակայն «էվրիկա՛» չի՛ գոչել միայն ու միայն այդ բառը չռաստի պես հատկապես ա՛յդ պահին մոռանալու պատճառով:

Ճակատագրի ի՞նչ դառը քմծիծաղ. ա՛յ, եթե չմոռանա՛ր այդ չարաբաստիկ բառը, Նապո Օվեսն էլ Արքիմեդի, Գալիլեյի, Նյուտոնի ու անգամ Համբարձումյանի պես կմնար գիտության պատմության մեջ: Եվ թող չար նախանձից փուչիկի պես պայթե՛ր Մուկ Մինասը… Իսկ ֆիզիկայի հարգելի Վարդիթերն էլ վարդի թերթիկների պես ամոթից քրտնելու չափ կարմրե՛ր դասամատյանում Նապո Օվեսի ազգանվան դիմաց շարած «երկուսների» համար:

Եվ դա մորուքը տմբտմբացնելով անպայման կհաստատեր այս պատմական իրադարձության ականատես, հայտնի գիտնական-հնագետ Վորոնովը՝ Յուրիկը (նրա հետ Նապո Օվեսը, քլունգն ու բահը և այլ անհրաժեշտ աշխատանքային գործիքները շալակին, հնագիտական պեղումների համար սարուձորեր է թե-թև՛-թեթև՛, նապաստակի պես – այստեղից էլ Նապո մականունը – հո՛պ-հո՛պ ցատկոտելով կտրել-անցել՝ համարյա ամբողջ այն ափաչափ երկրամասը, որը կոչվում է Հոգու երկիր…), եթե նրան տարիներ առաջ սպանած չլինեին կնոջ՝ Սվետլանայի ու աղջկա՝ Թամարայի ներկայությամբ՝ դուրս կանչելով բնակարանից:

## 8. ՀԱՎԱՍԱՐՈՒՄ
## (միջանկյալ պատմություն–3)

*Արամ Խոջիկյանին*

–Զարմանալի՛ է,– ստեպ-ստեպ կրկնում է *Նա*՝ վարժ մատներով փաթաթելով հերթական գլանակն ու անշտապ ծխի թանձր քուլա առաքում երկինք՝ կարծես թեթևաշաղ կապ հաստատելով իր մտորումների և բնության առեղծվածների միջև,– շա՛տ է զարմանալի…

–Ի՞նչը, ի՞նչն է զարմանալի,– սովորականի նման հետաքրքրվում եմ ես, թեև շատ լավ գիտեմ, որ խոսքը հաստատ աշխարհաստեղծման գաղտնիք-առեղծըվածների մասին չէ:

Իսկ հետաքրքրվում եմ, որովհետև եթե ես հանկարծ համարձակվեմ չհետաքրքրվել, *Նա* ի՞նքը պիտի անպայման ու խստորեն հետաքրքրվի, թե այդ ինչպե՞ս է, որ ե՛ս՝ մի մատ երեխաս, չեմ հետաքրքրվում, թե ի՞նչն է զարմանալի այս մե՛ծ, այս անհասկանալի՛ կյանքում:

Ուրեմն, իմ «Ի՞նչը, ի՞նչն է զարմանալի» հարցին *Նա* արդեն որերորդ անգամ առաջին անգամվա լրջությամբ համբերատար ու անշտապ սկսում է բացատրել՝ վերջաբանի մասնակի ու պարտադիր փոփոխությունով ընդգծելով տվյալ պահի լարվածության ու խորհրդավորության նշանակությունը:

–Զարմանալի՛ ժողովուրդ ենք,– սովորականի պես սկսում է *Նա* և գլանակելով *իր* աճեցրած ու «ջարդած»՝ Էրգրից *իր* իսկ բերած ու այդ պատճառով էլ «Տրապիզոն» կոչված արտակարգ բուրումնավետ թութունը, որը ոսկե հուլունքաշարի պես օղա՛կ-օղա՛կ բարձրացնում էր ծխախոտատուփից: Սկսում է նա ու անսպասելիորեն էլ լռում՝ խոսքին բազմիմաստություն հաղորդելով: Եվ երբ զգում է, որ արդեն հասել է ներգործուն նպատակին, շարունակում է բացատրականը,– զարմանալի՛ ենք, որովհետև մեր զավակներին Ռազմի՛կ ենք կոչում ու հրամայում՝

Արշավի՛ր կամ համշենական տարբերակով՝ Արշավե՛լ: Այստեղ անպայման պիտի ասեմ, որ գիտնական կոչվող որոշ «խելոք» գլուխներ հրաժարվո՛ւմ են այս անունից՝ այն համարելով *պատահական* հայկական անուն… Ասում են՝ Արշավիրը զենդերե՞ն է, այլերե՞ն է, միայն թե հայերե՞ն չէ… Ողբա՛մ զքեզ, հայ ժողովուրդ, զի ինքներս ենք հրաժարվում մեր իսկ հարստություններից… Հասկանո՞ւմ ես, անուններից բացի նաև ուրիշ-ուրիշ հարստություններից ենք հրաժարվում: Իսկ կյանքում շատ բան հենց անունից էլ սկսվում է, անունով է պայմանավորվում է ու մեկնաբանվում: Անունը ազգային մեծագույն հարստություններից մեկն է:

Նորից տիրում է սթափեցնող լռություն:

–Հա՛, էն էի ասում… Ուրեմն, *Վահա՛ն* ենք կոչում, *Ապավե՛ն* ենք կոչում, *Ազա՛տ* ենք կոչում… Չէ՛, ուզում եմ, որ ինձ ճիշտ հասկանաս. այս անունների մեջ զարմանալի ու արտասովոր ոչինչ չկա: Սա անունների մի՝ առաջին հայացքից կուռ թվացող տրամաբանաշար է: Պարզապես զարմանալին այն է, որ այս շարքում որոշ կարևորագույն օղակներ են բացակայում – մենք մեր զավակներին *Հավա՛տ* չենք կոչում, *Ոգի՛* չենք կոչում: Եվ հույս կոչվածն էլ *Հո՛ւյս* չէ ամենևին, այլ ընդամենը …, կարո՞ղ ես պատկերացնել, ինչ-որ տեղ հեռվում թեթև՛ ու աղո՛տ փայլփլող *Հուսի՛կ* : Դու հասկանո՞ւմ ես իմ ասածը: Նույնիսկ մեր կրած տառապագին *խա՛չն* է մանրացել… Մանրացե՛լ, մանրացե՛լ ու ընդամենը *Խաչի՛կ* է դարձել: Սրանից հետո, իհարկե, մեզ մնում է միայն հերոսաբար *մարտիրոսվե՛լը*…

Սա այն սկիզբն է, որն անպայման պիտի ուրույն շարունակություն ունենա.

–Այ, դու սովորում ես հայկական դպրոցում, պատմության պատկերազարդ դասագիրք ունես ու տեսնում եմ, որ ագահաբար կարդում ես: Եվ շատ էլ ճիշտ ես անում, որ կարդում ես: Հիմա շատ քչերն են կարդում: Եթե ես էլ քեզ նման դպրոցում սովորած և ագահաբար կարդացած լինեի մեր պատմության

դասագրքերը, ի՛նքս էլ կպատասխանեի իմ հարցերին: Իսկ քանի որ ես դպրոց չեմ գնացել, դո՛ւ ասա ինձ. եթե մենք ազատության երգերով վերադարձել ենք ռազմադաշտից, մի՞ թե մենք *մեծ հավատով* ու *հպարտ ոգով* ռազմադաշտ չենք շտապել… Եթե այդպես չլիներ, մենք այսօր չէինք զրուցի մեր կարևոր անելիքների մասին:

*Նա* հենց այդպես էլ ասում է՝ *մենք…, մեր…*, այսինքն՝ կարծես հենց մե՛նք էինք, երկուսո՛ւվ, մեծ հավատով ու հպարտ ոգով ռազմադաշտ արշավել ու ազատության երգերով սար ու ձոր թնդացնելով վերադարձել հայրենական տուն:

Այսքանից հետո, բնականաբար, *Նա* ինձ էլ էր իր կարևոր գործերի մասնակիցը դարձնում, և դա, ինչ խոսք, անսահմանորեն շոյում էր իմ մանկական ինքնասիրությունը:

Հետո *Նա* բազմանշանակ լռում է, որպեսզի ես՝ գնահատելով պահի լրջությունն ու վեհությունը, կարողանամ հասցնել պատկերացնել Հայոց ռազմադաշտերն ու փառապանծ հայ հերոսների՝ այսինքն՝ իմ ու *Նրա* անկասկածելի հաջողությունները, որոնց արդյունքում թշնամին խուճապահար ճողոպրում է, իսկ մենք հաղթանակած վերադառնում ենք տուն…

–Ա՛յ, քո անունն Արտավազդ է: Եվ դու արդեն հաստատ գիտես, որ ամեն ժամանակաշրջան իր բնորոշ անուններն է ունենում: Քո համուհոտով, գարունով բուրող անունը խաղաղ ժամանակաշրջանի անուն է, արդար երկրագործի անուն. *արտ – վազ*… Զգո՞ւմ ես անվանդ վեհությունը, անվանդ փառավորությունը, ու փարթամությունը: Հապա մեկ էլ դու արտասանիր, բայց արտասանիր հոգուց բխող աղոթքի պես՝ *ա՛րտ, վա՛զ* ու նորից կրկնիր՝ *ա՛րտ, վա՛զ*… Զգո՞ւմ ես մեր արտերի լայնությունն ու Հայոց խաղողի վազի սլացքը… Արտը կհերկենք, կցանենք, կհնձենք և մեր սեղանը կճոխացնենք սուրբ հացով, վազի տված խաղողն էլ կճզմենք հատիկ-հատիկ, և կաթիլ-կաթիլ գինի կքա-

մենք ու կխմենք անարատ արեգակնահյութը… Խաղաղ կյանքի *ազդ* կա քո անվան մեջ: Հավատա՛, որ այդ մասին է պատմում մեր Արքա Արտավազդի Վարքը. ախր խաղաղ ժամանակաշրջանին ու խաղաղ կյանքին հասնելու համար *հպարտ ոգի* ու *մեծ հավատ* է պետք ունենալ: Դե՛, թող ասեն այն խելոքները, որ Արտավազդն էլ հայկական անուն չէ… Մի՞ թե ճիշտ չեմ ասում ես,– ե՛ս, որ նույնիսկ մեկ օր չեմ սովորել դպրոցում, բայց ո՛չ իմ մեղքով իհարկե… Եվ Հայոց պատմության իմ դասագիրքը *Մեծ Եղեռնի* քառուղիներն է եղել, և այդ դասագրքի ամեն տողն ու բառը, ամեն ստորակետն ու բազմակետը, շեշտն ու բութը ես գիտեմ… Ես շատ լա՛վ գիտեմ… Ես անգիր գիտեմ նույնիսկ չգրված նախադասությունները:

*Նրա* սուր ու խոհուն հայացքն անպայման պատասխան էր ակնկալում:

Եվ իմ դրական պատասխանից ոգևորված՝ *Նա* չգիտես ո՛ւմ է ուղղում իր ավանդական դարձած հարցը.

–Բա էլ ինչո՞ւ…

Անկեղծ ասած՝ ե՛ս էլ եմ ընկնում մտորումների մեջ ու զարմանում՝ ախր իսկապես՝ ինչո՞ւ:

Ես հետզհետե մի մե՛ծ, անընկալելի մեծ անարդարություն եմ սկսում տեսնել մեր անվանակոչման համակարգում. ախր, իսկապես, մենք *Ռազմիկ* ունենք, *Ապավեն* ունենք, *Վահան* ունենք, *Ազատ* ունենք, *Վրեժ* ունենք: Իսկ *Ոգի* չունենք, *Հավատ* չունենք, *Հույս* չունենք… Այդ դեպքում, իսկապես, որտեղի՞ց պիտի *Արտավազդ* լինի: Ա՛յ քեզ բան:

Ես զգում եմ, որ այստեղ ինչ-որ բան այնպես չէ, ինչ որ բան այլ կերպ պիտի լինի:

«Դժվա՛ր խնդիր է»,– մտածում եմ ես ու հանկարծ հիշում մաթեմատիկայի ուսուցչուհուս:

Կանգնում էր հարգելի Հասմիկը գրատախտակի մոտ, կավիճը ձեռքին, և անշտապ ասում. «Խնդիրը լուծելու համար պիտի կազմես հավասարում»: Ապա կրկնում էր վանկարկելով. «Հա՛-վա՛-սա՛-րո՛ւմ»:

Ուրեմն, այսպես: Ես թելադրում եմ մեր խնդրի պայմանները. մենք ունենք ռազմիկ, որը մեր ապավենն է ու վահանը, նա ազատություն է բերում, այսինքն՝ ազատ ապրելու հնարավորություն:

Բայց ազատություն բերելու համար նա պիտի ոգի՛ ու հավա՛տ ունենա:

Ես ավազի վրա *Նրա* ձեռնափայտով կազմում եմ հավասարումը. *Ռազմիկը, Արշավիրը, Ապավենը, Վահանը, Ոգին, Հավատն ու Ազատը գումարում ու ստանում եմ՝ Արտավազդ*

–Չէ՛, այսպես չի կարող շարունակվել,– *Նրա* ձայնը դանակի պես խրվում է լռության մեջ,– մենք այսպես շարունակելու իրավունք չունենք: Մեր դարավոր սխալը պիտի ուղղենք, որ մեր բանն էլ վերջապես ճիշտ հունով ընթանա:– Հետո բազմանշանակ ավելացնում է՝ ձեռքն աղմուկով իջեցնելով ծնկին՝ շը՛-րը՛խկ,– է՛է՛խ, շա՛տ մեծ սխալ ենք թույլ տվել… Շատ մե՛ծ… Հապա՛ա՛…

Ես, իհարկե, չէի հասկանում, թե ի՛նչ էին նշանակում այդ խորհրդավոր շրխկացող «է՛է՛խն» ու «հապա՛ա՛ն», բայց զգում էի, որ դրանց միջև ընկած «շատ մեծ սխալ ենք թույլ տվել» տարածությունն անպայման երկար է ու անպայման ծեփծփված մեծ ցավերով ու ողբերգություններով, որոնք գուցե թե պատմության պատկերազարդ դասագրքերում դեռ տեղ էլ չեն գտել, բայց շռայլորեն կուտակված են *նրա պատմության անտիպ դասագրքում:*

Նախորդ անգամ այսպես էր ավարտվել *Նրա*՝ իմ մասնակի միջամտություններով «զարդարված» համարյա թե մենախոսությունը: Իսկ այս անգամ վերջաբանի խորհրդավոր «հապան» փոխարինվում է ոչ պակաս խորհրդավոր նախադասությամբ. «Մեծ սխալը միայն մեծ մարդը կուղղի»:

–Իսկ ո՞վ է այն մեծ մարդը, որը մեր դարավոր մեծ սխալը կուղղի:

–Դո՛ւ պիտի ուղղես այդ մեծ սխալը, որ անվանդ գոյության իրավունքն ապահովես,– *Նա* բավականու-

թյամբ սղալում է բեղերը:– Հապա բեր այստեղ հավասարումդ, տեսնենք:

Բայց *Նա* չի թույլատրում, որ ես իր ձեռնափայտով կազմեմ *իմ* հավասարումը *մեր* ավազի վրա: Եվ ես ստիպված *պատահական* ճիպոտով նորից գրում եմ իմ հավասարումը…

Գրելուց հետո նկատում եմ, որ *Նրա* թավ բեղերի տակ չարաճճի մի ժպիտ է ուզում թաքնվել թպրտուն թռչնակի նման, բայց չի կարողանում և ուր որ է թևին տալով կսավառնի երկինք՝ թութունածխի պես շաղվելով երկնակամարում:

–Հիմա տեսա՞ր մեր ամենամեծ սխալը, թե՞ դեռ չես տեսնում:– *Նա* նորից սղալում է բեղերը:– Մեր ամենամեծ սխալն այն է, որ *Մեր հավասարումը* … իրականում *անհավասարություն է*, այն էլ ոչ միայն ինչ-որ պատահական ճիպոտով կազմված, այլև գրված ավազի վրա: Մի՞ թե չես տեսնում, որ մեր *Հավատից* հետո ու *Ազատից* առաջ բացակայում են երկու կարևոր օղակներ՝ *Հույսն* ու *Հաղթանակը*: Դե, իսկ հիմա դեն գցիր *պատահական* ճիպոտն ու քո մատներով, թող որ դեռ անվարժ, բայց անպայման քո՛ մատներով *Մեր հողի* վրա կազմիր *Քո* հավասարումը… Որովհետև դու պիտի զգաս հավասարումիդ ամեն բառը, ամեն տառը…

Եվ ես *նրա* քաջալերող ժպտի ուղեկցությամբ *իմ ձեռքով* ուղղում եմ իմ անհավասարությունը. սկզբում ետ եմ անում ավազն ու խնամքով մաքրում մինչև հողը, ապա իմ մատներով գծում եմ Հայաստանի քարտեզը և *մեր հողի* վրա կազմում *իմ* հավասարումը. *Ռազմիկին, Արշավիրին, Ապավենին, Վահանին, Ոգուն, Հավատին, Ազատին գումարում եմ Հույսն ու Հաղթանակը և ստանում՝ Արտավազդ:*

…Շատ չանցած՝ *Նա* որդեգրում է չորս նորածին որբուկների և անվանակոչում.

*Ոգի՛, Հավա՛տ, Հո՛ւյս, Հաղթանա՛կ:*

## 9. «ԱՌԱՆՑ ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ, ԱՆԴՈՒՆԴ ԵՂՐԻՆ»

Շատ տարիներ առաջ, երբ ես դեռ դպրոցական էի և նոր էի սկսում իմ գրական առաջին թոթով քայլերն ու որպես «խոստումնալից սկսնակ» պար-բերաբար տպագրվում էի աշխարհասփյուռ հայ մանուկների սիրելի «Պիոներ-կանչ» թերթում, մեր ընտանիքի բարեկամ, խոշորագույն գրող Եվգենի Եվտուշենկոն խնդրեց պատրաստել բանաստեղծությունների մի շարք՝ թարգմանելու համար:

Ավելորդ է ասելն անգամ, որ նույն օրն էլ թևավորված գործի անցա:

Հիմա չեմ կարող բացատրել, թե ինչո՛ւ ես որոշեցի, որ բանաստեղծություններն անպայման պիտի լինեն կոմունիստական-հայրենասիրական հնչեղության:

Գուցե պատճառն այն էր, որ նման բանաստեղծություններ էին գրում խորհրդային խոշորագույն հեղինակներից շատերը:

Իսկ քանի որ իմը «պեյզաժային լիրիկան էր ու սիրո տառապանքը», երեսով գետնին չտալու համար ամբողջ գիշեր քրտնաջան աշխատեցի և «երկնեցի» Մեծ հոկտեմբերի՝ «մութ հյուղերի չար աշխարհը հիմնահատակ քանդած» դրոշներին ու մեր խորհրդային ժողովրդի թանկագին ղեկավար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի գլխավորությամբ հարազատ կոմունիստական կուսակցությանը նվիրված 4-5 երկարաշունչ բանաստեղծություն, որտեղ «քաղբյուրոն» բավականին հաջող հանգավորված էր «կյանքի աղբյուրով» և կային նաև մոտավորապես այսպիսի վերամբարձ տողեր.

*Անապատն ես այգի արել*
*ու փոթորիկ սանձել համառ,*
*Եվ անթափանց խավարում գոռ*
*լույս ես դարձել մարդկանց համար:*
*Թույլերին չես դավել երբեք,*
*այլ օգնել ես դժվար ժամին,*

*Սա՛ր ես դարձել նրանց առաջ,*
*ոռնացել է երբ ցուրտ քամին:*
*Ամբարել ես քո հոգու մեջ լոկ մաքուրը,*
*լոկ վեհ բարին,*
*Խաղաղություն մաղթել ես դու մարդկանց,*
*արար այս աշխարհին:*

Եվ այսպես՝ մի քանի էջ նույն ոգով՝ տողեր, որոնք, ըստ իս, հայրենասիրական պաթոսով անպայման պիտի անասելի զարմացնեին ու մինչև հոգու խորքը ցնցեին Եվգենի Եվտուշենկոյին: Հետո խնամքով կատարեցի դրանց տողատակի թարգմանությունները: Ես արդեն պատկերացնում էի, թե ինչպիսի՛ գերադրական բառերով է Եվտուշենկոն խրախուսելու և ոգևորելու ինձ:

Առավոտյան նորաթուխ «գործերս» թվով քիչ թվացին, և ես քանակի համար շարքի վերջում ճարահատյալ ավելացրեցի սիրո ու պեյզաժային լիրիկայից մեկական բանաստեղծություն և քնաթաթախ ու ջարդված մարմընով, սակայն ոգևորված «գիշերային առողջ երկունքով»՝ շտապեցի բարեկամիս տուն: Տվեցի տետրն ու մեծամտորեն ինքնագոհ ու ինքնավստահ վրա բերեցի.

– Ես երջանիկ եմ, որ իմ թիկունքին սարի պես կանգնած է ժամանակակից խոշորագույն բանաստեղծներից մեկը՝ Եվգենի Եվտուշենկոն:

Նա բարի ժպտաց ու վառելով «Ռիինսթոն» ծխախոտը՝ արագորեն աչքի անցկացրեց բանաստեղծություններիս առաջին 2-3 տողերը, վերջին երկու գործերն ընթերցեց ամբողջությամբ երկու անգամ և – զարմանալի՛ բան – հենց դրանք էլ ընտրեց.

– Այս գործերում բառի կախարդանք կա: Իսկ սըրա՞նք… Այստեղ ցանկացած բառ կարելի է փոխարինել բացականչական նշանով և ոչինչ չի ավելանա, ոչինչ չի պակասի: Ու գիտեցիր նաև, որ ես իսկապե՛ս կանգնած եմ քո թիկունքին, բայց ո՛չ որպես սար, այլ որպես … անդո՛ւնդ:

Ու այդ օրվանից այդպես էլ ապրում եմ. առանց բացականչական նշանների՝ անդունդի եզրին:

**Առաջին հետգրություն**

Այսօր ես խորապես ափսոսում եմ, որ ժամանակին գրի չեմ առել իմ չափազանց հետաքրքիր և ուսանելի զրույցներն ականավոր բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոյի հետ, չէ՞ որ նա բազմիցս եղել է մեր տանը կնոջ՝ իռլանդուհի Ջանի հետ, ես էլ, իմ հերթին, ազատ ժամանակիս մեծ մասը նրանց տանն էի անցկացնում, որը գտնվում էր Գուլրիփշի շրջանի Ագուձերա ավանում՝ ծովափին: Հարևանությամբ ապրում էին հայտնի գրողներ՝ աբխազ Իվան Թարբան, վրացի Կարլո Կալաձեն…

Եվտուշենկոն շատ լավ գիտեր բժշկության ու գինեգործության հիմունքները, ինչ խոսք՝ իմաստուն մարդ էր, անձնավորությո՛ւն, գիտելիքի շտեմարան. նմանները երևի ծնվում են Աստծո պատգամը մարդուն հաղորդելու համար:

Բանաստեղծն անսահմանորեն սիրում էր զրուցել ծնողներիս հետ, լսել նրանց՝ հատկապես հորս՝ Հայկի զրույցները, մորս՝ Գեղանուշի պատրաստած խորտիկների համար պարզապես գժվում էր, իսկ թուրշին համարում էր հանճարեղ հայտնագործություն:

– Նման զրույցները հաճախ թեմաներ են դառնում բանաստեղծությունների համար, հաճախ էլ բանաստեղծությունները հարստացնող կարևոր «մանրուքներ»,– ասում էր Եվտուշենկոն,– հետաքրքիր զրուցակից ունենալը գրողի համար մեծ բախտավորություն է:

Ինձ թվում էր, թե մեր հանդիպումներին վերջ չի լինելու: Եվ ես աններելիորեն շատ եմ անփույթ գտնվել՝ գրի չառնելով մեծ բանաստեղծին բնութագրող «տիպական մանրուքները»…

Եվտուշենկոն բարձր էր գնահատում հայ պոեզիան, հատկապես Պարույր Սևակի և Գևորգ Էմինի, իսկ ավելի երիտասարդներից՝ Ռազմիկ Դավոյանի ստեղծագործությունը:

Հիշում եմ, թե ինչպես մի անգամ եկավ մեր տուն իր 03 թողարկման կարմիր գույնի «Ժիգուլի» մակնիշի

մեքենայով և ասաց, որ երկար մնալ չի կարող, ժամանակ չունի, շտապում է, որովհետև Վրաստանում պոեզիայի փառատոն են անցկացնում: Հետաքրքրվեց Արմեն Շեկոյանի բանաստեղծություններով: Բարեբախտաբար, «Գարուն» ամսագրի վերջին համարում լույս էր տեսել Շեկոյանի ծավալուն շարքը, որն ինձ շատ էր դուր եկել: Այդ մասին ասացի Եվտուշենկոյին, ցույց տվեցի ամսագիրը: Նա ուրախացավ:

Եթե չեմ սխալվում, խոսքն ինչ-որ մրցանակաբաշխության մասին էր, որի հանձնաժողովի անդամներից մեկն էլ ինքն էր:

Նա ինձ մի քանի անգամ ասել էր՝ բանաստեղծություններս Էմինին ու Դավոյանին ուղարկելուց ու նրանց կարծիքն իմանալուց հետո.

– Դու ունես բանաստեղծ դառնալու բոլոր տվյալները: Բայց քեզ պակասում է Երևանի սրճարանների՝ սիգարեթի թանձր ծխով հագեցած թունդ մթնոլորտը…

Ես այսօր էլ զգում եմ այդ շա՛տ մեծ պակասը…

Ու նաև հայկական բարձրագույն բանասիրական կրթության պակասն եմ զգում, ինչպես նաև ռուսական բարձրագույնի … խանգարող ավելորդությունը:

**Երկրորդ հետգրություն. ի՞նչ է բանաստեղծությունը**

Ի՞նչ է բանաստեղծությունը, գրականությունն ընդհանրապես:– Հարց, որ միշտ էլ հուզել է ոչ միայն գրականագետներին, այլև՝ ընթերցողներին:

Եվ յուրաքանչյուր ոք յուրովի է պատասխանում առաջին հայացքից պարզ այս հարցին: Օրինակ, բանաստեղծ Զարզանդը (Սաշա Մկրտչյան), որն ինձ 5-րդ դասարանում հայոց լեզու և գրականություն է դասավանդել՝ կարճ ժամանակով փոխարինելով մեր հիմնական ուսուցչուհուն՝ Քարզուհի Սարգսյանին, մի անգամ դասի ժամանակ ասաց.

– Մինչև մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ ընդունվելս ես հաստատ գիտեի, թե ինչ է գրականությունը… Բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո դժվարանում եմ պատասխանել…

Այսօր նա երևի կասեր՝ իսկ հիմա հաստատ չգիտեմ:

…Հիշում եմ իմ լավ բարեկամ Եվգենի Եվտուշենկոյի ծանր խոսակցությունը գրողների ու գրականության բախտը տնօրինող մոսկովյան բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի հետ:

Խոսքը «Հատապտղային տեղեր» («Ягодные места») հրաշալի վեպի մասին էր, որի տպագրությունը տարբեր պատճառներով ձգձգվում էր – գրաքննությունն անընդհատ պահանջում էր նորանոր կրճատումներ կատարել, ինչն էլ ափից հանում էր հեղինակին:

– Այս հատվածն էլ պիտի կրճատեք,– հերթական անգամ աներեսաբար պահանջում էր պաշտոնյան,– եթե, իհարկե, ուզում եք, որ վեպը տպագրվի…

– Բայց դա վեպի ա՛ղն է…

– Ա՛յ, խոսքն էլ հենց այն մասին է, որ Դուք անընդհատ ա՛ղ եք ցանում մեր վերքերին,– ինձ թվաց, թե «աղ» բառը լսելով՝ պաշտոնյան անչափ ուրախացավ:

– Այո, բայց իմ աղը ծովայի՛ն է, որը վերք է բուժում…

Գուցե գրականությունն իրո՞ք վերք բուժող ծովային աղ է…

…Իսկ այդ զարմանալիորեն իմաստուն ու բազմաշերտ «Հատապտղային տեղեր» վեպը լույս տեսավ 1981 թվականին, ցավոք սրտի, բազմաթիվ կրճատումներով…

Եվ նույնիսկ այդ անխիղճ կրճատումներից հետո այն կարդացվում էր հետաքրքրությամբ և բավականին մեծ աղմուկ հանեց:

## ՊԱՏԱՀԱԾԸ ՊԱՏԱՀՈՒՄ Է ԳՆԱՑՈՂԻՆ

Մահվան լուր առնելիս տատիկս հառաչելով ասում էր՝ պատահածը պատահում է գնացողին, իսկ մնացողը կլացի, կլացի և կհամակերպվի: Կշնչի օդը, կխմի ջուրը… Գնացողի հետ ոչ ոք չի գնացել…

Եվ կտեսնի աշխարհի գեղեցկություններն ու կշարունակի հիանա՛լ ու սքանչանա՛լ, խմել արևացոլ կարմիր գինին, երազել, սիրել ու տառապել…

Բայց այդպե՞ս է արդյոք, արդյո՞ք միայն գնացողին է պատահում «պատահածը»…

Իսկ մե՞նք…

Մի՞ թե մենք հոգեպես չենք աղքատանում ամեն գնացողի հետ, մի՞ թե չի դատարկվում մեր էությունը…

Չէ՞ որ ամեն մեկս յուրովի է տեսնում աշխարհի գեղեցկությունն ու իր անձնական ընկալումով արտացոլելով ու իմաստավորելով ստեղծագործություններում՝ հարստացնում մեր կյանքը:

Իհարկե, գնացողի հետ ոչ ոք չի գնացել, բայց ամեն գնացող իր հետ մի ամբողջ աշխարհ է տարել:

Հիմա նստած այդ մասին եմ մտորում, որովհետև քիչ առաջ կյանքից անսպասելիորեն հեռացավ Զարզանդը՝ Սաշա Մկրտչյանը (1947-2013), աշխարհի արտակարգը յուրովի ընկալող մի բանաստեղծ.

*Մենք չգիտենք, որ քնե՛լ ես դու,*
*Որ էլ չարթնանա՛ս քո խաչի ներքո…*
*Եվ հոգիդ երկինք համբառնեց մաքուր,*
*Բայց մե՛ր մեջ մնաց ծանր խաչը քո:*
*Սակայն ի՞նչ անես. լռե՞ս, թե՞ ծայնես,*
*Կյանքն է կրծկրվել ու դարձել մի բուռ…*
*Ա՛խ, արդեն ոչ ոք այս աշխարհն այնպես*
*Չի տեսնի, ինչպես տեսնում էիր դու:*

Չգիտեմ, գուցե սխալվում եմ, բայց ինձ թվում է, թե մարդկային կորուստն այսօր շատ թեթև է տարվում՝ զարմանալիորեն անզգա՛, անցա՛վ:

## ԳՆԴԱԿԱՀԱՐՎԱԾ ՀԱՏՈՐՆԵՐ

Խոստովանում եմ. Հայկական հանրագիտարանի 5-6-7-րդ հատորներն առանց խղճի խայթ ու ամոթ զգալու «գողացել եմ» (թեև, ինչպես ասում են, գիրք գողանալը գողություն չէ) 1992 թվականի դեկտեմբերին – վրաց-աբխազական պատերազմի ժամանակ – Սուխումի շրջանի Լեչկոպ գյուղի Ստեփան Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցի գրադարանից ու բերել մեր տուն… «Գողացել» եմ ես՝ կրթօջախի տնօրենս, թեև իմ անձնական գրադարանում Հանրագիտարանի բոլոր հատորներն էլ կան՝ խնամքով կողք-կողքի շարված, միշտ ձեռքիս տակ…

Եվ ընթերցասեր շատ-շատերի ձեռքերի ջերմությունն են հիշում և դեռ երկար տարիներ պիտի հիշեն իմ գրադարանում հաստատված այս հատորները, որովհետև նրանք օգտագործման համար են, և ոչ երբեք գեղեցկության, ինչպես ընդունված էր մի ժամանակ շատ ընտանիքներում…

(Օգտվելով առիթից ասեմ, որ տարիներ առաջ, ի տարբերություն այսօրվա, գրքերի ու թերթերի «խելագարների բանակը» շատ մեծ էր, անսահման մեծ, համարյա բոլորը թղթի թափոն (մակուլատուրա) էին հավաքում և հանձնում հատուկ բացված ընդունման կետերում՝ փոխարենը գիրք գնելու կտրոն ստանում: Այն էլ ասեմ, որ մեկ գրքի կտրոնի «կշիռը» քսան կիլոգրամ էր, այսինքն՝ մեկ կտրոն ստանալու համար քըսան կիլոգրամ թափոն էր պետք հանձնել: Ոմանք նույնիսկ մարքսիզմի դասականների՝ Լենինի, Մարքսի և Էնգելսի ստեղծագործությունների լիակատար ժողովածուներն էին ստանում բաժանորդագրությամբ: Եվ դա իրադարձություն էր համարվում: Գրադարանը

խորհրդային քաղաքացու կահույքի կարևոր բաղկացուցիչ մասերից մեկն էր դարձել: Նույնիսկ ընթերցանությունից հեռու մարդկանց համար հարուստ գրադարան ունենալն այն տարիներին արժանապատվության հարց էր: Իսկ մեր ընտանիքում միշտ էլ գրքի պաշտամունք է եղել՝ չնայած ծնողներիս «ցածրաստիճան» կրթությանը):

Իսկ ահա մի քանի օր է, ինչ դպրոցից իմ բերած հատորներն իրենց առանձին տեղն ունեն մեր գրադարանում: Եվ ինչո՞ւ միայն գրադարանում: Այս հատորներն իրենց ուրույն, անփոխարինելի տեղն ունեն արդեն նաև իմ կյանքում, իմ ճակատագրում, որովհետև հատուկ հատորներ են: Որովհետև այս հատորները ողբերգական կենսագրություն ունեն և ունեն ճակատագիր: Մարդու պես… Հայ մարդու…

Ֆիդայի-զինվորի…

Հայի կենսագրություն ու ճակատագիր:

Ծնվել են տառապանքով, տքնանքով ծառայել են մեր աշակերտներին, անմնացորդ … Եվ զինվորի պես՝ կանգնած դպրոցի գրադարանում, օգոստոսին ներկված պատի տակ (որովհետև դպրոցը նոր ուսումնական տարվան էր պատրաստվում և նորոգման աշխատանք էր գնում, երբ օգոստոսի 14-ին սկսվեց վրաց-աբխազական պատերազմը), անվախ նայել են վրացական գվարդիականների ինքնաձիգին ու … նրանց հռհռոցի տակ գնդակահարվել:

Ոչ ավել, ոչ պակաս – գնդակահարվե՛լ:

Զինվորի պես իրար հենված, զինվորի պես ուս-ուսի տված, իրար ուժ ու հավատ հաղորդելով-ներշնչելով:

Եվ վրացական մահաբեր արճիճը խոցել է նրանց սիրտը՝ դուրս գալով թիկունքից ու իր սև գործը «պատվով» կատարած՝ ուժասպառ ընկել պատի տակ:

Ահա այս հատորներն են, որ բերել եմ մեր տուն:

Որովհետև շատ բան են տեսել այս հատորներն ու, հետևաբար, շատ բան ունեն պատմելու… Եվ թող չզարմանա աստծո կամոք երբևէ այս տողերն ընթեր-

ցողը, եթե ասեմ, որ այս հատորները եղեռն են տեսել, դարձել եղեռնի վկաներ:

Իսկական եղեռն: Որովհետև գնդակահարվել են հայկական լինելու համար:

Եվ եթե ես կարողանամ ողջ մնալ՝ չընկնել վրացական գվարդիականների ձեռքը (նրանք խոստացել են տանջամահ անել ինձ՝ հայկական թերթի խմբագիր լինելուս համար), այս հատորները կհանձնեմ երեխաներիս՝ որպես ժառանգություն, որպես սուրբ մասունք, որպեսզի միշտ էլ՝ հավիտյանս հավիտենից հիշեն, զգաստ լինեն և երբեք չխաբվեն, բարեկամության սուտ ու թունավոր երդումների զոհ չդառնան:

Մեկ-մեկ էլ մտածում եմ, որ Հայոս-Քարթլոսի լեգենդը ջնջել է պետք մեր հիշողությունից, մեր ուղեղից, որովհետև ոչ մի բարեկամություն-եղբայրություն երբեք էլ չի եղել… Իսկ եթե անգամ եղել է, այսօր Աբխազիայում վրացիների վերաբերմունքը հայերի նկատմամբ ոչ մի բարեկամական քննություն չի բռնում:

Իսկ եղեռնի զոհ են դարձել ոչ միայն այս հատորները. գրադարանի բոլոր գրքերն էլ թափթփված են, կոխկրտված, երկարաճիտ զինվորական կոշիկներով ծեծված, մեծ մասը պատառոտված… Կեղտոտությունների մասին չեմ ուզում գրել՝ սրտախառնուք չառաջացնելու համար:

Եղեռնի զոհ են դարձել նաև գրադարանի պատերից կախված հայ գրողների, նկարիչների, արվեստագետների հանրածանոթ դիմանկարները (նմանները կան բոլոր հայկական դպրոցներում՝ Սիամանթո, Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան)… Ինքնաձիգի կրակահերթը բազմաթիվ «վերքեր» է բացել դիմանկարների վրա:

Խնայել են միայն … Կոմիտասի՞ն (չգիտես՝ բախտի քմահաճույքո՞վ է անվնաս մնացել Կոմիտասի դիմանկարը, թե՞ գիտակցաբար «պահպանել» են այն): –

Եվ դու այնպես ես ուզում աղաղակել արար աշխարհով մեկ՝ ո՞րերորդ անգամ խելագարվելու:

Որպես վերջաբան այն էլ ասեմ, որ «վրացական փառապանծ գվարդիականները», որոնք հաստատվել են Սուխումի շրջանի հայկական Լեչկոպ գյուղում բընակիչներին թալանչիներից (իբր թե) պաշտպանելու մարդասիրական նպատակով, դպրոցի դարպասը հրասայլով են բացել, մուտքի ու դասասենյակների դռները՝ պայթեցրել նռնակներով: Նույն ձևով պայթեցրել են նաև դպրոցի շենքում մի քանի ամիս առաջ բացված Սուրբ Հարություն եկեղեցու դռները:

Եթե Աստված տա, գյուղը թալանելու մասին կխոսենք հաջորդ անգամ…

*1992*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԱՆՏԱՌՈՒՄ
## (փաստագրական հեքիաթ)

Մեր ընթերցողներից շատերը լավ գիտեն, որ մեր Անտառում (ըստ գրանցված ու չգրանցված կանոնադրությունների) հաճախ են ժողովներ ու համագումարներ հրավիրում (օրինակ, ամենահայտնին մկների ժողովն էր, հետաքրքիր էր չղջիկների ժողովը, ցայսօր իրենց նշանակությունը չեն կորցրել նաև գորտերի և թռչունների ժողովները և այլն), որոնց աշխատանքին մասնակցող մեծուփոքր գազանները տարբեր կարգավիճակ ունեն հասարակական-քաղաքական կյանքում: Ի դեպ, այդ ժողովների բարեխիղճ սղագրությունը ջանասիրաբար պահվում է հայ գրականության ոսկե գանձարանում: Օրինակ, թռչունների ժողովը ես եմ սղագրել մի քանի տարի առաջ՝ 1987 թվականին՝ «Լեգենդ Ագռավի մասին» ապատեղեկացնող խորագրի ներքո, որը տպագրվել է 1989 թվականին «Մերանի» հրատարակչությունում լույս տեսած իմ «Արևաքամի» գրքույկում:

Բայց սրանց շարքում իր նմանը չուներ վերջերս Գուլրիփշի անտառում տեղի ունեցած հույժ գաղտնի ժողովը, որը հրավիրել էր գիշատիչների խիստ ծայրահեղական կազմակերպության խորհուրդը. այդ սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպության անդամները կյանքի տերերն էին համարվում: Ժողովի օրակարգում միայն մի հասունացած, ավելի ճիշտ՝ գերհաս հարց կար. իրենցից՝ գիշատիչներից բացի, մնացած բոլոր կենդանիներին անտառից արտաքսելու կամ ոչնչացնելու մասին (ի դեպ, նման «հաջող» փորձեր արդեն արվում են՝ առանց ժողովի ու համապատասխան որոշումների. այստեղ ու այնտեղ հոշոտված դիակներ

են «հայտնաբերվում», անտառի մութ կամ հեռավոր մասերում հայտնվելն արդեն վտանգավոր է դառնում):

Բուռն էր ժողովը, գործը մեկ-մեկ հասնում էր ծեծկըռտոցի, որովհետև իրար դեմ ծայրաստիճան սրված պատգամավորները ոչ մի կերպ չէին կարողանում որոշել, թե ինչպե՞ս են ազատվելու «մյուսներից»՝ ոչնչացնելո՞վ, թե՞ արտաքսելով, վերջապես ո՞րն էր դրանցից ամենաճիշտն ու ամենահարմարը, ամենաընդունելին:

Ընթերցողն արդեն երևի գլխի է ընկել, որ մի հարցում բոլորի կարծիքները համընկնում էին, այսինքն՝ Անտառում գիշատիչներից բացի այլ կենդանիներ չպիտի լինեին:

Տակտիկական հարցերն էին խնդրո առարկա:

– Նրանց բոլորին պետք է արտաքսե՛լ մեր հայրենի Անտառից:

– Այո՛, նապաստակներն Անտառում էլ ծա՛ռ չեն թողել, փորփրել ու կրծոտել են արմատները… Եթե այսպես գնա, մենք շուտով Անտա՛ռ չենք ունենա:

– Ոչնչացնե՛լ նրանց, ոչնչացնե՛լ: Կազատվի միայն փախչո՛ղը…

– Իսկ հոպոպնե՞րը… Նրանց անտանելի հոտից մեր Անտառում տե՛ղ չենք գտնում… Կա՛մ նրանք, կա՛մ մենք… Ուրիշ ճար չկա՛:

– Նրանք նույնիսկ թռչունների կազմակերպություն են ստեղծել, որը «Կռունկ» է կոչվում, իբր թե մշակութային-բարեգործակա՛ն… Բայց իրականում զենքի համար փող է հավաքում… Գաղտնի՛…

– Ոչնչացման կամ արտաքսման ենթակաների ցուցակն արդեն ունենք…

– Վերջապես եկեք որոշենք՝ ոչնչացնելո՞ւ ենք նրանց, թե՞ քշելու…

– Իսկ ո՞րն է ճիշտը: Եթե ոչնչացնենք, միջազգային հանրությունը մեզ կմեղադրի ցեղասպանության մեջ… Նրանց այդպիսի «երկնային նվեր» է պետք…

– Իսկ եթե արտաքսենք, ապա հետագայում նրանք տարբեր կաշառքով-բանով կվերադառնան, նորից կըգնեն մեր սրբազան հողերը… Ախր մերոնց շատ հեշտությամբ կարելի է կաշառե՛լ… Մերոնց գրպանները միշտ էլ բաց են, այն էլ շատ ու շատ լա՛յն: Միայն բերո՛ղ լինի՞ միայն լցնո՛ղ լինի:

– Ոչնչացնե՛լ կաշառակերներին…

– Հեշտ է ասելը՝ ոչնչացնե՛լ… Իսկ մեր խորհրդում քի՞չ կաշառակեր կա…

– Այդ դեպքում գուցե ճիշտ կլինի, եթե անտանելի պայմաննե՞ր ստեղծենք «մյուսների» համար, որ իրենք գլուխներն առնեն թողնեն-հեռանան… Եվ այլևս երբե՛ք չմտածեն վերադառնալու մասին…

Ժողովը գնալով թեժանում էր, արդեն իրար լսող չկար… Հավանական էր նույնիսկ զինված ընդհարումը:

Եվ հանկարծ, երբ պարզից էլ պարզ դարձավ, որ ընդհանուր հայտարարի չեն գալու, և գործը կարող է ավարտվել արնահեղությամբ, խոսք խնդրեց Անտառի ամենահեռատես ու իմաստուն ծերերից մեկը՝ Աղվեսը.

– Ամբողջ օրը ես ուշադիր լսում եմ ձեզ ու անընդհատ զարմանում, որովհետև չեմ կարողանում հասկանալ. իսկ մենք մտածե՞լ ենք այն մասին, թե «ուրիշներին» ոչնչացնելուց-քշելուց, մի խոսքով, նրանցից ազատվելուց հետո, մենք ի՞նչ ենք անելու, ինչպե՞ս ենք ապրելու առանց նրանց, ո՞ւմ ենք հալածելու, ո՞ւմ ենք թալանելու, վերջապես ո՞ւմ ենք հոշոտելո՛ւ, ո՞ւմ ենք առևանգելու փրկագին պահանջելու համար… Մնում է, որ մերո՞նց մի մասը նրա՞նց տեղը գրավի…

*1992*

## ՀԱՏՈՒԿ ԱԹՈՌԸ
## (նախընտրական հեքիաթ լուրջ ու խոժոռ քեռիների համար)

Դարավոր անտառի կանաչ ու լայն շշուկի տակ հաշտ ու խաղաղ, մի համերաշխ ընտանիքի պես, ապրում էին Արջը, Գայլը, Աղվեսը, Նապաստակն ու Ոզնին: Նրանք միասին էին ուտում անտառային ճաշարանում, որտեղ սեղանի մոտ ամեն մեկն իր առանձին ու մշտական աթոռն ուներ (բնականաբար, սեղանագլխինը Արջինն էր՝ ամենաբարձրը, կաշվեպատն ու փափուկը), միասին էին թևանցուկ զբոսնում կարկաչահոս գետակի ափին, միասին էին գնում կինոտուն՝ դիտելու համաշխարհային կինեմատոգրաֆիայի վերջին նվաճումները…

Եվ բացարձակապես բոլոր հարցերում նրանց կարծիքները զարմանալիորեն համընկնում էին՝ համապատասխանելով Արջի կարծիքին:

Այ, օրինակ, «Դե՛, սպասի՛ր» մուլտոն դիտելուց հետո, հումորի զգացումով ի վերուստ օժտված Արջը՝ Նապաստակին չարաճճի աչքով անելով, թեթև ու խորամանկ ժպիտը քթի տակ՝ շշնջում է նրա ցցված ականջին, այնպես, որ Գայլն անպայման լսի. «Ա՛յ քեզ Նապաստակ, խելոք ու հաջողակ, իսկ ինչի՞ է նման Գայլը, այդ ապուշն ու…»:

Արջը դեռ չէր հասցնում ավարտել նախադասությունը, երբ պայթում էր համերաշխ ծիծաղը:

Եվ, իհարկե, ամենաբարձրն ու լիաթոքը Գա՛յլինն էր լինում. «Իսկապես որ ապո՛ւշ Գայլ, իսկապես որ հիմա՛ր, իսկը խելոք ու հանդուգն Նապոյի հակապատկերը…»:

Կամ, ասենք, տարբեր ձկնատեսակով վխտող գետակի ափին զբոսնելիս Արջը, նայելով անամպ ու պարզ երկնքին, չգիտես ինչո՛ւ, հանկարծ սկսում է իբր թե դժգո՛հ-դժգո՛հ տրտնջալ, մեր հարևան դընգըլ Դավոյի փընթ-փընթ պապիկի նման. «Կարծես թե եղա-

նակն այսօր այնքան էլ հաջող չէ, երևի անձրև է գալու, հոդացավս էլ հո իզուր չի՛ բռնել»:

«Իհարկե՛, իհարկե՛, անձրև է գալու»,– իրարից հերթ խլելով, իրարից առաջ ընկնելով, բացականչում են գազանները և բացում չգիտես որտեղի՛ց ակնթարթորեն հայտնված անձրևանոցները և ուշադի՛ր-ուշադի՛ր նայում-հետևում Արջին, որ չլինի՛, չպատահի՛, աստվա՛ծ չանի, հանկարծ բաց թողնեն նրա հաջորդ խոսքն իմաստուն:

«Չէ՛, թերևս անձրև չի՛ գալու, տեսեք, թե ինչպես է փայլում արեգակը, հոդացավս էլ կարծես թե անցել է»,– անսպասելիորեն կարծիքն է զվարթաձայն փոխում Արջն ու ակնթարթորեն անհետանում են քիչ առաջ հայտնված ու սունկի նման բացված անձրևանոցները:

***

Մի օր էլ Նապաստակը զոր է տալիս ուղեղին, թե ինչո՞ւ են բոլոր գազաններն Արջին լսում, խոնարհ են ու միշտ համաձայն նրա հետ:

Մենք, իհարկե, չգիտենք, թե ինչքան է մտածում նա, երկա՞ր է մտածում, թե՞ կարճ: Արդարության համար էլ ասենք, որ դա այնքան էլ կարևոր չէ, որովհետև կարևորն այն է, որ Նապաստակը հանկարծ մատը վեր է տնկում Արքիմեդի պես ու ճչում. «Գտա՛, վերջապես գտա՛. պատճառն Արջի աթո՛ռն է՝ բարձր-բարձր, կաշվեպատ ու փափուկ աթոռը… Ծա՛տ լավ տեղ է Արջը նստել: Երջանի՛կ Արջ»:

***

Եվ ահա մի անգամ Արջը ճաշարան չի գալիս՝ նախապես զգուշացնելով այն մասին, որ Անտառային Գերագույն դատարանում ինչ-որ շատ կարևոր գործ է լսվում՝ կապված խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրված խեղաթյուրումների հետ, որտեղ իր՝ Արջի ներկայությունը խիստ պարտադիր է, և կարող են ճաշել առանց իրեն սպասելու:

(Ասենք նաև, որ Արջն իր գործողություններում շատ էր կարգապահ ու ճշգրիտ և բջջային հեռախոսով, ուշանալիս կամ բացակայելիս, իր ընկերներին, անխըտիր բոլորի՛ն, մեկ առ մեկ, զգուշացնում էր, թե որտե՛ղ է գտնվում և ինչո՛ւ է գտնվում տվյալ տեղում և, հնարավորության դեպքում, հայտնում էր նաև, թե ինչքա՛ն է ուշանալու: Ի դեպ, նույնն էլ պահանջում էր իր ընկերներից):

Եվ ահա օգտվելով Արջի բացակայությունից՝ Նապաստակն է հո՛պ-հո՛պ ցատկում նրա բա՛րձր-բա՛րձր, կաշվեպատ ու փափուկ բազկաթոռին:

– Չհասկացա՛, բարեկա՛մս,– սարսափից բիզ-բիզ են կանգնում Ոզնու առանց այն էլ ցից-ցից փշերը,– դու տեղդ դեռ չե՞ս ճանաչում:

– Իջի՛ր, իջի՛ր Արջի աթոռից,– լեղապատառ ճչում է Աղվեսը, չմոռանալով վախեցած հայացք գցել Գայլի վրա,– շուտ արա, շուտ, տե՛ղդ անցիր, այս ի՞նչ ես անում, ամա՛ո…

– Դե լա՛վ, թող նստի,– Նապաստակն անգամ ցայսօր չի հասկացել՝ Գայլը ոռնո՞ւմ է, թե՞ ծիծաղում:– Թող նստի, որ պատվական բեղերը գեթ մի անգամ տեսնենք փառահեղ ու լրիվ տեսքով: Թե չէ… ականջների կեսն է հազիվ երևում…

– Լա՛վ, լա՛վ, թող նստի,– Գայլի ներողամտությունից հազիվ ուշքի գալով՝ իսկույն համաձայնում են Աղվեսն ու Ոզնին՝ Գայլի նման քա՛հ-քա՛հ ծիծաղելով, թեև նրանց աչքերում վախի հարցականներ էին ստեպստեպ ծիկրակում:

***

Եվ զարմանքից՝ միայն մեր լեռներում հանդիպող ապառաժների նման քար կտրելով՝ Նապաստակն է խոր մտորում. «Ի՞նչ է այստեղ կատարվում, իը՞, չե՛մ հասկանում, եղբա՛յր: Ե՛ս եմ, ախր, նստել Արջի բարձրբարձր, կաշվեպատ ու փափուկ բազկաթոռին, բայց ինչո՞ւ են լսում Գայլի՛ն: Ինչո՞ւ, եղբա՛յր»:

## ՄԱՅՐԻԿ ԱՐՋՆ ՈՒ ՀԱՐՑԱՍԵՐԻԿ ՓՈՐԹՈԼՈՋԸ

Շատ ու շատ տարիներ առաջ, այնքա՜ն շատ, որ Տիգրանիկի պապիկի պապիկի պապիկն անգամ չգիտեր, թե ե՛րբ – եղել է չի եղել, մի մայրիկ արջ է եղել:

Այս մայրիկ արջն էլ մի քոթոթ է ունեցել, այնքա՜ն սիրունիկ ու թմբլիկ, որ մայրիկը նրան իր հորինած գեղեցիկ բառով Փորթոլոզիկ է կոչել: Բայց քանի որ Փորթոլոզիկը շատ հետաքրքրասերն էր, այդ պատճառով անտառում բոլոր գազանները նրան անվանել են Հարցասերիկ:

Նա ցանկալի հյուր էր, անգերազանցելի զրուցակից, նա սովորում էր ու միևնույն ժամանակ, ինչպես պահանջում է ժամանակակից գիտական մանկավարժության միտքը, սովորեցնում:

Դուք երևի հասկացաք, որ Հարցասերիկի համար անտառում չբացահայտված ու չմեկնաբանված գաղտնիք այլևս չէր մնացել: Անտառային միջնակարգ դպրոցում ստացած գիտելիքներն արդեն չէին բավարարում նրան: Եվ Հարցասերիկի անհանգիստ միտքը վաղուց թափառում էր հեռուներում՝ անտառի սահմաններից դուրս, անգամ երկնքում:

Ա՛յ, հենց երկնքի գաղտնիքներն էին, որ հանգիստ չէին տալիս նրան:

Իմաստուն բուն՝ բազմաթիվ մասնագիտական թեքումով անտառային դպրոցի երկարամյա տնօրենը, պնդելու նման ասում էր, որ Հարցասերիկն անպայման տիեզերագնաց կդառնար, նույնիսկ Յուրի Գագարինից ու Գերման Տիտովից էլ շատուշատ առաջ, եթե…

– Իմ թանկագին մայրի՛կ, մինչև գիտությունը հայտնաբերի տիեզերական արագության տեսակները, քանի դեռ չկան հերոս տիեզերագնացներ և տիեզերանավեր, ես չեմ կարող հաղթահարել երկրի ձգողական ուժը և հասնել հեռու-հեռավոր աստղերին: Ա՛յ, եթե դու ինձ օգնես և մենք բարձրանանք Մասիս սարի գագաթը,

որը մխրճվել է երկնքի կապույտի մեջ, մենք շա՛տ ու շա՛տ հետաքրքիր նորություններ կիմանանք Տիեզերքի մասին:

– Բայց դա շա՛տ է դժվար ու երևի թե անհնարին: Հարցասերի՛կ, դեռ ոչ ոք չի համարձակվել հաղթահարել Մասսի բարձրությունը…

– Հետաքրքիրն էլ հենց դա՛ է, մայրի՛կ, ախր մենք առաջի՛նը կլինենք: Շատ տարիներ հետո Խաչատուր Աբովյանը կբարձրանա Մասիս սարի գագաթը, որպեսզի իր հոգու մաքրությամբ հավերժացնի նրա վեհությունը:

– Դե՛, ի՞նչ արած: Ես քո խնդրանքը մերժելու իրավունք չունեմ,– ժպտում է մայրիկը:

Եվ անտառի բոլոր-բոլոր գազանների ուրախությունը մեկ է լինում Հարցասերիկի՝ երկնքի չափ ուրախության համար: Ախր եթե մայրիկը չհամաձայներ, դա կլիներ աշխարհի ամենամեծ անարդարությունը, իսկ անտառի բոլոր գազաններն անսահմանորեն շատ էին արդար և հավասար իրենց պարտականությունների կատարման մեջ, չէ՞ որ նրանք դեռ չգիտեին (խախտելու համար), թե ի՞նչ է մարդու իրավունք կոչվածը, և այդ իսկ պատճառով միայն պարտականությունների զգացումն էր տիրապետում նրանց հոգում:

Դուք տեսնեի՛ք միայն, թե ինչպե՛ս էր գայլը նըրբաձևորեն ծառայում գառանը, ինչպիսի՛ հարգանքով ու ակնածանքով էին զրուցում կատուն՝ մկան, իսկ շունը կատվի հետ… Ախր այն ժամանակ դպրոցներում դեռ չէին սովորում «Գայլն ու գառը», իսկ Հովհաննես Թումանյանը դեռ չէր գրել «Շունն ու կատուն»՝ հավերժացնելով վերջիններիս՝ գառան մորթուց չկարված գդակի պատճառով թշնամանքի վերածված սերը… Բայց մի՞ թե պատճառը միայն գդակն էր:

Երբ վերելքի համար ամեն ինչ արդեն պատրաստ էր, անտառի բոլոր գազանները հավաքվեցին բարի ճանապարհ մաղթելու մայրիկ արջին և Հարցասերիկին:

Դժվար էր վերընթացը, շա՛տ դժվար, բայց մայ-

րիկն ու Հարցասերիկը կարողացան հաղթահարել բոլոր խոչընդոտները և հասնել Մասսի կատար, որտեղից նրանց հայացքի առջև բացվեց մի անասելի գեղեցկության տեսարան – անտառապատ ու քարահայաց լեռնե՛ր, լայնահուն ու սրընթաց գետե՛ր, կիրճե՛ր ու դաշտավայրե՛ր, բազմամարդ գյուղե՛ր ու քաղաքնե՛ր…

Ահա ծովից ծով փռված հինավուրց մի աշխա՛րհ՝ իր աշխատասեր ու տաղանդավոր ժողովուրդով…

Եվ այդ հիանալի աշխարհը, ինչպես արդեն կռահեցիք, կոչվում է Հայոց աշխարհ:

Իսկ շուրջը մի երկնագեղ օվկիան էր ծփում՝ աստղացո՛ղ, գեղատեսի՛ղ ու գաղտնալի՛ց – արևաքամու առեղծվածներով ծայրեծայր ծփող Երկնքի օվկիա՛նը:

– Իսկ ի՞նչ կլինի, մայրի՛կ, եթե լողանք երկնքի օվկիանում,– թախանձելու պես հետաքրքրվում է Հարցասերիկը:

Մայրիկ արջն այս անգամ էլ չի կարողանում մերժել իր բալիկին:

Եվ ահա նրանք մտնում են արևացոլ փրփուրների մեջ և մինչև օրս, պատկերացնո՞ւմ եք, սիրելի երեխաներ, դուրս չեն եկել երկնքի օվկիանից:

Նրանք դարձել են երկու՝ Մեծ Արջ և Փոքր Արջ համաստեղություններ, որոնց մասին դուք անպայման կսովորեք դպրոցում, եթե Հարցասերիկի նման պրպըտուն միտք ունենաք ու հետաքրքրվեք բնության բազմաթիվ առեղծվածներով:

## «ՀԱՄՇԵՆ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ[1]
## (համառոտ ակնարկ)

*Երախտագիտությամբ*
*նվիրում եմ ծնողներիս՝*
*ՀԱՅԿ և ԳԵՂԱՆՈՒՀԻ ՍԱՐԵՅԱՆՆԵՐԻ՝*
*իմ ամենաառաջին և ամենահմաստուն*
*խորհրդատուների անթառամ հիշատակին:*
*Ծնրադիր՝ ձեր որդի Արտավազդ*

### Ա. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆ ԷՐ ՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

1991 թվականի հոկտեմբերի 15-ին 5.000 օրինակ տպաքանակով լույս տեսավ «Համշեն» թերթի անդրանիկ համարը Երևանի թիվ 6 տպարանում և նրա միջոցների հաշվին՝ կոլեկտիվի ողջույնի խոսքով:

Թերթի գլխագրի հեղինակն է հայտնի հայ նկարիչ Ցոլակ Ղանդիլյանը (Կանթեղ):

Մինչ այդ, թերթի տարածումն ապահովելու համար, մենք Համագործակցության մասին համաձայնագիր էինք ստորագրել Սուխումի և Սուխումի շրջանի հայկական դպրոցների հասարակական խորհրդի նախագահ Միսաք Կրիմլյանի հետ, որն ուժի մեջ մտավ 1991 թվականի հունիսի 1-ին:

Երկար ժամանակ պահանջվեց թերթի տպագրության տեխնիկական հարցերը լուծելու և օրենսդրական կողմն ապահովելու համար: Եվ այս հարցում մեզ սատարեց Աբխազիայի նախարարների խորհրդի մամուլի վարչության պետ, հայտնի աբխազ արձակագիր, պետական մրցանակի դափնեկիր Շալոդի Աջինջալը:

«Համշենի» առաջին համարի առաջին էջում տպագրվել է Հայաստանի Հանրապետության մամուլի

[1] *Հետագայում «Գրական Համշեն»:*

կոմիտեի նախարարի պաշտոնակատար Էդուարդ Սաֆարյանի ողջույնի ջերմ խոսքը. «Սրտանց շնորհավորում ենք համշենահայությանը գրական-լուսավորչական «Համշեն» թերթի լույսընծայման առթիվ: Մեծ ու անփոխարինելի է հայատառ թերթի դերն ու նշանակությունը սփյուռքահայության կյանքում: Եվ մենք ցանկանում ենք, որ թերթը ոսկեղենիկ հայերենի դստրիկ համշենաբարբառի մասունքներով անսպառ լինի և որպես համշենահայության խոսնակ՝ Մայր Հայրենիք հասցնի ձեր սրտի խոսքն ու հայրենակարոտ հոգու երազանքը: Մենք ցանկանում ենք ու հավատում, որ «Համշենը» ազնվաշռայլ սերմնացանի պես հունդեր կշաղի բարեկամության ակոսներում և տա աստված, որ բերքն անսպառ լինի, լինի առողջ ու կենսատու»:

Տպագրվել է երևանցի հրաշալի բանաստեղծ Հովհաննես Գլակի՝ ուսանողական տարիների ընկերոջը՝ վերինյաշարացի Հարություն Ծատուրյանին նվիրված «Համշենցիներին» սրտի չափածո խոսքը.

*Այրարատյան նահանգից*
*մինչև Սև ծովն այս օտար,*
*մինչ Մծարան լի ու շեն*
*մնացել են ձեր ոտաց*
*հոգնած հետքերն, համշենցիք…*

*Մնացել են մեր լեռան*
*էն լանջերին սրբազան,*
*որ դեռ պահում են Նոյի*
*հետքերն արդար ու ձնոտ:*
*Արարատն է մնացել*
*որպես ոգի ձեր սրտում,*
*հին հույսի պես, համշենցիք…*

*Ու ձեր երգերն են անտուն*
*Էրգրի սրտում մնացել,*
*թափառում են քամու հետ,*
*մղկտում ու չեն գալիս,*
*սպասում են, համշենցիք…*

*Ով իմանա՝ մի օր էլ,*
*գուցե դառնաք ձեր հետքով,*
*մեղեդիներն էլ թափառ*
*իր սրտի մեջ ծվարի*
*ձեր քաղցրալուր քյամանին,*
*իմ Սասնածուռ համշենցիք:*

Ասենք նաև, որ միշտ էլ, «Համշենի» հիմնադրման առաջին օրվանից, մեր անշահախնդիր գործընկերն է եղել աշխարհասփյուռ հայ մանուկների ամենասիրելի պարբերաթերթ «Կանչի» խմբագրակազմը համշենահայերի բարեկամ Հմայակ Պետրոսյանի ղեկավարությամբ:

Սրտի անհուն թրթիռով ու ջերմությամբ եմ հիշում. թերթի առաջին համարի տպագրության հարցերն էի քննարկում «Կանչի» խմբագիր Հմայակ Պետրոսյանի հետ, երբ վերջինիս աշխատասենյակ մտավ միջին տարիքի մի տղամարդ (ցավոք, նրա անուն-ազգանունը չեմ հիշում), որն, ինչպես պարզվեց, լուսանկարիչ էր: Նա նոր էր վերադարձել Արևմտյան Հայաստանից, և անասելի դժվարություններ հաղթահարելով՝ կարողացել էր ոչ միայն լուսանկարել Սուրբ Լյառ Մասիսն «այն կողմից», այլև նկարը հասցնել Երևան և շատ էր ուզում, որ այդ եզակի լուսանկարը տպագրվեր իր սիրելի «Կանչում»:

(Փակագծերի մեջ ուզում եմ գրել, որ այն տարիներին հայի համար խիզախություն էր Թուրքիայի սահմանը հատելը, արդեն չխոսելով Մասիս սարը լուսանկարելու մասին, ինչի համար կարելի էր երկար ժամանակով հայտնվել թուրքական բանտում):

Եվ ես շատ զարմացա, երբ Հմայակ Պետրոսյանը մի քիչ մտածելուց հետո անսպասելիորեն… մերժեց նրա խնդրանքը. «Ես մեծ դժվարությամբ ու ափսոսանքով եմ մերժում, իսկ մերժում եմ, որովհետև այս լուսանկարը պիտի տպագրվի անպայման «Համշեն» թերթի առաջին համարում, չէ՞ որ համշենցիների արմատներն Արարատի ստորոտից են սկիզբ առնում»:

Այսպես Բիբլիական Մասիս սարի այս եզակի լուսանկարը Հմայակ Պետրոսյանի ցանկությամբ «Էրգիր» խորագրի տակ ծվարեց «Համշեն» թերթի առաջին համարի առաջին էջում հետևյալ ջերմ մակագրությամբ.

«Ձեզ նոր սիրտ կտամ, նոր հոգի կտամ ձեզ: Եվ կապրեք այն հողում, որ ձեր հայրերին եմ տվել: Իմ ժողովուրդը կլինեք դուք: Ես էլ ձեր աստվածը կլինեմ»:

Իհարկե, իսկական տոն էր «Համշենի» առաջին համարի տպագրությունը:

Նոր թերթի ծնունդը ողջունեցին «Կանչ», «Գրական թերթ», «Ոզնի», «Հայաստան», «Հայ գրող» պարբերականները, Հայաստանի և Հայ գրողների միությունները…

Թերթի տպագրությունը կարևորվում էր նաև այն փաստով, որ ստվար աբխազահայ հատվածը տասնամյակներ շարունակ սեփական մամուլ չէր ունեցել:

(20-րդ դարի սկզբին Սուխումում, որը հայ գրականության ու մշակույթի կարևոր օջախներից էր, լույս էին տեսնում «Նոր կյանք», «Փարոս», «Կարմիր աստղ» պարբերականները:

1912-ին Խաչատուր Ավդալբեկյանը հիմնադրեց հայկական տպարան և սկսեց հրատարակել «Լույս» շաբաթաթերթը: Նրա ջանքերով Սուխումում ստեղծվեց նաև Աբխազիայի հայ ուսուցիչների խորհուրդը:

Ավելացնենք, որ 1932-1935 թվականներին Սուխումում լույս էր տեսնում «Սովետսկի պիսատել Աբխազիի» թերթը, որն ուներ նաև հայկական բաժին: Թերթի խմբագրական կոլեգիայի անդամներից էր ԽՍՀՄ գրողների միության անդամ Արշավիր Ջիդարյանը):

Օգտվելով առիթից, երկու խոսք եմ ուզում ասել հայ արձակի վարպետ Սերո Խանզադյանի մասին, քանզի Հայաստանի գրողների միությունում 1991-ի գարնանը մի քանի անգամ հանդիպել եմ նրան, և նա ոգևորությամբ է ընդունել իմ՝ Աբխազիայում հայկական թերթ հրատարակելու մտահղացումը, խրախուսել է ինձ, չէ՞ որ նա հոգեպես կապված էր համշենահայության հետ.

– Ճիշտ ես որոշել, զավակս,– օրհնեց նա,– համշենահայ անպայման պիտի ունենա իր թերթը:

(Արդարության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ դեռ 1987 թ. «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր Մերուժան Տեր-Գուլանյանը՝ տպագրության ընդունելով իմ բանաստեղծական շարքը, ասաց. «Երևանում տպագրվելդ, իհարկե, լավ է: Բայց պետք է մտածել նաև այն մասին, որ հայկական տպագրություն հիմնադրվի Աբխազիայում: Եվ դա դո՛ւ պիտի անես»:

Մինչև այսօր ես զարմանում եմ Մերուժան Տեր-Գուլանյանի հեռատեսության-խորաթափանցության վրա, թեև, իհարկե, զարմանալու ոչինչ չկա, քանզի գրողն ի վերուստ պիտի օժտված լինի հեռատեսության ու խորաթափանցության զգացումով):

Նույն՝ 1991 թվականի հունիսին փոստով անսպասելի նվեր ստացա Սերո Խանզադյանից. 1989 թվականին լույս տեսած նրա «Կորած արահետներ» վիպակների և պատմվածքների ժողովածուն և «Հայրենապատումի» Դ հատորը ընծայականներով: «Հայրենապատումի» 564-638 էջերը նվիրված են համշենահայերի պատմությանն ու ներկա կյանքին:

Ահա հատվածներ նրանից ստացածս գրքերի ընծայագրերից: Առաջինը («Հայրենապատումից»).

*«Արցախի այս աղետալի օրերին, երբ թուրք-աղըրբեջանցին ու Կրեմլը մեր զավակներին են սպանում, արի եղեք: Սերո Խանզադյան, 28.5.91, Նորքի դղյակ»:*

Եվ երկրորդը («Կորած արահետներից»).

*«...Սև ծովի ափերին սփռված իմ համշենահայ եղբայրներիս և զավակներիս եմ նվիրում իմ այս գիրքը, հավատացած, որ աբխազ հին ու եղբայր ժողովրդի հետ հայը այնտեղ կպաշտպանի իր ու աբխազի ազգային շահերը: Սերո Խանզադյան, 28.5.91, Երևան»:*

Փակագծերում նշեմ, որ հետո, երբ մահացու վտանգ կախվեց Աբխազիայի ժողովրդի վրա, ես հանդես եկա «Ռեսպուբլիկա Աբխազիա» թերթում ոչ մեծ հոդվածով՝ հիմք ընդունելով Սերո Խանզադյանի պատգամը.

## ЗАЩИТИМ ЧЕСТЬ АРАРАТА В АБХАЗИИ

Дорогие мои братья и сестры!

Тяжелые дни переживает Абхазия, вновь бушует Страна Апсны, вновь орды обезумевших угрожают земле родной…

Вы помните – еще Звиад Гамсахурдиа объявил нас, амшенских армян, двойными предателями: предателями интересов Грузии и, главное, Армении…

Вы помните – нас, амшенских армян, обвиняли в том, что мы якобы мусульмане…

И как результат – вы помните? – дымилась Лабра, дымилась Ачадара, дымилась Гумиста… И этот дым ничем не напоминал мирный дымок над мирными домами. Это горели сожженные грузинскими «гвардейцами» армянские дома.

И в то время, перед самой грузино-абхазской войной, когда нас обвиняли в немыслимых грехах, газета «Амшен» неожиданно получила дорогой подарок из Армении, от выдающегося писателя, Героя Социалистического труда Серо Николаевича Ханзадяна – книги избранных рассказов, новелл и публицистики с дарственными надписями автора. «Дорогие мои амшенские братья и сыновья,- писал Ханзадян.- Вместе с древнейшим абхазским народом защищайте ваши права и права абхазов». И этот наказ патриарха армянской литературы амшенские армяне выполнили с достоинством и честью – встали рядом с сыновьями абхазского народа и сообща защитили ту землю, которая приютила наших предков, спасшихся от турецкого ятагана – Геноцида армян. Сегодня эта земля пропитана не только потом армянского крестьянина, но и пролитой за ее освобождение кровью солдата-армянина. И самое главное, в этой земле покоится прах наших предков… Так встанем же с оружием в руках на защиту этой земли. Перед детьми не будет стыдно… Матери будут гордиться нами…

…Общенациональная армянская святыня – прекрасно одинокий Арарат.

Из года в год, из века в век, из поколения в поколение передавался находящийся ныне в турецком плену этот библейский символ святости, верности и чести армянского народа. И великая тоска по нему породила в каждом армянском сердце свою гору Арарат. И долг каждого армянина – защитить честь Священной горы, где бы он ни находился, в какой бы стране ни проживал. Это веление наших великих предков – защищать седой Арарат.

Сегодня честь горы Арарат мы должны защитить здесь, в Абхазии.

Обращаясь к своему абхазскому другу, армянский поэт Андраник Багарян писал:

*И пусть на разных языках*
*О братстве нашем говорим,*
*Одна судьба связала нас,*
*Под небом ходим мы одним.*
*О, равнодушно не могу*
*Пройти я мимо этих слов,*
*Они на райском берегу*
*Армянам дали вечный кров.*
*И если враг наступит злой,*
*Неся смертельные огни,*
*Клянусь, с тобой рванусь я в бой,*
*Как сын родной твоей земли .*

(Перевод наш – А.С.).

Злой враг наступает.
Смертельные огни горят.
Родная земля ждет».

Ուզում եմ նշել, որ Սերո Խանզադյանը շնորհակալությամբ ընդունեց թերթի առաջին համարը, որտեղ տպագրվել էր Վլադիմիր Վարդանյանի (Սիրավան Սեվունի) «Մոռացությունից փրկելու առաքելություն» հոդվածը՝ նվիրված Սերո Խանզադյանի առաջաբանով ու

խմբագրությամբ լույս տեսած «Ձայն համշենականի» առաջին գրքին:

Համարում տպագրվել են, Վլադիմիր Վարդանյանի «Մոռացությունից փրկելու առաքելություն» հոդվածից բացի, Սաթենիկ Գեջյանի «Չարշամպացի ֆիդային» հոդվածը, ինչպես նաև «Սևծովյան այգաբաց» գրական միավորման մասնակիցներ, ԽՍՀՄ գրողների միության անդամներ Հակոբ Գուրունյանի «Շուշան շողեր» պատմվածքը և Անդրանիկ Բահարյանի «Ոտղերձ հատուցումի» բանաստեղծությունը, Նիկոլայ Դեմուրչյանի գողտրիկ մանրապատումներից մի քանիսը, հայաստանցի հայտնի մանկագիր Վրեժ Վարդունու՝ նախադպրոցականներին հասցեագրված հանելուկները և այլ ստեղծագործություններ:

Այստեղ անպայման ուզում ենք երախտագիտությամբ մեր շնորհակալությունը հայտնել նրանց, ովքեր թերթի ստեղծման առաջին իսկ օրերից կանգնեցին մեր կողքին, օգնեցին մեզ. Կարլեն Յալանուզյան, Գուրգեն Բալայան, Սարո Գյոդակյան, Հովհաննես Գլակ, Իշխան Ստեփանյան, Հայկազուն Ալվրցյան, Սիրավան Սևունի, Ռազմիկ Իփեքչյան, Սերգեյ Վարդանյան…

Իսկ առջևում … Հիասթափություննե՛ր էին, պարտություննե՛ր ու, իհարկե, հաղթանակնե՛ր էին առջևում:

Հիրավի՝

*Դու եղար այնքան մաքուր, լուսավոր*
*Ու այնքան եղար Հայոց Կենաց Ծառ,*
*Որ … թշնամինե՛ր բազում ունեցար,*
*Ու հենց դրանո՛վ եղար … բախտավոր:*

Այո, բարեկամների հետ թերթն ունեցավ նաև թշնամիներ:

Եվ այդպես էլ պիտի լիներ, դա՛ էր օրինաչափն ու ճիշտը, քանզի այնքան մեծ էր հայատառ թերթի ստեղծման նշանակությունը տեղի հայ հատվածի համար, որ նրա կարևորությունը շատ լավ հասկացող չարակամներն առանց հապաղելու գործի անցան՝ սկսելով իրենց թերթահալած «գործունեությունը»:

Եվ որքան էլ տարօրինակ չթվա՝ առաջին հերթին հենց դա՛ էլ կարևորում է թերթի դերն ու նշանակությունը: Այլապես, հասկանալի է, որ ոչ ոք չէ՛ր չարախոսի, բանսարկություններով չէ՛ր թունավորի մեր արյունը, չէ՛ր դիմի ստոր միջոցների՝ թերթի տպագրությունը տապալելու համար:

Իդեպ, բանսարկություններն ու չարախոսությունները տարիներ շարունակ մեր հավատարիմ ուղեկիցներն են.

*Աչքն իմ ջուր արած՝ սպասում եմ ձեզ՝*
*Իմ ուղեկիցներ, ծանոթներ անվրեպ -*
*Բանսարկություններ,*
*Սադրանքներ,*
*Ցավեր…*

Պետք չէ մոռանալ նաև բարդ քաղաքական ժամանա՛կը. 1991-ի ավարտն էր, վրաց-աբխազական հարաբերություններն արդեն ծայրահեղորեն սրվել էին, վրացական ղեկավարությունը աբխազահայերին «կրկնակի թշնամիներ» էր հայտարարել՝ Վրաստանի ու, ամենակարևորը՝ Հայաստանի շահերը «դավաճանելու» համար; Սուխումի շրջանի Լեչկոպ գյուղում մեծ դժվարությամբ հաջողվեց կասեցնել հայ-վրացական ընդհարումը; արդեն կային մարդկային զոհեր; չափազանց ակտիվացել էին հանցագործ տարրերը… Մահացու սպառնալիքներ էին հնչում նաև իմ հասցեին:

Եվ այս լարված պայմաններում Երևանում լույս տեսան «Համշենի» հաջորդ երկու համարները, որոնք բարձր գնահատվեցին հայ մամուլի ցուցահանդեսում:

Այս համարներում տպագրվել են Հակոբ Գուրունյանի «Շիրազյան հուշեր» շարքը, Վլադիմիր Վարդանյանի «Անելիքներն ավելի շատ են» հարցազրույցը Գուդաութայի «Համշեն» շրջանային բարեգործական ընկերության նախագահ Աշոտ Զեբելյանի հետ և Միշա Մինասյանի «Սևծովամերձ հայերը» գրքին նվիրված «Գիրքհամշենցիներիմասին»գրախոսականը,երևանցի հեղինակներ Իշխան Ստեփանյանի «Լափտուր խոզը» պատմվածքը և Գուրգեն Բալայանի բանաստեղծական

շարքը, Անդրանիկ Բահարյանի՝ տեղի հայկական գրական միավորմանը նվիրված «Սևծովյան այգաբաց» հոդվածի առաջին մասը, Գրիգոր Թորունցի «Հայ գրականությունը աբխազերեն» հոդվածը և այլ նյութեր ու գրական ստեղծագործություններ:

## Բ. ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1992 թվականի օգոստոսի 14-ին սկսվեց վրաց-աբխազական պատերազմը, որն ահավոր արհավիրք ու չարիք էր Աբխազիայի ժողովրդի, այդ թվում նաև տեղի հայ ազգաբնակչության համար:

Վրացական այսպես կոչված գվարդիականների «հսկողության» տակ հայտնված հայաբնակ երբեմնի շեն ու ծաղկուն գյուղերը՝ Լաբրան, Հայկական Աթարան ու Արակիչը, Լեչկոպը, Գումիստան ու Աչադարան և այլ բնակավայրեր, համեմատաբար կարճ ժամանակահատվածում դաժանորեն և անխնա թալանվեցին ու ավերվեցին, իսկ խաղաղ բնակչությունը – տղամարդ թե կին, ջահել թե ահել – ենթարկվեց աննկարագրելի բռնությունների ու անարգանքների, և հատուկ ուզում ենք շեշտել՝ իր ազգային պատկանելության համար: Մարդագողությունն ու սպանություններն արդեն սովորական, առօրեական երևույթներ էին դարձել:

Մեր վերաբերմունքը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ և դրանց զարգացման հնարավոր «տարբերակները» մենք շարադրեցինք 1992 թվականի սեպտեմբերի 11-ին Երևանի Հայ Հեղափոխական Դաշնակցության «Մ.Վարանդեան» տպագրատանը հրատարակված «Համշենի» 4-րդ համարում տպագրված «Մինչև ե՞րբ պիտի քանդվի մեր տունը» հոդվածում, որը նույն օրը լույս տեսավ նաև «Ազատամարտ» շաբաթաթերթում.

«Դաժան ճակատագրի բերումով այսօր թալանվում և ավերվում է համշենահայի տունը: Եվ մի՞թե դա արվում է նրա ունեցվածքին տիրանալու ագահ տենչով

միայն… Երանի թե, ներիր ինձ, աստված, այդպես լիներ: Բայց ավելի հեռուն գնացող նպատակներ են հետապնդվում, ասենք թե հայերի համար անտանելի պայմաններ ստեղծել, և … համշենահայը ստիպված կլինի թողնել տուն ու տեղ և հեռանալ…,- ցավով արձանագրել ենք մենք և մեր իսկ հարցապնդմանը պատասխանել այսպես՝ տարակուսած ավելացնելով,- այո, այսօր թալանվում է համշենահայի տունը: Կան մարդկային զոհեր:

Բայց ախր սթափ դատողությունը հուշում էր, որ նման իրադարձություններն անխուսափելի են, և պետք էր բոլոր հնարավոր ու անհնար միջոցնե-րով նախապատրաստվել՝ առավելագույնս ապահովելով հայ ազգաբնակչության անվտանգությունը: Սակայն մենք նորից ապավինեցինք ինչ-որ երկնային ուժի, ինչ-որ հրաշքի…

Եվ նորից ու կրկին, մեր տեսածը, զգացածը և, ամենակարևորը, հասկացա՛ծը դաս չեղավ»:

Հայը միշտ էլ հույսով է ապրել, հային միշտ էլ ուղեկցել է խոր հավատը լուսավոր ապագայի նկատմամբ, և մեր հոդվածն էլ լավատեսորեն է ավարտվում.

«…Հույս է ներշնչում այն, որ գերդաստանների մեծերը չեն հեռանում, չեն լքում իրենց տունն ու տեղը, այսինքն՝ ապրում են զավակների վերադարձի հույսով: Հավատում ենք, շուտով, շատ շուտով բռնագաղթ տեսած պապիկներն ու տատիկները գրկաբաց կընդունեն իրենց վերադարձող թոռնիկներին և նորից համշենահայի տանը կհնչի նորածին մանկան ճիչը, կգործեն հայկական 53 կրթարաններն ու Լեչկոպի նորակառույց Սուրբ Հարություն եկեղեցում մոմալույսի ցոլանքի ներքո նորից կալիքվի «Հայր մերը»:

Ասենք նաև, որ այս հոդվածի համառոտ չափածո տարբերակն օգոստոսի վերջերին արդեն տպագրվել էր մանկապատանեկան «Կանչ» պարբերաթերթում:

Որոշ ժամանականց «Ազատամարտ» շաբաթաթերթի էջերում տպագրվեցին (իսկ հետո նաև ռուսերեն) մեր՝

Աբխազիայի հայ բնակչության ահավոր վիճակի մասին պատմող «Գնդակահարված հատորներ», «Նոր Վաշդեն, կամ ըստ Րաֆֆու», «Ոգեղեն հաց» և այլ հոդվածներ: Վերջին երկուսը ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը, որպեսզի կարողանան պատկերացում կազմել այն դաժան ու մահասաստ ժամանակի մասին.

**НОВЫЙ ВАШДЕН ИЛИ ПО РАФФИ**

Буквально каждый день получаю печальные известия о поджогах армянских домов (зачастую с жильцами) грузинскими «доблестными парнями».

Вчера приходил мой дядя, житель села Гумисты Григор Аветисян, несколько раз жестоко избитый за оказание сопротивления мародерам. На глазах его соседа, главы администрации Сухумского района Мераба Дгебуадзе, 85-летний дядя Григор лишился буквально всего: автомашины «Запорожец» (получил ее как ветеран Великой Отечественной войны), мебели, одежды и, в конце концов, добротного дома (подожгли 12-го декабря 1992 года) и даже самого необходимого в хозяйстве … молотка, чтобы не смог, как цинично выразился один из «идейных» мародеров-«гвардейцев», начать строительство нового армянского дома на территории свободной и независимой Грузии»…

На первый взгляд звучит дико: потомки Картлоса жестоко, я бы сказал с наслаждением, расправляются с мирными потомками Айоса: грабят, насилуют, убивают, издеваются над детьми, женщинами и стариками… Но красивая легенда о братьях Айосе и Картлосе сегодня вызывает, мягко говоря, насмешку у более или менее знакомых с историей Армении, ибо 1992-1993 гг. … уже были на заре Амшенского княжества: в 789-790 гг., когда, по сведениям историков Гевонда и Ована Мамиконяна, отец и сын Шапух и Амам Аматуни вместе с подданными, устав от непосильной тяжести податей арабам, покидают родные очаги и обосновываются в городе Тамбуре. Но недолго длится долгожданный мир-

ный труд амшенского крестьянина: дядя Амама, грузинский князь Вашден, получив от арабов войско, коварно нападает на Тамбур и разоряет его. По приказу Вашдена отрубают руки и ноги Амаму Аматуни…

Эдуард Шеварднадзе – новый Вашден двадцатого века?..

Если нет, почему разоряются армянские села?

Гумиста… Лабра… Ачадара…

Так и вспоминается роман Раффи «Самвел», посвященный истории Армении четвертого века:

«Курились села… Вот только дым, висевший над ними, ничем не напоминал тот мирный, голубоватый дымок, который вьется по утрам над мирными кровлями сельских домов. Этот дым черной тучею стелился над землей, окутывал села плотной пеленой, и время от времени сквозь него прорывались языки пламени… Нигде не было ни души. Всюду царила унылая пустота полного безлюдья… Словно дыхание смерти пронеслось … и уничтожило всякое присутствие человека.

Дымился Двин, дымился Арташат, дымился Вагаршапат» (четвертый век).

…Дымится Лабра, дымится Ачадара, дымится Гумиста… (конец двадцатого века).

28.03.1993 г.

**ДУХОВНАЯ ПИЩА**

В последнее время антиармянские настроения с подачи грузинских средств массовой информации становятся своеобразной «духовной пищей» для «свободолюбивых националистов», безмерно «страдающих от патриотического голода» Так, «святыми» устами Звиада Гамсахурдиа новорожденное Армянское культурно-благотворительное общество «Крунк» объявляется антинародным, а армяне, проживающие в Абхазии, ни много, ни мало, предателями, да не простыми, а достой-

ными немедленного включения в знаменитую Книгу рекордов Гиннеса – двойными: подлыми предателями интересов Грузии и, главное, Армении (в скобках замечу, что в ответ общество «Крунк» было вынуждено выступить в печати с адресованным тогдашнему президенту Грузии Звиаду Гамсахурдиа «Открытым письмом»). Дело зашло так глубоко, что даже безобидное слово «крунк» (журавль) вызывает раздражение и аллергические ощущения (или чувство страха?) у лидеров разных грузинских партий и общественных движений. Так, незадолго до начала Отечественной войны в Абхазии на одном из музыкальных конкурсов школ Гульрипшского района из репертуара Нижнемархаульской армянской школы по требованию грузинских националистов исключается песня «Крунк», песнь песней нашего народа, более тысячи лет символизирующая чаяния и надежды скитающегося под чужим небом в поисках лучшей доли пандухта:

*Крунк, из стран родных нет ли хоть вестей?*

Может быть, в угоду нашим «друзьям» вообще исключить из словарного богатства армянского языка это «подозрительное» слово?.. Ведь не секрет, что единственная «хлебная дорога» в Армению проходит через территорию Грузии… Иначе… Сами понимаете, что иначе…

Да, вновь звучат знакомые мелодии из знакомых песен и времен: «крунковцы», «предатели», «враги»…

– «Крунк» против нас…

– «Крунк» собирает деньги для абхазской армии. У нас есть списки…

– «Крунк» против независимости Грузии.

Однажды в ограбленной грузинскими гвардейцами лечкопской средней школе Сухумского района я осмелился спросить у гвардейца-армянина, кстати, окончившего одну из армянских школ города Тбилиси:

– А что вы знаете об амшенских армянах?

И как ожидал – ничего:

– Вы – мусульмане…

Я попытался возразить:

– В здании, где мы сейчас находимся, как вы говорите, армяне-мусульмане построили церковь Сурб Арутюн (Святое Воскресение), а грузины-христиане ограбили ее… Как все это сочетается с вашим утверждением?..

Моя «просветительская деятельность», к сожалению, не имела никакого положительного результата:

– Все равно, вы предатели и мусульмане…

А меня спасло то, что он … узнал меня, т.к. несколько лет назад с известным армянским поэтом Геворгом Эминым я выступал в его родной школе.

Конечно, была очевидна явная антиармянская обработка грузинских «гвардейцев», и я совершенно не удивился, когда мне попалась статья Гурама Чхиквадзе «Историческая действительность и политические требования», опубликованная в печально известной газете «Демократическая Абхазия» от 11 февраля 1993 года, в которой приведен отрывок из книги А.Манвелашвили «Границы Грузии», изданной в 1938 году в Париже: «Большевики уступили Турции, Азербайджану и Армении 19.491 кв. км территориальных земель Грузии». Кстати, в этой же статье утверждается, что границы Грузии доходили и до города Туапсе…

Неужели готовится новая «духовная пища», на сей раз – более аппетитная?

15.02.1993 г.

Համարում տպագրվել են նաև մեր թերթին անգնահատելի ծառայություն մատուցած բանասիրական գիտությունների թեկնածու Հայկազուն Ալվրցյանի «Պատասխանատու ենք աբխազահայության համար», ԽՍՀՄ գրողների միության անդամ Անդրանիկ Բահարյանի «Սևծովյան այգաբաց» (վերջը), Հայաստանի հանրային գրադարանի աշխատակցուհի Սաթենիկ

Գեջյանի «Գյումուշխանեցի Ավոն», բանասիրական գիտությունների թեկնածու Ժորա Էրուքյանի «Սուխումի հայկական միջնակարգը», Հովհաննես Թորոսյանի «Կրթության հիմքը մայրենին է» բովանդակալից հոդվածներն ու այլ նյութեր, ինչպես նաև չափածո ստեղծագործություններ:

«Համշենի» այս համարի տպաքանակը (մի մասը ընկերներիս օգնությամբ տարածվեց Ռուսաստանի հարավում), մեծագույն դժվարություններով, հաղթահարելով բազմաթիվ արգելքներ, մեզ հաջողվեց Երևանից ինքնաթիռով հասցնել Աղլեր, իսկ այնտեղից էլ ձկնորսական նավով՝ Սուխում՝ բարի ու սրտացավ խոսքի ծարավի մեր հայրենակիցներին, որոնք խորին երախտագիտությամբ ու շնորհակալությամբ ընդունեցին այն:

Ավելորդ է ասելն անգամ, որ թերթի այդ համարը ձեռքից ձեռք էր անցնում, և շատերն են մեզ շնորհակալություն հայտնել թերթի արդար ու մաքուր դիրքորոշման համար:

Ինչ խոսք, մեր կյանքի համար վտանգավոր ու արկածախնդիր քայլ էր դա, շատերի համար՝ անհասկանալի ու նույնիսկ ցայսօր դատապարտելի (խոսքը Սուխումում գտնվող ծնողներիս անվտանգության մասին է, որոնք կարող էին բռնությունների ենթարկվել վրացական «գվարդիականների» կողմից): Բայց, խորապես համոզված էինք և համոզված ենք՝ այդ քայլը օդուջրի պես անհրաժեշտն էր ու միակ ճիշտը և, ինչու չէ, թերևս հեռանկարայինը, որովհետև դա, առաջին հերթին, մեր հոգու պարտքն էր, ինչպես նաև մեր թերթի պատիվն ու նրա գոյատևելու բարոյական իրավունքը:

## Գ. ԸՆԹԵՐՑՈՂԸ ՀԱՅԱԼԵԶՈՒ ԹԵՐԹԻ ԷՐ ԾԱՐԱՎԻ

1992-1993 թվականների Աբխազիայի ժողովրդի հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո հանրապետության շրջափակման պայմաններում

շարունակվեց «Համշենի» տպագրությունը Սուխումում, իհարկե, ելնելով տեղում առկա հնարավորություններից: Իսկ հնարավորությունները, մեղմ ասած, շատ էին սուղ – չկար թուղթ, համակարգչային շարվածքի մասին կարելի էր միայն երազել, թույլ էր տեղի տպագրական բազան (տպարանները թալանվել ու ավերվել էին) և այլն:

Եվ այս ծանր պայմաններում «Ռեսպուբլիկա Աբխազիա» թերթի գլխավոր խմբագիր Վիտալի Չամագուայի և նրա առաջին տեղակալ Սերգեյ Սարգսյանի անմիջական օգնությամբ և Աբխազիայի հերոս Սերգեյ Մաթոսյանի աջակցությամբ մենք սկսեցինք «Համշենի» տպագրությունը ռուսերեն լեզվով:

Ասենք, որ թերթի տպագրության բարձր եղանակը ժամանակի պահանջներին արդեն վաղուց չէր համապատասխանում և, բնականաբար, տպագրական որակը բավականին ցածր էր… Բայց ա՛յն ժամանակ … մի՞թե կարևորը տպագրության եղանակն էր կամ թղթի որակը: Կարևորն այն էր, որ այդ անորակ թուղթը կա՛ր և հնարավոր էր թերթը հրապարակել:

Կարևորը «Համշենի» տպագրության փաստն էր, թերթի վերածնունդը:

Եվ մենք ոգևորված անցանք գործի: Տունուտեղ մոռացած՝ շրջանից շրջան էինք գնում, գյուղից գյուղ, միայն թե գրեինք, միայն թե հրատարակեինք…

Հիրավի, կարծես թե հենց մեր մասին է ասված.

*Трое суток не спать, трое суток шагать*

*Ради нескольких строчек в газете.*

Հասկանալի է, որ *ինչքան էլ թերթի ոգին լիներ հայկական՝ ռուսալեզու «Համշենն» արդեն չէր կարող բավարարել հայ ընթերցողի, ինչպես նաև ու առաջին հերթին՝ հենց իմ օրըստօրե խստացող պահանջները. հայ ընթերցողը հայալեզու թերթի էր ծարավի*, և մեր առաջնահերթ խնդիրը նրա արդարացի պահանջը կատարելն էր:

Եվ ահա 1998 թվականի հունիսին օֆսեթ տպագրությամբ լույս տեսավ հետպատերազմյան «Համշենի» առաջին հայատառ համարը, որտեղ հրապարակվեցին Մայիսի 28-ի ազգային տոնին նվիրված «Համաժողովրդական խիզախում» հոդվածը և մեր չափածո բնապատկերները: Համարը բացվում է Աբխազիայի Հանրապետության նախագահ Վլադիսլավ Արձինբայի՝ հատուկ մեր թերթին տված «Միահամուռ ջանքերով մենք կկառուցենք անկախ պետություն» հարցազրույցով:

(Վլադիսլավ Արձինբան միշտ էլ ուշադիր է եղել մեր թերթի նկատմամբ: Հիշում եմ. ֆինանսական դժվարությունների պատճառով որոշ ժամանակով ընդհատվեց մեր թերթի տպագրությունը: Եվ դա չէր վրիպել Վ.Արձինբայի ուշադրությունից. ինձ հաղորդեցին, որ նա անհանգստացած է հայկական թերթի ճակատագրով, որի գոյությունը խիստ կարևորելով՝ խնդրում է ամեն ինչ անել հրատարակությունը վերսկսելու համար: Նա ընդգծել էր, որ խոսքը հատկապես հայկական թերթի մասին է: Ես չեմ մոռանում Վլադիսլավ Արձինբայի՝ պատգամի պես հնչող խոսքը. հայկական թերթի հրատարակությունը Աբխազիայում կարևոր հասարակական-քաղաքական նշանակություն ունի):

Վերջապես իմ փայփայած վաղեմի երազանքն իրականացավ. *Աբխազիայում դրվեց հիմքը հայերեն տպագրության*:

Եվ այս գործում մեզ անգնահատելի ծառայություն մատուցեցին երիտասարդ գիտնականներ Հարություն և Իշխան Ավետիսյանները, որոնք ապահովեցին խնդրի տեխնիկական կողմը:

«Համշենի» հիմնադրման առաջին իսկ օրվանից մեր նպատակն է եղել *օգտակար* թերթ ստեղծելը՝ բազմաշերտ լրատվությամբ հագեցած: Մենք աշխատել ենք յուրաքանչյուր հայկական տուն ուրախություն բերել: Հայաստան, Արցախ, Սփյուռք, համահայկական հիմնահարցեր, տեղի հասարակական-քաղաքական ու

մշակութային կյանք և, իհարկե, նախնյաց բնօրրան – ահա թերթի հիմնական և առանցքային թեմաները, որոնք միշտ էլ հետաքրքրում են մեր ընթերցողներին:

Մենք միշտ էլ աշխատել ենք մեր հրապարակումներով լրացնել դպրոցների կրթական ծրագրերի պահանջները, նպաստել հայագիտության զարգացմանը հայկական կրթարաններում, մեր հայրենակիցների մեջ սիրո և հպարտության զգացում սերմանել հայկականի նկատմամբ: Եվ ուզում ենք հավատալ, որ դա մեզ հաջողվել է և հաջողվում է ցայսօր:

Թերթի կարևորագույն ուղղություններից մեկը հայ-աբխազական մշակութային կապերի ամրապնդումն է, երկու ժողովուրդների հոգևոր մերձեցումը:

Այդ նպատակով «Համշենի» էջերում տպագրվել են հայտնի աբխազ հեղինակների ստեղծագործությունների հայերեն և ռուսերեն թարգմանությունները. դասականներից՝ Դըրմիտ Գուլիա, Բագրատ Շինկուբա, Շալուա Ծըյջբա, Իվան Թարբա, ինչպես նաև ժամանակակից հեղինակներից՝ Բորիս Գուրգուլիա, Մուշնի Լասուրիա, Վլադիմիր Ձանթարիա, Ջումա Ախուբա, Մուշնի Միքաիա, Ստանիսլավ Լակոբա, Գունդա Կուծնիա, Սերգեյ Ագընդիա, Վիտալի Ամարշան, Վախթանգ Աբխազոու, Անատոլի Լագուլաա, Վիտալի Շարիա, Վիկտոր Կոկոսկիր, Դաուր Նաճղեբիա…

Անքակտելի հոգեկան թելերով էր կապված մեր թերթի հետ բանաստեղծ Վլադիմիր Մաանը, որը մի առանձին սեր էր տածում հայ ժողովրդի նկատմամբ: Նա մեր ամենօրյա այցելուն էր և իր ողբերգական մահվանից մի քանի ժամ առաջ կրկին այցելել էր մեզ՝ տպագրության ներկայացնելով նոր բանաստեղծությունների մի փունջ:

Թերթին ակտիվորեն թղթակցել են հայտնի լրագրողներ Սերգեյ Սարգսյանը, Տատյանա Տրոյանովսկայան և Վլադիմիր Ծըյջբան, Լեյլա Փաչուլիան և Լիլիանա Յակովլևան, արվեստի վաստակավոր գործիչ Վալերի Ճոլարիան, արվեստաբանության դոկտոր-պրոֆեսոր Ալեքսեյ Արգունը, ակադեմիկոս Բաջգուր Սաղարիան,

մշակույթի վաստակավոր գործիչ Արման Դանիելյանը, Աբխազիայի պետական թանգարանի տնօրեն, պատմագիտության դոկտոր Արկադի Ջոփուան, Աբխազիայի Հանրապետության ժողովրդական դերասան Սերգեյ Գաբնիան, հայտնի ռուս արձակագիր Կոնստանտին Գերդովը, բանաստեղծներ Իգոր Կաչալովը, Գեորգի Քեսյանը, Նիկոյալ Պատուլիդին, Կոնստանտին Ֆիլիդին, ֆուտբոլի համամիութենական կարգի մրցավար Գրիգորի Պողոսյանը և այլ հեղինակներ:

«Համշենի» էջերը, բնականաբար, միշտ էլ բաց են եղել Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում ստեղծագործող հայ հեղինակների՝ Անդրանիկ Բահարյանի, Ժորա Էրուքյանի, Վազգեն Կանսուզյանի, Զորիկ Քեշիշյանի, Լյուդվիգ Քյուլյանի, Սահակ Կալայջյանի, Սեդա Բաղդասարյանի, Հովհաննես Հովակի, Երվանդ Ղանդիլյանի, Արամ Կանսուզյանի, Սաշա Մկրտչյանի (Զարզանդ), Հայկ Ռահանյանի, Շամիրամ Քեսյանի, Անդրանիկ Կոնդակչյանի, Սիրավան Սևունու, Խաժակ Սիմոնյանի, Գայանե Աթոյանի, Ռիմա Ալեքսանյանի, ինչպես նաև մեզանից հեռացած Հակոբ Գուրունյանի, Էդուարդ Լուսպարյանի, Ռաֆիկ Աթուլյանի, Վլադիմիր Ավջյանի, Սերգեյ Կոնդակչյանի, Հովհաննես Թորոսյանի և այլոց համար: Առանց չափազանցության ուզում ենք շեշտել, որ «Համշենում» հրապարակվելը աբխազահայ ստեղծագործողների միակ (սակավ բացառությամբ) հնարավորությունն է ընթերցողներին տպագիր ներկայանալու:

Նույնը կարելի է ասել նաև սկսնակ հեղինակների մասին, և հատկապես կուզենայինք նշել շնորհալի Նինա Գասպարյանին, որի գողտրիկ հրապարակումները մի առանձին հմայք են հաղորդել մեր թերթին և, բնականաբար, ջերմությամբ ընդունվել ընթերցողի կողմից: Նրա, նաև մի քանի պատանի ստեղծագործողների՝ «Համշենի» էջերում լույս տեսած թոթովանքներն ամփոփվել են 2004 թ. Ալեքսանդր Անկվաբի հովանավորությամբ Սուխումում լույս տեսած եռալեզու՝

աբխազերեն, ռուսերեն և հայերեն, իր տեսակի մեջ եզակի «Ծիծեռնակներ» չափածո գրքում:

Առանձին չթուլացող հետաքրքրությամբ են կարդացվում 1992-1993 թթ. վրաց-աբխազական պատերազմի մասնակից, Լեռնի շքանշանի ասպետ Միսաք Քյուլյանի՝ մարշալ Բաղրամյանի անվան հայկական փառապանծ գումարտակի մարտական առօրյան նկարագրող գողտրիկ մանրապատումները:

Վերջերս մեզ ուրախացրեց ու ոգևորեց շնորհաշատ պատանի լրագրող, Էլեոնորա Գիլոյանի հայտնությունը. նա այսօր աշխատում է «Աբազա» հեռուստաընկերությունում:

Երախտագիտությամբ եմ ուզում նշել մեր ավագ ընկերոջը՝ Անդրանիկ Բահարյանին, որը մահացավ 2016 թվականի սկզբին: Չնայած առաջացող տարիքին, նա երիտասարդական անսպառ ավյունով շարունակում էր ստեղծագործել մինչև իր երկրային կյանքի վերջը՝ խորիմաստ գրախոսականներով և բանաստեղծական նոր ու հրաշալի շարքերով ներկայանալով ընթերցողին: Ուզում եմ անպայման շեշտել, որ մտքի դասական պարզության հասած վարպետը վեր էր մանր ու ճղճիմ կեցվածքից, ճոռոմախոսությունից և նախանձելի աշխատասիրությամբ ու մի վերին պատասխանատվությամբ իր աստվածատուր շնորհքն ի սպաս էր դրել հայոց խոսքի պանծացմանը: Երկարամյա մանկավարժական և գրական գործունեության համար Հայաստանի սփյուռքի նախարարությունը նրան պարգևատրել է «Մայրենիի դեսպան» մեդալով:

### Դ. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Աբխազահայ հատվածի գրական-մշակութային կյանքում նկատելի երևույթ է «Համշեն» թերթի գրադարան» մատենաշարի հիմնադրումը, որի շնորհիվ «Սևծովյան այգաբաց» գրական միավորման անդամները եզակի

հնարավորություն ունեցան հրատարակելու իրենց ստեղծագործություններն ու առանձին գրքերով ներկայանալու տեղի հայ ընթերցողին: Այսպես, սույն մատենաշարով լույս են տեսել Հովհաննես Թորոսյանի («Կանչ»), մեր («...որ մաքուր մնամ», «Ափացխա», «Սուխումի հայկական միջնակարգը»), Սեդա Բաղդասարյանի («Իսկ ես արդեն սկսել էի հավատալ»), Ժորա Էրուքյանի («Աշուն», «Հոգու երկիր», «Թռչնի երգը»), Անդրանիկ Բահարյանի («Աշխարհի ամենաքաղցր խոսքը»), Հայկ Ռահանյանի («Առակներ և զրույցներ»), Երվանդ Ղանդիլյանի («Բարության լույսեր»), Հարություն Եթումյանի («Մանիներ»), Հովհաննես Հովակի («Բանաստեղծություններ», «Ես հավատում եմ խղճի հրաշքին»), Ռաֆիկ Աթուլյանի («Ոսկե կաթիլներ»), Անդրանիկ Կոնդակչյանի («Շահումյանովկա-100»), Սահակ Կալայջյանի արձակ «Արյան կանչը», ինչպես նաև «Գրական Համշեն», «Սուխումի հայկական միջնակարգը» ժողովածուներն ու բազմաժանր հավելվածները և այլն:

Տպագրության ենք պատրաստել մի շարք ժողովածուներ. Հովհաննես Թորոսյանի չափածո «Եղեգի երգը», Գրիգոր Օքսուզյանի չափածո «Սիրտս գարուն է» գրքերն ու «Գրական Համշեն» ալմանախը:

Հայ և աբխազ ժողովուրդների բարեկամության ամրապնդման ու հոգևոր մերձեցման գործում նշանակալից երևույթ էր ակադեմիկոս Օլեգ Շամբայի կազմած «Աբխազական առածանի» ժողովածուի մեր թարգմանության հրատարակությունը, որը բարձր գնահատեց Աբխազիայի ժողովրդական բանաստեղծ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Բագրատ Շինկուբան. «Աբխազ ժողովրդի բանահյուսության լավագույն նմուշներն անպայման պիտի դառնան քաղաքակիրթ ժողովուրդների սեփականությունը: Այս առումով ներկա աշխատությունը հաճելի անակնկալ պիտի լինի հայ ընթերցողի համար»:

Վերոհիշյալ ժողովածուները լույս են տեսել Սուխումի «Մամուլի տուն» հրատարակչությունում, Աբխազական

պետհամալսարանի «Ալաշարբագա» տպարանում և Սոչիի պոլիգրաֆձեռնարկությունում:

Հուսով ենք, որ «Համշենի» բարերար գրադարանը ապագայում էլ կշարունակի իր ազգանվեր գործունեությունը և ընթերցողներին կներկայանա ավելի՛ կազմակերպված՝ թե՛ որակապես, և թե՛ տեխնիկապես: Բայց այս հարցում մեր հրատարակչական պատրաստակամությունը բավարար չէ – ակտիվ նախաձեռնությամբ պիտի հանդես գան նաև հեղինակները՝ պատասխանատվությամբ ու խստապահանջ վերաբերմունքով, և, առաջին հերթին, հենց իրենց նկատմամբ:

Փաստենք, որ արվածն, անշուշտ, քիչ չէ, սակայն անելիքներն, իհարկե, անհամեմատ ավելի շատ են:

## Ե. «ՀԱՄՇԵՆ» ԹԵՐԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ Է

Թերթը կենդանի օրգանիզմ է՝ մշտապես զարգացող ու կատարելագործվող: Եվ այդ ճանապարհին վերելքները և անկումները բնականորեն անխուսափելի են: Ինչ խոսք, թերություններից զերծ չէ նաև «Համշենը»: Եվ այդ թերություններն, անշուշտ, շատերն են տեսնում: Եվ, իսկապես, լա՛վ է, որ տեսնում են:

Բայց … տեսնել կա, տեսնե՛լ էլ կա:–

Բարեկամներն, իհարկե, բովանդակալից ու բարի խորհուրդներով աշխատում են օգնե՛լ մեզ, սատարե՛լ, հուսադրե՛լ, ինչի համար մեծապես շնորհակալ ենք ու երախտապարտ:

Բայց ավաղ ու ախ, քիչ չեն նաև նրանք, ովքեր չարախնդությամբ ու բանսարկություններով փորձում են հասնել իրենց վաղեմի՝ թերթը փակելու նպատակին՝ չհապաղելով, ինչպես հետագայում պարզվեց, «օգըտվել» թերթի «ընձեռած» հնարավորություններից:

Այո, նրանք տեսնո՛ւմ են միայն: Իսկ մենք զգո՛ւմ ենք՝ հոգով, սրտով ու նաև ցավո՛վ:– Հոգո՛վ ու սրտո՛վ,

որովհետև թերթը կյանքի արժեք ու գին ունի մեզ համար, մեր էությունն է, մեր ապրած տարիների իմաստն ու բովանդակությունը: Ցավո՛վ, որովհետև առկա թերությունները վերացնելու համար ֆինանսական ու որակական լուրջ հնարավորություններ ու ներդրումներ են անհրաժեշտ,– մի բան, ինչից, դժբախտաբար, զուրկ է եղել «Համշենը» հիմնադրման առաջին իսկ օրվանից:

Մեր ժողովրդի թշնամիները միշտ էլ և առաջին հերթին աշխատել են ոչնչացնել հայ ուսուցիչների՛ն, հայ խմբագիրների՛ն, հայ գրողների՛ն… Նրանք ավերում և հրկիզում էին հայկական թերթերի խմբագրություններն ու տպարանները, գրադարանները, հայատառ թերթերն ու գրքերը: *Հայկականը ոչնչացնելու համար, առաջին հերթին, պիտի ոչնչացվեին հայոց խոսքը կրողները:* Մենք դա լավ գիտենք: Վկան մեր պատմությո՛ւնն է, վկան հենց մե՛նք ենք:

Ներեցեք ինձ, բայց անպայման պիտի ասեմ. հայկական թերթից հրաժարվող ուսուցչին ես չէի վստահի իմ երեխայի դաստիարակության ու կրթության գործը: Իսկ այդպիսի «ուսուցիչներ», ցավոք սրտի, կա՛ն:

Հետաքրքիր է, նրանք ի՞նչ են «քարոզում» հայկական դպրոցներում. հայկական թերթ չկարդա՞լ:

Նման՝ ինձ ցավ պատճառող խոսակցություններ, իհարկե, շատ եմ լսել ու լսում եմ ցայսօր:

Ափսոսանքով պիտի փաստեմ, որ կան «հայրենասերներ», որոնք չեն ուզում, որ լինի «Համշեն» թերթը, ընդ որում, թերթից հրաժարվելը ծիծաղելի «փաս- տարկներով» են պատճառաբանում, իհարկե, չմոռանալով ազգանվերի «խրոխտ» կեցվածք ընդունել ու բարձրաձայնել իրենց անմնացորդ «նվիրվածությունը» հայ ժողովրդին: Հիրավի՝

*«Հանուն հայ ազգի» նա խոսեց հուզված,*
*Հայրենասերի կոչերով կրքոտ,*
*Հետո բալիկի թաթիկից բռնած՝*
*Քթացից գնաց … ռուսակա՛ն դպրոց:*

Իսկ ինչո՞վ են նրանք՝ իրենց երեխաների հոգին անխղճորեն կողոպտող այդ «հայրենասերները», տարբերվում հայկական խմբագրություններն ավերող բարբարոսներից… Չէ՞ որ նրանց «գործունեության» արդյունքը նույնն է – հայատառ թերթ փակելը (պետք է լա՛ց լինել, բայց լացել էլ չես կարող, որովհետև, ինչպես ասում էր տատիկս, երբ հայն է լալիս, թուրքն է ծիծաղում: Հերթական անգամ ուրախացնե՞նք մեր թշնամիներին, հոգեցունց բավականությո՞ւն պատճառենք նրանց):

Իհարկե, ինչպես արդեն ասել ենք, թերություններ մեր աշխատանքում անխուսափելիորեն կան: Բայց մի՞ թե թերությունները վերացնելո՛ւ մասին մտածելու փոխարեն մենք ճիշտ ենք համարում թերթից… հրաժարվե՛լը:

Եվ եթե այս տրամաբանությամբ առաջնորդվենք, մենք պիտի հրաժարվենք նաև … հայկական դպրոցների՛ց, որովհետև այստեղ անթիվ ու անհամար թերություններ կան այսօր: Իսկ գուցե գործը հենց դրան էլ հետևողականորեն «տանո՞ւմ ենք»:

Եկեք ամենայն պատասխանատվությամբ փաստենք, որ *այսօր «Համշեն» թերթն աբխազահայ հատվածի պատկերն է՝ իր դրական ու բացասական կողմերով, հատվածի՝ դեպի թերթն ունեցած վերաբերմունքի արտացոլումը,* այլ կերպ ասած՝ *ինչպիսին մենք ենք, այնպիսին էլ թերթն է:*

Այո, քսան տարի թերթի գոյությունն իր սուղ միջոցների հաշվին, իսկ ավելի ճիշտ՝ դրանց չգոյության պայմաններում ապահովել է միայն հիմնադիրը և՛ որպես խմբագիր, և՛ որպես սրբագրիչ, և՛ որպես լրագրող, և՛ որպես տարածող, և՛ որպես հովանավորող,– իսկ այսօր թերթի ապագան մե՛նք պիտի կերտենք՝ բոլորս միասին: Հավատում եմ, որ այդպես պիտի լինի, քանզի

*Ուզում եմ՝ ապրես ինձանից հետո՛,*
*Ինձանից առա՛ջ չե՛ս մեռնի, «Համշե՛ն»:*

Մենք պիտի գիտակցենք վերջապես, որ թերթի պահպանումը մեր հոգու պարտքն է, ինչպես նաև մեր հե-

ղինակությունն ու արժանապատվությունը՝ թերթ ունենալը: Մենք պիտի գիտակցենք «Համշենի»՝ որպես մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության դերը: Մենք պիտի գիտակցենք, որ «Համշենը» հիմնադիր Սարեցյանի անձնական թերթը չէ.

*«Համշենը» հայ ժողովրդի սեփականությունն է, նրա մշակութային հարստության մասը:* – Եվ որպես այդպիսին էլ պիտի ընդունվի ու արժեվորվի յուրաքանչյուրիս կողմից: Եթե մենք ուզում ենք *այդպիսի* թերթ ունենալ (իսկ թերթ չունենալը մեծագույն խայտառակություն է, նամանավանդ մեր պարագայում՝ պատրաստի թերթը կորցնելը) ապա առաջին հերթին պիտի մտածենք ստեղծագործական կադրեր պատրաստելու մասին, պիտի ստեղծենք տեխնիկապես հագեցված խմբագրություն և, վերջապես, պիտի անպայման լուծենք նաև բաժանորդագրության հարցը: Եվ դա շատ է կարևորվում այսօր, երբ մշտապես կատարելագործվում են տպագրության եղանակները և մեր պարտքն է ժամանակի պահանջները բավարարելը, այլապես չի լուծվի մեր կարևորագույն խնդիրը. *աբխազահայ ընթերցողի մեջ մամուլի մշակույթի արմատավորումն ու զարգացումը:*

Այլ կերպ ասած՝ համշենահայը պիտի սովորի սեփական հայատառ պարբերաթերթ կարդալ, պիտի գիտենա ու գնահատի տեղի հայ հեղինակներին՝ գրողներին, լրագրողներին, թղթակիցներին…

**Հետգրություն**

Ուզում եմ մեր խոսքն ավարտել լուսահոգի Անդրանիկ Բահարյանի «Համշեն» թերթը» բանաստեղծությամբ, որով անվանի գրողն ու վաստակաշատ ուսուցիչն ըստ արժանվույն գնահատել է թերթի դերն ու նշանակությունը մեր կյանքում.

*«Համշեն» թերթը հայոց բառով*
*Բուժում է մեր վերքերը խոր:*

*Լույսի նման մտնում է տուն*
*Ու մեր հույսը պահում արթուն:*
*Նա օրերի ցելերի մեջ*
*Կյանքի սերմ է ցանում անվերջ:*
*Ցանում է գիր ու բառ-Մաշտոց,*
*Որ պտուղ տա լեզուն հայոց:*

Մեր ավագ ընկերոջ այս ջերմ խոսքից հետո մնում է, որ մեկ անգամ ևս խոնարհ խնդրանքով դիմեմ իմ հայրենակիցներին, և առաջին հերթին՝ տեղի հայկական համայնքի գործիչներին. *պահպանենք ու գնահատենք մեր մշակութային արժեքները և փոխանցենք մեր ժառանգներին*, չէ՞ որ աբխազահայ համայնքի հիմնական, ամենագլխավոր նպատակը հայոց լեզուն կրողների պահպանումն է, հայ հոգևոր տարածքի – մշակույթ, գիր, գրականություն – ապահովումը:

*2011-2016*

## «ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՅԳԱԲԱՑ» ԳՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
**(համառոտ ակնարկ)**

Աբխազահայ գրողների «Սևծովյան այգաբաց» միավորումը, որն սկզբում կոչվում էր «Համշեն», հիմնադրվել է 1954 թվականին, երբ սեպտեմբեր ամսվա առաջին կիրակի օրը Սուխումում քաղաքում առաջին պարապմունքն անցկացնելու համար հավաքվեցին ԽՍՀՄ գրողների միության անդամ Արշավիր Ջիդարյանը, որն արդեն մի քանի ժողովածուի հեղինակ էր, սկսնակ ստեղծագործողներ, մասնագիտությամբ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ Անդրանիկ Բահարյանը, Հակոբ Գուրունյանը (հետագայում երկուսն էլ դարձան ԽՍՀՄ գրողների միության անդամ), Իշխան Ռահանյանը, Վազգեն Կանսուզյանը, Ենոք Շաշիկյանը …

Այս՝ ամեն ամսվա առաջին կիրակի օրը հավաքվելու բարի ավանդույթը շարունակվում է ցայսօր:

Ուզում եմ անպայման շեշտել աբխազահայ գրական ուժերը կազմակերպելու, նրանց թևավորելու գործում Արշավիր Ջիդարյանի անուրանալի ծառայությունը: Աբխազահայ գրողների մեծագույն մասը նրան է պարտական իր այսօրվա հաջողություններով:

Գրական միավորման հիմնադրման առաջին իսկ օրվանից հայ հեղինակների կողքին են կանգնել ու սատարել նրանց աբխազ գրականության հիմնադիր Դըրմիտ Գուլիան, Սոցիալիստական աշխատանքի հերոս, գրող-ակադեմիկոս Բագրատ Շինկուբան, որի հանրահայտ «Հեռացածներից վերջինը» պատմավեպը 1978 թվականին լույս է տեսել նաև Երևանի «Սովետական գրող» հրատարակչությունում՝ Նարեկ Մեսրոպյանի թարգմանությամբ (Ի դեպ, Բ.Շինկուբան դեմ էր «Սևծովյան այգաբաց» անվանը. նրա կարծիքով, ճիշտը «Համշենն» էր, որովհետև լավագույնս արտահայտում էր միավորման բովանդակությունը: «Սևծովյան այգա-

բաց» կարող են ունենալ հույնն ու աբխազը, ռուսն ու վրացին… Իսկ «Համշենը» միայն ձերն է, ձեր անկրկնելի անունը»,– ասել էր նա: ): Այստեղ էլ ավելացնենք, որ Դ.Գուլիայի և Բ.Շինկուբայի սկսած բարի ու շնորհակալ գործն այսօր հաջողությամբ շարունակում են Անզոր Մուքբան, Սերգեյ Ագընդիան, Վիկտոր Կոկոսկիրը, Վախթանգ Աբխազոուն, Դաուր Նաճղեբիան, Անատոլի Լագուլաան…

Արդարության դեմ չմեղանչելու համար անպայման պիտի ասենք, որ Աբխազիայում հայ գրողների միավորում է գործել նաև անցյալ դարի 30-ական թվականներին՝ Հայրենական Մեծ պատերազմից առաջ, Սուխումի թիվ 4 (այժմ՝ Հովի. Թումանյանի անվան թիվ 9) հայկական օրինակելի դպրոցին կից: Ցավոք սրտի, միավորման մասնակիցներից շատերը հերոսաբար զոհվեցին Մեծ Հայրենականի ռազմադաշտերում:

Նրանցից մեկը՝ Արտաշես Մինասյանը, որի գրական անունը Շանթածին էր, պատերազմի առաջին իսկ օրը հետևյալ տողերն է գրել.

*Երդվում եմ կրծքով պաշտպանել,*
*Երկիր իմ, քո ամեն քարը,*
*Քո ամեն ծաղիկն ու ծառը*
*Երդվում եմ կրծքով պաշտպանել:*
*Իմ հոգում պայծառ ու ջահել*
*Արև՛ է վառել մեր դարը,*
*Երդվում եմ կրծքով պաշտպանել,*
*Երկի՛ր իմ, քո ամեն քարը:*

Նույն ճակատագրին արժանացավ վառվռուն երազանքներով տոգորված Միսաք Ցայլյանը: Նրա երգերը հուզիչ են՝ հույսով ու հաղթանակի հավատով լեցուն, անսահման է երիտասարդ բանաստեղծի հայրենասիրությունը.

*Իմ հայրենի՛ք, սիրում եմ քեզ*
*Եվ այրվում եմ քո սիրով,*
*Քո բանաստեղծ որդին եմ ես*
*Արյա՛մբ, գրչո՛վ ու սրո՛վ:*

Առանց խոր հուզմունքի անհնար է կարդալ նաև կարմիրբանակային Անդրանիկ Դավթյանի՝ ժամանակի դաժան շնչից մաշված նամակները: Բանաստեղծը երազել է տուն վերադառնալ, շարունակել ստեղծագործ աշխատանքը: Նա գրել է.

*Արևմուտքի խավարը ցուրտ*
*Մոտեցել է վախճանին,*
*Գերեզմանի սառը քամին*
*Դիպել է հիտլերի ջանին:*

Աննկարելիորեն մոռացության է մատնված Արշավիր Ջիդարյանի՝ 1942 թվականին գրած «Հայ զինվորին» հայրենաշունչ բանաստեղծությունը: Այն ուզում եմ ամբողջությամբ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը՝ գոնե այսպես մոռացությունից փրկելու համար.

*Հայրենիքդ մեծ ու հզոր՝*
*Տվեց քեզ զենք, տեղ ու պատիվ,*
*Որ այդ զենքով, ո՛վ հայ զինվոր,*
*Պաշտպանես քո երկիրը հին:*
*Եվ նախնիք քո դարեր երկար՝*
*Ազատություն երազեցին*
*Եվ տվեցին ուժերն իսպառ*
*Այդ փրկարար նպատակին:*
*Ու նրանք միշտ վառ պահեցին*
*Պատգամները սերունդների*
*Եվ տվեցին որդիներին*
*Վրե՛ժ, հավա՛տ, ըմբոստ ոգի՛:*
*Իսկ դու այսօր, ո՛վ քաջ որդի,*
*Ունես չքնաղ նոր Հայաստան,*
*Որտեղ ազգդ ազատ, արի*
*Ստեղծում է իր ապագան:*
*Ստացել ես, ո՛վ հայ զինվոր,*
*Հայրենիքից դու ամեն ինչ,*
*Ժողովրդիդ համար այսօր*
*Դու պարծանք ես և նոր փրկիչ:*
*Եղիր դու քա՛ջ, արի՛, խիզա՛խ,*
*Քո ձեռքումն է ապագա, տուն.*

*Նա՛ է հաղթում, ով չունի վախ,*
*Ապրում է նա, ով չի փախչում:*
*Թող քո կրծքում հրդեհ դառնա*
*Անմար կայծը Ավարայրի,*
*Եվ ռազմաշունչ ոգով անմահ*
*Դարձիր Վարդան, Մարզպետունի:*
*Միտքդ միշտ բեր անհաղթ Դավթին,*
*Նրա հորը, որդուն՝ Մհեր,*
*Ժողովուրդը օրեր անթիվ*
*Մեզ համար է նրանց հյուսել:*
*Մեզ համար է ստեղծել նա*
*Թուրն հավլունի, Թուր-Կայծակին,*
*Թող քո զարկից նորից դողա*
*Հրեշը նոր, թշնամին հին:*

Հավատում ես հայ բանաստեղծի սրտի խոսքին, նրա անկեղծությանը և ըստ արժանվույն էլ ընդունում «Ընթերցողիս» ձոն-երդումը, որն ավարտվում է այսպես.

*Ուղեկցել ես դու ինձ անտես,*
*Տվել խորհուրդ և հայտնել իղձ.*
*Քեզ համար եմ տառապել ես*
*Ու քեզ համար մոռացել ինձ:*

Ընթերցողն արդեն գիտի գրական-լուսավորական «Համշեն» թերթի 20-ամյակին նվիրված մեր «Համշեն-20» գրքից, որ 30-ական թվականներին աբխազահայ գրողների ստեղծագործությունները տպագրվում էին «Սովետսկի պիսատել Աբխազիի» թերթում, որն աբխազերենից, վրացերենից, ռուսերենից ու հունարենից բացի ուներ նաև հայկական բաժին: Թերթի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկվել էր Արշավիր Ջիդարյանը:

Անցյալ դարի 20-ական թվականներին Սուխումում ակտիվ գրական-մանկավարժական գործունեություն էր ծավալել հայտնի գրող-հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, մանկավարժ Միսաք Տեր-Դանիելյանը, որը գրական շրջաններում հայտնի էր Արամայիս կեղծանունով:

Նա հմուտ զինվորական էր ու քաջարի մարտիկ: Որպես տաղանդավոր գրող ու մեծատառով Մարդ՝ Արամայիսը հանճարեղ Հովհաննես Թումանյանի մեծագույն հարգանքն ու սերն էր վայելում: 1913 թվականին գաղտնի քվեարկությամբ նա ընդունվել է «Հայ գրողների կովկասյան ընկերության» շարքերը, որը 1912 թվականի ապրիլին հիմնադրել ու ղեկավարում էր Հովհաննես Թումանյանը: 1923 թվականի մարտի 23-ին Սուխումի երկրորդ պետական թատրոնում տեղի հայկական դպրոցի ուսուցչական ու աշակերտական համակազմի ուժերով բեմադրվում է Արամայիսի դրամատիկական ստեղծագործություններից մեկը:

Բեմադրության կազմակերպիչն էր ապագա հայտնի լրագրող Աշոտ Քալանթարյանը, գլխավոր՝ Մինաս աղայի դերում հանդես էր եկել Արշավիր Ջիդարյանը:

Ավելացնենք. Արամայիսը ծնվել է 1874 թվականին Արցախում, 1949-ին որպես «վտանգավոր էլեմենտ» աքսորվել է Սիբիրի խորքերը, որտեղ էլ ծայրահեղ աղքատության մեջ մահացել է 81 տարեկան հասակում: Կարծես զգալով մոտալուտ մահը, իր վերջին նամակներից մեկում նա պատգամել է, որ իր թոռնիկներին անպայման սովորեցնեն հայոց լեզուն, ավելացնելով, թե «...ի՞նչ հայ է նա, ով չգիտի իր Հայրենիքի պատմությունը, ծանոթ չէ իր ազգի լավագույն զավակների գործունեությանը և չգիտի իր մայրենի գըրականությունը»:

Խորհրդային ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.) գրական միավորման ակտիվ գործունեությունը հասկանալի պատճառով ընդհատվեց, բայց, ինչպես արդեն համոզվեցինք, չլռեց հայ հեղինակների հնչեցրած հայրենաշունչ քնարը: Իսկ պատերազմի հաղթական ավարտից համարյա մեկ տասնամյակ անց, երբ դատապարտվեց ստալինյան բռնաշրջանը, գրական միավորումն վերսկսեց իր աշխատանքը՝ նոր որակով ու բովանդակությամբ: Եվ այն ժամանակ ոչ ոք չէր կարող ենթադրել, թե նորա-

ծին «Սևծովյան այգաբացի» մասնակիցներն այդքան շուտ կաճեն և սկսնակի աստիճանից կհասնեն հասուն ստեղծագործողների մակարդակի, որոնց գործերը կգնահատվեն հայ անվանի գրողների՝ Սիլվա Կապուտիկյանի, Սերո Խանզադյանի, Բենիկ Սեյրանյանի, Գևորգ Էմինի և այլոց կողմից:

Շուտով «Աբխազպետհրատը» մեկը մյուսի հետևից լույս է ընծայում Արշավիր Ջիդարյանի «Ծովի շունչը» (1959 թ.), Անդրանիկ Բահարյանի «Ծիր կաթին» (1960 թ.), Հակոբ Գուրունյանի «Հայրենի ծուխ» (1960 թ.), Իշխան Ռահանյանի «Խաղաղություն» (1960 թ.) ժողովածուները, «Սևծովյան այգաբաց» (1959 թ.) և «Շավիղ» (1962 թ.) ալմանախները:

Ահա թե ինչ է գրում 1959 թվականի դեկտեմբերին Անդրանիկ Բահարյանը Աբխազիայի հայ գրողների միավորմանը հասցեագրած նամակում՝ «Սևծովյան այգաբաց» ժողովածուի քննարկման առիթով: Նամակի սկզբում նա հաղորդում է իր ծանր հիվանդության մասին, բայց «...իբրև երազ անցան այդ բոլորը, և ես այսօր երջանիկ եմ, որ ինձ բախտ է վիճակված դարձյալ և դարձյալ հանդիպել ձեզ և լսել ձեր ձայնը: Սակայն, այնուհանդերձ, պետք է խոստովանեմ, որ ինձ ճնշված եմ զգում այն բանի համար, որ զրկված եմ ժողովածուի քննարկմանը մասնակցելու երջանկությունից, մի երջանկություն, որ տարիների երկունք ապրեց և սպասումի երկարատև րոպեներ սերմանեց մեր վերծիգ ճանապարհին:

Բայց բավ է այդ մասին. չընկնենք, այսպես ասած, «շուռ տված» հոռետեսության գիրկը և մեր ասելիքը հուզաթաթավ ողբի չվերածենք:

Թույլ տվեք, սիրելի գրչակիցներ, այս հանդիսավոր երեկոյին հղել ձեզ իմ հրաբորբոք ու սիրակարոտ ողջույնը: Ողջույն եմ հղում նաև քննարկմանը ներկա գտնվող բոլոր նրանց, ովքեր ազնիվ են և եկել են բարի մտադրություններով և որոնց կրծքի տակ թագավորողը սերն է, անձնվիրությունն ու արդարությունը»:

Զարմանալիորեն շատ կարճ՝ 2-3 տարվա ընթացքում միավորումը ճանաչում գտավ ոչ միայն Աբխազիայում, այլև նրա սահմաններից դուրս՝ Ադլերում, Սոչիում, Հայաստանում, Հայկական սփյուռքում:

Այդ է վկայում Կրասնոդարի երկրամասից «Սևծովյան այգաբացի» պարապմունքներին Աշոտ Քոչկոնյանի, Գևորգ Ավջյանի, Անդրանիկ Զեյթունյանի մասնակցությունը:

Մեր հեղինակների ստեղծագործությունները ըսկըսեցին տպագրվել Հայաստանի պարբերական մամուլում՝ «Կանչ», «Ավանգարդ», «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Դպրություն», «Գարուն», «Նորք», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» և այլ թերթերում ու ամսագրերում, «Վրաստան» թերթը պարբերաբար «Գրական էջեր» էր հատկացնում «Սևծովյան այգաբացին», իսկ այդ տարիներին Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի «Կամուրջ» տարեգիրքն անհնար էր պատկերացնել առանց աբխազահայ հեղինակների:

Այստեղ նպատակահարմար ենք գտնում մեջբերել միավորման նախկին ղեկավար Ա.Բահարյանի մշակած ընդունելության կարգի հետևյալ հատվածը. *«Կանոնադրության համաձայն՝ միավորման պարապմունքներին մասնակցելը դեռ չի նշանակում նրա անդամը համարվել*,– «Համշեն» թերթի 1992 թվականի 2-րդ համարում տպագրված «Սևծովյան այգաբաց» հոդվածում գրում է նա…– *լիիրավ անդամության համար պարտադիր է երեք հիմնական պայման.*

*ա) մեկ տարի անընդմեջ մասնակցել միավորման ամենամսյա պարապմունքներին.*

*բ) պարբերական մամուլում հրատարակվել.*

*գ) ներկայացրել քննարկման անտիպ ժողովածու մեկ-երկու մամուլի սահմաններում և միավորման կողմից արժանացել դրական գնահատականի»*:

Ընդունելության նման կարգը մի տեսակ զտեց միավորումը, մնացին նվիրյալները միայն:

Այստեղ էլ նշենք, որ տարբեր տարիներին գրական միավորումը ղեկավարել են Արշավիր Ջիդարյանը, Անդրանիկ Բահարյանը, Հակոբ Գուրունյանը, Վազգեն Կանսուզյանը, քարտուղարի պարտականությունները պարտաճանաչորեն կատարել է արձակագիր Նիկոլայ Դեմուրչյանը: 2004 թվականից գրական միավորման աշխատանքները ղեկավարում է ձեր խոնարհ ծառան:

Գրական միավորման անդամների հետ հանդիպելու նպատակով Երևանից ու Թբիլիսիից Աբխազիա ժամանեցին Սիլվա Կապուտիկյանը, Վախթանգ Անանյանը, Սարմենը, Գևորգ Էմինը, Ստեփան Կուրտիկյանը, Ստեփան Ալաջաջյանը, Վաղարշակ Նորենցը, Իգնատ Մամյանը, Հովհաննես Մելքոնյանը, Սարգիս Խարազյանը, Աշոտ Գրաշին, Վահան Տերյանի դուստր Նվարդ Տերյանը (նա իր հոր՝ Վահան Տերյանի մասին նյութեր էր հավաքում, իսկ Տերյանը, ինչպես հայտնի է, բուժվել է Գուլրիփշի շրջանում գտնվող վարկաբանության հիվանդանոցում), Վարդգես Պետրոսյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ալվարդ Պետրոսյանը, Բենիկ Սեյրանյանը, Մկրտիչ Ասլանյանը, Սահակ Մանվելյանը, Սոս Սիմավորյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Ծերուն Թորգոմյանը, Մարտին Քարամյանը և ուրիշներ:

Հետագա տարիներին «Սևծովյան այգաբացն» աննախադեպ վերելք ապրեց, նրա անդամներից մի քանիսը ժողովածուներ հրատարակեցին ինչպես Թբիլիսիի «Մերանի», այնպես էլ Երևանի «Խորհրդային գրող», «Արևիկ», և այլ հրատարակչություններում (Արշավիր Ջիդարյան, Հակոբ Գուրունյան, Անդրանիկ Բահարյան, Նիկոլայ Դեմուրչյան, Հովհաննես Թորոսյան, Վազգեն Կանսուզյան, Զորիկ Քեշիշյան, Արշավիր Գրբաշյան, Սիրավան Սևունի, Արամ Կանսուզյան, Հայկ Ռահանյան և ուրիշներ, Երևանի «Նաիրի» հրատարակչությունը 1991 թվականին լույս ընծայեց «Սևծովյան այգաբաց» ալմանախը):

Սակայն 1992 թվականի օգոստոսի 14-ին սկսված վրաց-աբխազական պատերազմի կործանարար ուժը

խարխլեց նաև այս կարևորագույն հայկական օջախի հիմքերը:

1994 թվականի սկզբին, պատերազմի հաղթական ավարտից հետո, այն ծանր ու ողբերգական տարիներին, երբ միավորման ղեկավարությունն ստանձնեց Վազգեն Կանսուզյանը, մեր ստեղծագործողները, բարեբախտաբար սակավ բացառությամբ, իրենց մեջ ուժ ու կորով գտան վերսկսելու միավորման գործունեությունը՝ համախմբվելով «Համշեն» գրական-լուսավորական թերթի շուրջը: Շուտով «Համշեն» թերթի գրադարան» մատենաշարով սկսեցին լույս տեսնել նրանց ստեղծագործություններն առանձին ժողովածուներով (տես՝ սույն գրքում տպագրված «Համշեն» թերթի գրադարան» մատենաշարը» հրապարակումը, էջ՝ 287):

Աբխազ հայտնի գրողների թարգմանությամբ մեր հեղինակների գործերը ներկայացվեցին աբխազ ընթերցողին: Այսպես, Հովհաննես Թորոսյանի մանկական բանաստեղծությունները Ռաուլ Լասուրիայի թարգմանությամբ լույս տեսան «Ամցաբզ» («Բոց») մանկապատանեկան ամսագրում, Անդրանիկ Բահարյանի «Մայրիկ կկուն» պոեմի թարգմանությունն իր արժանի տեղը գտավ նույն Ռաուլ Լասուրիայի հատընտիր հատորում, իմ բանաստեղծություններն ու արձակ գործերը Սերգեյ Ագընդիայի և Վիկտոր Կոկոսկիրի թարգմանությամբ հրատարակվեցին «Ափսնի» («Աբխազիա») թերթում և գրողների միության «Ալաշարա» («Լույս») ամսագրում, ինչպես նաև Սերգեյ Ագընդիայի ժողովածուներից մեկի թարգմանությունների բաժնում…

Աբխազահայ գրողների ստեղծագործության տրոփող զարկերակը միշտ էլ հայրենասիրությունն է եղել - սերն ու նվիրվածությունը պատմական հայրենիքին՝ Հայաստանին, հայ ժողովրդի հավերժության խորհըրդանիշ Մասիս սարին ու մեր ազգային հերոսներին, ծննդավայր Աբխազիային, որի օրհնված հողում մեր պապերն ու տատերը, ովքեր հրաշքով կարողացան

խուսափել թուրքական արյունոտ յաթաղանից, գտան իրենց փրկության լուսավոր ափը:

(Փակագծերում ուզում եմ իմ ափսոսանքն ու տարակուսանքը հայտնել, որ մեր հեղինակների յուրահատուկ համշենաբույրով առանձնացող գործերը, չգիտես ինչո՛ւ, չեն ընդգրկվում հանրակրթական դպրոցների գրականության դասագրքերում: Եվ պիտի անպայման ավելացնեմ՝ անիրավացիորե՛ն չեն ընդգրկվում…

Աբխազահայ գրողների ստեղծագործություններին, ինչպես նաև համշենահայերի պատմական ճակատագրին անդրադառնալը հայ գրականության և հայ ժողովրդի պատմության դասագրքերում կունենար կարևորագույն հայապահպանական նշանակություն, չէ՞ որ խոսքը հայ ժողովրդի մի ստվար ու հետաքրքիր հատվածի մասին է)

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի գեղարվեստական ընկալումը՝ իրարից հրաշալիորեն տարբերվող հեղինակներից յուրաքանչյուրը յուրովի իմաստավորվելով, գեղեցիկ ու բովանդակալից ստեղծագործություններ է արարել.

*Հայը հայ է, ուր էլ գնա,*
*Մի օր պիտի վերադառնա,*
*Նախնիների շիրիմներին*
*Պսակ դնի ու … ջերմանա՛:*

(Խաժակ Սիմոնյան. «Հայը»)

*Իմ կենտ Հայրենիք,*
*Հայաստան աշխարհ,*
*Դու սիրել ես վառ*
*Արև ու ծաղիկ,*
*Սիրել՝ աստղակաթ,*
*Կապուտակ երկինք,*
*Ոէ քո դստերին*
*Անվանել ես Վարդ,*
*Մանուշակ, Հասմիկ,*
*Արևիկ, Աստղիկ,*
*Որ դալար լինեն*

*Գարնան ծաղկի պես,*
*Արևի նման*
*Վառ, լուսաժպիտ…*
*Իսկ քո ուստերին*
*Սրբազան Սարիդ*
*Անունն ես տվել,*
*Անվանել ես Սիս,*
*Արարատ-Մասիս,*
*Որ Սուրբ Սարիդ պես*
*Լինեն վեհաշուք,*
*Լինեն ինքնիշխան*
*Ու հաղթաբազուկ…*
*Իմ կենտ Հայրենիք,*
*Հայաստան աշխարհ,*
*Դու՝ աստծուն մոտիկ,*
*Աստծուն՝ հավասար:*

(Անդրանիկ Բահարյան. «Հայրենիք»)

*Սարսափազդու աշխարհ, մութ, նեղլիկ ու դաժան,*
*Դու Եղեռնին անգամ խտրությամբ ես նայում,*
*Օ՛, իմացած եղիր՝ սուրբ հատուցման ժամն է*
*Քո անարդար քայլի պատասխանը մնում…*

(Լյուդվիգ Քյուլյան. «24-ը ապրիլի»)

*Գալիս են նրանք մի խոր թախիծով*
*Ու մոտենալով կրակին անմար,*
*Սուրբ հուշարձանին պսակներ դնում,*
*Պատիվն աշխարհի փրկելու համար…*
*Եկել աշխարհի տարբեր ծեգերից՝*
*Ոմանք լալիս են, ոմանք խոնարհվում…*
*Շատ բան է ասել այդ տեսարանն ինձ,*
*Որ, բարի մարդիկ, ձեզ չեմ մոռանում…*

(Երվանդ Ղանդիլյան. «Ծիծեռնակաբերդում»)

Մեջբերումները կարելի է շարունակել, և թող մեզ ներեն նրանք, ում գործերը չենք նշել միայն ու միայն տեղի սղության պատճառով:

Ուրախությամբ ուզում ենք փաստել, որ վերջին տարիներին «Սևծովյան այգաբաց» գրական միավորումը

համալրվեց նոր կարող ուժերով. Շամիրամ Քեսյան, Խաժակ Սիմոնյան, Մարգարիտա Ավետիսյան, Լիանա Աբրահամյան, Գայանե Աթոյան և Սուսաննա Ալեքսյան (ռուսերեն). նրանք Սեդա Բաղդասարյանի, Սահակ Կալայջյանի, Լյուդվիգ Քյուլյանի, Երվանդ Ղանդիլյանի, Ձորիկ Քեշիշյանի հետ «Սևծովյան այգաբաց» գրական միավորման կորիզն են կազմում: Ավելացնենք, որ 2012 թվականին մեր միավորման պատվավոր անդամ ընտրվեց Երևանի «Զայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը՝ մի վաստակաշատ մտավորական, որը համշենահայության պատմության ու բանահյուսության ուսումնասիրությունն իր կյանքի հիմնական նպատակներից մեկն է դարձրել, և այս բնագավառում ակնառու են նրա նվաճումները:

Սերգեյ Վարդանյանը շարունակեց «Զայն համշենական» գրքի առաջին հատորի խմբագիր, հայ մեծ վիպասան Սերո Խանզադյանի սկսած բարի գործը, կազմեց և խմբագրեց գրքի հաջորդ հատորները…

Միավորման պատվավոր անդամներն են նաև Հայկ Ռահանյանը, Սիրավան Սևունին, որոնք, չնայած իրենց առաջացող տարիքին, բեղուն ստեղծագործական կյանքով են ապրում:

Համոզված եմ, որ «Սևծովյան այգաբացի» կարևոր նվաճումներից է «Գրական Համշեն» ալմանախի տըպագրությունը, որը Աբխազական պետական հրատարակչության 2012 թվականին՝ իմ «Էլեգիաներ երեվույթների մեջ» գրքից հետո պետական պատվերով երկրորդ հայատառ հրատարակությունն է: Ալմանախը, որը բացվում է մեր «Երկու խոսք» ներածականով, կազմված է «Արձակ և չափածո», «Հյուրասենյակ», «Թարգմանություններ» և «Հիշողության դաշտ» բաժիններից: Բանաստեղծական շարքերով հանդես են եկել Անդրանիկ Բահարյանը, Խաժակ Սիմոնյանը, Լյուդվիգ Քյուլյանը, Հայկ Ռահանյանը, Երվանդ Ղանդիլյանը, Սիրավան Սևունին: Արձակ ստեղծագործություններով ներկայացել են Սահակ Կալայջյանը, Լիանա

Աբրահամյանը, Շամիրամ Քեսյանը, Մարգարիտա Ավետիսյանը, Սեդա Բաղդասարյանը, Չորիկ Քեշիշյանը և տողերիս հեղինակը: «Հյուրասենյակում» իրենց ջերմ անկյուններն են ստեղծել մեր բարեկամներ՝ բանասիրության թեկնածու, գրող Լուսինե-Լիլիթ Սեյրանյանը, բանաստեղծ Հովհաննես Գլակը և «Ոզնի» հանդեսի խմբագիր, ծաղրանկարիչ Գուրգեն Բալայանը:

«Սևծովյան այգաբացի» գործունեության ուղղություններից մեկը տեղի ոչ հայագիր հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունն է: Հուսով ենք, ընթերցողը կգնահատի մեր ջանքերն այս կարևոր բնագավառում և «Հյուրասենյակ» բաժնում զետեղված գործերը կարժանանան նրա ուշադրությանը:

Հայ-աբխազական գրական-մշակութային կապերի ամրապնդման գործում, մեր կարծիքով, կարևոր նըվաճում է աբխազ արձակագիր Դաուր Նաճղեբիայի «Գիշերվա ափը» վեպի թարգմանությունը, որը պատշաճ մակարդակով իրականացրել է հայտնի հայ թարգմանիչ Կարլեն Յալանուզյանը: Վեպը լույս է ընծայել Հայաստանի գրողների միության հրատարակչությունը 2013 թվականին:

Հետզհետե ամրապնդվում են «Սևծովյան այգաբացի» և տարբեր գրական կազմակերպությունների ու պարբերականների միջև հաստատված ստեղծագործական կապերը: Եվ դրա լավագույն ապացույցը «Գրական Համշեն» ալմանախի 2016 թ. հրատարակությունն է Հայաստանի գրողների միության կողմից, ինչի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանին:

Ալմանախը, որը լույս տեսավ 2016 թվականին, սիրով ու խնամքով խմբագրեց մեր բարեկամ, հրաշալի բանաստեղծ Ղուկաս Սիրունյանը:

Մեր հեղինակների ստեղծագործությունները պարբերաբար լույս են տեսնում Սուխումի «Համշեն», Երևանի «Ձայն Համշենական» ամսաթերթում, Լոս-Անջելեսի «Համայնապատկեր» ամսագրում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՉԱՓԱԾՈ


Որպես ինքնակենսագրություն....5
Զյուն .... 7
Նաիրի .... 9
Հայաստանը .... 9
Արտավազդ Երկրորդ .... 10
Համշեն....11
Շարունակվող տագնապ .... 12
***Սերս....12
«Նորի՞ց...» ....13
Երգ....14
***Դու գիտե՞ս....14
***Ամեն բառն իմ....14
Ապրիլյան պատերազմ .... 15
Գարո՛ւն է կրկին .... 17
Իմ հայ ժողովուրդ .... 18
Հավատք....18
Հիմա շատ է սիրտս փափկել .... 19
Թեկուզև կյանքն իմ չի եղել անհոգ .... 21
Թե չհանդներ հոգիս խաղաղվել .... 21
***Ես հիմա ցավի կրակ եմ արել .... 22
Առաջվանը չենք .... 23
Ողբ մի բուռ հողի .... 24
Աղրիտ....25
Արցախ .... 26
Հայաստվածներ .... 28
***Է՛խ, Տրդատ արքա....28
Հայրենի լեռներ....29
***Ջրի փոխարեն .... 29
Լեգենդ Եփրեմ պապիս .... 30
***Եվ իմ պապը մեծ ....31
Իմ պապը .... 32
Անսպա՛ռ.... 33
Մայրս .... 34
Ֆիդայի Գրիգոր Թեփուլյանի հիշատակին .... 35
Գարուն....35
Գաղթ-1992 .... 36

Արևաքամի ..... 37
***Աստղերն արեգակներ են ..... 37
Փոքրիկ լեգենդ ..... 38
Սուխումն առանց Եղիշե Չարենցի ..... 39
Բանաստեղծի սիրտը ..... 41
Նախապայթյուն ..... 42
Ես հաստատ գիտեմ ..... 43
Հորս խոսքերից ..... 43
Երեկոյան էքսպրոմտ Մասիսին ..... 44
Հավատ ..... 45
***Հիմա են վերքեր բացվում ..... 45
Էլեգիաներ երևույթների մեջ ..... 46
Այսպիսի ու այսքան ..... 48
***Ժամանակի մեջ ..... 49
***Իմաստի փնտրտուքը ..... 50
Մնացել է ինքդ քեզանից հրաժարվելը ..... 50
***Ինձ չլսեց ոչ ոք-ոչ ոք ..... 51
***Հողից եմ ծնվել բախտավոր մի օր ..... 52
Ես լռում եմ իմ էության մասին ..... 52
Ակնթարթներ ..... 53
Սուխումի թիվ 2 կլինիկական հիվանդանոցում ..... 54
***Քանզի իմ ասածի մեջ ..... 58
«Անդրհյուսիս» շարքից ..... 59
Պատառիկներ ..... 62
***Մեկ-մեկ լինում է ..... 64
***Կարոտին սիրո ..... 64
Մարդ ..... 65
***Ստոր է ու դաժան ..... 66
***Ամպի մի բուռ ..... 67
***Աստվածը ..... 67
Գնչուհին Սուխումի շուկայում ..... 68
«Համշեն» թերթի 20-ամյակին ..... 68
Հիմա, այս պահին ..... 69
Հատուցում ..... 70
***Գուցե այդպես էլ պիտի լիներ ..... 71
Ընդհանուր տեխնիկական առարկաները ..... 72
Մեխանիկական շարժում ..... 73
***Քամի՛, դու ..... 73
***Բաժանումը հաճախ ..... 75
***Նորից մանկացել եմ ահա ..... 76
Ներշնչանք ..... 78

«...Եվ այլն» ..... 78
*** Եթե չլինեմ, դուք՝ ոչինչ ..... 78
Երբ մահանալն արդեն ..... 79
***Մեկ-մեկ ինձ թվում է ..... 80
***Ապրում եմ այսպես ..... 80
***Եթե ծառ ես դու ..... 81
***Ի՞նչ ես, ժամանակ, դու մեզ հետ անում ..... 82
Կաղնու գանգատը ..... 82
***Թռչում են, թռչում ..... 83
Ճիշտ հասկանալու տրամադրություն ..... 83
Հավատացեքինձ ..... 84
Նատյուրմորտ ..... 85
Ես կանցնեի ..... 86
Կարոտի կեսօր ..... 88
Մի բարեկամի ..... 89
***Փառք Աստծո ..... 89
***Չի ընդունել ..... 90
Չգրվող երգ աշնան մասին ..... 91
***Ես քո երկնային ..... 91
***Դու շապկով ես ծնվել ..... 92
***Կանգ առ, ակնթարթ ..... 92
«Հակոբի մոտ» սրճարանից դուրս ..... 93
Այսպես ամեն օր վերադարձիս ..... 95
Երգ ..... 95
Գովազդ ..... 96
Բառաթափ ..... 98
***Իմ հիշողության ..... 98
Զարզանդի հիշատակին ..... 99
Հոգնել եմ հիմա ..... 100
Ուշացած (հիա՞)սթափություն ..... 101
Հեթանոսական ..... 101
***Բառերի խլացուցիչ հոսքում ..... 102
Ուշ աշուն ..... 102
Արդեն բոլոր բառերն էլ արնակաթ են ..... 103
Ես չեմ հիշում Նարեկացու մահը ..... 104
Դուրսպրծուկներ ..... 106
«Հայրենասերը» ..... 108
Մեր «ազգային գործիչներին» ..... 110
Բայց, ազնվորեն ..... 119
***Խաղալու ցանկությունից բացի ..... 119
«Սևծովյան այգաբաց» գրական միավորման ..... 120

Ծրագրված մղձավանջ ..... 120
Երկրաչափություն ..... 121
***Երակներիս ցանցում ..... 122
***Վերադառնալը ..... 123
Ամառային ծովափ ..... 124
Ճեպանկար ..... 128
Մայրամուտ ..... 128
Գարնան լուսաբաց ..... 128
Գլխապտույտ ..... 129
***Ափիս մեջ ..... 130
***Արևին ձգտող ..... 130
Ես կամ ..... 131
Մշո դաշտի առասպել ..... 132
***Ա՛խ, ո՞ւր գնանք ..... 133
***Թեթև շաղվում օղակը ահա ..... 133
Շերամի որդ ..... 134
Բանաստեղծություն ..... 134
Մեր հեքիաթը ..... 135
Տեսանկյուն ..... 138
Հայի կենսագրություն ..... 139
Միայն գարնանը ..... 140
***Ես գիտեմ, նա՝ կարճ ու կտրուկ ..... 141
***Ինչ էլ որ լինի ..... 114
***Հրճվանքն անսահման է ..... 142
***Ես որ ուղղությամբ էլ գնամ ..... 142
Բանաստեղծ ..... 143
***Հոգեցունց համրության մեջ են ..... 144
***Օդը մեղմ էր ու փափուկ ..... 144
***Քարն ամեն տեղ էլ կար ..... 146
***Դու ինձ գտար ..... 147
***Պատերազմն սկսվեց ..... 147
***Բրունոյի պես ..... 148
Ներդաշնակություն ..... 148
Հայոց բառեր ..... 149
Երգ Արտույտի մասին ..... 150
Լեգենդ Ագռավի մասին ..... 151
Մանկության այգում ..... 154
Մանկություն ..... 155
Ծննդատուն ..... 155
Զրույց տատիս հետ ..... 156
Զարթոնք ..... 157

Գլոբուս ..... 158
Ձրույց ..... 158
«Արի տուն»..... 159
Լույս ..... 161
Տուն ..... 161
Աշուն ..... 162
Տատին ինչ անի ..... 163
Սեպտեմբերյան ..... 164
Աքլորականչ ..... 165
Չորս երգ Տիգրանիկիս..... 166
Հունձ ..... 167
Էքսպրոմտ ..... 168
***Արև, կայծակ ու որոտ ..... 168
Դռներն իմ բաց են ..... 169
Սխալ պատասխան ունեցող հարցեր..... 170
Տատիկիս սուրճի բաժակը ..... 171
***Ինձ արդեն քիչ մնալուց առաջ ..... 177
***Պապս ասում էր ..... 178
***Այսօր ես հասկացա..... 178
Եթե ես նախօրոք գիտենայի..... 179
Գիշերային փոթորիկ..... 180
Որպես վերջին խոսք ..... 180

## ԱՐՁԱԿ, ՀՈԴՎԱԾՆԵՐ

Աբխազ ժողովրդի մեծ լուսավորիչը ..... 183
Պահպանել սերն ու հավատը ..... 189
Արդարացնելով իր կարևորագույն նշանակությունը ..... 194
Հոգու տուն ..... 196
Կույր անձրև (գլուխներ անավարտ վիպակից)..... 199
Պատահածը պատահում է գնացողի՞ն ..... 253
Գնդակահարված հատորներ ..... 254
Ընդհանուր ժողով անտառում ..... 258
Հատուկ աթոռը ..... 261
Մայրիկ Արջն ու հարցասերիկ Փորթոլոզը..... 264
«Համշեն» պարբերաթերթ ..... 269
«Սևծովյան այգաբաց» գրական միավորում ..... 296

Արտավազդ Հայկի Սարեցյան
Ընտիր երկեր երկու գրքով
Գիրք առաջին
Բանաստեղծություններ,
պատմվածքներ, հոդվածներ
Սուխում
Աբխազական պետական հրատարակչություն
2018

Սրբագրիչ՝ Գոհար Թեփուլյան
Տառատեսակ՝ Arial AM
Համակարգչային գրաշարումը՝
«Գրական Համշեն» թերթի
e-mail: abk-hamshen@yandex.ru,
arm-hamshen@yandex.ru

Артавазд Аикович Сарецян
Избранное. В двух книгах
Книга первая
Стихи, рассказы, статьи
(На армянском языке)
Сухум
Абхазское государственное издательство
2018